

111

Պ [illegible]

Է

Պ [illegible]

Պ [illegible] [illegible]

1111

[illegible]

Պ [illegible]

Պ [illegible]

191.99
9-19

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Հ. ՄԻՔԱՅԵԼԷ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՉԱՄՉԵԱՆՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

5658

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

A/969
9.4

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1843 ՌՄՂԲ

~~11944~~

[illegible]

~~5784~~

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 Թ.

3 ն

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի դժուարինս դիւրաւ ընթանալ՝ հնարից պէտք են. յոր սակս յո՛ և իցէ դժուարին գործս պէսպէս հնարս հնարեցին մարդիկ առ դիւրացուցանելոյ զայն։ Եւ քանզի 'ի մէջ ամենայնի դժուարին իմն է արուեստն ուղղախօսութ̃ե, հնարեցին և յաղագս այնր հնարս դիւրացուցիչս նորին, այն է գործին քերականութ̃ե։ Որք զառաջինն ձեռն արկին 'ի նոյն, անկատարս յօրինեցին. որոյ վասն ջանացան յետինք կատարելագործել զայն. բայց յառաւելն բերին՝ ոմանք զկոպարաւ անցին. մինչև լինել անմերձենալի. և ոմանք զարտուղի ելին, մինչև հակառակիլ հանգամանաց լեզուի։

Զայս տեսեալ մեր՝ նորոգ յօրինեցաք զգործն քերականութ̃ե յամի տ̃ն 1779։ Եւ առ քաջ մարզելոյ զուսանողսն 'ի կատարելութ̃ի լեզուիս մերոյ, յաճախեցաք 'ի նմին զկանոնս, և ըստ կանոնաց զբազմադիմի օրինակս 'ի գրոց նախնեաց. և յանձնեցաք կառավարութ̃ե ուսուցչաց, ըստ օրինի առաջնորդել նովաւ ուսանողաց։ Բայց քանզի այն յաճախութ̃ի կանոնաց և օրինակաց որչափ յարդարէր զվարժութ̃ի կատարելութ̃ե հայկական լեզուի, այնչափ երկարէր զջանս ուսումնասիրութեան նորավարժից, կամեցաք զնոյն զայն քերականութ̃ի նորոգ իմն համառօտութ̃բ 'ի լոյս ընծայել. զոր և արարաք իսկ յամի տ̃ն 1801. առանց փոփոխելոյ զկարգ նորա, և առանց չփոթելոյ զընթացս նորին. բայց եթէ 'ի սակաւ տեղիս, յորս ընդարձակելին բանք․ և առաւելուլին կանոնք, և յորդեալ զեղուլին օրինակք։

Եւ այժմ վերստին ուղղագրեալ զնոյն, և առաւել ևս համառօտեալ՝ առաջի մատուցաք համբակաց առ հեշտ գանձելոյ նոցա զուսումն քերականութե՟ 'ի միտս իւրեանց։ Գիտելով՝ թէ 'ի մարզիլ նոցա 'ի սոյն բարուք՝ քաղցրասցի 'ի քիմս նոցա առաջինն այն իբր հաստատուն կերակուր։ Բայց սակայն յաւելում ևս ասել, թէ ոչ առաջինն այն և ոչ երկրորդն և ոչ յետինս այս կարեն օգտել ինչ ուսանողաց, եթէ ուսուցիչք ոչ առաջնորդեսցեն ըստ կանոնաց։

Առաջին կանոն ուսուցչին է կամիլն ուսուցանել։ Եթէ այս կամք կայցէ 'ի նմա, սոյն այս ինքնին ցուցանէ, թէ զիարդ պարտ է առաջնորդել․ մինչև նաև զբթամիտսն կարել նմա սրել, և զանփոյթսն 'ի փոյթ վառել, որպէս 'ի բազումս տեսաք և տեսանեմք։ Երկրորդ կանոն ուսուցչին է պահել զկարգ 'ի դասասացուե՟․ նախ զդիւրինսն առաջի դնել, և ապա զդժուարինսն ծաքելով իմն մատակարարել, և ոչ թէ խառն 'ի խուռն 'ի միասին շփոթել․ ապա թէ ոչ՝ աշխատի բազումս, և ուսանողն շահի սակաւս․ մինչև լքանիլ նմա երբեմն 'ի սպառ, և լքանել յիւրմէ զուսումն։

Իսկ եթէ ըստ կարգի ընթասցի, աշխատի սակաւ, և ուսանողն շահի բազում․ մին բերկրի յարդիւնս վաստակոց իւրոց, և միւսն ցնծայ 'ի գիւտ արուեստին իբր 'ի գիւտ պատուական գանձու։ Եթէ և դիտաւորութ՟ի իւրեանց լիցէ բարի, երկոքին ևս ընկալցին յա՟յ զվարձս։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ է ուսուցանել մարդոյ ուղիղ կարգել զխօսս։ Եւ քանզի խօսք մարդկան կազմին 'ի բառից, քերականութիւնն յայնժամ ուսուցանէ ուղիղ խօսել, յորժամ զբառսն ընդ կանոնօք կարգաւորէ։

Արդ 'ի խօսս մարդկան ութ ցեղք բառից գտանին։ Նախ՝ Անուն, որ նշանակէ զիրն. որպէս տէր, հայր, բարի, ևն։ Երկրորդ՝ Դերանուն, որ ցուցանէ զդէմս իրացն, որպէս ես, դու, նա, ևն։ Երրորդ՝ Բայ, որ զբառս կամ զկիրս իրին նշանակէ ընդ ժամանակաւ. որպէս սիրեմ, գնամ, խօսիմ, ևն։ Չորրորդ՝ Ընդունելութիւն, որ նշանակէ զիրն 'ի գործողութեան. որպէս սիրող, գնացեալ, ևն։ Հինգերորդ՝ Նախադրութիւն, որ զպարագայս իրին նշանակէ. օր. 'ի վերայ նորա, վասն քաջութեան, ևն։ Վեցերորդ՝ Մակբայ, որ զեղանակս գործողութեանց նշանակէ. օր. արագ ընթանայ, գայ 'ի վերուստ, ևն։ Եօթներորդ՝ Շաղկապ, որ զբառս և զբանս 'ի միասին շաղկապէ. որպիսի են բառքս և, զի, սակայն, եթէ, ևն։ Ութերորդ՝ Միջարկութիւն, որ զկիրս հոգւոյն ցուցանէ. օր. վա՜հ, ո՜հ, ևն։

Այսոքիկ ութ ազգք բառից կոչին մասունք բանի, զորոց խօսի քերականութիւն յերիս գիրս կամ յերիս մասունս։ Յառաջնումն պարզապէս առաջի դնէ զգործածութիւն սոցա, յերկրորդումն քննէ զորպիսութիւն սոցին, իսկ յերրորդումն խօսի զհամաձայնութենէ սոցա ընդ միմեանս, ըստ որում ունիմք կարգել և մեք։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յաղագս գործածութեան մասանց բանի։

Այս մասն քերականութ՟ն պիտանի է քան զայլսն և հարկաւոր. զի է գուռն լեզուիս Հայոց, ևս և գործարան համօրէն բառից. վասն զի 'ի սմա պատրաստին, և որպէս թէ տաշին և կոկին ա՟մ ազգք բառից 'ի ձեւն հոլովից և խոնարհմանց և դասաւորութ՟ն իւրեանց։ Ապա որք միանգամ կամին ուսանել զլեզուս Հայոց, արժան է նոցա սրտի մտօք 'ի սոյն դեգերիլ, և զա՟մ գրեալս 'ի սմա 'ի յիշողութ՟ն գանձել, նախ զհոլովս անուանց. և ապա զայլսն։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս հոլովման Անուանց։

Անուանք պէսպէս ձեւանան 'ի գործածութ՟ն իւրեանց որպէս անունս աշխարհ՝ տասն օրինակաւ կարէ ձեւանալ 'ի խօսակցութ՟ն. ո՟ր, աշխարհ, աշխարհի, յաշխարհ, զաշխարհ, յաշխարհէ, զաշխարհէ, աշխարհաւ, զաշխարհաւ, յաշխարհի, ով աշխարհ։ Կամ՝ աշխարհք, աշխարհաց, ընդ աշխարհս, զաշխարհս, յաշխարհաց, զաշխարհաց, աշխարհօք, զաշխարհօք, յաշխարհս, ով աշխարհք։ Եւ այսպիսի փոփոխութ՟ի մի և նոյն անուան՝ կոչի հոլով, ըստ որոյ ասեմք՝ ուղղական հոլով, սեռական հոլով, տրական հոլով, հայցական հոլով, բացառական հոլով, պատմական հոլով, գործիական հոլով, պարառական հոլով, ներգոյական հոլով, կոչական հոլով։

Այլ այս հոլովք՝ յա՟մ անուանս ոչ են միօրինակ, այլ՝ բազմապատիկ, զի ոմանք յանուանց 'ի հոլովսն եզերին 'ի ի, իւ. ոմանք 'ի ոյ, ով, ոմանք 'ի ան, ամբ. նոյնպէս և այլք։ Եւ այսպիսի պէսպիսութ՟իք վեր-

Ջաւորութեանց զանազան անուանց կոչին հոլովմունք անուանց. և են քսան. որոց չորեքտասանքն ասին հասարակք, իսկ վեցքն մասնաւորք կամ յատուկք: Ո՛րոց զօրինակս ունիմք դնել ըստ կարգաւ:

Յաղագս հասարակ հոլովման անուանց:

Օրինակ առաջին հոլովման:

	Եզակի:	Յոգնակի:
Ուղղական.	Բան.	Բանք.
Սեռական.	Բանի.	Բանից.
Տրական.	Բանի, 'ի բան.	Բանից, 'ի բանս.
Հայցական.	զԲան.	զԲանս.
Բացառական.	'ի Բանէ.	'ի Բանից.
Պատմական.	զԲանէ.	զԲանից.
Գործիական.	Բանիւ.	Բանիւք.
Պարառական.	զԲանիւ.	զԲանիւք.
Ներգոյական.	'ի Բանի կամ 'ի բան.	'ի Բանս.
Կոչական.	ո՛վ Բան:	ո՛վ Բանք:

Ընդ այսու օրինակաւ պարունակին բազում անուանք, ո՛րոց 'ի հոլովելն՝ ոմանք անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառն յորս յանգին. զոր օրինակ,

Բան,	բանի.	Բան, խօսք. սէօզ, էշ.
Դաշտ,	դաշտի.	Դաշտ. օվա:
Կաթսայ,	կաթսայի.	Կաթսայ. ղազան, թէնճէրէ:
Շղթայ,	ի.	Շղթայ. զէնճիր:
Ա՛րհեստ,	ի.	Արհեստ. զէնահաթ:
Նետ,	ի.	Նետ. օք:
Ծնօտ,	ի.	Ծնօտ. չէնէ:
Հօտ,	ի.	Ոչխարի կամ այծոց սիւրիւ:
Գիւտ,	ի.	Գտանելը. հնարք, եւս ֆէնն.
Ուրուր,	ի.	Ուրուր. չայլաք:

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառսն, յորս յանգին. զոր օրինակ

Ատեան,	ատենի.	Տիվան ։ ևս տիվան [illegible] ։
Լեարդ,	լերդի.	Ճիյէրի [illegible] ։
Բիծ,	բծի.	Լէքէ. զէրրէ ։
Դալին,	դլնի.	[illegible] ։
Բրուտ,	բրտի.	[illegible]. չէօմլէքճի ։

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին. զոր օրինակ

Գմբէթ,	գմբեթի.	Գուպպէ, կամ խուպպէ ։
Պատշէն,	պատշենի.	[illegible] ։
Արոյր,	արուրի.	[illegible]. ֆիրինճ ։
Խրախոյս,	խուսի.	[illegible] ։
Նշոյլ,	նշուլի.	[illegible]. շէօհլէ ։

Անեզականք.

Ելք,	ելից.	[illegible] ։
Խնջոյք,	ջոյից.	[illegible] ։
Հրաշք,	շից.	[illegible] ։

Օրինակ երկրորդ հոլովման.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Քաղաք.	Քաղաքք.
Ս.	Քաղաքի.	Քաղաքաց.
Տ.	Քաղաքի, 'ի քաղաք.	Քաղաքաց, 'ի քղքս.
Հ.	զՔաղաք.	զՔաղաքս.
Բ.	'իՔաղաքէ.	'իՔաղաքաց.
Պ.	զՔաղաքէ.	զՔաղաքաց.
Գ.	Քաղաքաւ.	Քաղաքօք.
Փ.	զՔաղաքաւ.	զՔաղաքօք.
Ն.	'իՔաղաքի, կմ 'ի քաղաք.	'իՔաղաքս.
Կ.	ով Քաղաք.	ով Քաղաքք.

Ընդ այսու օրինակաւ պարունակին բազում անուանք, որոց 'ի հոլովլն՝ ոմանք անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին. զոր օրինակ

Ագարակ,	ի.	Չիֆթլիկ։ ևս թարլա։
Բանակ,	ի.	Բանակ. օրդու։
Գերան,	ի.	Գերան. դիրէկ։
Խաւար,	ի.	Մութ. ղարանլըք։
Մաճկալ,	ի.	Մաճը բռնող։
Բերդ,	ի.	Բերդ. գալէ։
Լապտեր,	ի.	Ֆեներ։ ևս մաշալա։
Երաշխաւոր,	ի.	Երաշխաւոր. քէֆիլ։
Խարտոց,	ի.	Խարտոց. էյէ։
Մեղու,	ուի.	Արը, որ մեղր կշինէ։

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառսն, յորս յանգին. զոր օրինակ

Մենեակ,	նեկի.	Խուց. օտա։
Գարբին,	գարբնի.	Գարբին. չիլինկիր։
Պարիսպ,	բսպի.	Պարիսպ. հիսար։
Ստրուկ,	ստրկի.	Բրայէ, քէօլէ։
Քուրմ,	քրմի.	Պրաման. [illegible] կուռքի քահանայ։

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառսն, յորս յանգին. զոր օրինակ

Գէտ,	գետի.	[illegible]։ ևս [illegible]։
Մէգ,	միգի.	Մշուշ. դուման։
Մոմեղէն,	ղինի.	Մոմ։ ևս [illegible] մոմ։
Հովիւ,	հովուի.	Հովիւ. չօպան։
Սարագոյր,	գուրի.	Փէրտէ։ ևս [illegible]։

Յոգնականք։

Բաղձանք,	նաց.	Մուրատ, էշք, հավաս։
Ջանք,	ջաց.	Կայրէթ. [illegible]։
Կեանք,	կենաց.	Կեանք. էօմիւր։

Օրինակ երրորդ հոլովման.

	Եզական.	Յոգնական.
Ո.	Գետ.	Գետք.
Ս.	Գետոյ.	Գետոց.
Տ.	Գետոյ, 'ի գետ.	Գետոց, 'ի գետս.
Հ.	զԳետ.	զԳետս.
Բ.	'իԳետոյ.	'իԳետոց.
Պ.	զԳետոյ.	զԳետոց.
Գ.	Գետով.	Գետովք.
Պ.	զԳետով.	զԳետովք.
Ն.	'իԳետ.	'իԳետս.
Կ.	ովԳետ:	ովԳետք:

Ըստ այսմ հոլովին բազում անուանք առանց կորուսման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. զոր օրինակ,

Աթոռ,	ոյ.	Աթոռ. իսկէմլէ : կամ Թախտա :
Արմատ,	ոյ.	Արմատ. քէօք :
Սեղան,	ոյ.	Սեղան. սօֆրա :
Գեղ,	ոյ.	Գեղեցկութիւն :
Տերև,	ոյ.	Տերև. եափրաղ :
Աղիւս,	ոյ.	Քէրփիճ : կամ Թուղլա :
Նիւթ,	ոյ.	Քէրէսթէ : կամ մարմին ունող բան :
Գործ,	ոյ.	Գործք. իշ :
Սափոր,	ոյ.	Տէսթի : կամ 29 օխանոց չափ :
Անօթ,	ոյ.	Աման : կամ Թուասա :

Կորուսմամբ:

Ա.			
Տ.	ամ,	սեմոյ.	Շէմ. սօյա :
Հ.	կողմն,	կողմոյ.	Անկողմնք. քէօշէկ :
Բ.	իռ,	կշռոյ.	Կշեռք. Թէրազի :
Պ.	ուր,	անրոյ.	Հալքա, Թասմա :
Գ.	յուպ,	ցպոյ.	Տէյէնէկ :
Փ			

Փոփոխմամբ:

Ձէթ,	ձիթոյ.	Զէյթին եաղը :

Սէր,	սիրոյ.	Սէր . մուհապպէթ ։
Պատիւ,	պատուոյ.	Պատիւ . իզզէթ ։ եւ ռաղպէթ ։
Բոյս,	բուսոյ.	Բոյս . ինչ որ գետնէն կըբուսնի ։
Ունդ,	ընդոյ.	Հընտեղէն, ինչպէս՝ բաքլա, ոսպ ։

Անեզականք ։

Անուրջք,	անրջոց.	Երազ . հէյալ, ռուեա.
Դժոխք,	դժոխոց.	Դժոխք ։ եւ ճէհէննէմ ։
Կուռք,	կռոց.	Կուռք . փութ ։

Օրինակ չորրորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Եկեղեցի.	Եկեղեցիք.
Ս.	Եկեղեցւոյ.	Եկեղեցեաց.
Տ.	Եկեղեցւոյ, յեկեղեցի.	Եկեղեցեաց, յեկեղեցիս.
Հ.	զԵկեղեցի.	զԵկեղեցիս.
Բ.	յԵկեղեցւոյ.	յԵկեղեցեաց.
Պ.	զԵկեղեցւոյ.	զԵկեղեցեաց.
Գ.	Եկեղեցեաւ.	Եկեղեցեօք.
Փ.	զԵկեղեցեաւ.	զԵկեղեցեօք.
Ն.	յԵկեղեցի կ՞ յԵկեղեցւոջ.	յԵկեղեցիս.
Կ.	ով Եկեղեցի ։	ով Եկեղեցիք ։

Ըստ այսմ հոլովին ամ՚ անուանք յոգնավանկք յանգեալք ՚ի ի. (բաց ՚ի յատուկ անուանց եւ ՚ի միավանկից). զոր օրինակ,

Աղաւնի,	նւոյ.	Աղաւնի . կէօվէրճին ։
Առաքինի,	նւոյ.	Առաքինի ։ եւ հայրըձ ։
Գերի,	րւոյ.	Գերի . էսիր ։
Գործի,	ծւոյ.	Աշխատանքէ, ֆուստափ ։
Գօտի,	տւոյ.	Գօտի . գուշագ ։
Լեղի,	ղւոյ.	Կենդանւոյ լեղին . էօտ ։
Կղզի,	ղւոյ.	Կղզի . ատա ։
Հովանի,	նւոյ.	Շուք ընող . սիփէր ։

Վկայուհի,	հւոյ.	Մարտիրոս եղած կին:
Տեղի,	ղւոյ.	Տեղ. եէր: ևս բնակութիւն:

Անեզականք:

Աւետիք,	տեաց.	Աւետիք. մուժտէ:
Ընթրիք,	րեաց.	Իրիկուան ուտելան կամ կերակուր:
Կարծիք,	ծեաց.	Կարծիք. [illegible], թահմին:

Օրինակ հինգերորդ հոլովման:

	Եզակի:	Յոգնակի:
Ո.	Աղեղն.	Աղեղունք.
Ս.	Աղեղան.	Աղեղանց.
Տ.	Աղեղան, յաղեղն.	Աղեղանց, յաղեղունս.
Հ.	զԱղեղն.	զԱղեղունս.
Բ.	յԱղեղանէ.	յԱղեղանց.
Պ.	զԱղեղանէ.	զԱղեղանց.
Գ.	Աղեղամբ.	Աղեղամբք.
Պ.	զԱղեղամբ.	զԱղեղամբք.
Ն.	յԱղեղան, կմ յաղեղն.	յԱղեղունս.
Կ.	ո՛վ Աղեղն:	ո՛վ Աղեղունք:

Ըստ այսու օրինակաւ հոլովին բազում անուանք առանց կորուսման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. զոր օրինակ

Ակն,	ական.	Աչք: ևս ջէվահիր:
Ամառն,	ռան, կմ րան.	Ամառ. եազ:
Ատամն,	ման.	Ակռայ, կէռէք. դիշ:
Պադալթն,	թան.	Պադաթ. թէքէ:
Սերմն,	ման.	Հունտ. թօհում:
Ստեղն,	ղան.	Ճիւղ, կամ ճեղ: ևս քէթան:
Հիմն,	ման.	Հիմ. թէմէլ:
Հիւսն,	սան.	Տիւլկէր. խարրատ:
Որդն,	դան.	Որդ. գուրթ:
Անուն,	ուան. ուանք.	Անուն. ատ, իսմ:

Կորուսմամբ:

Սկիզբն,	սկզբան.	Սկիզբ, գլուխ. էվվէլ:

Խոստումն,	խոստման.	Խօսք տալը:
Ձուկն,	ձկան.	Ձուկ. պալըք:
Տուն,	տան.	Տուն. էվ, մէքեան:
Պաշտօն, տաման. տամունք.		Ծառայութիւն. խըզմէթ:

Փոփոխմամբ:

Փայծաղն,	փայծեղան.	Փայծաղ. տալաղ:
Եղեգն,	եղեգան.	Եղէգ. ղամըշ:
Պոյտն,	պուտան.	Պըտուկ. չէօմլէկ:

Անեզականք:

Փռշմունք,	մանց.	Անձ մէձ պարէձ ապտանալը:
Լորձունք,	ձանց.	Թողէք, բերնի ջրերը:
Յօլմունք,	մանց.	Աչէքին վեր աւրիշ ընելը:

Օրինակ վեցերորդ հոլովման:

	Եզակի:	Յոգնակի:
Ո.	Նեղութիւն.	Նեղութիւնք.
Ս.	Նեղութեան.	Նեղութեանց.
Տ.	Նեղութե̃, ՚ի Նեղութե̃.	Նեղութե̃ց, ըն̃դ Նեղութի̃ս.
Հ.	զՆեղութիւն.	զՆեղութիւնս.
Բ.	՚ի Նեղութենէ.	՚ի Նեղութեանց.
Պ.	զՆեղութենէ.	զՆեղութեանց.
Գ.	Նեղութեամբ.	Նեղութեամբք.
Պ.	զՆեղութեամբ.	զՆեղութեամբք.
Ն.	՚ի Նեղութեան.	՚ի Նեղութիւնս.
Կ.	ով Նեղութիւն:	ով Նեղութիւնք:

Այսպէս հոլովին ա̃մ անուանք յանգեալք ՚ի ութիւն. զոր օրինակ

Տղայութիւն,	թեան. ա̅.	Հասակ մարդոյ ՚ի ա̅ ամ̃ ՚ի է̅:
Մանկութ̃ի,	թ̃ե. բ̅.	Հասակ մարդոյ ՚ի է̅ ամ̃ ՚ի ժ̅դ̅:
Պատանեկութ̃ի,	թ̃ե. գ̅.	Հասակ մարդոյ ՚ի ժ̅դ̅ ամ̃ ՚ի ի̅է̅:
Երիտասարդութ̃ի,	թ̃ե. դ̅.	Հասակ մարդոյ ՚ի ի̅է̅ ամ̃ ՚ի խ̅:
Այրութ̃ի,	թ̃ե. ե̅.	Հասակ մարդոյ ՚ի խ̅ ամ̃ ՚ի ծ̅:

Ծերութիւն, թե. ղ. Հասակ մարդոյ 'ի Ծ ամէ 'ի Հ:
Զառամութիւն, թե. ն. Հասակ մարդոյ 'ի Հ ամէ 'ի մահ:
Յաւիտենականութիւն, թե. Անվախճան տեւողութիւն:

Ըստ այսմ հոլովին և այլ քանի մի անուանք:

Արիւն, արեան, րենէ. Արուն. գան:
Ծնունդ, ծննդեան, 'ի ծննդենէ. Ծնանիլը: եա ծնունդը:
Կորուստ, կորստեան, կորստենէ. Կորսուիլը. գայըպ:
Հանգիստ, գստեան, գստենէ. Ռահաթլըգ. հուզուր:
Տեսիլ. տեսլեան, 'ի տեսլենէ. Տեսք: եա էրազ:
Անկիւն, անկեան, կեանէ. Քէօշէ, պուճագ:
Վաղիւ, ղուեան, ղուէ. Վաղը. եարընքի կիւն:
Տիւ, տունջեան, 'ի տուէ կ՟մ 'ի տունջենէ: Ցորեկ:
Անանիանք, նիանց, նիանս. Երէք մանչուանքը:
Իսրայելեանք, լեանց, լեանս. Իսրայէլացիք:

Օրինակ եօթներորդ հոլովման:

	Եզակի:	Յոգնակի:
Ո.	Գառն.	Գառինք.
Ս.	Գառին.	Գառանց.
Տ.	Գառին, 'ի գառն.	Գառանց, 'ի գառինս.
Հ.	զԳառն.	զԳառինս.
Բ.	'ի Գառանէ.	'ի Գառանց.
Պ.	զԳառանէ.	զԳառանց.
Գ.	Գառամբ.	Գառամբք.
Պ.	զԳառամբ.	զԳառամբք.
Ն.	'ի Գառին կ՟մ 'ի գառն.	'ի Գառինս.
Կ.	ո՛վ Գառն:	ո՛վ Գառինք:

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք. Որ,

Խաշն, շին, շանէ. Ոչխարներու կ՟մ այծերու պէօլիւկ:
Կաթն, թին, թանէ. Կաթ. սիւտ:
Բեռն, ռին, ռանէ. Բեռ. եիւք:
Եզն, զին, զանէ. Եզ. էօքիւզ:
Ձեռն, ռին, ռանէ. ձեռք, ձեռաց, ձեռամբք կ՟ ձեռօք. Եւ

Անձն, ձին, ձնէ .	Անձ · ինքը ։ եւ հոգի ։
Մասն, սին, սնէ . սունք .	Փայ ։ եւ հիսսէ ։
Մատն, տին, տնէ . տունք .	Մատ · փարմաք ։
Թոռն, ռին կմ ռան, ռնէ կմ ռանէ . ռունք .	Թոռ ։
Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերամբ . լերինք, լերանց .	Լեռ · դաղ ։

Օրինակ ութերորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Զգեստ .	Զգեստք .
Ս.	Զգեստու .	Զգեստուց .
Տ.	Զգեստու, 'ի զգեստ .	Զգեստուց, 'ի զգեստս
Հ.	զԶգեստ .	զԶգեստս .
Բ.	'ի Զգեստէ .	'ի Զգեստուց .
Պ.	զԶգեստէ .	զԶգեստուց .
Գ.	Զգեստու .	Զգեստուք .
Պ.	զԶգեստու .	զԶգեստուք .
Ն.	'ի Զգեստ կմ 'ի զգեստու	'ի Զգեստս .
Կ.	ով Զգեստ ։	ով Զգեստք ։

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք . որ ,

Գանձ, ու .	Գանձ · խազնա ։
Գրաստ, ու .	Գրաստ · տաւար ։
Դաս, ու .	Պէօլիւք · սըրա ։ եւ տագըմ ։
Առիւծ, ու կմ ոյ .	Արիւծ · ասլան ։
Զարդ, դու, դուէ .	Զարդարանք ։
Խրատ, տու, տուէ .	Խրատ · էօյիւտ ։ եւ նասիհաթ ։
Իւղ, ղու կմ ղոյ .	Եուղա կամ եաղ ։
Զէն, զինու .	Զէնք · սիլահ ։
Բարք, րուց .	Խույ · թապիէթ ։
Պարտք, տուց .	Պարտք, տալիք · վէրէճէյի ։

Օրինակ իններորդ հոլովման.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Փորր.	Փորունք.
Ս.	Փորու.	Փորունց.
Տ.	Փորու, առ փորր.	Փորունց, ընդ փորունս.
Հ.	զՓորր.	զՓորունս.
Բ.	'իՓորուէ.	'իՓորունց.
Պ.	զՓորուէ.	զՓորունց.
Գ.	Փորու կամ ումբ.	Փորումբք.
Շ.	զՓորու կամ ումբ.	զՓորումբք.
Ն.	'իՓորու կմ 'ի փորր.	'իՓորունս.
Կ.	ով Փորր:	ով Փորունք:

Այնպէս հոլովին ըստ իմիք և այլ սակաւ բառք. Որ

Թանձր, ձու, ձու. Թանձունք, ձունց, ձրուք:
Ծանր, նու, նու. ծանունք, նունց, նուք:
Մանր, նու, նու. մանունք, նունց, նումբք:
Մեղր, ղու, ղու. մեղրք, մեղրից, մեղրօք:
Քաղցր, ցու, ցու. քաղցունք, ցունց, ցուք:

Օրինակ տասներորդ հոլովման.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Աղբիւր.	Աղբիւրք կմ աղբերք.
Ս.	Աղբեր.	Աղբերաց կմ աղբերց.
Տ.	Աղբեր, յաղբիւր.	Աղբերաց կմ աղբերց. յաղբիւրս կմ յաղբերս.
Հ.	զԱղբիւր.	զԱղբիւրս կմ զաղբերս.
Բ.	յԱղբերէ.	յԱղբերաց կմ յաղբերց.
Պ.	զԱղբերէ.	զԱղբերաց կմ զաղբերց.
Գ.	Աղբերբ կմ բերաւ.	Աղբերօք կմ աղբերբք.
Շ.	զԱղբերբ կմ բերաւ.	զԱղբերօք կմ զաղբերբք.
Ն.	յԱղբեր կմ յաղբիւր.	յԱղբիւրս կմ յաղբերս.
Կ.	ով Աղբիւր:	ով Աղբիւրք կմ աղբերք:

Ըստ այսմ հոլովին և այլ քանի մի անուանք . դր,

Կայսր,	սեր,	սերէ.	Կայսր . Ճէնձ Իմփարատոր ։
Ոսկր,	կեր,	կերէ.	Ոսկոր, կէմիք ։
Ուստր,	տեր,	տերէ.	Սանչ շաքաք ։
Տարր,	տարեր, 'ի տարրէ.		Տարերք . էճնասլար ։
Մախր,	խեր,	խրէ.	Մախր . չըրա ։
Եզր,	զեր,	զրէ.	Ծայր . քէնար ։
Լիտր,	լտեր, 'ի լտերէ.		Լիտրէ . որ է 144 դրէմ ։
Դուստր,	դստեր, 'ի դստերէ.		Աղջիկ զաւակ . գըզ օղլան ։
Ալիւր,	ալեր,	յալերէ.	Ալեւր . ուն ։
Եղջիւր,	եղջեր,	յեղջերէ.	Պօյնուզ ։ ևս ռուծ ։

ՔՏՏԿ
5668
~~11944~~
Ա/969

Օրինակ մետասաներորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Աստղ.	Աստեղք.
Ս.	Աստեղ.	Աստեղաց.
Տ.	Աստեղ, յաստղ.	Աստեղաց, յաստեղս.
Հ.	զԱստղ.	զԱստեղս.
Բ.	յԱստեղէ.	յԱստեղաց.
Պ.	զԱստեղէ.	զԱստեղաց.
Գ.	Աստեղբ.	Աստեղբք կ՚ ղօք.
Պ.	զԱստեղբ.	զԱստեղբք կ՚ ղօք.
Ն.	յԱստեղ կ՚ յաստղ.	յԱստեղս.
Կ.	ովԱստղ ։	ովԱստեղք ։

Ըստ այսմ հոլովին սակաւ անուանք . դր,

Անգղ,	գեղ.	Աքպապա ։
Արկղ,	կեղ.	Սընտուգ . սանտըգ ։
Կոթղ,	թեղ.	Կոթ . սափ ։
Կոճղ,	ճեղ.	Քիւթիւկ ։ ևս Բուծրուգ ։
Ոստղ,	տեղ.	Լօքմէ, [illegible] ։

[illegible]

Օրինակ երկոտասաներորդ հոլովման։

Եզակի։

Ուղ·	Տրդատ·
Սեռ·	Տրդատայ·
Տրա·	Տրդատայ, ցՏրդատ, առ Տրդատ·
Հայց·	զՏրդատ·
Բաց·	՚ի Տրդատայ·
Պատ·	զՏրդատայ·
Գոր·	Տրդատաւ·
Պար·	զՏրդատաւ·
Ներ·	՚ի Տրդատ·
Կոչ·	ով Տրդատ։

Ըստ այսմ հոլովին բազում յատուկ անուանք· զոր օրինակ,

Անակ,	այ·	Լուսաւորչին հայրը։
Անտիոք,	այ·	Անտիոքեա քաղաքը։
Արշամ,	այ·	Աբգար թագաւորին հայրը։
Բէլ,	այ·	Բաբելացւոց առաջին թագաւորը։
Հռովմ,	այ·	Պօղոս Պետրոսի քաղաքը։
Մեսրովբ,	այ·	Սբ Մեսրոպ վարդապետը։
Պարոյր,	այ·	Հայոց առաջին պսակեալ թագաւորը։
Մծբին,	բնայ·	Նսեբինն քաղաքը։
Անուշ,	ուշայ·	Աժդահակ թագաւորին առաջին կինը
Խորէն,	րենայ·	Աբգար թագաւորին զօրավարը։

Օրինակ երեքտասաներորդ հոլովման։

Եզակի։

Ուղ·	Եսայի·
Սեռ·	Եսայեայ·
Տրա·	Եսայեայ, առ Եսայի, ցԵսայի·
Հայց·	զԵսայի·
Բաց·	յԵսայեայ·

Պատ.	զՆոսայեայ .
Գոր.	Նոսայեաւ .
Պար.	զՆոսայեաւ .
Ներ.	յՆոսայի .
Կոչ.	ով Նոսայի .

Ըստ այսմ հոլովին բազում յատուկ անուանք փոփոխմամբ ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին . որպ ,

Աթանագինէ, նեայ .	Սբ եպիսկոպոս Աթանագինէ :
Արիստակէս, կեայ .	Լուսաւորչայ մեծի որդին :
Գայիանէ, նեայ .	Սբ Հռիփսիմէի մայրապետն :
Զարուհի, հեայ .	Մեծին Տիգրանայ կինն :
Օգոստոս, տեայ .	Կայսր Հռովմայ :

Գիտելի է՝ զի յատուկ անուանց բազումք հոլովին ըստ կերպի հասարակ հոլովմանց . որպ ,

Ագաթանգեղոս, ի, իւ .	Տրդատայ թագաւորին քարտուղարը :
Ադդէ, ի, իւ .	Հայրապետ Աբգարու ատենը :
Մովսէս, եսի կամ իսի, սիւ .	Ահեղին մարգարէն :
Պարսիկ, սկի, աւ .	Պարսից ազգը . [illegible] :
Արծկէ, կէոյ, ով .	Քաղաք մի Աղթամարայ ծովուն քով :
Հեթում, թմոյ, ով .	Հայոց թագաւոր ՚ի Կիլիկիա :
Անի, անւոյ, ւով .	Անի քաղաքը :
ռածանի, նւոյ, ւով .	Եփրատ գետ կամ անուն ծառը :
տղիկ, տղկան, ամբ .	Կուսակ մի, Ահրիդեք :
ողթն, . թան, ամբ .	Գողթնայ գաւառը :
տազ, ու .	Արտազ գաւառ Հայաստանու :
հազար, ու .	Ահարոն քահանայի որդին :
ռահամ, մու, մաւ .	Աբրահամ նահապետ :
քսանդր, դրի կամ դրոսի կամ դրեայ .	Մակեդոնացւոյ թգր :
ղտ, տոյ կամ տայ .	Հայոց իշխան ու թագաւոր :
իթ, դաւթի կամ թայ .	Դաւիթ մարգարէ թագաւորը :
մաս, այի կամ ասու .	Թովմաս առաքեալ :
իք, մասեաց .	Արարատ լեռը՝ ուր տապանը նստաւ :
ս, կարսայ կամ կարուց .	Կարս կամ Խարս քաղաքը :

Օրինակ չորեքտասաներորդ հոլովման։

Յոգնակի.

Ուղ.	Հայաստանեայք.
Սեռ.	Հայաստանեայց կամ եաց.
Տրա.	Հայաստանեայց, ընդ Հայաստանեայս.
Հայց.	զՀայաստանեայս.
Բաց.	'ի Հայաստանեայց.
Պատ.	զՀայաստանեայց.
Գոր.	Հայաստանեօք.
Պար.	զՀայաստանեօք.
Ներ.	'ի Հայաստանեայս.
Կոչ.	ո՛վ Հայաստանեայք։

Ըստ այսմ հոլովին յետագայ յոգնական անուանքդ. զոր օրինակ,

Ենթալուսնեայք, եայց. Լուսնի տակ եղածներն։
Միջերկրեայք, եայց. Մէջտեղի երկիրներն. անատօլու։
Հայկազնեայք, եայց. Հայու ազգէ ըլլօղներն։
Առժամանակեայք, եայց. Ժամանակաւոր բաներ։
Ապագայք, այց կամ այից, այիւք. Գալիքներն, ըլլալիքներն։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս մասնաւոր հոլովմանց։

Մասնաւոր հոլովմունք են վեց, ըստ որոց հո[illegible] անուանք ինն. այսինքն են, Տէր, այր, հայր, [illegible] եղբայր, քոյր, կին, օր, և գիւղ կամ գեօղ, [illegible] դեալք սոցա, զորս դիցուք աստ առաջի։

Հոլովումն անուանս Տէր։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Տէր.	Տեարք.
Ս.	Տեառն.	Տեարց կամ տերանց.

Տ·	Տեառն, 'ի տէր, ցտէր·	Տեարց, ցտեարս·
Հ·	զՏէր·	զՏեարս·
Բ·	'ի Տեառնէ·	'ի Տեարց կամ 'ի տերանց·
Պ·	զՏեառնէ·	զՏեարց կամ զտերանց·
Գ·	Տերամբ·	Տերամբք·
Պ·	զՏերամբ·	զՏերամբք·
Ն·	'ի Տեառն կամ 'ի տէր·	'ի Տեարս·
Կ·	ով Տէր։	ով Տեարք։

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա· զր

Կոչնատէր,	տեառն·	ՕՋԱՔԷՐԻ ԿԱՆՉՕՂ։
Պարտատէր,	տեառն·	ՊԱՐՏՔԻՏԷՐ, ԱՌՆԵԼԻՔ ՈՒՆՕՂ։
Տանուտէր,	տեառն·	ՏԱՆՈՒՏԷՐ· ԷՎ ՍԱՀԱՊԸ։

Այսպէս հոլովի և անուանս Այր և բարդեալք նորա·
զոր օրինակ,

Այր,	առն·	ԷՐԻԿ ՄԱՐԴ· ՔԻՇԻ։
Քերայր,	առն·	ՔՈՒՐՈՋ ԷՐԻԿՆ· ԷՆԻՇՏԷ։
Երկայր,	առն·	ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԷՐԻԿ, ԱՌՆՕՂ։

Հոլովումն անուանս Հայր։

	Եզակի։	Յոգնակի։
Ո·	Հայր·	Հարք·
Ս·	Հօր·	Հարց կամ հարանց·
Ո·	Հօր, առ հայր, ցհայր·	Հարց, առ հարս, ցհարս·
Հ·	զՀայր·	զՀարս·
Բ·	'ի Հօրէ·	'ի Հարց կամ 'ի հարանց·
Պ·	զՀօրէ·	զՀարց կամ զհարանց·
Գ·	Հարբ·	Հարբք·
Պ·	զՀարբ·	զՀարբք·
Ն·	'ի Հօր կամ 'ի հայր·	'ի Հարս·
Կ·	ով Հայր։	ով Հարք։

Այսպէս հոլովին և անուանքս Մայր և Եղբայր և
բարդեալք նոցին· զոր օրինակ,

Մայր, մօր, մարց· ՄԱՅՐ· ԱՆԱ։

Անքահայր, հօր, հարց. Անքահար. սաղարձ.
Նախահայր, հօր, հարց. Նախնի հայր. պապ. տէտէ.
Եղբայր, եղբօր, բարց. Եղբար. գարտաշ.
Հօրեղբայր, եղբօր, բարց. Հօրեղբար. ամուճա.

Հոլովումն անուանս Քոյր.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Քոյր.	Քորք.
Ս.	Քեռ.	Քերց.
Տ.	Քեռ, առ քոյր, ցքոյր.	Քերց. ցքորս
Հ.	զՔոյր.	զՔորս.
Բ.	՚ի Քեռէ.	՚ի Քերց.
Պ.	զՔեռէ.	զՔերց.
Գ.	Քերբ.	Քերբք.
Փ.	զՔերբ.	զՔերբք.
Ն.	՚ի Քեռ կամ ՚ի քոյր.	՚ի Քորս.
Կ.	ով Քոյր.	ով Քորք.

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. որ

Հօրաքոյր, քեռ. Հօրքուր. հալա.
Մօրաքոյր, քեռ. Մօրքուր. թէյզէ.

Հոլովումն անուանս Կին.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Կին.	Կանայք.
Ս.	Կնոջ.	Կանանց.
Տ.	Կնոջ, ցկին.	Կանանց, առ կանայս.
Հ.	զԿին.	զԿանայս.
Բ.	՚ի Կնոջէ.	՚ի Կանանց.
Պ.	զԿնոջէ.	զԿանանց.
Գ.	Կանամբ կամ կնաւ.	Կանամբք.
Փ.	զԿանամբ կմ զկնաւ.	զԿանամբք.
Ն.	՚ի Կնոջ կամ ՚ի կին.	՚ի Կանայս.
Կ.	ով Կին.	ով Կանայք.

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. դբ

Տիկին,	տիկնոջ, տիկնաց կմ տիկնանց.	Խաթուն. սուլթան։
Ընտանիկին,	կնոջ.	Իւրէն անօղ. էրլէ։
Միակին,	կնոջ.	Մէկ կընկան հետ կարգուած։

Հոլովումն անուանս Գիւղ։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Գիւղ.	Գիւղք.
Ս.	Գեղջ.	Գիւղից.
Տ.	Գեղջ, 'ի գիւղ.	Գիւղից, 'ի գիւղս
Հ.	զԳիւղ.	զԳիւղս.
Բ.	'ի Գեղջէ.	'ի Գիւղից.
Պ.	զԳեղջէ.	զԳիւղից.
Գ.	Գիւղիւ.	Գիւղօք.
Պ.	զԳիւղիւ.	զԳիւղօք.
Ն.	'ի Գեղջ կամ 'ի գիւղ.	'ի Գիւղս.
Կ.	ով Գիւղ։	ով Գիւղք։

Սորա յոգնականն լինի և Գիւղօրէք, գիւղօրէից և գիւղօրէս, զգիւղօրէս, 'ի գիւղօրէից, զգիւղօրէից, գիւղօրէիւք, զգիւղօրէիւք, 'ի գիւղօրէս, ով գիւղօրէք։

Ըստ այսմ հոլովին և սոքին ։

Գեօղ, գեղջ, գեօղք, գեօղից.	Գեղ. քէօյ։
Ձորագիւղ, գեղջ.	Ձորու մէջ եղած գեղ։
Նորագիւղ, գեղջ.	Նոր գեղ։
Քաղաքագիւղ, գեղջ.	Մեծ գեղ. խասապա։

Հոլովումն անուանս Օր ։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Օր.	Աւուրք.
Ս.	Աւուր.	Աւուրց.
Տ.	Աւուր, յօր, ցօր.	Աւուրց, յաւուրս, ցաւուրս.
Հ.	զՕր.	զԱւուրս.

Բ.	յՕրէ.	յԱւուրց.
Պ.	զՕրէ.	զԱւուրց.
Գ.	Աւուրբ.	Աւուրբք.
Պ.	զԱւուրբ.	զԱւուրբք.
Ն.	յԱւուր կամ յօր.	յԱւուրս.
Կ.	ով Օր։	ով Աւուրք.

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. զբ

Երկայնօր,	աւուր.	Երկան օր, շատ օրեր։
Կէսօր,	աւուր.	Օրհասարակ։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս հոլովմանց միջական անուանց։

Միջական անուանք են հնգապատիկ. մասնականք, հարցականք, վերբերականք, հանրականք և թուականք. զորոց զհոլովմունսն դիցուք առաջի։

Հոլովումն մասնական անուանցս Ոմն, ոք, իմն, ինչ։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Ոմն.	Ոմանք.
Ս.	Ուրումն.	Ոմանց.
Տ.	Ումեմն, առ ոմն.	Ոմանց, առ ոմանս.
Հ.	զՈմն.	զՈմանս.
Բ.	յՈւմեմնէ.	յՈմանց.
Պ.	զՈւմեմնէ.	զՈմանց.
Գ.	Ոմամբ.	Ոմամբք.
Պ.	զՈմամբ.	զՈմամբք.
Ն.	յՈւմեմն կամ յոմն։	յՈմանս։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Ոք.	Ոմանք.
Ս.	Ուրուք.	Ոմանց.
Տ.	Ումեք, առ ոք.	Ոմանց, ցոմանս.
Հ.	զՈք.	զՈմանս։

Բ.	յՈւմեքէ .	յՈմանց .
Պ.	զՈւմեքէ .	զՈմանց .
Գ.	Ոմամբ .	Ոմամբք .
Պ.	զՈմամբ .	զՈմամբք .
Ն.	յՈւմեք կամ յոք ։	յՈմանս ։

Նշակէ .

Ուղղական .	Իմն, կամ Ինչ .
Սեռական .	Իրիք .
Տրական .	Իմիք, առ իմն կամ յինչ ։
Հայցական .	զԻմն, կամ զինչ .
Բացառական .	յԻմեքէ .
Պատմական .	զԻմեքէ .
Գործիական .	Իւիք .
Պարառական .	զԻւիք .
Ներգոյական .	յԻմիք կամ յիմն կամ յինչ ։

Նշակէ ։

Ուղղական .	Միւս .
Սեռական .	Միւսոյ .
Տրական .	Միւսում կամ միւսոյ, ցմիւս .
Հայցական .	զՄիւս .
Բացառական .	՚ի Միւսմէ կամ ՚ի միւսոյ .
Պատմական .	զՄիւսմէ կամ զմիւսոյ .
Գործիական .	Միւսով .
Պարառական .	զՄիւսով .
Ներգոյական .	՚ի Միւսում կամ ՚ի միւս ։

Ըստ այսմ հոլովին և մասնական անուանքս Իւրաքանչիւր, իւրոյ, իւրում, իւրմէ, իւրով ։ Երկաքանչիւր, իւրոյ, իւրում, իւրմէ, ևն . որոց յոգնակին լինի որպէս գէտք, գէտոց . զոր օրինակ, իւրաքանչիւրք, իւրոց . երկաքանչիւրք, իւրոց, ևն ։

Սոյնպ՟ հոլովի և ածական անունս Այլ . զոր օրինակ, Այլ, այլոյ, այլում, յայլմէ, այլով, այլում . այլք, այլոց, այլովք, յայլս

Հոլովումն հարցական անուանս Ո՞վ կամ ո՞։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Ո՞վ կամ ո՞.	Ո՞յք.
Ս.	Ո՞յր.	Ո՞յց.
Տ.	Ո՞ւմ, առ ո՞վ կամ առ ո՞.	Ո՞յց կամ որո՞ց.
Հ.	զՈ՞վ կամ զո՞.	զՈ՞յս.
Բ.	յՈւմմէ՞.	յՈրո՞ց.
Պ.	զՈւմմէ՞.	զՈրո՞ց.
Գ.	Ի՞ւ.	Որովք.
Պ.	զԻ՞ւ.	զՈրովք.
Ն.	յՈ՞ւմ կամ յո՞վ կամ յո՞։	յՈ՞րս։

Հոլովումն վերբերական անուանս Այսքան։

	Եզակի։	Յոգնակի.
Ո.	Այսքան.	Այսքանիք.
Ս.	Այսքանոյ.	Այսքանեաց կ՟.քանից.
Տ.	Այսքանոյ, ցայսքան.	Այսքանեաց, ցայսքանս.
Հ.	զԱյսքան.	զԱյսքանս.
Բ.	յԱյսքանոյ.	յԱյսքանեաց.
Պ.	զԱյսքանոյ.	զԱյսքանեաց.
Գ.	Այսքանեաւ.	Այսքանեօք.
Պ.	զԱյսքանեաւ.	զԱյսքանեօք.
Ն.	յԱյսքան.	յԱյսքանս.

Ըստ այսմ հոլովին և սոքին, Որքան, այդքան, այնքան, սոյնքան, դոյնքան, նոյնքան։

Իսկ բառքս Որպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի, հոլովին ամենևին որպէս Եկեղեցի, ւոյ։

Հոլովումն հանրական անուանս Ամենեքեան կամ ամենեքին։

	Յոգնակի։
Ո.	Ամենեքեան կամ ամենեքին.

Ս. Ամենեցուն կամ ամենեցունց.
Տ. Ամենեցուն, առ ամենեսեան կամ առ ամենեսին.
Հ. զԱմենեսեան կամ զամենեսին.
Բ. յԱմենեցունց.
Պ. զԱմենեցունց.
Գ. Ամենեքումբք.
Պ. զԱմենեքումբք.
Ն. յԱմենեսեան կամ յամենեսին.
Կ. ով Ամենեքեան կամ ով ամենեքին.

Նոյնպէս հոլովի և բառս Բոլորեքեան կամ բոլորեքին, բոլորեցուն, և այլն:

Հոլովումն Թուական անուանս Մի:

Եզակի:

Ո. Մի.
Ս. Միոյ կամ միոջ.
Տ. Միում կամ միոյ, 'ի մի.
Հ. զՄի.
Բ. 'ի Միոյ կամ 'ի միոջէ.
Պ. զՄիոյ կամ զմիոջէ.
Գ. Միով.
Պ. զՄիով.
Ն. 'ի Միում կամ 'ի մի կամ 'ի միոջ.
Կ. ով Մի:

Այնպէս հոլովին և բարդեալք սորա. որգոն, Քսանևմի, միոյ. երեսունևմի, միոյ, և այլն:

Իսկ վասն այլոց Թուական անուանց գիտելի է, զի ընդարձակքն պէսպէս հոլովին. որգոն,

Երկու, երկուց, երկոքումբք:
Երեք, երից, երիւք:
Չորք կամ չորս, չորից, չորիւք:
Հինգ, հնգիւ, հնգից, հնգօք կամ հնգիւք:
Վեց, վեցից, վեցիւք.
Եօթն, եօթանց կամ եօթնից, եօթամբք:

Ութ, ութիւ, ութից, ութիւք ։
Ինն, ըննի, ըննիւ, ինունք, իննունց կամ ինունց կամ ըննից, ըննիւք կամ ինամբք և կամ իննամբք ։
Տասն, տասին, տասամբ, տասունք, սանց, սամբք ։
Մետասան կամ սանք, սանից, նիւք ։
Քսան, քսանից, քսանիւք ։
Երեսուն, երեսնից, երեսնիւք ։
Հարիւր, ոյ, ով, ոց. կամ ից, ովք կամ օք ։
Երկերիւր, ոյ, ով, ոց. կամ ի, իւ, ից, օք ։
Հազար, ի, աւ կամ իւ, աց կամ ից, օք ։
Բիւր, ու, ու, ուց, ուք. կամ ոյ, ով, ոց, ովք ։
Այնպէս հոլովին և այլ ևս ընդարձակ թուական անուանք, որք ըստ վերոյգրելոցդ յանգին ։

Իսկ դասականքն հոլովին ընդ առաջին և ը̅ երկրորդ օրինակաւ, որ̅ ը̅ ԲԱՆԻՒ և ընդ ՔԱՂԱՔԱՒ. Օր̅,

Առաջներորդ, ի, աւ կամ իւ, աց, օք ։
Երկրորդ, ի, աւ կամ իւ, աց, օք ։
Երրորդ, ի, աւ կամ իւ, աց, օք ։
Տասներորդ, ի, աւ կամ իւ, աց, օք, ևն ։

Այնպէս և զատական և կրկնական անուանք թուականք թէպէտ հազիւ ուրեք հոլովին, բայց 'ի ստիպել հարկին լինի ըստ դասականացն ընդ ՔԱՂԱՔԱՒ և ընդ ԲԱՆԻՒ. որգոն,

Հնգեակ, գեկի, կաւ կամ կիւ, կաց, կօք ։
Հնգապատիկ, պատկի, կաւ կամ կիւ, կաց, կօք.
ըստ այսմ և այլքն ։

Իսկ անձներականք՝ որպիսի են Երկոքեան, երեքեան, չորեքեան, և այլն, հոլովին ըստ հանրականին. որգոն,

Երկոքեան, կոցունց. կամ երկոքին, կոցուն, կոքումբք ։
Երեքեան, երեցունց. կամ երեքին, երեցուն, երեքումբք, և այլն ։

ԴԼՈՒԽ Դ.

Յաղագս հոլովման Դերանուանց.

Դերանուանք են հնգապատիկ. Անձական. ես, դու, ինքն, իւր։ Ցուցական. սա, դա, նա. այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն։ Ստացական. իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրոյ. և՝ սորայն, դորայն, նորայն, և այլն։ Յարաբերական. որ. և Դիմորոշական. ս, դ, ն։

Սոքա առ հասարակ բաց 'ի դիմորոշականէն՝ պէսպէս հոլովին, զորոց զօրինակսն դիցուք կարգաւ։

Հոլովումն էական դերանուանցս Ես, Դու, Ինքն, Իւր։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Ես.	Մեք.
	Իմ.	Մեր.
Տ.	Ինձ, առ իս, յիս, ընդ իս.	Մեզ, առ մեզ.
Հ.	զԻս.	զՄեզ.
Բ.	յԻնէն.	'իՄէնջ.
Ա.	զԻնէն.	զՄէնջ.
Գ.	Ինև.	Մեօք.
Պ.	զԻնև.	զՄեօք.
Ն.	յԻս։	'իՄեզ։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Դու.	Դուք.
Ս.	Քո.	Ձեր.
Տ.	Քեզ, առ քեզ, ցքեզ.	Ձեզ, առ ձեզ.
Հ.	զՔեզ.	զՁեզ.
Բ.	'իՔէն.	'իՁէնջ.
Ա.	զՔէն.	զՁէնջ.
Գ.	Քև.	Ձեօք.

Պ.	զՔև .	զՁեօք .
Ն.	՚ի Քեզ .	՚ի Ձեզ .
Կ.	ո՛վ Դու :	ո՛վ Դուք :

	Եզակի .	Յոգնակի :
Ո.	Ինքն .	Ինքեանք .
Ս.	Ինքեան .	Ինքեանց .
Տ.	Ինքեան , առ Ինքն .	Ինքեանց , առ Ինքեանս .
Հ.	զԻնքն .	զԻնքեանս .
Բ.	յԻնքենէ .	յԻնքեանց .
Պ.	զԻնքենէ .	զԻնքեանց .
Գ.	Ինքեամբ .	Ինքեամբք .
Պ.	զԻնքեամբ .	զԻնքեամբք .
Ն.	յԻնքեանս կմ̃ յԻնքն :	յԻնքեանս :

	Եզակի :	Յոգնակի .
Ո.	(ոչ ունի)	Իւրեանք .
Ս.	Իւր կամ Իւրեան .	Իւրեանց .
Տ.	Իւր կմ̃ Իւրեան . առ Իւր .	Իւրեանց ը̅ Իւրեանս .
Հ.	(ոչ ունի)	(ոչ ունի)
Բ.	զԻւրմէ .	զԻւրեանց .
Գ.	Իւրև կմ̃ Իւրեամբ կմ̃ Իւրեաւ .	Իւրեամբք .
Պ.	զԻւրև կմ̃ զԻւրեամբ կմ̃ զԻւրեաւ .	զԻւրեամբք .
Ն.	յԻւր կամ յԻւրեանս :	յԻւրեանս :

Նոյնպէս հոլովին ը̅ իմիք և անեզական պակասաւոր դերանունքս Միմեանց և Իրերաց . ո՛րգոն .

	Յոգնակի .	Յոգնակի .
Ս.	Միմեանց .	Իրերաց .
Տ.	Միմեանց , առ միմեանս .	Իրերաց , ցիրեարս .
Հ.	զՄիմեանս .	զԻրեարս .
Բ.	՚ի Միմեանց .	յԻրերաց .
Պ.	զՄիմեանց .	զԻրերաց .
Գ.	Միմեամբք .	Իրերօք .
Պ.	զՄիմեամբք .	զԻրերօք .
Ն.	՚ի Միմեանս :	յԻրեարս :

Հոլովումն ցուցական դերանուանս Նա ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Նա·	Նոքա կ̄մ նոքին ·
Ս·	Նորա կամ նորուն·	Նոցա կ̄մ նոցուն կամ նոցունց ·
Տ·	Նմա , առ նա , ցնա կամ ընդ նա ·	Նոցա , առ նոսա , ը̄ն նս̄ կ̄մ ը̄ն նոսին ·
Հ·	զՆա ·	զՆոսա կ̄մ զնոսին ·
Բ·	՚ի Նմանէ ·	՚ի Նոցանէ կ̄մ ցունց ·
Պ·	զՆմանէ ·	զՆոցանէ կ̄մ ցունց ·
Գ·	Նովաւ ·	Նոքօք կ̄մ նոքիմբք ·
Պ·	զՆովաւ ·	զՆոքօք կ̄մ զնոքիմբք ·
Ն·	՚ի Նմա կ̄մ ՚ինմին կ̄մ ՚ի նա ։	՚ի Նոսա կ̄մ ՚ի նոսին ։

Նոյնպէս հոլովին և սոքին · Սա , սորա , դա , դորա ։

Հոլովումն ցուցական դերանուանս Նոյն ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Նոյն ·	Նոյնք ·
Ս·	Նորին ·	Նոցին ·
Տ·	Նմին , առ նոյն ·	Նոցին , առ նոյնս ·
Հ·	զՆոյն ·	զՆոյնս ·
Բ·	(ոչ ունի)	(ոչ ունի)
Պ·	(ոչ ունի)	(ոչ ունի)
Գ·	Նովիմբ կ̄մ նովին ·	Նոքիմբք կ̄մ նոքումբք ·
Պ·	զՆովիմբ կ̄մ զնովին ·	զՆոքիմբք կ̄մ զնոքումբք ·
Ն·	՚ի Նոյն ։	՚ի Նոյնս ։

Նոյնպէս հոլովին և սոքին · Սոյն , սորին · դոյն , դորին ։

Հոլովումն ցուցական դերանուանս Այն ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Այն ·	Այնոքիկ կ̄մ այնք ·

Ս.	Այնր կ՟մ այնորիկ.	Այնոցիկ կ՟մ այնց.
Տ.	Այնմ կ՟մ այնմիկ, առ այն.	Այնոցիկ, առ այնոսիկ, ը՟ այնոսիկ.
Հ.	զԱյն.	զԱյնոսիկ կ՟մ զայնս.
Բ.	յԱյնմանէ.	յԱյնցանէ կ՟մ յայնց կամ յայնոցիկ.
Պ.	զԱյնմանէ.	զԱյնցանէ կ՟մ զայնց կամ զայնոցիկ.
Գ.	Այնու կամ այնուիկ.	Այնոքիւք կ՟մ քիմբք.
Պ.	զԱյնու կ՟մ զայնուիկ.	զԱյնոքիւք կ՟մ քիմբք.
Ն.	յԱյնմ կ՟մ յայնմիկ կ՟մ յայն։	յԱյնոսիկ կ՟մ յայնս։

Այսպէս հոլովին և սոքին. Այս, այսր կամ այսորիկ, այսոքիկ, այսոցիկ, և այլն։ Այդ, այդր կամ այդորիկ, այդոքիկ, այդոցիկ, և այլն։

Հոլովումն ստացական դերանուանցս Քոյ և իմ.

	Եզակի։	Յոգնակի։
Ու.	Քոյ.	Քոյք.
Ս.	Քոյոյ կամ քոյ.	Քոյոց կամ քոց.
Տ.	Քում կ՟մ քոյոյ կ՟մ քոյ, ՚ի քոյ.	Քոյոց կ՟մ քոց, ՚ի քոյս.
Հ.	զՔոյ.	զՔոյ.
Բ.	՚ի Քումմէ կ՟մ ՚ի քոյոյ.	՚ի Քոյոց կ՟մ ՚ի քոց.
Պ.	զՔումմէ կամ զքոյոյ.	զՔոյոց կ՟մ զքոց.
Գ.	Քոյով կամ քով.	Քոյովք կ՟մ քովք.
Պ.	զՔոյով կամ զքով.	զՔոյովք կ՟մ զքովք.
Ն.	՚ի Քում կամ ՚ի քոյ։	՚ի Քոյս։

	Եզակի։	Յոգնակի։
Ու.	Իմ.	Իմք.
Ս.	Իմոյ.	Իմոց.
Տ.	Իմում կ՟մ իմոյ, առ իմ.	Իմոց, առ իմս.
Հ.	զԻմ.	զԻմս.
Բ.	յԻմմէ կ՟մ յիմոյ.	յԻմոց.
Պ.	զԻմմէ կ՟մ զիմոյ.	զԻմոց.
Գ.	Իմով.	Իմովք.

Փ.	զԻմով ·	զԻմովք ·
Ն.	յԻմում կ͞մ յիմ ·	յԻմս ·
Կ.	ովԻմ ։	(ոչ է 'ի կիր ։)

Այսպ͞ հոլովին և ստացական դերանուանքս այսոքիկ ։

Մեր, մերոյ, մերում, 'ի մերմէ, մերով, 'ի մերում ։
Ձեր, ձերոյ, ձերում, 'ի ձերմէ, ձերով, 'ի ձերում ։
Իւր, իւրոյ, իւրում, յիւրմէ, իւրով, յիւրում ։

Հոլովումն ստացական և ածանցական դերանուանս Նորայ ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Նորայ ·	Նորայք ·
Ս.	Նորայոյ ·	Նորայոց ·
Տ.	Նորայում, առ Նորայն ·	Նորայոց, 'ի Նորայս ·
Հ.	զՆորայն ·	զՆորայս ·
Բ.	'ի Նորայոյ ·	'ի Նորայոց ·
Պ.	զՆորայոյ ·	զՆորայոց ·
Գ.	Նորայով ·	Նորայովք ·
Փ.	զՆորայով ·	զՆորայովք ·
Ն.	'ի Նորայում կ͞մ 'ի Նորայն ։	'ի Նորայս ։

Ըստ այսմ հոլովին և սոքին · Սորայ, սորայք · սոցայ, սոցայք · դորայ, դորայք · դոցայ, դոցայք · նոցայ, նոցայք ։

Հոլովումն ստացական և ածանցական դերանուանս Նորայն ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Նորային ·	Նորայինք ·
Ս.	Նորայնոյ ·	Նորայնոց ·
Տ.	Նորայնում, առ Նորային ·	Նորայնոց, առ Նորայինս ·
Հ.	զՆորային ·	զՆորայինս ·
Բ.	'ի Նորայնոյ ·	'ի Նորայնոց ·

Պ.	զ՚Սորայնոյ ·	զ՚Սորայնոց ·
Գ.	՚Սորայնով ·	՚Սորայնովք ը̄դ նօք ·
Պ.	զ՚Սորայնով ·	զ՚Սորայնովք ը̄դ նօք ·
Ն.	՚ի Սորայնն ը̄դ ՚ի նորայնում:	՚ի Սորայնս :

Ըստ այսմ հոլովին և սոքին. Սորայն, սոցայն, դորայն, դոցայն, նոցայն, իմայն, քոյայն, իւրայն, իւրեանցայն, մերայն, ձերայն : Որոց յոգնակին լինի իւրայոց կամ իւրայնոց, իւրեանցայոց կամ իւրեանցայնոց, մերայոց կամ մերայնոց, ձերայոց կամ ձերայնոց :

Իսկ դերանուանքս Մերոյին, ձերոյին, իւրոյին, քոյին, իմոյին, նախդրիւ միայն հոլովին. որգոն, ՚ի մերոյին, առ ձերոյին, զիւրոյին, ը̄ քոյին, յիմոյին :

Հոլովումն յարաբերական դերանուանս Որ :

	Եզակի :	Յոգնակի :
Ո.	Որ կամ ո ·	Որք կամ ոյք ·
Ս.	Որոյ կամ ոյր ·	Որոց ·
Տ.	Որում կամ ում, առ որ ·	Որոց, առ որս ·
Հ.	զՈր ·	զՈրս ·
Բ.	յՈրմէ ·	յՈրոց ·
Պ.	զՈրմէ ·	զՈրոց ·
Գ.	Որով ·	Որովք ·
Պ.	զՈրով ·	զՈրովք ·
Ն.	յՈրում կամ յոր կամ յում:	յՈրս :

Սա հանդերձ ոլորակաւ է անուն հարցական, անփոփոխ պահելով զնոյն հոլովումն :

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս խոնարհման Բայից ըստ չորից լծորդութեանց.

Ա— Նախ յաղագս խոնարհման էական բայից։

Էական բայս Եմ լռացեալ յայլոց էական բայից խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի՝ Ներկայ։

եզ. Եմ, ես, է.
յոգ. եմք, էք, են։

Անկատար։

եզ. Էի, էիր, էր.
յոգ. էաք. էիք, էին։

Կատարեալ։

եզ. Եղէ, եղեր, եղև.
յոգ. եղաք, եղէք, եղեն։

Յարակատար։

եզ. Եղեալ եմ, եղեալ ես, եղեալ է.
յոգ. եղեալ եմք, եղեալ էք, եղեալ են։

Գերակատար։

եզ. Եղեալ էի, եղեալ էիր, եղեալ էր.
յոգ. եղեալ էաք, եղեալ էիք, եղեալ էին։

Ապառնի։

եզ. Եղէց, եղիցիս, եղիցի.
յոգ. եղիցուք, եղիջիք, եղիցին։

Հրամայական եղանակի՝ Ներկայ։

եզ. Ե՛ր. (գ̅ր, ողջ եր). յոգ. Երուք. (գ̅ր, ողջ երուք.)

Ապառնի։

եզ. Եղիջի՛ր, եղիցի՛.
յոգ. եղիցո՛ւք, եղիջի՛ք, եղիցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

եզ. Իցեմ, իցես, իցէ.
յոգ. իցեմք, իցէք, իցեն։

Անցեալ:

եզ. Եղեալ լիցիմ, եղեալ լիցիս, եղեալ լիցէ.
յոգ. եղեալ լիցիմք, եղեալ լիցէք, եղեալ լիցեն:

Աներեւոյթ եղանակի. Ել, ելոյ, ելով:
Ընդունելութիւն, ներկայ անցեալ. Եղեալ.
Ապառնի. Լինելոց:

Կրական բայս Լինիմ խոնարհի այսպէս:

Սահմանական եղանակի Ներկայ:

եզ. Լինիմ, լինիս, լինի.
յոգ. լինիմք, լինիք, լինին:

Անկատար:

եզ. Լինէի, լինէիր, լինէր.
յոգ. լինէաք, լինէիք, լինէին:

Անցեալ:

եզ. Եղէ, եղեր, եղեւ.
յոգ. եղաք կամ եղեաք, եղէք, եղեն:

Յարակատար:

եզ. Լեալ եմ, լեալ ես, լեալ է.
յոգ. լեալ եմք, լեալ էք, լեալ են:

Գերակատար:

եզ. Լեալ էի, լեալ էիր, լեալ էր.
յոգ. լեալ էաք, լեալ էիք, լեալ էին:

Ապառնի:

եզ. Լիցիմ, լիցիս, լիցի.
յոգ. լիցուք, լիջիք կամ լինիջիք, լիցին.

Հրամայական եղանակի Ներկայ:

եզ. Լե՛ր, մի՛ լինիր.
յոգ. լերո՛ւք, մի՛ լինիք:

Ապառնի:

եզ. Լիջի՛ր կամ լինիջի՛ր կամ լիցիս, լիցի՛.
յոգ. լիցո՛ւք, լիջի՛ք կամ լինիջի՛ք, լիցին.

Ստորադասական եղանակի Ապառնի:

եզ. Լինիցիմ. լինիցիս, լինիցի.
յոգ. լինիցիմք, լինիցիք, լինիցին:

Անցեալ:

եզ. Լեալ լիցիմ, լեալ լիցիս, լեալ լիցի.
յոգ. լեալ լիցիմք, լեալ լիցիք, լեալ լիցին:

Աներևոյթ եղանակ. Լինել, լինելոյ, լինելով, և այլն:
Ընդունելութիւն. Ներկայ, և Անցեալ. Լեալ:
Ապառնի. Լինելոց, լինելի:
Այնպէս խոնարհի և եական բայս Եղանիմ:
Իսկ եական բայս Գոմ խոնարհի յայսչափ ժամս միայն:
Գոմ, գոս, գոյ. գոմք, գոյք, գոն:
Գոյի, գոյիր, գոյր. գոյաք, գոյիք, գոյին:
Գուցէ, գուցեն: Գոլ, գոլոյ, գոլով: Գոյող:

ԳԼՈՒԽ Զ.

Խոնարհմունք ներգործական բայից, ընդ որս և չեզոքականաց և հասարակաց ըստ առաջին լծորդութեան:

Օրինակ առաջին:

Սահմանական եղանակի Ներկայ:

եզ. Գործեմ, գործես, գործէ.
յոգ. գործեմք, գործէք, գործեն:

Անկատար:

եզ. Գործէի, գործէիր, գործէր.
յոգ. գործէաք. գործէիք, գործէին:

Կատարեալ:

եզ. Գործեցի, գործեցեր, գործեաց.
յոգ. գործեցաք, գործեցիք, գործեցին:

Յարակատար:

եզ. Գործեալ եմ, գործեալ ես, գործեալ է.
յոգ. գործեալ եմք, գործեալ էք, գործեալ են:

Գերակատար:

եզ. Գործեալ էի, գործեալ էիր, գործեալ էր.
յոգ. գործեալ էաք, գործեալ էիք, գործեալ էին:

Ապառնի:

եզ. Գործեցից, գործեսցես, գործեսցէ.

յոգ. գործեսցուք գործեսջիք գործեսցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

եզ. Գործեա՛, մի՛ գործեր·
յոգ. գործեցէ՛ք, մի՛ գործէք ։

Ապառնի ։

եզ. Գործեսջի՛ր կ՟մ գործեսցե՛ս, գործեսցէ՛·
յոգ. գործեսցուք, գործեսջի՛ք, գործեսցեն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

եզ. Գործիցեմ, գործիցես, գործիցէ·
յոգ. գործիցեմք, գործիցէք, գործիցեն ։

Անցեալ ։

եզ. Գործեալ իցեմ, գործեալ իցես, գործեալ իցէ ։
յոգ. գործեալ իցեմք, գործեալ իցէք, գործեալ իցեն ։

Աներեւոյթ եղանակ. Գործել, գործելոյ, 'ի գործել. եւն.
Ընդունելութի. Ներկայ. Գործօղ ։ Անցեալ. գործեալ.
Ապառնի. Գործելոց ։

Օրինակ կրաւորականին ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

եզ. Գործիմ· գործիս, գործի·
յոգ. գործիմք, գործիք, գործին ։

Անկատար ։

եզ. Գործէի, գործէիր, գործէր կ՟մ գործիւր·
յոգ. գործէաք, գործէիք, գործէին ։

Կատարեալ ։

եզ. Գործեցայ, գործեցար, գործեցաւ·
յոգ. գործեցաք, գործեցայք, գործեցան ։

Յարակատար ։

եզ. Գործեալ եմ կ՟մ գործեցեալ եմ, ես, է ։
յոգ. գործեալ եմք կ՟մ գործեցեալ եմք, էք, են ։

Գերակատար ։

եզ. Գործեալ էի կ՟մ գործեցեալ էի, էիր, էր·
յոգ. գործեալ էաք կ՟մ գործեցեալ էաք, էիք, էին ։

Ապառնի ։

եզ. Գործեցայց, գործեսցիս, գործեսցի·
յոգ. գործեսցուք, գործեսջիք կ՟մ գործիջիք, գործեսցին ։

1859 18 2/6 59

Հրամայական եղանակի Ներկայ ։

եզ. Գործեա՛ց, մի՛ գործիր.
յոգ. գործեցարո՛ւք, մի՛ գործիք ։

Ապառնի ։

եզ. Գործեսջիր կ՟ գործեսցիս, գործեսցի.
յոգ. գործեսցո՛ւք, գործեսջի՛ք կ՟ գործիջի՛ք, գործեսցին ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

եզ. Գործիցիմ, գործիցիս, գործիցի.
յոգ. գործիցիմք, գործիցիք, գործիցին ։

Անցեալ ։

եզ. Գործեալ իցեմ կ՟ գործեցեալ իցեմ, իցես, իցէ.
յոգ. գործեալ իցեմք կ՟ գործեցեալ իցեմք, իցէք, իցեն ։
Աներեւոյթ եղանակ. Գործել, գործելոյ, գործելով. ևն ։
Ընդունելութ. Ներկայ և Անցեալ. Գործել կ՟ գործեցել ։
Ապառնի. Գործելի կամ գործելոց ։

Ըստ այսմ խոնարհին և այլ բազում ներգործական բայք. զոր օրինակ,

Ամփոփեմ, եցի, եա՛. ժողվէլ. թօփ ընէլ ։
Բժշկեմ, եցի, եա՛. բժշկէլ, բուընդցնէլ ։
Գանձեմ, եցի, եա՛. խազնա դիզէլ ։
Զարդարեմ, եցի, եա՛. զարդարէլ, սազէլ ։
Թօթափեմ, եցի, եա՛. թոթվէլ ։ կամ թափէլ ։
Ձգեմ, եցի, եա՛. նէտէլ ։ կամ տարածէլ ։
Մերժեմ, եցի, եա՛. հըրէլ, վըռընդէլ ։
Յարմարեմ, եցի, եա՛. յարմարցնէլ. ույդուրմիշ ընէլ ։
Քակտեմ, եցի, եա՛. խէթա քաշէլ. ձէղ սէօքմէք ։
Սերմանեմ, եցի, եա՛. հունդ ցանէլ. թոհում էքմէք ։

Ըստ այսմ խոնարհին և բազում ներգործակերպ չէզոքական բայք. զ՟ր,

Ամաչեմ, եցի, եա՛. ամըչնալ. ուտանմաք ։
Արշաւեմ, եցի, եա՛. վազէլ. սէյրան ընէլ ։
Դիմեմ, եցի, եա՛. վըրայ երթալ ։
Խուսափեմ, եցի, եա՛. մէկդէ քաշուէլ. սաւուշմաք ։
Հսկեմ, եցի, եա՛. արթուն կենալ. այըխ մնալ ։

Ըստ կրաւորականի Գործեմին խոնարհմին և բազում ձայնակրական բայք. որ,

Աշխատիմ, եցայ, եա՛ց կ եա՛. չալըշըգ ըլլալ: եւ հոգնիլ:
Ապաւինիմ, եցայ, եա՛ց կ եա՛. սղընըգ ըլլալ. ապաստան դնել:
Սովորիմ, եցայ, եաց կ եա՛. սորվիլ. ալըշմաք:
Կարօտիմ, եցայ, եա՛ց. կարօտնալ, կարօտ ըլլալ:
Ստանգիմ, եցայ, եա՛ց. Ռէհնէքէ դէ ըլլալ:

Ըստ այսմ խոնարհին և քանի մի հասարակ բայք. զոր օրինակ,

Բարբառիմ, եցայ, եա՛. ըսել, զրուցել:
Դատիմ, եցայ, եա՛. դատել, դատաստան ընել:
Խորհիմ, եցայ, եա՛ց կ եա՛. մտմտալ. տիւշիւնմէք.
Համարիմ, եցայ, եա՛ց կ եա՛. համրել: եւ սեպել:
Խոստովանիմ, եցայ, եա՛ց կ եա՛. խոստովանիլ. իքրար էթմէք:

Սա յոլով ուրեք 'ի գործ ածի էական բային այսպէս. Խոստովան լինիմ, իս, ի. լինէի, էիր, էր. եղէ, եղեր, ևն:

Օրինակ երկրորդ:

Սահմանական եղանակի Ներկայ:

Հատանեմ, հատանես, հատանէ.
հատանեմք, հատանէք, հատանեն:

Անկատար:

Հատանէի, հատանէիր, հատանէր.
հատանէաք, հատանէիք, հատանէին:

Կատարեալ:

Հատի, հատեր, եհատ կամ հատ.
հատաք, հատիք, հատին:

Յարակատար:

Հատեալ եմ, ես, է. հատեալ եմք, էք, են:

Գերակատար:

Հատեալ էի, էիր, էր. հատեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Հատից, հատցես, հատցէ.
հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Հա՛տ, մի՛ հատաներ. հատէ՛ք, մի՛ հատանէք:

Ապառնի:

Հատջի՛ր կամ հատանիջի՛ր կամ հատցե՛ս, հատցէ՛.
հատցո՛ւք, հատջի՛ք կամ հատանիջի՛ք, հատցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Հատանիցեմ, հատանիցես, հատանիցէ.
հատանիցեմք, հատանիցէք, հատանիցեն:

Անցեալ:

Հատեալ իցեմ, իցես, իցէ. Հատե՛ալ իցեմք, իցէք, իցեն:

Աներեւոյթ եղանակ. Հատանել, հատանելոյ, ե՟ն:
Ընդունելութ. Ներկայ. Հատանող: Անցեալ. Հատեալ:
Ապառնի. Հատանելոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի Ներկայ:

Հատանիմ, հատանիս, հատանի.
հատանիմք, հատանիք, հատանին:

Անկատար:

Հատանէի, հատանէիր, հատանէր կ՟մ հատանիւր.
հատանէաք, հատանէիք, հատանէին:

Կատարեալ:

Հատայ, հատար, հատաւ.
հատաք, հատայք, հատան:

Յարակատար:

Հատեալ եմ, ես, է. հատեալ եմք, էք, են:

Գերակատար:

Հատեալ էի, էիր, էր. հատեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Հատայց, հատցիս, հատցի.
Հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցին:

Հրամայական եղանակի Ներկայ:

Հատջի՛ր, մի՛ հատանիր. հատարո՛ւք, մի՛ հատանիք:

Հրաման:

Հատջի՛ր, կամ հատցի՛ս, հատցի՛.
Հատցո՛ւք, հատջի՛ք. և այլն, որպէս սահմանականին:

Ստորադասական եղանակի Հրաման:

Հատանիցիմ, ցիս, ցի. Հատանիցիմք, ցիք, ցին:

Անցեալ:

Հատեալ իցեմ, իցես, իցէ. Հատեալ իցեմք, իցէք, իցեն:
Աներևոյթ եղանակ. Հատանիլ, հատանելոյ, են:
Ընդունելութ. Ներկայ և Անցեալ. Հատեալ կմ հատեցել:
Ապառնի. Հատանելի, կամ հատանելոց:

Այսպէս խոնարհին սակաւ բայք ներգործականք հանդերձ կրաւորականօք իւրեանց. Օր,

Անիծանեմ, ծի, ծեր, անէծ. անէ՛ծ. պէտտուա ընել:
Արկանեմ, կի, կեր, եարկ կմ արկ. ա՛րկ. ձգել, վար նետել:
Գտանեմ, գտի, գտեր, եգիտ. գի՛տ. գտնել. և ս իճատ ընել:
Լուծանեմ, ծի, ծեր, ելոյծ. լո՛յծ. արձակել, քակել. չէօզմէք:
Կլանեմ, կլի, կլեր, եկուլ. կո՛ւլ. կլլել. և ս կորսնցնել:
Հարկանեմ, րի, րեր, եհար. հա՛ր. զարնել. վուրմագ:
Մուծանեմ, ծի, ծեր, եմոյծ. մո՛յծ. մտցնել. կիրտիրմէք:
Սպանանեմ, նի, ներ, սպան. սպա՛ն. սպաննել, մեռցնել:
Տեսանեմ, սի, սեր, ետես. տե՛ս. տեսնել. կէօրմէք.
Ցուցանեմ, ցի, ցեր, եցոյց. ցո՛յց. ցուցնել. և ս իմացնել:

Ըստ այսմ խոնարհին և քանի մի ներգործակերպ չէզոքական բայք. Օր,

Անցանեմ, ցի, ցեր, եանց. ա՛նց. անցնել. կէչմէք:
Իջանեմ, իջի, իջեր, էջ. է՛ջ. իջնել. ինմէք:
Հասանեմ, սի, սեր, եհաս. հա՛ս. հասնել. եէթիշմէք:
Մտանեմ, մտի, մտեր, եմուտ. մո՛ւտ. մտնել. կիրմէք:
Համբերեմ, բերի, բերեր, բեր. բե՛ր. կամ համբերեցի. բերեա՛. համբր ընել. դիմանալ:

Ըստ կրաւորականի Հատանեմին խոնարհին և քանի մի հասարակ բայք. Օր,

Ծնանիմ, ծնայ, ծնի՛ր. ծնիլ. և ս ծագիլ:
Ուսանիմ, սայ, սի՛ր, . սորվիլ:
Սփածանիմ, ծայ, ծի՛ր. խառնաշփոթ ըլլալ:

Խոնարհմունք ներգործ. բայից. դ. լծորդ:

Սկսանիմ, սկսայ սկսայց, սկսցիս, սկսցի:
սկսցուք, սկսջիք, սկսցին. սկսեա՛լ.
Սկսիմ, սկսայ. սկսայց, սկսեսցիս, սեսցի.
սեսցուք, սեսջիք, սեսցին. սկսի՛ր.
} սկսել, պաշ-լամագ:

Տանիմ, տարայ. տարայց, տարցիս, տարցի. տա՛ր, մի՛ տանիր. տանիցիմ, ցիս, ցի. տանող կամ տարող. տարեալ: տանել և.ս վերցնել:

Ըստ այսմ լինին և քանի մի չէզոքական բայք ձայնակրականք. զոր օրինակ,

Բուսանիմ, սայ, սի՛ր, սարո՛ւք կամ սէ՛ք. բուսանել. պիթմէք:
Սնանիմ, սնայ, սնի՛ր, սնարո՛ւք. պէսլէնմիշ ըլլալ:
Մեռանիմ, ռայ, ռի՛ր, ռարո՛ւք. մեռանել. էօլմէք:
Ընկանիմ, անկայ, կի՛ր, կերո՛ւք. ընկնել. տիւշմէք:
Նստիմ, նստայ, նի՛ստ, տարո՛ւք կամ է՛ք. նստող. օթուրմագ:

Խոնարհումն Ասել բային:

Սահմանական եղանակի Ներկայ:

Ասեմ, ասես, ասէ. ասեմք, ասէք, ասեն:

Անկատար:

Ասէի, ասէիր, ասէր. ասէաք, ասէիք, ասէին:

Կատարեալ:

Ասացի, ասացեր, ասաց.
ասացաք, ասացիք, ասացին:

Յարակատար և Գերակատար.

Ասացեալ եմ, ես, է. են: Ասացեալ էի, էիր. են:

Ապառնի:

Ասացից, ասասցես, ասասցէ.
ասասցուք, ասասջիք, ասասցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Ասա՛, մի՛ ասեր. ասացէ՛ք, մի՛ ասէք:

Ապառնի.

Ասասջի՛ր կամ ասասցե՛ս, ասասցէ՛. ասասցո՛ւք, են:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Ասիցեմ, ցես, ցէ. ասիցեմք, ցէք, ցեն:

Անցեալ.

Ասացեալ լիցեմ, լիցես, լիցէ. ասացեալ լիցեմք, լիցէք, լիցեն։
Աներեւոյթ եղանակ. Ասել, ասելոյ, ասելով, յասել։
Ընդունելութիւն ՙՆերկայ. Ասող կամ ասացող։
Անցեալ. Ասացեալ։ Ապառնի. Ասելոց։

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի ՙՆերկայ։

Ասիմ, ասիս, ասի. Ասիմք, ասիք, ասին։

Անկատար։

Ասէի, էիր, էր կամ իւր. ասէաք, էիք, էին։

Կատարեալ։

Ասացայ, ասացար, ասացաւ.
ասացաք, ասացայք, ասացան։

Ապառնի։

Ասացայց, ասասցիս, ասասցի.
ասասցուք, ասասջի՛ք, ասասցին։

Հրամայական եղանակի ՙՆերկայ. (ոչ ունի։)

Ապառնի։

Ասասջի՛ր կամ ասասցի՛ս, ասասցի. ասասցուք, ե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ասիցիմ, ցիս, ցի. ասիցիմք, ցիք, ցին։
Աներեւոյթ եղանակ. Ասիլ, ասելոյ, ասելով, ե՛ն։
Ընդունելութիւն ՙՆերկայ և Անցեալ. Ասացեալ։
Ապառնի. Ասելի կամ ասելոց։

Իսկ այլ ժամանակքն լինին ըստ ներգործականին։

Ընդ սովաւ խոնարհի և ներգործական բայս Գիտեմ. փոփոխմամբ եզակի հրամայականին 'ի եա՛. որպ, Գիտեմ, գիտացի, գիտեա՛։

Խոնարհումն անցողական բայից.

Սահմանական եղանակի ՙՆերկայ։

Զօրացուցանեմ, ացուցանես, ացուցանէ.

զօրացուցանեմք, ացուցանէք, ացուցանեն ։

Անկատար ։

Զօրացուցանէի, ացուցանէիր, ացուցանէր ․
զօրացուցանէաք, ացուցանէիք, ացուցանէին ։

Կատարեալ ։

Զօրացուցի, զօրացուցեր, զօրացոյց ․
զօրացուցաք, զօրացուցիք, զօրացուցին ։

Յարակատար և Գերակատար ։

Զօրացուցեալ եմ, ես, է, ե̃ն ։ էի, էիր, էր, է̃ն ։

Ապառնի ։

Զօրացուցից, զօրացուսցես, զօրացուսցէ ․
զօրացուսցուք, ցուսջիք կ̃ ցուցանիջիք, ցուսցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Զօրացո՛, մի՛ զօրացուցանէր ․
զօրացուցէ՛ք, մի՛ զօրացուցանէք ։

Ապառնի ։

Զօրացուսջի՛ր կ̃ ցուցանիջի՛ր, ցուսցե՛ս, ցուսցէ՛ ․
զօրացուսցո՛ւք, ցուսջի՛ք կ̃ ցուցանիջի՛ք, ցուսցե՛ն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Զօրացուցանիցեմ, ացուցանիցես, ացուցանիցէ ․
զօրացուցանիցեմք, րացուցանիցէք, րացուցանիցեն ։

Անցեալ ։

Զօրացուցեալ իցեմ, իցես, իցէ ․ իցեմք, իցէք, իցեն ։
Աներևոյթ եղանակ ։ Զօրացուցանել, նելոյ ․ ե̃ն ։
Ընդունելութ ․ Ներկայ ․ Զօրացուցանող ։ Անցեալ ․ Զօրացուցեալ ։ Ապառնի ․ Զօրացուցանելոյ ։

Սորա կրաւորականն ոչ 'ի գործ ածի ․ այլ փոխան նր̃ դնի ներգործակերպ չեզոքականն, կամ ձայնակրականն, յորոց բղխին անցողականք ․ Ո̃ր,

Զօրանամ, փ̃կ ասելոյ Զօրացուցանիմ ։
Արդարանամ, փ̃կ ասելոյ Արդարացուցանիմ ։
Խոնարհիմ, փ̃կ ասելոյ Խոնարհեցուցանիմ, ե̃ն ։

Ըստ այսմ խոնարհին ա̃մ անցողական բայք յանգեալք 'ի -ացուցանեմ և 'ի -եցուցանեմ, և 'ի -ուցանեմ. ևս և 'ի ուցանէն. որոց հրամայական լինի ա՛յ և ե՛յ և ո՛. զոր օրինակ,

Աղօտացուցանեմ, ցուցի, ացո՛. մթնշաղցընել։
Ջեւացուցանեմ, ցուցի, ացո՛. ջուր մէջ խօթել։
Տկարացուցանեմ, ցուցի, ացո՛. ուժը կտրել։
Ապրեցուցանեմ, ցուցի, եցո՛. ապրեցնել, ազատել։
Զգեցուցանեմ, ցուցի, եցո՛. հագցընել։
Յիմարեցուցանեմ, ցուցի, եցո՛. խենթեցնել, խենցնել։
Մատուցանեմ, ուցի, տո՛. մօտեցնել։ ևս ընծայել։
Թագուցանեմ, ուցի, գո՛. ծածուկ պահել։
Կորուսանեմ, րուսի, կորո՛, րուսեալ. կորսնցնել. իթիրմէք։
Ելուզանեմ, լուզի, լուզեա՛. հանել. չըգարմագ։

ԳԼՈՒԽ Ը.

Խոնարհմունք ներգործական բայից ըստ երկրորդ լծորդութեան։

Օրինակ առաջին։

Սահմանական եղանակ՝ Ներկայ։

Աղամ, աղաս, աղայ.
աղամք, աղայք, աղան։

Ապառնի։

Աղայի, աղայիր, աղայր.
աղայաք, աղայիք, աղային։

Կատարեալ։

Աղացի, աղացեր, աղաց.
աղացաք, աղացիք, աղացին։

Յարակատար։

Աղացեալ եմ, ես, է. աղացեալ եմք, էք, են։

Գերակատար։

Աղացեալ էի, էիր, էր. աղացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Աղայից, աղասցես, աղասցէ.
աղասցուք, աղասջիք, աղասցեն։

Հրամայական եղանակի՝ Ներկայ:

Աղա, մի աղար. աղացէ՛ք, մի աղայք:

Ապառնի:

Աղասջի՛ր, կամ աղասցե՛ս, աղասցէ՛.
աղասցո՛ւք, աղասջի՛ք, աղասցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Աղայցեմ, աղայցես, աղայցէ.
աղայցեմք, աղայցէք, աղայցեն:

Անցեալ:

Աղացեալ իցեմ, իցես, իցէ. աղացեալ իցեմք, իցէք, իցեն:
Աներեւոյթ եղանակ. Աղալ, աղալոյ, աղալով, յաղալ:
Ընդունելութ̄է. Ներկայ. Աղացող: Անցեալ. Աղացեալ:
Ապառնի. Աղալոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի՝ Ներկայ:

Աղացեալ լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, լինին:

Անկատար:

Աղացեալ լինէի, էիր, էր. լինէաք, էիք, էին:

Կատարեալ:

Աղացայ, աղացար, աղացաւ.
աղացաք, աղացայք, աղացան:

Յարակատար և Գերակատար:

Աղացեալ եմ, ես, եւն: Աղացեալ էի, էիր, եւն:

Ապառնի:

Աղացայց, աղասցիս, աղասցի.
աղասցուք, աղասջիք, աղասցին:

Հրամայական եղանակի՝ Ներկայ:

Աղացի՛ր, աղացարո՛ւք:

Ապառնի:

Աղասջի՛ր կամ աղասցի՛ս, աղասցի. աղասցո՛ւք, եւն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Աղացեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին:

Անցեալ:

Աղացեալ իցեմ, ցես, ցէ. աղացեալ իցեմք, ցէք, ցեն:
Աներեւոյթ եղանակ. Աղացեալ լինել կամ աղալ, աղալոյ. եւն:

Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ. Աղացեալ։
Ապառնի. Աղալի կամ աղալոց։

Այսպէս խոնարհին ներգործական բայք սակաւք յանգեալք 'ի ամ. որ,

Ամամ, ացի, ամա՛. կթել, սաղել։
Զգամ, ացի, զգա՛. զգալ. դույմագ։
Թանամ, թացի, թա՛ց. թրջել, խոնաւել. ըսլաթմագ։
Լամ, լացի, լա՛ց. լալ. աղլամագ։
Որսամ, ացի կամ ացայ, սա՛. որսացող կամ որսող. աւլամիշ ընել։
Բանամ, բացի, բացից. բա՛ց։ Սոյն հրամայականն լինի,
բանիմ, նիս, նի. բացայ, ցար, ցաւ. բացի՛ր, եւն։
Եւ ստորադասականն. բանայցիմ, ցիս. եւն։ Աներեւոյթ.
բանիլ, կամ բանալ. եւն։

Յայս վերածի եւ բայս Բառնամ. զոր օրինակ,
Բառնամ, բարձի, բարձեալ եմ, բարձից, բարձցես, բարձցուք, բարձջիք, ձցեն։ Հրամ. բա՛րձ, մի բառնար. բարձէ՛ք, մի՛ բառնայք։ Ստոր. բառնայցեմ, եւն։ Ընդունելու. բարձող, բարձեալ, բառնալոց։ Կրաւ. Բառնիմ, իս, ի. բարձայ. բարձայց։ Հրամ. բարձի՛ր. բարձարո՛ւք։ Ստոր. բառնայցիմ, ցիս, եւն։ Աներեւոյթ. բառնիլ կամ բառնալ։ Ընդու. բարձեալ, բառնալի։

Ըստ ներգործականի եւ ըստ կրաւորականի բառնամ բայիս՝ խոնարհի եւ չէզոքական բայս Դառնալ եւ բաղադրեալք սորա. որ,

Դառնամ, աս, այ. դարձայ, ձար, ձաւ, եւ այլն։ Դարձայց, ձցիս, ձցի. եւն։ Դա՛րձ կամ դարձի՛ր. Դարձարո՛ւք կամ ձէ՛ք կամ ձի՛ք, մի՛ դառնայք։ Դառնայցեմ. եւ այլն։ Դարձող, դարձեալ, դառնալոց, դառնալի։

Կան եւ բազում չէզոքական բայք յանգեալք 'ի ամ, որք ըստ աղամ բայիս խոնարհին. որ,

Անսամ, ացի, սա՛. մտիկ ընել, մըտել։
Գնամ, ացի, գնա՛. երթալ։
Խաղամ, ացի, ղա՛. խաղալ։ եւս առաջ գնալ։

Խնդամ, ացի, դա́. ուրախանալ. ուէհինձք։
Սնամ, ացի, նա́. ծնալ։ եւ ստանալ։

Ընդ սոքօք դասաւորին եւ չէզոքական բայքս Կալ եւ Կեալ։ զոր օրինակ,

Կամ, կաս, կայ, ե՟ն։ Կացի, կացեր, եկաց. կացաք, կացիք, կացին։ Կացից, կացցես. ե՟ն։ Կա́ց, մի́ կար. կացէ́ք, մի́ կայք։ Կացջի́ր. ե՟ն։ Կայցեմ. ե՟ն։ կալ. կայող. կացեալ. կալոց։

Կեամ, կեաս, կեայ. կեամք, կեայք, կեան։ Կէի, կէիր, կեայր. կէաք, կէիք, կէին։ Կեցի, կեցեր, եկեաց. կեցաք, կեցիք, կեցին։ Կեցեալ եմ, ե՟ն։ Կեցից, կեցցես, կեցցէ. կեցցուք, կեցջիք, կեցցեն։ Կեա́ց, մի́ կեցցես. կեցէ́ք, մի́ կեցջիք. կեցջիր, ե՟ն։ կեցցեմ, ե՟ն։ Կեալ, կելոյ. կեցող. կեցեալ, կելոց։

Օրինակ երկրորդ։

Սահմանական եղանակի Ներկայ։

Խոստանամ, խոստանաս, խոստանայ.
խոստանամք, խոստանայք, խոստանան։

Անկատար։

Խոստանայի, խոստանայիր, խոստանայր.
խոստանայաք, խոստանայիք, խոստանային։

Կատարեալ։

Խոստացայ, խոստացար, խոստացաւ.
խոստացաք, խոստացայք, խոստացան։

Յարակատար։

Խոստացեալ եմ, ես, է. խոստացեալ եմք, էք, են։

Գերակատար։

Խոստացեալ էի, էիր, էր. խոստացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Խոստացայց, խոստասցիս, խոստասցի.
խոստացուք, խոստասջիք, խոստասցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Խոստացի́ր, մի́ խոստանար. խոստացարո́ւք, մի́ խոստանայք։

Ապառնի։

Խոստասջի՛ր կամ խոստասցիս, խոստասցի․
խոստասցուք, խոստասջիք, խոստասցին․

Ստորադասական եղանակի Ապառնի։

Խոստանայցեմ, ցես, ցէ․ խոստանայցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Խոստացեալ իցեմ, իցես, իցէ․ իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ․ Խոստանալ, խոստանալոյ, ևն։
Ընդունելութի․ Ներկայ․ Խոստացող։ Անցեալ․ Խոստացեալ։ Ապառնի։ Խոստանալոց։

Կրաւորական սորա բաց 'ի սահմանականի ներկայէն՝ լինի ըստ ներգործականին։ Իսկ 'ի հարկաւոր տեղիս ձեւանայ եւս էական բայիւ․ որ,

Սահմանական եղանակի Ներկայ։

Խոստացեալ լինիմ, լինիս, լինի․ լինիմք, լինիք, լինին։

Անկատար։

Խոստացեալ լինէի, լինէիր, լինէր․ լինէաք, լինէիք, լինէին։

Կատարեալ։

Խոստացեալ եղէ, եղեր, եղեւ․ եղաք, եղէք, եղեն։

Յարակատար և Գերակատար։

Խոստացեալ եմ, ես, է․ ևն։ էի, էիր, էր․ և այլն։

Ապառնի։

Խոստացեալ եղէց, եղիցիս, իցի․ եղիցուք, իջիք, իցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Խոստացեալ լեր, մի՛ խոստացեալ լինիր։ լերուք, մի՛ լինիք։

Ապառնի։

Խոստացեալ լիջիր կամ լիցիս, լիցի․ լիցուք, և այլն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Խոստացեալ լինիցիմ, ցիս, ցի․ լինիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Խոստացեալ իցեմ, իցես, իցէ․ իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ․ Խոստացեալ լինել, լինելոյ, և այլն։
Ընդունելութի․ Ներկայ և Անցեալ։ Խոստացեալ։
Ապառնի․ Խոստանալի կամ խոստանալոց։

Ըստ այսմ խոնարհին ա̅մ բայք ներգործականք յանգեալք 'ի անամ. բաց 'ի բայէս Լուանամ. օ̅ր,

Յղանամ, ացայ, ցի՛ր. ծոցաւորինալ. կէպէլէնմէք:
Ուրանամ, ացայ, ցի՛ր. ուրանալ. ինքեար ընել:
Ստանամ, ացայ, ցի՛ր. ձեռք բերել: Եւ ունենալ:
Մոռանամ, ացայ, ռա՛ կ̅մ ռացի՛ր մոռնալ. ունութմագ:
Իմանամ, ացայ, իմա՛ կ̅մ իմացի՛ր. իմանալ, իմնալ:
(Որ կրաւորկ̃նի ներկայն լինի եւ իմանիմ, նիս, նի:)
Մերկանամ, ցայ, ցի՛ր. (իբր ներգ). հանուել: եւ պէյան ընել:
Հոգամ, ացայ կ̅մ ացի, ա՛. (իբր ներգ). պէտ ընել: եւ [illegible]:
Ագամ, ացայ կ̅մ ացի, ա՛ կ̅մ ացի՛ր. (իբր ներգ). աւագ մտնել եւն:

Իսկ բայս Լուանամ խոնարհի իբրև զաղամն, որոյ կրաւորականի սահմանականն լինի եւ՝ լուանիմ, լուանիս: Եւ ստորադասականն՝ լուանայցիմ, ցիս. և այլն.

Ընդ սմին խոնարհին և բազում չէզոքական բայք յանգեալք 'ի անամ և 'ի ենամ. օ̅ր,

Անդորրանամ, ացայ, ացի՛ր. [illegible]. հանդարտել:
Բազմանամ, ացայ, ացի՛ր. շատնալ. չօղալմագ:
Յաւելանամ, ացայ, ացի՛ր. աւելի ըլլալ. եւն:
Արբենամ, եցայ, եցի՛ր. հարբել, գինովնալ:
Մերձենամ, եցայ, եցի՛ր. մօտենալ, քովը երթալ:

ԳԼՈՒԽ Ը.

Խոնարհմունք ներգործական բայից ըստ երրորդ լծորդութեան:

Օրինակ առաջին:

Սահմանական եղանակի՝ Ներկայ:

Թողում, Թողուս, Թողու.
Թողումք, Թողուք, Թողուն:

Անկատար:

Թողուի, Թողուիր, Թողոյր.
Թողուաք, Թողուիք, Թողուին:

Կատարեալ։

Թողի, թողեր, եթող կամ թող.
թողաք, թողիք, թողին։

Յարակատար։

Թողեալ եմ, ես, է. թողեալ եմք, էք, են։

Գերակատար։

Թողեալ էի, էիր, էր. թողեալ էաք, էիք՝, էին։

Ապառնի։

Թողից, թողցես, թողցէ.
թողցուք, թողջիք, թողցեն։

Հրամայական եղանակի՝ Ներկայ։

Թո՛ղ, մի՛ թողուր. թողէ՛ք, մի՛ թողուք։

Ապառնի։

Թողջի՛ր կամ թողցե՛ս, թողցէ՛.
թողցո՛ւք, թողջի՛ք, թողցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Թողուցում, թողուցուս, թողուցու.
թողուցումք, թողուցուք, թողուցուն։

Անցեալ։

Թողեալ իցեմ, իցես, իցէ. թողեալ իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ եղանակ. Թողուլ, թողլոյ, թողլով, 'ի թողուլ։
Ընդունելութիւն. Ներկայ. Թողող։ Անցեալ. Թողեալ։
Ապառնի. Թողլոց։

Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի՝ Ներկայ։

Թողանիմ, իս, ի. թողանիմք, իք, ին։
(Կամ ըստ ներգործականին՝ որպէս սովորութ էր նախնեաց)։
Թողում, թողուս, թողու. Թողումք, թողուք, թողուն։

Անկատար։

Թողուի, ուիր, ոյր. թողուաք, ուիք, ուին։

Կատարեալ։

Թողայ, թողար, թողաւ. թողաք, թողայք, թողան։

Յարակատար և Գերակատար։

Թողեալ եմ, ես, է, են։ Թողեալ էի, էիր. էին։

Ապառնի ։

Թողայց, Թողցիս, Թողցի ․
Թողցուք, Թողջիք, Թողցին ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Թողե՛ր ․ Թողարո՛ւք ։

Ապառնի ։

Թողջի՛ր կ՟ Թողցի՛ս, Թողցի՛ ․ Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցի՛ն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Թողուցում, ցուս, ցու ․ Թողուցումք, ցուք, ցուն ։
կ՟ Թողեալ լինիցիմ, ցիս, ցի ․ լինիցիմք, ցիք, ցին ։

Անցեալ ։

Թողեալ իցեմ, իցես, իցէ ․ Թողեալ իցեմք ․ և այլն ։
Աներևոյթ եղ՟ ․ Թողանիլ, Թողանելոյ ․ կ՟ Թողուլ, Թողլոյ ։
Ընդունելութ՟ ․ Ներկայ և Անցեալ ․ Թողեալ ։
Ապառնի ․ Թողլի կամ Թողլոց ։

Ըստ այսմ խոնարհին քանի մի ներգործական բայք ․ զոր օրինակ,

Առնում, առի, առեր, էառ կ՟ առ ․ ա՛ռ ․ առնուլ ․ առող, առեալ, առնլոց, առնլի ․ առնել ․ ալմագ ։
Արգելում, լի, լեր ․ արգել ․ արգե՛լ ․ արգիլել, չթողուլ ։
Գելում, լի, լեր, եգել ․ գե՛լ ․ պիտաղիղ ընել ։
Զենում, նի, ներ, եզեն կ՟ զեն ․ զե՛ն ․ մորթել ։
Լիզում, զի, զեր, լեզ կ՟ ելիզ ․ լե՛զ ․ լզել ։
Կասում, սի, սեր, կաս ․ կա՛ս ․ կեցնել ․ հարմանլամագ ։
Կիզում, զի, զեր, եկէզ ․ կէ՛զ ․ էրել ․ եագմագ ։
Հեղում, ղի, ղեր, եհեղ, հե՛ղ ․ չաթել, թափել ։
Հերձում, ձի, ձեր, եհերձ ․ հե՛րձ ․ ճղքել, պատռել ․ եըրթմագ ։
Յաւելում, լի, լեր, յաւել ․ յաւե՛լ ․ աւելցնել ։ ևս հէնէ ընել ։

Ըստ կրաւորականի սորա խոնարհին և քանի մի բայք չեզոքականք ․ զ՟ր,

Զբօսնում, սայ, սի՛ր ․ կէֆ ընել, ևն ։
Հեղձնում, ձայ, ձի՛ր ․ խեղդուիլ ։ ևս սիրտը ճմլիլ ։
Յենում, յեցայ, ցի՛ր ․ կռթնիլ ։ ևս կպչիլ ։
Ռեռնում, ռայ, ռի՛ր ․ ուռուցեալ ․ թաքնալ ․ ըշընմագ ։
Երդնում, երդուայ, երդուար, երդուաւ, երդուայց, երդուիցիս, ցի, երդուի՛ր ․ երդում ընել ։

Այլ յետագայքդ խոտորին 'ի կատարեալն, և յապառնին և յանցեալն. զբ,

Այտնում, այտեայ, այտեայց, այտիր, այտուցեալ. ուռէլ, ուռէնալ։
Զարթնում, զարթեայ, զարթեայց, զարթիր, զարթուցեալ. զարթնուլ. արթըննալ։
Պակնում, կեայ, կիր. կուցեալ. շաշմիշ ըլլալ վախնալ։
Սանում, սեայ, սիր. սուցեալ. [illegible]։

Նմանք յայսպիսի բայից յանգին և 'ի չիմ. զբ,

Ոստնում կմ̅ ոստչիմ, տեայ, տիր. տուցեալ. ցատկել։
Հարթնում կմ̅ հարթչիմ, թեայ, թիր, եւն̅. հարթուած ըլլալ։
Թագնում կմ̅ թագչիմ, գեայ, գիր. գուցեալ. պահուըտիլ։
Փախչիմ կմ̅ փախնում, խեայ, խիր. խուցեալ. փախչիլ։
Երկնչիմ, երկեայ, կիր. կուցեալ. վախնալ. դողդողալ։
Թռչիմ, թռեայ, ռիր. ռուցեալ. թռչիլ. [illegible]։
Մարտնչիմ, տեայ, տիր. տուցեալ. կռուիլ, ծեծկռուիլ։
Կորնչիմ, րեայ, րիր. րուսեալ. կորսուիլ. [illegible] ըլլալ։

Օրինակ երկրորդ։

Սահմանական եղանակի՝ Ներկայ։

Ընկենում, ուս, ու. ընկենումք, ուք, ուն։

Անկատար։

Ընկենուի, ուիր, ույր. ընկենուաք, ուիք, ուին։

Կատարեալ.

Ընկեցի,	ընկեցեր,	ընկէց.
ընկեցաք,	ընկեցիք,	ընկեցին։

Յարակատար և Գերակատար։

Ընկեցեալ եմ, ես, է. և այլն։ էի, էիր, էր. եւն̅։

Ապառնի։

Ընկեցից,	ընկեսցես,	ընկեսցէ.
ընկեսցուք,	ընկեսջիք,	ընկեսցեն։

Հրամայական եղանակի՝ Ներկայ.

Ընկեա՛, մի՛ ընկենուր. ընկեցէ՛ք, մի՛ ընկենուք։

Ապառնի:

Ընկեսջի՛ր, կամ ընկեսցե՛ս, ընկեսցէ՛. և այլն,
որպէս սահմանականին.

Ստորադասական եղանակի Ապառնի:

Ընկենուցում, ցուս, ցու. Ընկենուցումք, ցուք, ցուն:

Անցեալ:

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն:
Աներևոյթ եղանակ. Ընկենուլ, ընկենլոյ, յընկենուլ. ևն:
Ընդունելութի. Ներկայ. Ընկեցող: Անցեալ. Ընկեցեալ:
Ապառնի. Ընկենլոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի Ներկայ:

Ընկեցեալ լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, նին,

Անկատար:

Ընկեցեալ լինէի, էիր, էր. լինէաք, էիք, էին:

Կատարեալ:

Ընկեցայ, ընկեցար, ընկեցաւ.
ընկեցաք, ընկեցայք, ընկեցան:

Յար" և Գեր":

Ընկեցեալ եմ, ես, է: Ընկեցեալ էի, էիր. ևն:

Ապառնի:

Ընկեցայց, ընկեսցիս, ընկեսցի.
ընկեսցուք, ընկեսջիք, ընկեսցին:

Հրամայական եղանակի Ներկայ:

Ընկեցեա՛լ լեր. Ընկեցարուք:

Ապառնի:

Ընկեսջի՛ր, կամ ընկեսցի՛ս, եսցի՛. ընկեսցո՛ւք, եսջի՛ք, եսցի՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Ընկենուցում, ցուս, ցու. ընկենուցումք, ցուք, ցուն:
կամ ընկեցեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին;

Անցեալ:

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն:
Ընդունելութի. Ներկայ և Անցեալ. Ընկեցեալ:
Ապառնի. Ընկենլի կամ ընկենլոց:
Ընդ սոյին խոնարհի և ներգործական բայս Առնեմ.

րոյ կատարեալն լինի. Լցի, լցեր, ելից, ևն. և հրամայականն. լից, մի՛ լնուր. լցէք, մի՛ լնուք, ևն։ Ըստ կրաւորականի և ըստ ներգործականի սորա խոնարհի և ներգործական բայս Ընթեռնուլ. ռք, Ընթեռնում, ուս, ու, ևն։ Ընթերցայ, ցար, ցաւ, ցաք, ցայք, ցան։ Ընթերցեալ եմ, ևն։ Ընթերցայց, ընթերցցիս, ցցի. ընթերցցուք, ցջիք, ցցին։ Ընթերցի՛ր, մի՛ ընթեռնուր. ընթերցարո՛ւք կամ ընթերցի՛ք. մի՛ ընթեռնուք։ Ընթերցջի՛ր կամ ընթերցցիս, ևն։ Ընթեռնուցում, ևն։ Ընթեռնուլ, նլոյ։ Ընթերցող. ընթերցեալ. ընթեռնլոյ։ Կրաւ. ընթերցանիմ. իս, ի, ևն։ Ապառ״. ընթերցանիցիմ։ Ընդուն״. ընթերցանելի կամ ընթեռնլի։ Ըստ այսմ լինի և բայս Զգենուլ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս խոնարհմանց անկանոն բայից։

Անկանոն բայք բաժանին յերիս տեսակս՝ ոմանք են զարտուղիք, ոմանք պակասաւորք և ոմանք դիմազուրկք. զորս ըստ իւրաքանչիւր լծորդութեանց կարգեսցուք յառաջիկայդ.

Խոնարհմունք զարտուղի բայից։

Զարտուղի ներգործական բայս Առնել խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի՝ Ներկայ։

Առնեմ,	առնես,	առնէ.
առնեմք,	առնէք,	առնեն։

Անկատար։

Առնէի,	առնէիր,	առնէր.
առնէաք,	առնէիք,	առնէին։

Կատարեալ։

Արարի, արարեր, արար.
արարաք, արարիք, արարին։

Յարակատար և Գերակատար։

Արարեալ եմ, ես, է, են։ Արարեալ էի, էիր, էր. էին։

Ապառնի։

Արարից, արասցես, արասցէ.
արասցուք, արասջիք կ̃մ առնիջիք, արասցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արա, մի՛ առներ. արարէք, մի՛ առնէք։

Ապառնի։

Արասջի՛ր կ̃մ առնիջի՛ր կ̃մ արասցե՛ս, արասցէ՛, են։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Առնիցեմ, ցես, ցէ. առնիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Արարեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Առնել, առնելոյ, առնելով, յառնել։
Ընդունելութիւն. Ներկայ. Արարող կամ առնող։
Անցեալ. Արարեալ։ Ապառնի. Առնելոց։

Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Առնիմ, առնիս, առնի. առնիմք, առնիք, առնին։

Կատարեալ։

Արարայ, արարար, արարաւ.
արարաք, արարայք, արարան։

Ապառնի.

Արարայց, արասցիս, արասցի.
արասցուք, արասջիք, արասցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Մի՛ առնիր. Մի՛ առնիք։

Ապառնի։

Արասջի՛ր կամ առնիջի՛ր կ̃մ արասցի՛ս, արասցի՛. են։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Առնիցիմ, ցիս, ցի. առնիցիմք, ցիք, ցին։
Աներեւոյթ եղանակ. Առնիլ, առնելոյ. յառնիլ։

Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ. Արարեալ կամ արարեցել։
Ապառնի. Առնելի կամ առնելոց։
Իսկ մնացեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին։

Զարտուղի ներգործական բայս Գնեմ խոնարհի այսպ.

Սահմանական եղանակի Ներկայ։
Գնեմ, գնես, գնէ. գնեմք, գնէք, գնեն։
Անկատար։
Գնէի, էիր, էր. գնէաք, էիք, էին։
Կատարեալ։
Եգի, եգիր, եգ. եգաք, եգիք, եգին։
Յարակատար եւ Գերակատար։
Եգեալ եմ, ես, է. եւն։ եգեալ էի, էիր, էր. եւն։
Ապառնի։
Եգից, գիցես, գիցէ. Գիցուք, գիջիք, գիցեն։
Հրամայական եղանակի Ներկայ։
Գնիր, մի գներ. գնիք, մի գնէք։
Ապառնի։
Գիջի՛ր կամ գիցե՛ս, գիցէ՛. գիցո՛ւք, գիջի՛ք, գիցե՛ն։
Ստորադասական եղանակի Ապառնի։
Գնիցեմ կամ գիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։
Անցեալ։
Եգեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Գնել, գնելոյ, գնելով, ՚ի գնել։
Ընդունելութիւն. Ներկայ. Գնող։ Անցեալ. Եգեալ։
Ապառնի. Գնելոց։

Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։
Գնիմ, գնիս, գնի. գնիմք, գնիք, գնին։
Անկատար։
Գնէի, էիր, էր կամ նիւր. գնէաք, էիք, էին։
Կատարեալ։
Եգայ, եգար, եգաւ. եգաք, եգայք, եգան։

Խոնարհմունք զարտուղի բայից ։

Ապառնի ։

Չոգայց, գիցես, ցէ · գիցուք, գիջիք կամ գնիջիք, ցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Չոգեալ լեր, մի գնիր · եգարուք, մի գնիք,

Ապառնի ։

Գնիջիր կամ գիցես, գիցէ · գիցուք, գիջիք, գիցեն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Գնիցեմ կամ գիցեմ, ցես, ցէ · ցեմք, ցէք, ցեն ։

Աներևոյթ եղանակ · Գնել, գնելոյ, գնելով, 'ի գնել ։

Ընդունելութիւն · Ներկայ և Անցեալ · Չոգեալ ։

Ապառնի · Գնելի, կամ գնելոց ·

Իսկ անցեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին ։

Զարտուղի ներգործական բայս Լսեմ խոնարհի այսպէս ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Լսեմ, լսես, լսէ · լսեմք, լսէք, լսեն ։

Անկատար ։

Լսէի, լսէիր, լսէր · լսէաք, լսէիք, լսէին ։

Կատարեալ ։

Լուայ, լուար, լուաւ · լուաք, լուայք, լուան ։

Յարակատար և Գերակատար ։

Լուեալ եմ, ես, է · են ։ Լուեալ էի, էիր, էր · էին ։

Ապառնի ։

Լուայց, լուիցես, լուիցէ · լուիցուք, լուիջիք, լուիցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Լուր, մի լսեր · լուարուք, մի լսէք ։

Ապառնի ։

Լուիջիր կամ լուիցես, լուիցէ · լուիցուք, և այլն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Լսիցեմ կամ լուիցեմ, ցես, ցէ · ցեմք, ցէք, ցեն ։

Անցեալ ։

Լուեալ իցեմ, իցես, իցէ · լուեալ իցեմք, իցէք, իցեն ։

Աներևոյթ եղանակ · Լսել, լսելոյ, լսելով, 'ի լսել ։

Ընդունելութիւն · Ներկայ · Լսող ։ Անցեալ · Լուեալ ։

Ապառնի · Լսելոց ։

Օրինակ կրաւորականին ։

Սահմանական եղանակի Ներկայ ։
Լսիմ, լսիս, լսի. լսիմք, լսիք, լսին ։
Անկատար ։
Լսէի, լսէիր, լսէր կամ լսիւր. լսէաք, լսէիք, լսէին ։
Ապառնի ։
Լուիցիմ, ցիս, ցի. լուիցիմք, ցիք, ցին ։
Ստորադասական եղանակի Ապառնի ։
Լսիցիմ, ցիս, ցի. լսիցիմք, ցիք, ցին ։
Աներեւոյթ եղանակ. Լսիլ, լսելոյ, լսելով, 'ի լսիլ ։
Ընդունելութ̄ի. Ներկայ և Անցեալ. Լուեալ ։
Ապառնի. Լսելի կամ լսելոց ։

Իսկ այլ պակասութիւնք սորա լրանան այսպէս. լսելի եղէ, եղեր, և այլն. լսելի՛ լեր. լսելի՛ լինիջիր, և այլն ։ Նաև յարակատար և գերակատար ժամանակքն, ը̄ որս և ստորադասականի անցեալն՝ լինին ըստ ներգործականին ։

Զարտուղի ներգործական բայս Տամ խոնարհի այսպ̃ .

Սահմանական եղանակի Ներկայ ։
Տամ, տաս, տայ. տամք, տայք, տան ։
Անկատար ։
Տայի, տայիր, տայր. տայաք, տայիք, տային ։
Կատարեալ ։
Ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն ։
Յարակատար և Գերակատար ։
Տուեալ եմ, ես, է, են ։ Տուեալ էի, էիր, էր, են ։
Ապառնի ։
Տաց, տացես, տացէ. տացուք, տաջիք, տացեն ։
Հրամայական եղանակի Ներկայ ։
Տո՛ւր, մի՛ տար. տո՛ւք, մի՛ տայք ։
Ապառնի ։
Տաջի՛ր կամ տացե՛ս, տացէ՛. տացո՛ւք, տաջի՛ք, տացե՛ն ։

Ստորադասական եղանակի Ապառնի:

Տայցեմ, ցես, ցէ. տայցեմք, ցէք, ցեն:

Անցեալ:

Տուեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն:
Աներևոյթ եղանակ. Տալ, տալոյ, տալով, 'ի տալ:
Ընդունելութիւն. Ներկայ. Տուող: Անցեալ. Տուեալ:
Ապառնի. Տալոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի Կատարեալ:

Տուայ, տուար, տուաւ. տուաք, տուայք, տուան:

Ապառնի:

Տուեալ եղէց, տացիս, տացի.
տուեալ եղիցուք, տայցիք, տացին:

Հրամայական եղանակի Ներկայ (ոչ ունի):

Ապառնի:

Տաջի՛ր կամ տացի՛ս, տացի՛. տացո՛ւք, տաջի՛ք, տացի՛ն:
Աներևոյթ եղանակ. Տուեալ լինել, լինելոյ. և այլն:
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Տուեալ կամ տուեցեալ:
Ապառնի. Տալի կամ տալոց:
Իսկ այլ ժամանակքն ձևանան էական բայիւ այսպ՟, Տուեալ լինիմ, լինիս, ևն. տուեալ լինէի, լինէիր, և այլն. տուեալ լինիցիմ, լինիցիս, և այլն: Իսկ յարակատար և գերակատար ժամանակքն, և անցեալ ժամանակն ստորադասականին լինին ըստ ներգործականին:

Զարտուղի չէզոքական բայս Մեղանչեմ խոնարհի այսպ՟:

Սահմանական եղանակի Ներկայ:

Մեղանչեմ, ես, է. մեղանչեմք, էք, են:

Անկատար:

Մեղանչէի, էիր, էր. մեղանչէաք, էիք, էին:

Կատարեալ:

Մեղայ, մեղար, մեղաւ.
մեղաք, մեղայք, մեղան:

Յարակատար և Գերակատար։

Մեղուցեալ եմ, ես, է. եւն։ Մեղուցեալ էի, էիր, էր. եւն։

Ապառնի։

Մեղայց, մեղիցես, մեղիցէ.
մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Մեղի՛ր, մի՛ մեղանչեր. մեղարո՛ւք, մի՛ մեղանչէք։

Ապառնի։

Մեղիջի՛ր կամ մեղիցե՛ս, մեղիցէ՛. մեղիցո՛ւք, եւն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Մեղանչիցեմ կամ մեղիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Մեղուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղան. Մեղանչել, մեղանչելոյ, ղանչելով, եւն։

Ընդունելութիւն. Ներկայ. Մեղանչող։ Անցեալ. Մեղուցեալ։ Ապառնի. Մեղանչելոց կամ մեղանչելի։

Զարտուղի չէզոքական բայս Յառնեմ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Յառնեմ, ես, է. յառնեմք, էք, են։

Անկատար։

Յառնէի, էիր, էր. յառնէաք, էիք, էին։

Կատարեալ։

Յարեայ, յարեար, յարեաւ. յարեաք, յարեայք, րեան։

Յարակատար և Գերակատար։

Յարուցեալ եմ, ես, է. եւն։ Յարուցեալ էի, էիր, էր. եւն։

Ապառնի։

Յարեայց, յարիցես, յարիցէ. յարիցուք, րիջիք, րիցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արի՛, մի՛ յառներ. արի՛ք, մի՛ յառնէք։

Ապառնի։

Յարիջի՛ր կամ յարիցե՛ս, յարիցէ՛. յարիցուք, եւն.

Ստորադասական եղանակի Ապառնի։

Յառնիցեմ կամ յարիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։

Անցեալ:

Յարուցեալ լիցեմ, լիցես, լիցէ. լիցեմք, լիցէք, լիցեն:
Աներեւոյթ եղանակ. Յառնել, յառնելոյ, յառնելով. ե՟ն:
Ընդունելութիւն. ՝Ներկայ. Յառնող: Անցեալ. Յարուցեալ:
Ապառնի. Յառնելոց կամ յառնելի:

Զարտուղի չեզոքական բայս Գամ խոնարհի այսպէս:

Սահմանական եղանակի՝ Ներկայ:

Գամ, գաս, գայ. գամք, գայք, գան:

Անկատար:

Գայի, գայիր, գայր. գայաք, գայիք, գային:

Կատարեալ:

Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք կամ եկայք, եկին:

Յարակատար եւ Գերակատար:

Եկեալ եմ, ես, է, ե՟ն: Եկեալ էի, էիր, էր, ե՟ն:

Ապառնի:

Եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն:

Հրամայական եղանակի՝ Ներկայ:

Ե՛կ, մի՛ գար. եկա՛յք, մի՛ գայք:

Ապառնի:

Եկեսջի՛ր կամ եկեսցե՛ս, եկեսցէ. եկեսցո՛ւք, ե՟ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Գայցեմ, ցես, ցէ. գայցեմք, ցէք, ցեն.

Անցեալ:

Եկեալ լիցեմ, լիցես, լիցէ. լիցեմք, լիցէք, լիցեն:
Աներեւոյթ եղանակ. Գալ, գալոյ, գալով, 'ի գալ:
Ընդունելութիւն. ՝Ներկայ եւ Անցեալ. Եկեալ: Ապառնի.
Գալոց կամ գալի:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս խոնարհմանց պակասաւոր բայից.

Պակասաւոր բայք են նոքին, որք պակասին 'ի ժամանակս ինչ, և լրանան յայլոց պակասաւոր բայից. որպէս է տեսանել յառաջիկայսդ.

Պակասաւոր ներգործական բայս Կերայ լրացեալ 'ի բայէս Ուտեմ խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակի՝ Ներկայ.

Ուտեմ, ուտես, ուտէ.
ուտեմք, ուտէք, ուտեն.

Անկատար.

Ուտէի, էիր, էր. ուտէաք, էիք, էին.

Կատարեալ.

Կերայ, կերար, կերաւ. կերաք, կերայք, կերան.

Կամ այսպէս.

Կերի, կերեր, եկեր կամ կեր. կերաք, կերիք, կերին.

Գերակատար և Յարակատար.

Կերեալ եմ, ես, է. են. Կերեալ էի, էիր, էր. էն.

Ապառնի.

Կերայց կամ կերից, կերիցես, կերիցէ.
կերիցուք, կերիջիք կամ ուտիջիք, կերիցեն.

Հրամայական եղանակի՝ Ներկայ.

Կե՛ր, մի՛ ուտեր. կերէ՛ք կամ կերա՛յք, մի՛ ուտէք.

Ապառնի.

Կերիջի՛ր կամ ուտիջի՛ր կամ կերիցե՛ս, կերիցէ՛. կերիցուք, ե՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Ուտիցեմ, ցես, ցէ. ուտիցեմք, ցէք, ցեն.

Անցեալ.

Կերեալ իցեմ, իցես, իցէ. կերեալ իցեմք, իցէք, իցեն.

Աներևոյթ եղանակ. Ուտել, ուտելոյ, ուտելով, յուտել.

Ընդունելութիւն. Ներկայ Կերող կամ ուտող. Անցեալ. Կերեալ. Ապառնի. Ուտելոց.

Օրինակ կրաւորականին :

Սահմանական եղանակի՝ Ներկայ :

Ուտիմ, ուտիս, ուտի . ուտիմք, ուտիք, ուտին :

Ապառնի :

Կերայց, կերիցիս, կերիցի :
կերիցուք, կերիջիք կամ ուտիջիք, կերիցին :

Հրամայական եղանակի՝ Ներկայ . (ոչ ունի) :

Ապառնի :

Կերիջի՛ր կ՟ ուտիջի՛ր . կ՟ կերիցե՛ս, կերիցէ՛ . և այլն :

Ստորադասական եղանակի Ապառնի :

Ուտիցիմ, ցիս, ցի . ուտիցիմք, ցիք, ցին :
Աներևոյթ եղանակ . Ուտիլ, ուտելոյ, ուտելով, յուտիլ :
Ընդունելութ՟ի . Ներկայ և Անցեալ . Կերեալ : Ապառնի .
Ուտելի կամ ուտելոց կամ կերելի :

Իսկ այլ ժամանակքն լինին ը՟ ներգործականին :

Պակասաւոր ներգործական բայս արբի . լրացեալ ՚ի բայէս Ըմպեմ խոնարհի այսպէս :

Սահմանական եղանակի՝ Ներկայ :

Ըմպեմ, ըմպես, ըմպէ . ըմպեմք, ըմպէք, ըմպեն :

Անկատար :

Ըմպէի, ըմպէիր, ըմպէր . ըմպէաք, ըմպէիք, ըմպէին :

Կատարեալ :

Արբի, արբեր, էարբ կ՟ արբ . արբաք, արբիք, արբին :

Յարակատար և Գերակատար :

Արբեալ եմ, ես, է . ե՟ն : Արբեալ էի, էիր, էր . ե՟ն :

Ապառնի :

Արբից, բցես, բցէ . արբցուք, բջիք կ՟ ըմպիջիք, բցեն :

Հրամայական եղանակի՝ Ներկայ :

Արբ, մի՛ ըմպեր . արբէ՛ք, մի՛ ըմպէք :

Ապառնի :

Արբջի՛ր կ՟ արբցե՛ս, արբցէ՛ . արբցուք . և այլն :

Ստորադասական եղանակի Ապառնի :

Ըմպիցեմ, ցես, ցէ . ըմպիցեմք, ցէք, ցեն :

Անցեալ :

Արբեալ իցեմ, իցես, իցէ . արբեալ իցեմք, իցէք, իցեն :

Աներևոյթ եղանակ. Ըմպել, ըմպելոյ, ըմպելով. ևն։
Ընդունելութի. Ներկայ. Ըմպող։ Անցեալ. Արբեալ։
Ապառնի. Ըմպելոց։

Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Կատարեալ։

Արբայ, բար, բաւ. արբաք, բայք, բան։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ըմպիցիմ, ցիս, ցի. ըմպիցիմք, ցիք, ցին։
Աներևոյթ եղանակ. Ըմպիլ, ըմպելոյ, ըմպելով, յըմպիլ.
Ընդու. Ներկայ և Անցեալ. Արբեալ։ Ապ. Ըմպելի կ ըմպելոց։

Իսկ մնացեալ ժամանակքն բաց 'ի սահմանականի ներկայէն և յապառնւոյն և 'ի հրամայականէն՝ լինին ըստ ներգործականին. իսկ ներկայն և ապառնին և հրամայականն ձևանան էական բայիւ. և երբեմն լծանան 'ի չէզոքական բայս Արբենամ։

Պակասաւոր հասարակ բայս ծանեայ լծացեալ'ի բայս Ճանաչեմ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Ճանաչեմ, ես, է. ճանաչեմք, էք, են։

Անկատար։

Ճանաչէի, էիր, էր կամ չիւր. ճանաչէաք, էիք, էին։

Կատարեալ ներգործական։

Ծանեայ, եար, եաւ. ծանեաք, եայք, եան։

Կատարեալ կրաւորական։

Ծանուցայ, ցար, ցաւ. ծանուցաք, ցայք, ցան։

Յարակատար և Գերակատար։

Ծանուցեալ եմ, ես, է. ևն։ Ծանուցեալ էի, էիր, էր. ևն։

Ապառնի ներգործական։

Ծանեայց, ծանիցես, ծանիցէ.
ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն։

Ապառնի կրաւորական։

Ծանուցայց, ծանիցիս, ծանիցի.
ծանիցուք, ծանիջիք, ծանիցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Ծանիր, մի ճանաչեր. ծանիրուք կամ նիք, մի ճանաչէք։

Ապառնի։

Ծանիջի՛ր կամ ծանիցե՛ս, ծանիցէ՛. ծանիցո՛ւք. ե̃ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ներգործական։

Ծանիցեմ կամ ճանաչիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։

Կրաւորական։

Ծանիցիմ կամ ճանաչիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Ծանուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ճանաչել, ճանաչելոյ, ճանաչելով. ե̃ն։
Ընդունելութիւն Ներկ. Ճանաչող։ Անցեալ. Ծանուցեալ։
Ապառնի. Ճանաչելոց կամ ճանաչելի։

Պակասաւոր հասարակ բայս Ունիմ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Ունիմ, ունիս, ունի. ունիմք, ունիք, ունին։

Անկատար։

Ունէի, ունէիր, ունէր. ունէաք, ունէիք, ունէին։

Կատարեալ։

Կալայ, կալար, կալաւ. կալաք, կալայք, կալան։

Յարակատար եւ Գերակատար։

Կալեալ եմ, ես, է. ե̃ն։ Կալեալ էի, էիր, էր. ե̃ն։

Ապառնի։

Կալայց, կալցիս կամ կալցես, կալցի կամ կալցէ.
կալցուք, կալջիք կամ ունիջիք, կալցին կամ կալցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Կա՛լ կմ̃ կա՛, մի՛ ունիր. կալարո՛ւք կմ̃ կալէ՛ք, մի՛ ունիք։

Ապառնի։

Կալջի՛ր կմ̃ ունիջի՛ր կմ̃ կալցիս, կալցի՛. կալցո՛ւք. ե̃ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ունիցիմ, ցիս, ցի. ունիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Կալեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Ունել, ունելոյ. և այլ̃ն։
Ընդունելութիւն. Ներկայ. Ունող։ Անցեալ. Կալեալ։
Ապառնի. Ունելոց կամ ունելի։

Այսպէս խոնարհին և բաղադրեալք սորա. գր,

Ընդունիմ, ընկալայ, ընկալ, մի ընդունիր:
Վերընդունիմ, վերընկալայ, վերընկա՛լ:
Առընդունիմ, առընկալայ, առընկա՛լ:
Ակնունիմ, ակնկալայ, ակնկալ:

Պակասաւոր չէզոքական բայս չոգայ կամ չոգաւ լրացեալ՝ ՚ի բայէս Երթամ խոնարհի այսպէս:

Սահմանական եղանակի՝ Ներկայ:

Երթամ, թաս, թայ. երթամք, թայք, թան:

Անկատար:

Երթայի, թայիր, թայր. երթայաք, թայիք, թային:

Կատարեալ:

Չոգայ, ար, աւ. չոգաք, այք, ան:

Յարակատար և Գերակատար.

Երթեալ եմ, ես, է. ևն: Երթեալ էի, էիր, էր. ևն:

Ապառնի:

Երթայց, երթիցես, երթիցէ.
երթիցուք, երթիջիք, երթիցեն:

Հրամայական եղանակի՝ Ներկայ:

Ե՛րթ, մի երթար. երթա՛յք, մի երթայք:

Ապառնի:

Երթիջի՛ր կամ երթիցե՛ս, երթիցէ՛. երթիցո՛ւք. ևն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Երթայցեմ կամ երթիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:

Անցեալ:

Երթեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն:
Աներևոյթ եղանակ. Երթալ, երթալոյ, երթալով. ևն:
Ընդունելութիւն. Ներկայ. Երթող: Անցեալ. Երթեալ:
Ապառնի. Երթալոց կամ երթալի.

Պակասաւոր բայս Պարտիմ (որ է պարտական ըլլալ), ՚ի բազումս պակասեալ խոնարհի այսպէս:

Սահմ. Ներկ. Պարտիմ, իս, ի. պարտիմք, իք, ին:
Անկատար. Պարտէի, էիր, էր կամ տիւր. էաք, էիք, էին:
Ստորադաս. Պարտիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին:
Աներևոյթ. Պարտիլ:

Պակասաւոր բայս Մարթեմ խոնարհի յայսչափ ժամանակս միայն։

Սահմ. Ներկ. Մարթիմ, իս, ի. մարթիմք, իք, ին։
Հրամ. յոգ. Մարթասցուք, մարթիջիք, մարթիցին։
Ապառնի. Մարթիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին։
Իսկ յայլ ժամս լռանայ 'ի բայիցս՝ մարթեմ և մարթանամ։

Պակասաւոր բայս Գոգ խոնարհի 'ի հրամայական եղանակն միայն՝ այսպէս։

Ներկայ. Գո՛գ, (այ՟ ասա՛). գոգէ՛ք, (այ՟ ասացէ՛ք)։
Ապառնի. Գոգջի՛ր կամ գոգցե՛ս, գոգցէ՛. գոգցո՛ւք, գոգջի՛ք, գոգցե՛ն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Խոնարհմունք դիմազուրկ բայից։

Դիմազուրկ բայք սակաւ են 'ի մեր լեզու. և այն ևս ըստ դիպելոյ. որք յերիս տեսակս տրոհին. ոմանք ասին՝ դիմազուրկք ըստ պատահման. ոմանք այ՟ պատշաճի. և ոմանք այ՟ ինքեան կամ բացարձակ։

Դիմազուրկք ըստ պատահման՝ ընդ կրկին օրինակաւ ծորդին։

Օրինակ առաջին.

Սահմ. Ներկայ.	յաջողէ.
Անկատար.	յաջողէր.
Կատարեալ.	յաջողեաց.
Յարակատար.	յաջողեալ է.
Գերակատար.	յաջողեալ էր.
Ապառնի.	յաջողեսցէ.
Հրամ. Ապառնի.	յաջողեսցէ՛ կամ յաջողեսցի.
Ստոր. Ապառնի.	յաջողիցէ կամ յաջողիցի.
Անցեալ.	յաջողեալ իցէ։

Ըստ այսմ են և սոքին, ամպէ, անձրևէ, արժէ, ծագէ, հասանէ, ձիւնէ, մրրկէ, յաճախէ, սխալէ, վայելէ, ցաւէ, ցրտէ, ցօղէ, փայլատակէ. են՟։

Օրինակ երկրորդ.

Սահմ. Ներկայ.	լուսանայ.
Անկատար.	լուսանայր.
Կատարեալ.	լուսացաւ.
Յարակատար.	լուսացեալ է.
Գերակատար.	լուսացեալ էր.
Ապառնի.	լուսասցի.
Հրամ. Ապառնի.	լուսասցի՛.
Ստոր. Ապառնի.	լուսանայցէ.
Անցեալ.	լուսացեալ իցէ։

Ըստ այսմ են և սոքին. Առաւօտանայ, գիշերանայ, երեկոյանայ, խաւարանայ, մթանայ, շատանայ. են՟։

Դիմազուրկք ը՟ պատշաճի են սոքին, Թուի, երևի, կարծի, լսի, ասի, պատահի, հանդիպի, համարի, պիտի, ցաւի. են՟։ Եւ խոնարհումն ոց՟ ձևանայ այսպ՟։

Սահմ. Ներկայ.	Թուի.
Անկատար.	Թուէր.
Կատարեալ.	Թուեցաւ.
Յարակատար.	Թուեալ է.
Գերակատար.	Թուեալ էր.
Ապառնի.	Թուեսցի.
Հրամ. Ապառնի.	Թուեսցի՛.
Ստոր. Ապառնի.	Թուիցի.
Անցեալ.	Թուեալ իցէ։

Դիմազուրկք ը՟ ինքեան կամ բացարձակք են սոքին. Անկ է, արժա՛ն է, բարի՛ է, բարւո՛ք է, բա՛ւ է, զղ՛ջ է, ըմբո՛ն է, խի՛ստ է, կա՛մ է, հա՛րկ է, ճա՛հ է, մա՛րթ է, յայտ է, պատկա՛ն է, պատշա՛ճ է, պա՛րտ է, պիտո՛յ է, սովո՛ր է, վայե՛լ է, վայելո՛ւչ է, փո՛յթ է, օգուտ է, օրէ՛ն է. են՟։ Եւ խոնարհումն ոց՟ ձևանայ այսպ՟.

Սահմ. Ներկայ.	հա՛րկ է.

Խոնարհմունք դիմազուրկ բայից :

Անկատար .	հարկ էր .
Կատարեալ .	հարկ եղև .
Ապառնի .	հարկ լիցի կամ եղիցի .
Ստոր . Ապառնի .	հարկ իցէ կամ լինիցի :

Ընդ սոսա դասին և յոգնական դիմազուրկ բայքս, Պէտք են, կամք են, օրէնք են. ևն : Եւ սոքա խոնարհին յայսչափ ժամանակս միայն :

Սահմ . Ներկայ .	պէտք են .
Անկատար .	պէտք էին .
Ապառնի .	պէտք եղիցին .
Ստոր . Ապառնի .	պէտք իցեն :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Նախադրութեանց :

Նախադրութիւնք կրկին են, հոլովակերտք և հոլովառուք. Հոլովակերտք են որք յարեալ յանուանս և յայլ հոլովական բառս, այսինքն 'ի դերանուանս, յընդունելութիւնս և 'ի դերբայս՝ կազմեն պէսպէս հոլովս. և սոքա կոչին նախդիրք, և են այսոքիկ 'ի, յ, 'ի յ, առ, առ 'ի, ց, ընդ, զ. որգոն, 'ի տուն, 'ի տանէ, 'ի տան, յ երկիր, յ երկրէ, յ երկրի, 'ի յ երկինս, 'ի յ երկնից. առ քեզ, առ նոսա, առ 'ի մեզ, առ 'ի մէնջ, առ 'ի գնալ առ 'ի խօսիլ. ց նա, ց ձեզ. ընդ նա, ընդ նմ. զփրկող, զմեռելոյ, զմնացելովք. ևն :

Իսկ հոլովառուքն են, որք ոչ կազմեն զհոլով. այլ առնուն զխնդիր 'ի պէսպէս հոլովս : Ընդ որս են և նախդիրքս՝ առ, առ 'ի, և ընդ. որք բազում անգամ խնդիր առեալ վարին իբր հոլովառուք :

Ոմանք առնուն զսեռական. որ,

Վասն սիրոյ .	սիրոյ համար :
Սակս մեր .	մեզի համար :

Յաղագս մեղաց .	մեղքի համար ։
Առ նախանձու .	նախանձու համար ։
Փոխանակ բերանոյ .	բերնի տեղ ։
Զօրէն անասնոյ .	անասունի պէս ։
Առանց պահոց .	առանց պահքի ։
Զկնի յաղթութեան .	յաղթութենէ ետքը ։
Զհետ արդարութեան .	արդարութեան ետևէն ։
Յետ մահու .	մահուանէ ետև ։
Առաջի աչաց .	աչքից առջև ։
Ընդ առաջ իշխանին .	իշխանին դէմը ։
Յանդիման քաղաքին .	քաղքին դիմաց ։
Հանդէպ տան .	տան դիմացը ։
'Ի ներքոյ երկնից .	երկնքի ներքև ։
Արտաքոյ ատենի .	տիւանէն դուրս ։
'Ի վերայ երկրի .	երկրի վրայ ։
'Ի մէջ ծառոց .	ծառերու մէջ ։
Ընդդէմ կամաց .	կամքի դէմ ։
'Ի ձեռն բարեկամաց .	բարեկամներու ձեռօք ։
Յայնկոյս ծովու .	ծովու անդիի դին ։
Ընդ նորա .	անոր տեղը ։

Ասոնք առնուն զվերջահոլով տրական . որ,

Ըստ հաւատոց .	հաւատքի կէօրէ ։
Ընդ նմա .	անոր հետ ։
Մերձ այսոցիկ .	ասոնց քով ։
Մօտ այնոցիկ .	անոնց մօտ ։
Առընթեր կից Առ նմին .	անոր քովիկը ։

Ասոնք առնուն զնախդրիւ տրական . որ,

Մերձ յաղբիւրն .	աղբիւրին մօտ ։
Մօտ 'ի ձմեռն .	ձմեռուան մօտիկ ։
Հուպ 'ի վառարանն .	մանղալի քով ։
Մինչև 'ի մահ .	մինչուան մահը ։

Ասոնք առնուն զհայցական . որ,

Իբրև զհող .	հողու պէս ։
Որպէս զփոշի .	փոշիի պէս ։
Քան զքեզ .	քեզմէ տահա ։
'Ի վեր քան զմիտս .	մտքէ վեր ։
Առաւել քան զարեգակն .	արևէն աւելի ։

Նմանք առնուն զբացառական․ զ̅բ,

Մեկնաւ 'ի բանակէն․	օռտույէն դարձաւ :
Հեռի 'ի տանէ․	տնէ հեռու :
Գաղտ 'ի մօրէ․	մօրմէն գողտուկ :
Բաց յինէն․	ինձմէ 'ի զատ :

Նմանք առնուն զգործիական․ զ̅բ,

Հանդերձ ծառայիւք․	ծառաներուն հետ :
Ընդ յարկաւ․	ծածքին տակը :
Առ տրդատաւ․	տրդատ թգ̅ւրին ատենը :
Ամօք յառաջ :	տարիներով առաջ :

Նմանք առնուն զպարառական․ զ̅բ,

Շուրջ զքեւ․	, քու չորսդիրդ :
Շուրջանակի զնոքօք․	անոնց չորսդիրը :

ԳԼՈՒԽ ԺԳ:

Յաղագս Մակբայից :

Մակբայք բազում են յոյժ ընդ լ̃գ տեսակօք ըստ զանազանելոյ նշանակութե̃ իւրեանց․ զորս մարթ է վասն համառօտութե̃ վերածել 'ի տասն․ և են այսոքիկ :

Որակականք :

Ընդ որովք կարեն պարունակիլ և սաստկականք և երագականք, յանկարծականք և յամրականք, յայտնականք և ծածկականք, յօժարականք և բռնադատականք, անպարտականք և ներհակականք, աղդականք և անձնականք․ զ̅բ,

Այեւ չափաւ խօսի․	շնորքով կըխօսի :
Խորհրդաբար կերպարանի․	խորհրդովը կըձեւանայ :
Մարդկօրէն վարի․	մարդկան պէս կըվարուի :
Ձրի բաշխէ․	ձրի կըբաշխէ :
Բարւոք ընթանայ․	աղէկ կ'երթայ :
Յոյժ տագնապի․	շատ կընեղի :
Սաստիկ տանջէ․	խիստ կըտանջէ :

Արագ հասանէ·	շուտ կըհասնի։
Յանկարծակի գայ·	աքանսըզդան կուգայ։
Հազիւ շարժի·	կիւճպէլա կ̄ ճօրով կըշարժի։
Գաղտ գործէ·	ծածուկ կըգործէ։
Կամաւ չարչարի·	կամօք կըչարչարուի։
Ակամայ աղօթէ·	զօռով կաղօթէ։
Զուր պաշտէ·	պօշ տեղը կըպաշտէ։
Այլազգ խորհի·	ուրիշ կերպ կըմտածէ։
Յունարէն բարբառի·	հոռմերէն կըզրուցէ։
Ինքնին բղխէ·	ինքիրմէ կելլէ։

Քանակականք։

Ընդ որովք կարեն դասաւորիլ և նուազականք և յաճախականք, զատականք և կրկնականք, ժողովականք և համայնականք. նա և փոխարինականք. պր̅,

Այսչափ խոնարհեցաւ·	աս կըտար խոնարհեցաւ։
Այնքան զօրացաւ·	ան կըտար զօրացաւ։
Սակաւ ուտէ·	քիչ կուտէ։
Ստէպ գնայ·	սըք սըք կերթայ։
Միայն նստի·	մինակուկ կընստի։
՚Ի միասին աշխատի·	մէկտեղ կաշխատի։
Վերստին չափէ·	թէքրար կըչափէ։

Ժամանակականք. պր̅,

Այժմ խոստանայ·	հիմա կըխոստանայ։
Այսօր կատարէ·	այսօր կըլըմնցընէ։
Հանապազ ճգնի·	տայմա կըճգնի։
Երբեմն վերանայ·	պազը հեղ կըվերանայ։
Տակաւին անագանի·	տահա կուշանայ։

Տեղական. պր̅,

Աստ տանջէ·	հոս կըտանջէ։
Անդ հանգուցանէ·	հոն կըհանգչեցնէ։
Աստանօր նորոգի·	հոս տեղը կընորոգուի։
Անտի սկսանի·	անկէց կըսկըսի։
Այլուր դասէ·	ուրիշ տեղ կըտեղաւորցնէ։

Որականք. պր̅,

Լաւ՝ մտածէ·	աղէկ կըմտածէ։
Երկրորդ՝ գտանէ·	երկրորդ (կ̄ ետքը) կըգտնէ։

Երրորդ՝ ընտրէ ․	երրորդ՝ (կանկէ ետև) կընտրէ ։
Չորրորդ՝ առնէ ․	չորրորդ՝ (կը յետոյ) կընէ ։
Հինգերորդ՝ արձակէ ․	հինգերորդ (կէն ետքը) կարձըկէ ։

Հարցականք ․ զր,

Ընդէ՞ր տրտմիս ․	ինչո՞ւ կըտրտմիս ։
Զիա՞րդ աղօթես ․	ինչպէ՞ս կաղօթես ։
Ո՞ւր գնաս ․	ո՞ւր կերթաս ։
Որքա՞ն ննջես ․	ինչ խըտար կըքնանաս ։
Միթէ երկնչի՞ս ․	կըվախնա՞ս մի ։

Ստորասականք ։

Ընդ որս կարեն դասիլ և նմանականք ․ զր,

Այո՛ տեսի ․	հրամմերես՝ տեսայ ։
Յիրաւի ասաց ․	իրաւ ըսաւ ․
Արդարև երդուաւ ․	ըստոյգ որ երդուըընցաւ ։
Այսպէս նահատակեցաւ ․	ասանկ նահատակուեցաւ ։
Որպէս պատուիրեաց ․	ինչպէս որ պատուիրեց ։

Բացասականք ։

Ընդ որս կարեն դասիլ և արգելականք, ևս և գեր-երդմնականք ․ զր,

Ոչ նախանձի ․	չնախանձիր ։
Չև էր եկեալ ․	տահա չէր եկեր ։
Մինչ չև է տեսեալ ․	քանի որ չէ տեսեր ։
Մի՛ բամբասեր ․	մի՛ բամբասեր ։
Մի՛ երբէք ստեր ․	հէչ սուտ մըսեր ։

Յուսականք ․ զր,

Ահա եհաս ․	իշտէ հասաւ ։
Ահաւասիկ գայ ․	իշտէ կուգայ ։
Ահաւանիկ ցուցանէ ․	իշտէ կըցուցընէ ։

Նախընտրականք ․ զր,

Մանաւանդ առ մեզ խօսի՝ քան առ այլս ․ Աւելի՛ մեզի կըսէ՝ քան թէ ուրիշներու ։

Լաւ ևս կամիմ մեռանիլ՝ քան մեղանչել ․ Աղէկ կուզեմ մեռնիլ՝ քան թէ մեղանչել ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Շաղկապից:

Շաղկապք բազմատեսակք են, որպէս տեսանի յընդարձակ քերականութեան.

Բաղհիւսական. և, այլ և, նա և, դարձեալ, ևս, իսկ, և այն, և այլն. զր,

“Ի բաց փախիցուք 'ի չարեաց, և զհետ երթիցուք բարեաց„. Ոսկէբ.

“Ոչ բաւական 'ի չարեաց հեռանալ, այլ և պարտ է զբարիս գործել.„ Գրիգոր Արշարունի:

Տրոհական. կամ, և կամ, կամ թէ, և այլն. զր,

“Նա զարքայութիւն խոստացաւ, նա գեհեան սպառնացաւ. զի կամ 'ի դժնդակացն երկուցեալ՝ գայցեմք 'ի լաւուն, և կամ լաւագունիցն յոյս ունելով՝ բարւոք զկեանս մեր տնօրինիցեմք.„ Սարգ.

Բացառական. բայց, սակայն, այլ, բայց եթէ, միայն թէ, քան թէ, և այլն. զր,

“Վիշտքն անցանեն, բայց աւետիք երանութեանցն կան մնան.„ Յաճախապատում.

“Ոչ որ վարդապետեցան՝ են երանելիք, այլ որք արդիւնաւորեցին զվարդապետեալսն„. Նանայ. ԺԳ. 7:

Անկատարական. թէպէտ և, թէ և, թէ և թէ, ոչ եթէ, ոչ միայն, և այլն. զր,

“Ոսկի թէպէտև անբան է ձայնիւ, սակայն մեծապէս աղաղակէ արդեամբք„. Ղազար.

“Թէ և պարիսպք և աշտարակք հզօր իցեն, առ 'ի չգոյէ պատերազմողաց լոկոյն մատնի քաղաք„. Գէորգ. Գ:

Նախընտրական. քան, քան թէ, քան եթէ. զոր օրինակ,

“Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել.„ Նեղոս:

“Ձեզ թողում իմաստասիրել. քան թէ բանիւ զանճառն ճառել.„ Լամբրոն. յառակաբանութիւն:

Առաւելական. առաւել ևս, ևս առաւել, մանաւանդ, և այլն. զոր օրինակ,

“ Օմեռեալս կոչեաց 'ի մահուանէ. քառօրեայն 'ի գերեզմանէ.„ Ոսկեբ :

“ Այսպիսի դատաստան լինելոց է կեղծաւորաց ... մանաւանդ որք վաճառական լինին բանին այ.„ Սարգ:

Համեմատական. մինչ զի, մինչ, մինչև, և այլն. որ,

“ Այնքան կուրացեալ յատելուէն, մինչզի ոչ միայն զկարծիս ազգին, այլև զազգն ողջոյն բամբասես.„ Լամբ. Ատեն :

“ Այնչափ աշխատեցան մարմնով (որքն), մինչև արտաքոյ հանեին զմիտս՝ երևելեաց.„ Լամբ :

Վարանական. գուցէ, գուցեա, գէթ, և այլն. որ,

“ 'Ի մեծագունիցն գործոց առնու զօրինակն. զի գուցէ զփոքրն արասցուք.„ Ոսկեբ :

“ Այս մեր ասուն և խօսուն իմացական բնութի զի մարդ գէթ ոչ նմանի նմա, թողուլ զանզգամութի և կեալ.„ Նարեկ :

Թէական. եթէ, թէ, ապա թէ, այլ եթէ, և այլն. որ,

“ Եթէ չիք սրբութի սրտի, պահք չեն ընդունելի.„ Մծբ:

“ Հրամայեալ է մեզ զմերն զոմն տալ այլոց. ապա թէ մեք զայլոցն յափշտակեմք, ո՞ր յոյս կենաց եղիցի մեզ.„ Ոսկ :

Մեկնական. այսինքն, այսինքն է, այս է, և այլն. որ,

“ Մի տեսակ օտար զգեցեալ լիցուք. այլ զմիտքն Քի բարձցուք, այսինքն զխոնարհութի նր.„ Սարգ. Հարց. Ե.

“ Յամաքեցաւ խոտն. այս է՝ մեռաւ.„ Գէորգ :

Յարացուցական. ըստ այնմ, ըստ որում, որպէս, և այլն. որ,

“ Տր մեր առաքեցաւ 'ի հօրէ քարոզ հեթանոսաց. ըստ այնմ, եդի զքեզ յուխտ ազգի և 'ի լոյս հեթանոսաց.„ Նանայ :

“ Եւ 'ի մեռեալս գտանին սիրելիք նորա, որպէս աբրահամ, իսահակ, յակոբ.„ Նանայ :

Պատճառական. զի, քանզի, վն զի, փոխանակ զի, և այլն. որ,

“ Խոստացարուք զճշմարտութի ... և մի զստութի. զի ճշմարտութի յայ է, և ստութի 'ի սատանայէ.„ Շնորհ. Ընդհ.

“ Փոխանակ զի նախանձեցաւ օձն ընդ ադամ... զերիս անէծս ընկալաւ.„ Մծբ :

Հետևողական. վն այսորիկ, վն որոյ, յաղագս այսորիկ, առ որոյ, ուստի երէ, ապաքէ, և այլն. որ, “Նոքա զմերս ատեն ազգ. վասն այսորիկ և 'ի մէնջ ատեսցին . . . հայհոյեն զմեզ. յաղագս այնորիկ և 'ի մէնջ հայհոյեսցին (ամէն օտարքն 'ի սիրոյ).” Լամբ. ատէն։

Մակաբերական. ապա, ուրեմն, և այլն. օր,

“Ոչ է արժան մարդոյ խառնել զմեղր ընդ լեղւոյ. ուրեմն մի՛ խառնեսցէ նա 'ի պահս իւր զանէծս նզովից, և բամբասանս”. Մծբ։

“Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա և ցանկութի 'ի պահոց”. Յաճախապատում.

Սկզբնաւորական. արդ, այլ արդ, իսկ, և այլն. օր,

“Ուսուցին անզգամքն՝ եթէ չէ պարտ աղօթել. արդ իւրեանց ախտիւն դատի զնոսա”. Մարկ։

“Որ մեղանչէ՝ օրինազանց է. իսկ որ զօրէնսն լուծանէ՝ զի՞նչ է անուն նորա”. Լամբ։

Թարմատար. թէ, եթէ, զի, էա, որ, և այլն. օր,

“Մի՛ տար գիտել թշնամւոյն՝ թէ՝ 'ի խռովութե է ընդ քեզ պահապան քո”. Խոսրով։

“Ո՛վ ոք համարձակիցի, եթէ՞ոք լիցէ 'ի մեղաց”. Նար։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Միջարկութեանց։

Միջարկութիւնք յայտ առնեն զկիրս հոգւոյն. և են բազումք։

Երանական. Երանի, երանի թէ, եհ. օր, “Երանի՜ վաստակոցդ ձեռաց, որում ես ցանկացայ”. Ոսկ. Գող. լուս։

“Երանի՜ թէ՝ երազ միայն էր (մեծութե աշխարհի), և ոչ առիթ տանջանաց”. Գէորգ Վարդապետ։

Իղձական, կամ յօժարական. եղէ՛ թէ, ո՜հ. օր, “Եղէ՛ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ”. Նար։

“Ո՜հ, որպիսեաց մեզ պէտք են բանից և ժուժկալութե”. Եփրեմ։

Զարմացական. ո՜վ, ո՜վբէ, բա՜բէ. որպ. “Ո՜վբէ քանի անչափ են խնամքն քո, զիա՛րդ զծածուկ կամս հօրն յայտնեաց մեզ”. Իգնատ ։

“Բա՜բէ, զիա՛րդ վրէպ եղեր 'ի չարուէ թշնամւոյն”. Վարք հարց ։

Զարհուրական. Ո՛վ. ո՜. ո՜հ ո՜հ. որպ. “Ո՛վ, որպիսի ահ է գողումն եկեսցէ 'ի վերայ մեր յայնժամ. ո՜ որպիսի զեղջ կալցի զմեզ”. Վարք. հարց ։

“Ո՛հ ո՜հ օր, զի մերձ է օր տն, օր մգի. հասեալ է վախճան ազգաց”. Եզեկ ։

Հառաչական. Ո՛հ, ո՜հ, բէ, ո՜վ. որպ. “Ո՛հ, մայր իմ, ընդէ՞ր ծնար զիս՝ այր դատապարտեալ՝ տեսանել զթշուառութիւնս մարդկան”. Գող. ըռուս ։

“Գոչեաց մեծաձայն, և ասէ. ո՜վ թշուառութեանս... մարդ մի խնդրեմ խօսել ընդ նմա, և ոչ գտանեմ”. Վարք հարց ։

Եղկական կամ ողբական. Եղո՜ւկ, վա՜յ, վա՜յ վա՜յ, ո՜հ, ո՜վ, բա՜բէ. որպ. “Եղո՜ւկ՝ որ չարչարեցայն զքեզ”. Բարուք ։

“Մեզ վա՜յ թշուառականացս յաղագս մտաւորական կուրութեանս”. Լամբ ։

Աւաղական. Աւա՜ղ, վա՜յ, ո՜հ, ո՜վ. որպ. “Աւա՜ղ, ո՞ւր այրարատեան գունդն և ասքանազեան զօրն”. Մաթէոս ։

“Ո՜վ գերապատիւ մարմին երկրածին, որո՞վք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից”. Նարեկ ։

Ցաւակցական. ո՜, ո՜հ, վա՜յ վա՜յ. որպ. “Ո՜, մինչև ցմահ ձգնելին եղբարքս այս”. Վարք հարց ։

“Ո՛հ քանի պակասութիւն է մեզ և երկրի՝ մեկնելն 'ի մէնջ սրբոյն մեծին Անտոնի”. Նոյն ։

Կոչական. Ո՜վ, ո՜. որպ. “Ո՜վ որք զգեցեալ էք զզէնն քոյ ուսարուք զգործ պատերազմի”. Մծբ. է ։

“Յայսպիսի ահագին սպառնալեացս պա՛րտ էր երկնչել և դողալ մեզ սիրելիք”. Մարգ ։

Բացագանչական, կամ խրոխտական. Ա՛յ, ո՜վ. որպ. “Ա՛յ դաւանացեալ ծեր, զի՞ կայ իմ և քո, զի հալածես զիս”. Վարք հարց ։

“ Ո՜հ յիմար դու, զիա՞րդ այլոց մաքրիչ (լինիս) և ոչ անձին„. Իգնատ.

Յորդորական. Աղէ՛, հա՛պա, ծօ. գր, “ Աղէ՛ եկ դու՝ ընկա՛լ ’ի լսելիս քո զասացեալն ’ի մտերմէն„. Ագաթ.

“ Հա՛պա առաքինիք՝ եհաս ժամ պսակման մերոյ„. Եղիշ. Է:

Խնդական, կամ ախորժական. Վա՜շ, վա՜շ վա՜շ. գր,

“ Վա՜շ ինձ, զի ջեռայ և տեսի զկրակ„. Եսայ:

“ Վա՜շ վաշ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա“. Սաղ:

Գովողական. Ո՛հ, ո՛. գր, “ Ո՛հ քանի անչափ է մարդասիրութի՟ն նորա„. Իգնատ:

“ Ո՛ մեծի զօրութե՟ն՝ որ արար զայն„. Ոսկ:

Հեգնական. Վա՛հ. գր, “ Վա՛հ, եղև ադամ իբրև զմի ’ի մէնջ„. Երզնկաց:

Արհամարհական, կ՟մ ծանակական. Վա՜շ, վա՜շ վաշ. գր, “ Վա՜շ նոցա ամտութե՟ն„. Ոսկեբ:

“ Վա՜շ վաշ՝ ’ի վերայ զարշելեացն և չարեաց տանն իսրայելի„. Եղեկ:

Երգիծական. Վա՜շ, վա՜շ վաշ. գր, “ Եթէ ոտնհար եղէ ’ի վերայ գլորման թշնամւոյ իմոյ, և ասացի ’ի սրտի իմում վա՜շ, ապա լուիցէ ունկն իմ„. Յոբ:

“ Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի՝ որք ասէին ինձ վա՜շ վաշ„. Սաղ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս որպիսութեան մասանց բանի։

Զոր միանգամ աւանդեցաք նորավարժից յառաջին մասին անդ, արժան է աստ քննել զնոսին, և տեսանել՝ թէ զինչ իցեն, և որպիսի. և զո՛ր յատկութիւնս կամ պարագայս ունիցին, առ 'ի խելամուտ առնելոյ ամենայնի նոցա՝ զուսանողսն։ Եւ հարկ է նմա յայսմ վայրի ունել մտադիւրութիւն յօժար՝ առ բարւոք իմանալոյ զգրեալսն 'ի սմա։ Զի որպէս առ ուսումն առաջին մասին՝ պիտոյ է արագութիւն յիշողութեան, նոյնպէս և յայսմ մասին հարկաւոր է պատրաստութիւն մտաց. զի անդ առաջի դնին սերտելիք. իսկ աստ քննին մտաց ախորժելիք։ Զայսոսիկ ծանուցեալ՝ մատիցուք 'ի ձեռս. նախ 'ի քննութիւն քերականութեան, և ապա 'ի բացատրութիւն մասանց բանի։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Քերականութեան, թէ զինչ իցէ, և զանէ գլխաւոր մասունս նորա։

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ. քանզի որպէս հիւսնութիւն է արհեստ ըստ կարգի և ըստ պատշաճի շինելոյ զկերտուածս, այսինքն զարկղ, զաթոռ, և այլն, նոյնպէս և քերականութիւն է ազատական իմն արուեստ, որոյ ուսանողն ըստ կարգի և ըստ ուղղութեան կազմէ զխօսս. և առանց սխալանաց կարգէ զնոյն՝ թէ 'ի խօսելն, և թէ 'ի գրելն։

Գլխաւոր մասունք քերականութեան, այսինքն հարկաւոր ուսանելիք 'ի քերականութեան են չորք. գիր, վանկ, բառ և բան։ Վասն զի զոցանէ միայն խօսի քերականութիւն՝ իբրև զայնց, որք գլխաւորաբար և յատկապէս ուսանելի են 'ի քերականութե՟. զի ուրովհետև ոչ այլ ինչ դիտէ քերականութի՟ն, բայց եթէ ուղիղ և անսխալ կարգել զբանս, հարկ է նմա յատկապէս զայնցանէ խօսիլ, յորոց կազմին բանք. և քանզի բանք կազմին 'ի բառից և բառք 'ի վանկից և վանկք 'ի գրոց, պիտոյ է՝ զի յատկապէս զսոցանէ խօսեսցի քերականութի՟ն:

Յաղագս Գրոց:

Գիրն է գիծ ինչ, որ կարգեալ է 'ի նշանակել ըզտառն. որպիսի են նշանագիծքս ա, բ, գ, դ, ևն: Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի. այսինքն այնպիսի հնչումն, որ յօդի ընդ այլում հնչման: և հեգեալ ընդ նմա՝ զբաղադրեալ ձայն հնչէ. որպէս հնչումնս Բ յօդի ընդ հնչմանս Է. և հեգեալ ը͞ նմա այսպէս, Բ=Է, հնչէ զբաղադրեալ ձայնս զայս ԲԷ:

Աւստի հնչումն ինչ եթէ չիցէ հեգելի ընդ այլում հնչման, ոչ է տառ. զի ոչ լինի տարր կատարեալ ձայնի. իսկ տառն ըստ ստուգաբանութե՟ իւրում պարտի լինել տարր ձայնի, այսինքն բաղկացուցիչ նորա: Նա և՝ եթէ հնչումն ինչ իցէ յօդեալ և հեգեալ, ոչ ասի տառ, այլ վանկ. զի ոչ է հեգելի, այլ հեգեալ:

Տառք 'ի մերս լեզու յերեսնևվեց գիրս բովանդակին. որոց ձևք և հնչմունք այսպէս կերպաւորին:

ա	ԱՅԲ.	խ	ԽԷ.	չ	ՉԱ.
բ	ԲԷՆ.	ծ	ԾԱ.	պ	ՊԷ.
գ	ԳԻՄ.	կ	ԿԵՆ.	ջ	ՋԷ.
դ	ԴԱ.	հ	ՀՈ կամ ՀՕ.	ռ	ՌԱ.
ե	ԵԷՉ.	ձ	ՁԱ.	ս	ՍԷ.
զ	ԶԱ.	ղ	ՂԱՏ.	վ	ՎԷՒ.
է	Է.	ճ	ՃԷ.	տ	ՏԻՒՆ.
ը	ԵԷԹ կամ ԸԹ.	մ	ՄԵՆ.	ր	ՐԷ.
թ	ԹՈ կամ ԹՕ.	յ	ՅԻ.	ց	ՑՈ կամ ՑՕ.
ժ	ԺԷ.	ն	ՆՈՒ.	ւ	ՒԻՒՆ կամ ՀԻՒՆ.
ի	ԻՆԻ կամ ԻՆ.	շ	ՇԱ.	փ	ՓԻՒՐ.
լ	ԼԻՒՆ.	ո	Ո կամ ՈՈ.	ք	ՔԷ.

Յորս յաւելեալ զտառսդ օ և ֆ՝ լինին երեսուն և ութ, զորոց զյատկութիւնս տե՛ս 'ի բառարանի:

Եօթն 'ի սոցանէ ձայնաւորք ասին, զի ինքնին տան զձայն. և են սոքին ա՛, ե՛, է՛, ը՛, ի՛, ո՛, օ՛. ընդ որս դասի և ձայնաւոր հնչումն ու իբր ութերորդ: Իսկ մնացեալ տառք բաղաձայնք ասին. զի բաղադրութեամբ ձայնաւորի տան զձայն. և են սոքին բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, ֆ:

Իսկ գիրս և յատկապէս ոչ դասի ընդ սոսա. զի ոչ է նշանակիչ յատուկ տառի, այլ երկուց որոշ տառից, այսինքն եչէ և հիւնէ, և 'ի նոյունց կազմեալ, որ 'ի կիսատ եչէ և հիւնէ, փոխանակ բառիւ եւ:

Այսքիկ նշանագիրք մեր 'ի չորս ձևս սովոր են նկարիլ. Նախ յայս ձև ա, որ անուանի բոլոր գիր. և 'ի գործ ածի այժմ առաւելապէս 'ի տպագրութիւնս:

Երկրորդ՝ յայս ձև ա, որ անուանի նոտր գիր. և 'ի գործ ածի հասարակօրէն 'ի գրութիւնս քարտուղաց, և 'ի շարագրութիւնս ուսումնասիրաց:

Երրորդ՝ յայս ձև Ա, որ անուանի երկաթագիր. և 'ի գործ ածի հասարակօրէն 'ի սկսուածս բանից գրելոց բոլոր գրով:

Չորրորդ՝ 'ի պէսպէս վայելչազարդ ձևս, և կոչի փառագիր. որ եթէ ծաղկամբք, կամ դրուագօք նկարեսցի, ասի ծաղկագիր, կամ դրուագագիր. իսկ եթէ կերպարանօք մարդոյ կամ թռչնոյ, և այլն, կոչի մարդագիր, կամ ձագագիր. որպէս տեսանի 'ի սկսուածս պէսպէս ճառից և գլխոց մատենից:

Այլ յաղագս ղ, յ, ո, ւ տառից, սոյնպէս և յաղագս նայ տառից, որք են մ, ն, տե՛ս յընդարձակ քերականութեան նորոգ տպագրեալ. տե՛ս անդ և զոր խոստեցաք զհնչմանէս ևս:

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Վանկի:

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ 'ի բերանոյ մարդոյն, բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. զոր օրինակ, Գա, հէ, նէ, գօ, եց, զու, օք, և այլն:

Ասի միով հնչմամբ. զի եթէ բազում հնչմամբ ելանիցէ, ոչ ասի վանկ, այլ բառ. զորօրինակ, Բարի, ընտանի, մեծապէս, և այլն:

Ասի ևս ելանէ 'ի բերանոյ մարդոյն. որով որոշի նախ՝ յայնմ ձայնից, որք հնչին յանկենդան իրաց և յանբանից. որպիսի են ձայնք ջրոյ, հողմոյ, պղնձեաց, քնարից, տաւղաց, թռչնոց, գազանաց, ևն: Երկրորդ՝ որոշի նաև յայնպիսի ձայնից, որք թէպէտ ելանեն 'ի բերանոյ մարդոյ, սակայն ոչ իբր բանաւորի, այլ իբր կենդանւոյ. որպիսի են ձայնք սուլելոյ, հազալոյ, փռնգալոյ, և այլն:

Ասի դարձեալ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. քանզի առ 'ի ասել ձայնի իմիք իւրապէս վանկ՝ պիտոյ է այնմ բաղադրիլ 'ի բաղաձայն և 'ի ձայնաւոր տառից. և միով հնչմամբ ելանել ընդ բերանն. զոր օրինակ, Ան, եր, գեղ, քէն, և այլն: Սմին իրի ձայնաւոր տառքս՝ է և օ, ոչ ասին յատկապէս վանկ, այլ անյատկապէս և պիտակաբար, ըստ որում միով հնչմամբ ելանեն 'ի բերանոյ մարդոյն:

Ըստ այսմ են և այլ ձայնաւոր տառք՝ եթէ առանց բաղադրելոյ ընդ բաղաձայն տառից հնչեսցին. որպէս, ա, ե, է, ը, ի, ո. զի ըստ այսմ տառ ասին. այսինքն հեգելի և յօդելի ձայն, և են նիւթ և տարր վանկի և ոչ իւրապէս վանկ: Իսկ եթէ փաղառութեամբ բաղաձայն տառից հնչեսցին, ասին յատկապէս վանկ. զոր օրինակ, այբ, եղ, և այլն. զի ըստ այսմ հեգմամբ և փաղառութեամբ տառից ձևանան: Եւ վասն այսր պատճառի վանկն կոչի նաև հեգ և փաղառութիւն:

Վանկից բազում են տեսակք . ոմանք են միատառ, կամ՝ միագիր և ոմանք յոգնատառ, կամ բազմագիր . Միատառք են եօթն ձայնաւորքս, ա, ե, է, ը, ի, ո, օ . որք ըստ վերոյ գրելոցդ պիտակապէս միայն ասին վանկ ։

Իսկ յոգնատառք են, որք 'ի բազում տառից բաղկանան . ոմանք յերկուց, և կոչին երկատառ . որպէս, Աղ, մի, օդ, են ։ Ոմանք յերից, և ասին եռատառ . որպէս, Հաց, հող, բեր, են . Ոմանք 'ի չորից, և ասին քառատառ . որպէս, Զարկ, փեղկ, ջուր, են . Ոմանք 'ի հնգից, և ասին հնգատառ . որպէս, Սուրբ, թեամբ, գամբք, են . Ոմանք 'ի վեցից, և կոչին վեցատառ . որպէս, Կուրծք, ջուրբք, սեամբք, են ։

Դարձեալ ոմանք 'ի վանկից են միաբարբառ, կամ միաձայն, և ոմանք երկբարբառ կամ երկձայն ։ Միաբարբառք են նոքա, որ ունելով զմի ձայնաւոր տառ՝ զձայն միոյ հնչեն . զոր օրինակ, Հար, Թող, զով, ձիւ, են ։ Իսկ երկբարբառք են նոքա, որք ունելով զերկուս ձայնաւորս՝ իբրև զմի ձայն հնչեն . զոր օրինակ, Լեալ, եօթն, ձիւն, տուն . տես յընդարձակն .

Դարձեալ ոմանք 'ի վանկից են աննշանք, և ոմանք նշանականք ։ Աննշանք են նոքին, որք 'ի հայ բարբառ ինչ ոչ նշանակեն զոր օրինակ, Մա, բե, զէ, են ։ Իսկ նշանականք են՝ որք առանձինն նշանակեն ինչ . զոր օրինակ, Լար, Թել, զէն, են . բայց սոքին ոչ ըստ որում նշանականք, այլ ըստ որում են նիւթ նշանակութե՛ն, և ըստ որում միով հնչմամբ ելանեն ընդ բերանն, ասին վանկ, զի ըստ որում նշանականք՝ յաւէտ բառ ասին, քան վանկ ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Բառի ։

Բառն է ձայն նշանական . այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է առ 'ի նշանակել ինչ . որով և որոշի 'ի վանկէն․ զի նա է ձայն միահնչիւն՝ ըստ ինքեան աննշան՝ կարգեալ առ նշանական ինչ, այսինքն առ բառն։ Իսկ բառն է նշանական ձայն․ զի միշտ նշանակէ ինչ․ այսինքն, կամ զնոյն իրն, կամ զգործողութիւնս իրաց և կամ զպարագայս նոցին։

Զայնն որ նշանակէ զիրն, և յորջորջէ զնոյն այս ինչ, ասի անուն․ որպէս՝ Քար, հող, անասուն, տեսիլ, ևն։

Զայնն որ նշանակէ զգործողութիւնս կամ զկիրս և կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ, կոչի բայ․ որպէս, Բանամ, խոցեցայ, եղէ, և այլն։

Զայնն որ նշանակէ զիրն 'ի գործողութեան կամ 'ի կրելութեան, կոչի ընդունելութիւն․ որպէս, Տեսող, տեսեալ, տեսանելի, և այլն։

Զայնն որ զպարագայս իրաց և գործողութեանց նշանակէ, է հնգապատիկ․ զի Կամ զդէմս իրաց ցուցանէ, և այս կոչի դերանուն․ որպէս, Ես, դու, սա, դա, ևն։ Կամ սոսկ զպարագայս ինչ իրաց յայտնէ․ և այս կոչի նախադրութիւն․ որպէս, 'Ի, զ, ընդ, վասն, ևն։ Կամ զկիրս հոգւոյն յայտ առնէ․ և սա կոչի միջարկութիւն․ որպէս, Ո՜վ, աւաղ, ևն։ Կամ զպարագայս գործողութեան և կրելութեան 'ի մէջ բերէ․ և սա կոչի մակբայ․ որպէս, Այսօր, յետոյ, ուր, ևն։ Եւ կամ զայս ամենայն նշանական բառս ընդ միմեանս կապէ․ և սա անուանի շաղկապ․ որպէս, Սակայն, թէ, և, և այլն։

Յայսցանէ յայտնի երևի, թէ ութ են ազգք բառից․ այսինքն, Անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, միջարկութիւն, մակբայ և շաղկապ։

Չորք 'ի սոցանէ հոլովականք են, որպէս անուն, դերանուն, բայ և ընդունելութիւն․ և չորք անհոլովք․ որպէս նախադրութիւն, մակբայ, շաղկապ և միջարկութիւն։

Արդ՝ սոքա որպէս վասն գոլոյ ձայնք նշանականք՝ առանձինն առեալ բառք ասին, սոյնպէս և վասն բաղկացուցանելոյ զբան՝ այսու կամ այնու եղանակաւ նշանակելով մասունք բանի կոչին, ոմանք իբր անուն ոմանք իբր բայ․ և այլն։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Ոճոյ:

Ոճն է կարգաւոր շարամանութ̃ի բառից՝ յայտնող տրամախոհութ̃ե մտաց : Յասելն՝ կարգաւոր շարամանութ̃ե բառից, ցուցանէ, թէ 'ի կազմութ̃ե բանի շարք բառիցն պարտին լինել ը̄ կարգի զետեղեալք . գ̄ր " Յանկանիլ մեղացն՝ յառնէ արդարութիւնն ,, . Իգնատիոս : Որ աստ ըստ կարգի դասաւորեալ են բառք : Իսկ եթէ խանգարեսցես զկարգն, ոչ ևս մնայ բան . գ̄ր, Յառնէ յանկանիլ արդարութ̃ի մեղացն : Զի բառք սորա թէպէտ նոյն են, որ ինչ 'ի նախընթացդ յորում կազմեալ էին զբան, բայց յանկարգս զետեղեալ՝ ոչ առնեն զկազմութ̃ի բանի :

Իսկ յասելն՝ յայտնող տրամախոհութ̃ե մտաց, ցուցանէ, թէ յայնժամ շարուածք ինչ բառից բան ասի, յորժամ զդատմունս, կ̃մ զխօսս մտաց մերոց յայտնէ, թէ իցէ 'ի սակաւ բառից կազմեալ, և թէ 'ի բազմաց . գ̄ր " Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք ,, . Եղիշէ : Ահա այս բան յայտ առնէ զայն դատումն, որով խօսիմք 'ի միտս մեր և հաստատեմք, թէ լաւ է մարդոյ կոյր լինել աչօք՝ քան մտօք :

Ասացի՝ զդատմունս մտաց . զի եթէ միայն զպարզ հայեցողութ̃ի կ̃մ զըմբռնումն մտաց յայտնեսցէ, ոչ է բան ը̄ քերթողաց . որպիսի են սոքին : Զօրաբաբէլ սաղաթիելեան, բանական կենդանի, լուսատու և զուարթարար, են : Զի սոքա միայն զըմբռնմունս մտաց յայտնեալ յաւէտ շարայարեալ բառք ասին՝ քան թէ բանք : Եւ այս ոչ վասն այսորիկ՝ զի բայ չէ եդեալ 'ի նոսա ներգործութ̃բ, այլ վասն այնպիսի պակասութ̃ե, ըստ որոյ և ոչ զօրութ̃բ ըմբռնի բայն : Իսկ եթէ բայն զօրութ̃բ իմասցի, է տիրապէս բան . գ̄ր, " 'Ի քէն տանջանք, և 'ի մէնջ յանձնառութիւնք . սուր քո, և պարանոց մեր ,, . Եղիշէ : Որ զօրութ̃բ ըմբռնին այսպիսի ինչ բայք, տուեալ լինին, ընծային, և պատրաստ է. որպէս թէ ասացեալ էր. 'ի քէն տրուեալ լինին տանջանք, և 'ի մէնջ ընծայլին քեզ յանձնառութ՟իք տանջանացդ. և որպէս պատրաստ է սուր քոյ, սոյնպէս և պատրաստ է պարանոց մեր ։

Ոմանք 'ի բանից են կատարեալ, և ոմանք անկատար ։ Կատարեալ բանն է, որ անթերի յայտնէ ըզտրամախոհութ՟ն մտաց. որով լսողն ոչ ևս սպասէ այլոց բառից առ 'ի առնուլ 'ի միտ. զր՟ “Մարդիկ յօրինակն առաւել հային՝ քան 'ի ճշմարտութիւն”. Սենեկ։
“Իւրաքանչիւր ոք յիւրոց գործոց գովի կամ պարսաւի”. Գրիգոր Նազիանզացի ։
“Բարւոք է մահկանացուի ոչ գիտել՝ թէ երբ վախճանի”. Պղատ. Սենեկ։

Իսկ անկատար բանն է, որ 'ի բառից կարգաւ շարադրեալ՝ թէպէտ յայտնէ զտրամախոհութ՟ն մտաց, բայց անկատար և թերի. և կամ տայ զսկզբնաւորութ՟ն իմանալոյ զտրամախոհութ՟ն մտաց, բայց ոչ աւարտէ. այլ որպէս թէ 'ի կախ թողու և որ լսէ՝ լրման նորին սպասէ. զր՟ Եթէ ցանկամք հասանել փառացն. Թէպէտ և յամ՟ աշխարհ գովեն և երանեն զմեզ. 'Ի փոքունցն փախուցեալ. Յորժամ յաղթեմք. ևն՟։ Զի ահա սոքա զթերի ինչ դատմունս մտաց յայտնեալ, թէպէտ և սկիզբն առնեն իմացուցանելոյ, այլ ոչ կատարեն. բայց եթէ յարեսցի 'ի նոսա այլ բան կամ բայ. զոր օրինակ ։
“Եթէ ցանկամք հասանել փառացն, փախիցուք 'ի փառաց անտի”. Ոսկեբ։
“Թէպէտ և յամ՟ աշխարհ գովեն և երանեն զմեզ (մարդիկ), զինչ օգուտ են մեզ”. Վարք հարց ։
“'Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ”. Նար։
“Յորժամ յաղթեմք, ցնծամք”. Ոսկեբ։

Ի վախճան ծանօթութեանց գլխաւոր մասանց քերականութ՟ե համառօտեսցուք զսահմանս նոցա յայս ոտանաւոր, առ դիւրին ներտողութ՟ի համբակաց.

Գիրն է գիծ ինչ նշան տառի.
Տառն է հնչումն ինչ հեգելի ։

Յաղագս բանի:

Վանկն միով հնչմամբ յօդի,
բաղկացութեամբ պէսպէս տառի.
Բառն է ձայն ինչ նշանական,
յազգըս 'ի յութ բաժանական.
Բանն է կարգաւ բառի հիւսուած,
յայտնիչ ներքին դատման մտաց:

Արդ յետ խօսելոյ մեր զչորից մասանց քերականութե՟, հարկ է խօսիլ զութից մասանց բանի զիւրաքանչիւրոյ առանձինն:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս անուան:

Թէ զինչ և քանիպատիկ իցէ անունն:

Անունն է մասն բանի որով իրն յորջորջի. այսինքն է՝ այնպիսի բառ, որով իրն անուանի՝ և ասի այս ինչ կամ այսպիսի ինչ. որ, Մարդ, քար, խունկ, լոյս, պայծառ, տկար ևն. զի սոքօք պէսպէս իրք պէսպէս օրինակաւ այս ինչ կամ այն ինչ անուանին՝ մինն մարդ, մինն քար, ևն: Հնար է ևս սահմանել այսպէս. Անունն է մասն բանի, որ զէու՟ի իրին նշանակէ. այլ այս ևս զնոյն զօրու՟ի ունի. քանզի անունն յայնժամ նշանակէ զէու՟ի իրին, յորժամ իրն նովաւ անուանի այս ինչ կամ այսպիսի ինչ. որպէս անունս մարդ՝ յայնժամ նշանակէ զէու՟ի մարդոյ, յորժամ նովաւ անուանի իրն այնպիսի, այսինքն՝ մարդ:

Անուանց ոմանք են գոյական և ոմանք ածական: Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակէ զիրս էականս կամ իբր էականս, թէ բնականք իցեն և թէ արհեստականք. զոր օրինակ Մարդ, տունկ, աթոռ, թուղթ, գոյն, քաղցրու՟ի, նկար, շինուած, և այլն:

Գոյական անուանց ոմանք են յատուկ, որք և 'ի հնոց՝ [illegible] ասին, ոմանք հաւաքականք որք և բովանդականք կոչին, և ոմանք ընդհանուրք կամ հասարակք՝ որք և ասին անուանականք:

Յատուկ անունն է, որ կարգեալ է առ 'ի զմի ինչ նշանակել, և զմիոջէ միայն ասիլ. զր Սիմոն, տարօն, տիգրիս, քօրեբ, ևն: Զի սոքա հնարեալ են վասն նշանակելոյ զմի մարդ, զմի գաւառ, զմի գետ, զմի լեառն, ևն. ուստի և զմիոջէ միայն ասին. վասն որոյ և ոչ վարին յոգնականապէս:

Եւ թէպէտ յատուկ անուանք մարդկան՝ այլևայլ անձանց ևս դնին, բայց այն է ըստ պատահման. և զնոցանէ ևս իբրև զմիոջէ ասին: Իսկ եթէ կամիցիմք որոշել զնոսին յայլոց, յաւելումք 'ի նոսա երբեմն զբառս ինչ՝ նոցին յատկացեալս. զր Սիմոն յովհաննու, սիմոն նախանձայոյզ, սիմոն պետրոս, սիմոն մոգ: Յուդա մակաբէ, յուդա յակոբեան, յուդա իսկարիովտացի, ևն:

Հաւաքականն է, որ միով եզական ձայնիւ զբազում իրս հաւաքմամբ միացեալս՝ իբրև զմի ինչ նշանակէ. զր Շեղջ, կոյտ, դէզ, հօտ, երամ, խումբ, ժողովուրդ, տոհմ, հոյլ, պար, ևն: Զի սոքա ոչ զմի ինչ յինքեանս նշանակեն, և ոչ ևս զբազումս իբր 'ի միմեանց զատեալս, այլ իբրև հաւաքեալս 'ի մի: Որպէս հօտն ոչ նշանակէ զմի ոչխար, այլ զբազում ոչխարս, ոչ առանձինն առանձինն, այլ իբր 'ի մի հաւաքեալ. զի առանձին մի ոչխարն ոչ ասի հօտ, այլ յորժամ բազումք 'ի մի խումբ իցեն:

Իսկ ընդհանուրն կամ հասարակն է, որ նշանակէ զընդհանուր ինչ էութիւն տարածեալ առ բազում անհատս, կամ որ զբազմաց ասի հասարակաբար. զր Ծառ, հաւ, գետ, տուն, գահ, զոհ, խորհուրդ, բան, զօրութիւն, փառք, ևն: Զի սոքա ոչ զմիոջէ միայն, այլ և զբազմաց ասին 'ի հասարակի: Որպէս ծառն ոչ ասի զմիոջէ ծառոյ միայն, այլ և զամենայն ծառոց. զի զոր ինչ նշանակէ անունս ծառ, գտանի այն յամենայն ծառս:

Ածական՝ կամ ըստ հնոց մակադրական անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս, այլ պահանջէ յարիլ 'ի գոական՝ իբր յայտնիչ որպիսութե՟ն նոցա. Օր, Բարի, չար, առատ, սակաւ, անստուեր, վեհագոյն, կարեւոր, ամենափայլ, կենդանարար, բարեատեաց, ե՟ն։ Որք առանձինն ոչ վարին 'ի բանս, այլ յարադրելով 'ի գոյականս։ Եւ պատճառն է, զի ունին զնշանակութի՟ իբր ձապաղ. քանզի թէպէտ եւ յայտ առնեն զորպիսութի՟ ինչ, բայց ոչ որոշեալ առ այս կամ առ այն. որով եւ միտք մարդոյ 'ի լսելն՝ միայն տատանեալ. եւ որոնէ, թէ որո՞յ իրի արդեօք որպիսութի՟ է այն, զոր նշանակեն։ Ապա եթէ ընդ գոյականի վարեսցին, որոշի նշանակութի՟ նոցա առ այս կամ առ այն. որով եւ միտք լսողին հանգչի. զոր օրինակ, յասելն, “Ծառ բարի պտուղ բարի առնէ, եւ ծառ չար պտուղ չար առնէ„. Մատթ։ Ածական անունս բարի՝ յարելով 'ի գոյական անուանսդ ծառ եւ պտուղ՝ որոշի առ այս եւ առ այն. այսինքն առ ծառն եւ առ պտուղն. որով եւ միտք լսողին ոչ եւս որոնէ, թէ բարին զո՞ր իր նշանակէ աստ, կամ զորո՞յ իրի որպիսութի՟ յայտնէ։ Ըստ այսմ եւ անունդ չար յարելով յանուանսդ ծառ եւ պտուղ, որոշի 'ի նշանակութե՟ իւրում։

Յասացելոցս տեսանի, զի գոյական անունն հայի 'ի ինչ գոլ իւրն, իսկ ածականն հայի որպէս գոլ նորին. վասն որոյ մին վարի առանձին, եւ միւսն յարելով 'ի նոյն։

Այլ գիտելի է, զի թէպէտ ածականն պահանջէ յարիլ 'ի գոյականս, բայց ոչ է հարկ միշտ ներգործութե՟ ունել զնոսին. այլ բաւական է եւս զօրութե՟ միայն ունել. զոր օրինակ, յասելն, “'Ի փոքուն նկարեաց զմեծն, եւ 'ի մարմնականն զհոգեւորն„. Նիւսաց։ Ածական անուանքս 'ի փոքուն, զմեծն, 'ի մարմնականն, զհոգեւորն զօրութե՟ ունին զգոյական իւրեանց. այսինքն է՝ իր, գործ, գործողութի՟, խորհուրդ. որպէս թէ ասէր. 'Ի փոքու իրի նկարեաց զգործ մեծ, եւ 'ի մարմնական գործողութե՟ զխորհուրդ հոգեւոր։

Ածական անուանց ոմանք դրականք ասին, ոմանք բաղդատականք եւ ոմանք գերադրականք։

Դրականք են, որք ցուցանեն զորպիսութի՟ կամ զորքանութիւն իւրեն պարզապէս առանց ճոխացուցանելոյ կամ նուազեցուցանելոյ. որ, Բարի, սպիտակ, գեղեցիկ, վատթար, պակաս, երկայն, կարճ, ևն։

Բաղդատականք են, որք բաղդատելով զմի իր ընդ այլում իրի, ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն. և սոքա կազմին մասնկամբս գոյն. զոր օրինակ, Բարեգոյն, սպիտակագոյն, գեղեցկագոյն, վատթարագոյն, պակասագոյն, երկայնագոյն, կարճագոյն, ևն։

Գերադրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն իւրեն յոյժ առաւելեալ, կամ յոյժ նուազեալ քան զայլոցն. և սոքա կազմին մասնկամբս ամեն. զոր օրինակ, Ամենաբարի, ամենագեղեցիկ, ամենավատթար, կամ՝ ևս վերագոյն, ևս մեծագոյն, ևն։ Օ՝ այսցանէ տես յընդարձակն։

Անուանք դերանուանք։

Աստանօր արժան համարիմ խօսիլ զայնոցիկ անուանց, որք կոչին դերանուանք, և բաժանին 'ի հինգ տեսակս. որք են, Վերաբերականք, Հանրականք, Հարցականք, Մասնականք և Թուականք։

Վերաբերականք են, որք 'ի մէջ բերեն զբաղդատութիւն ինչ որպիսութեան կամ որքանութեան. և են սոքա. Սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի։ Այսպիսի, այդպիսի, այնպիսի։ Այսքան, այդքան, այնքան. սոյնքան, դոյնքան, նոյնքան. և սոքա վարին ածականապէս։ Ընդ որս դասին և բառքս՝ Այսչափ, այդչափ, այնչափ. սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ. որք առանց հոլովելոյ վարին։

Հանրականք են բառքս՝ Ամենայն, ամենեքեան կամ ամենեքին, բոլոր, բոլորեքեան կամ բոլորեքին. որք իբր ածական 'ի գործ ածին։ Ընդ որս կարեն դասիլ և անուանքս՝ ընաւ, համայն, ևն։

Հարցականք են, որք հարցականապէս վարին. յորոց ոմանք են իբր գոյական. և են սոքա, Ո՞, ո՞վ, զի՞նչ, ո՞վ ոք, ո՞յք։ Իսկ ոմանք իբր ածական. և են սոքա, Ո՞ր, զինչպիսի՞, որպիսի՞, ո՞րչափ, ո՞րքան, քանի՞ ։ 'Ի սոսա բառքս Որպիսի, որքան, քանի, որչափ, վարին երբեմն նաև իբր վերբերականք առանց պարոյկի ։

Մասնականք, որք և Տակէաշեւ ասին, են նոքա, որք մասնաւորեն զնշանակութի անուան իրիք. երբեմն իբր ածական վարելով և երբեմն իբր գոյական. և նոքա են չորեքկին ։ Առաջինն որոշէ զմին 'ի յերկուց. և է բառս այս Մին. զոր օրինակ, "Յայդ երկու ճանապարհք կոչեցան. մին լայն և ընդարձակ, իսկ միւսն նեղ և անձուկ". Ոսկ. Սա չունի յոգնական ։

Երկրորդն որոշէ զմին 'ի բազմաց. որպէս սոքին, Ոմն, ոք, իմն, ինչ, իք, "Զոմն ('ի մարդկանէ) աստ պատժէ և անդ պսակէ". Մամբրոն. 'ի մեկն. պատ ։

Երրորդն ցուցանէ զերկուսն մի մի յինքեանս. և է բառս այս Երկաքանչիւր. զոր օրինակ, "Զկերպարանս երկաքանչիւրոց առ միմեանս եդեալ՝ զմի և զնոյն վհատութեն ծնունդս արտադրեն". Նար ։

Չորրորդն ցուցանէ զբազումս 'ի միասին անձնեբաբար և ոչ հաւաքապէս. և է բառս Իւրաքանչիւր. զոր օրինակ, "Առանձինն ունի իւրաքանչիւր անդամ զիւրաքանչիւր գործ". Նար. երգ ։

Սորա ուղղականն բազում անգամ վարի փոխանակ սեռականի և տրականի. զոր օրինակ, "Նոյն հոգի բաշխէ իւրաքանչիւր ըստ իւրաքանչիւր կարի". այսինքն բաշխէ իւրաքանչիւրոց. Կոչ ։

'Ի տեղի սորա երբեմն դնի կրկնակ բառքդ Մի մի, այր այր, ևն. զոր օրինակ, "Բաշխէր միոյ միոյ 'ի նոցանէ զգանձս". Խորեն ։ "Զայն այն զքաջութի պատմէր նոցա". Եղիշէ ։

Թուականք են, որք 'ի մէջ բերեն զթիւ և վարին ածականապէս. որոց են հինգ տեսակք ։ Առաջին տեսակքն ասին ընդարձակք, որք արձակապէս նշանակեն զթուեալսն. որպէս՝ Մի, երկու, երեք, չորս, հինգ, վեց, տասն, հնգետասան, քսան, քսան և մի, երեսուն, ևն ։ Երկրորդ տեսակքն ասին դասականք. որք կարգաւ ցուցանեն զթուեալսն. որպէս՝ առաջներորդ, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, հնգետասաներորդ, ևն։ Երրորդ տեսակքն ասին զատականք. որք նշանակեն զթուեալսն իբր զատուցեալս և առանձնացեալս. ո՟պ, Միակ, երկեակ, երրեակ, հնգեակ, եօթնեակ, յիսնեակ, ևն։ Չորրորդ տեսակքն ասին անձներականք. որք զբաղումն ընդ միով թուով իւրաքանչիւրաբար նշանակեն. ո՟պ, Երկոքեան կ՟մ երկոքին, երեքեան կամ երեքին, չորեքեան կ՟մ չորեքին, հնգեքեան կամ հնգեքին, վեցեքեան կ՟մ վեցեքին, տասնեքեան կամ տասնեքին, ևն։ Հինգերորդ տեսակքն ասին կրկնականք. որք զկրկնումն թուոյ ցուցանեն՝ վերջաւորութ՟բս պատիկ. ո՟պ, Քառապատիկ, (այսինքն մին քառիցս կրկնեալ). հնգապատիկ, (ա՟յս մին հնգիցս կրկնեալ). եօթնապատիկ, (ա՟յս մին եօթնիցս կրկնեալ). ևն։

Յոմանս՚ի սոցանէ յարի և մասնիկս կին՝ այնու նշանակութ՟բ, զոր ունի մասնիկս պատիկ. ո՟պ, Երեքկին, չորեքկին, հնգեկին, վեցկին, և այլն։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս պարագայից անուան։ Եւ նախ յաղագս Սեռից.

Պարագայք անուանց ասին այնք, որք շուրջ զանուամբ մտածին՝ իբր հետևումն որպիսութեան նոցա. ուստի նաև հետևանք կոչին. և են վեց, այսինքն, Սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով և հոլովումն։

Սեռք կամ սերք անուանց են որոշմունք գոյական անուանց՝ ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց, այսինքն զարու և զէգ, կամ զհասարակ ինչ, և կամ զչէզոք։ Ուստի և անուանք՝ ըստ սեռին են չորք, արական, իգական, հասարակ և չէզոքական։

Արականն է որ նշանակէ զարու. ո՟պ, Աբրահամ, Իսահակ, հայր, եղբայր, այր, փեսայ, աներ, հաւ, պապ, եզն, ցուլ, արջառ, քաղ, և այլն։

Իգականն է որ նշանակէ զէգ. ո՟պ, Սառրա, Ռենա, կին, տիկին, դշխոյ, հարսն, մայր, քոյր, զոքանչ, հանի, նու, հօրաքոյր, մայրադիր, մօրու, կով, երինջ, մաքի, որոջ, մարի, և այլն :

Հասարակն է որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ. որպէս, Զաւակ, որդի, թոռն, կորիւն, կողուն, մտրուկ, ձագ, եղն : Եւ ևս Մարդ, առիւծ, ձի, նապաստակ, արտոյտ, անգղ, և այլն :

Չեզոքականն է որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. որպէս, Ջուր, օդ, հող, մոմ, ճրագ, թուղթ, լոյս, մեծութիւն, ծնունդ. և այլն : Իսկ եթէ անկենդան իրք կոչեսցին երբեմն արու կամ էգ. որպէս, Արու կամ էգ ծղխնի, արու կամ էգ արմաւենի, արու կամ էգ պղինձ, և այլն, այն նմանութեամբ ասի, և ոչ տիրապէս :

Ասացի 'ի վերոյ, թէ այս որոշմունք են գոյականաց անուանց. զի 'ի լեզուի մերում ոչ գտանի որոշումն սեռի ածական անուանց ըստ արականի և ըստ իգականի. զի որչափ և ածականս ունիմք, կամ հասարակ են արուի և իգի և կամ չէզոք. և բազումք ևս հասարակ են մարդկան և անասնոց, ըզգայնոց և անզգայից, արհեստականաց և բնականաց :

Ասացի և ևս, ըստ նշանակելոյ նոցա զսեռս իրաց. զի սեռք անուանց ոչ նկատին 'ի մեզ ըստ վերջաւորութեան կամ ըստ յօդից ինչ, որպէս 'ի Լատինս, և 'ի յայլս. այլ ըստ նշանակութեան նոցին. իբր զի եթէ նշանակեալն անուան իցէ արու, անունն ասի արական, եթէ էգ՝ իգական, եթէ երկուցն ևս պատկանեալ՝ հասարակ, և եթէ և ոչ միում պատշաճեալ, չէզոք :

Եւ թէպէտ ոմանք յածականաց ունելով զվերջաւորութիւնս ուհի՝ որոշին 'ի սեռ իգական. զոր օրինակ, Արքուհի, երանուհի, և այլն, բայց այս վերաբերի յածանցումն անուանց. զորմէ տեսցես 'ի գլ. Է:

Եւ դարձեալ 'ի յատուկ անուանս թէպէտ կան՝ որք ըստ այս ինչ վերջաւորութեան արականապէս նշանակեն. որպէս, Յովհաննէս, Հերովդէս, Կիւրոս, Յուստինիանոս, և այլն. և ըստ այլ ինչ վերջաւորութեան իգականապէս. զոր օրինակ, Յովհաննա, Հերովդիա, Կիւրիա, Յուստինիանէ, և այլն : Բայց այս ոչ է 'ի յատկութեան լեզուիս մերոյ, այլ գրեթէ 'ի թարգմանութենէ անուանց այլոց ազգաց. որպէս յայտ է:

Իսկ եթէ պիտոյ լիցի 'ի լեզուի մերում զանուն ինչ հասարակ իգականապէս 'ի գործ ածել, յարեմք յայն զանուն իգական. զոր օրինակ, "Կին մի վհուկ." Ա. Թագ: Կին մարգարէ. Դատ: Կին ժողագլուխ. Ղուկ: Աղախին՝ որ դռնապանն էր. Յովհ. ԺԸ: Նոյն և Մատակ ձի, մատակ առիւծ, էգ աղուէս, էգ կատու, և այլն:

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Ձևոց անուանց:

Ձևք անուանց որոշին ըստ պարզութե, ըստ բարդութե և ըստ բաղադրութե նոցա: Աստի և անուանք ըստ ձևոյն երրեակ են. Պարզ, բարդ և բաղադրեալ:

Պարզ անունն է որ կայ յինքեան միայնակ և առանձինն, և ոչ է զօդեալ ընդ այլում նշանակական բառի, և ոչ ունի յառաջոյ զաննշան ինչ մասնիկ. զր. Սով, հոգի, բարի, խառն, կեղծիք, ևլն:

Բարդն է, որ յերկուց նշանակական բառից զօդեալ է 'ի մի անուն 'ի ձեռն յօդիցս, ա, ե, է, ի, ու կամ եւ. զր. Սովամահ, բարեմիտ, հոգեկիր, խառնիխուռն, կեղծուպատիր, ելևէջ, ևն. յորս յօդքդ ե և է եդեալ են փոխարկմամբ ինչ տառին:

Այլ բազում անգամ առանց այսպիսի յօդից ևս բարդի անունն. զր. Երկձայն, վրէժխնդիր, ողջանդամ, բարձրընտիր, ևն:

Այլ գիտելի է, զի անունն բարդի ըստ պէսպէս մասանց բանի. Նախ ընդ ինքեան. զր. Պարագլուխ, ակընաչար, բազմապարգև, մեծապայծառ, և այլն:

Երկրորդ ընդ դերանուան. զոր օրինակ, Ինքնագոյ, իւրահնար, նոյնատիպ, քոյնատեղծ, և այլն:

Երրորդ ընդ բայից. զոր օրինակ, Զարախնդաց, Թագընկեց, ծովահեղձոյց, վարձահատոյց, բեռնաբարձ, տիեզերակալ, սրատես, դիւահար, ականջալուր, և այլն. Երբեմն ևս ըստ արմատս բայից. զոր օրինակ, Բազմածին, զինակիր, լուսակիզն, հոգեպատում, և այլք բազումք: 'Ի սոսա ոմանք ունին զզօրութիւն ողի, և ոմանք եալի. քանզի չարախնդացն նշանակէ զխնդացողն ընդ չարիս. Թագընկէցն զթագ ընկեցող, բեռնաբարձն զբեռն բարձող, բազմածինն զբազումս ծնանող, լեռնակիրն զլեռնս կրող, և այլն: Այսպէս և ծովահեղձեալն նշանակէ 'ի ծովու հեղձեալ կամ 'ի ծովու հեղձուցանող, հոգեպատումն հոգւով պատմեալ կամ զհոգւոյն պատմող. դիւահարն 'ի դիւէ հարեալ, և այլն:

Չորրորդ ըստ ընդունելութեան. զոր օրինակ, Ներաղամիտ, քերթողահայր, տեսանողագուշակ, առաքելաշնորհ, ընտրելակից, սքանչելագործ, և այլն:

Հինգերորդ ընդ նախադրութեան. զոր օրինակ, Պաղտամիտ, ընդդիմամարտ, հեռաբնակ, միջասահման, մօտաքաղաք, շրջապարիսպ, և այլն:

Վեցերորդ ըստ մակբայի. զոր օրինակ, Յառաջապահ, յարադալար, յաւէտահրաշ, մշտանուէր, նախաժաման, ներքսակողմն, և այլն:

Չնար է անուանց բարդիլ նաև ըստ միջարկութեան և ըստ շաղկապի. զոր օրինակ, Վաշվաշասէր, Թէախնդիր, և այլն. այլ սոքա չեն 'ի գործածութեան:

Գիտելի է ևս, զի բարդութիւն անուանց լինի քառակի. Նախ յերկուց ամբողջ բառից. զոր օրինակ, Մեծահանդէս, գեղատեսիլ, հրեշտակակերպ, լայնախորհուրդ, շքեղապայծառ, և այլն. Երկրորդ յերկուց պակասելոց կամ փոփոխելոց. զոր օրինակ, Լուսատու, երկդիմի, երկնառաք, բազմագունի, և այլն: Երրորդ 'ի միջէ փոփոխելոյ 'ի հաւլին, և 'ի միջէ ամբողջէ 'ի յանգիլն. զոր օրինակ, Գեղեցկատիպար, ժողովրդապետ, բարեվիճակ, տանուտէր, չարեացապարտ, ձեռբակալ, և այլն: Չորրորդ 'ի միջէ ամբողջէ 'ի հաւլին, և 'ի միջէ փոփոխելոյ 'ի յանգիլն. զոր օրինակ, Յոգնապիսի, մեծազգի, միամօր, անարգամեծար, և այլն:

'Ի բարդ անուանս դասին և այլ քանի մի անուանք որք կոչին յարաբարդք. զի յերից նշանական բառից զօդին 'ի մի անուն, որք և չեն այնչափ 'ի յաճախ գործածութե՟. որպիսի են սոքին, Անաչառասփիւռ, անձնապահապետ, բարեհասակաչափ, երեքփառատրեան, հնգետասանամեայ, ողբերգարկուն, և այլն։

Իսկ բաղադրեալ անունն է, որ յառաջոյ զօդեալ ունի զաննշան մասնիկ ինչ բաղադրական, որպիսի են սոքին, Աներկիւղ, ապերախտ, ապենիազ, ապիկար, առողջ, արտուղի, կամ չարտուղի, տարաժամ, հակաճառ, համախոհ, հոմասեռ, բաղաձայն, բաղանուն, ներանձն, տկար, դժգոհ, դժպատեհ, և այլն։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Տեսակաց անուանց։

Տեսակք անուանց են որպիսութիւնք անուանց ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան նոցա։ Ըստ որում և անուանք կրկին են ըստ տեսակին. Նախագաղափար, և ածանցական, որ 'ի հնոց կոչի նաև յարանուն։

Նախագաղափար կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութե՟ իւրում, և կամ յայնմ որպիսութե՟ զոր ինքնին նշանակէ. թէ գոյական իցէ, և թէ ածական. թէ պարզ իցէ, և թէ բարդ, կամ բաղադրեալ։ Ըստ որոյ և կոչի նախագաղափար, կամ նախատիպ. իբր թէ նախկին օրինակ և տիպ, յորմէ կարեն ածանցիլ և յարանուանիլ այլք. որպիսի են սոքա, Լոյս, երկիր, գործ, մահ, բարի, զուարթ, լուսափայլ, բարեգործ, անմահ, և այլն։

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն՝ 'ի ձեռն ածանցականակերտ աննշան մասնկանց տրամակայեալ 'ի յանգիլն, և ածեալ յայլ ինչ կերպ նշանակութե՟. որգոն, Լուսաւոր, երկրային, բարեգործութիւն, անմահական, և այլն։ Յորս որպէս տեսանի անուանդ ըստ ածանցիչ մասնկամբս առ եղանակաւորեալ՝ ածեալ է յայլ իմն կերպ նշանակութեան· զի 'ի կերպաւորելն լուսաւոր՝ ոչ ևս նշանակէ զլոյսն, այլ զունողն լուսոյ: Ըստ այսմ ևս անունս Բարեգործ՝ տրամակայեալ ածանցիչ մասնկամբս ութիւն, ոչ նշանակէ զայն, որ գործէ զբարի· այլ՝ զգործս նորա բարւոք կատարեալս: Ըստ այսմ իմա և զայլոց:

Ածանցականակերտ կամ ածանցիչ մասնիկք բազում են յոյժ, զորս կարես տեսանել յընդարձակ քերականութեան, մասն Բ· գլ· Է:

Այլ ոմանք յանուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին· որգոն, Թագաւորութիւն, Թագաւորական, ևն· և սոքա կոչին կրկնածանցականք:

ԳԼՈՒԽ Թ:

Յաղագս Թուոյ անուանց:

Թիւք անուանց են միութիւն կամ բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին: Եւ են կրկին· եզական, և յոգնական· կամ միաւորական, և բազմաւորական:

Եզականն է, որ ըստ ձայնին զմի ինչ նշանակէ· որպ, Հոգի, մարմին, խոնարհ, հօտ, ևն: Զի թէպէտ նշանակեալն այսպիսի անուանց 'ի բազումս է, բայց ըստ ձայնին ոչ իբրև բազում նշանակի, այլ իբրև մի:

Իսկ յոգնականն է· որ ըստ ձայնին զբազումս նշանակէ· որպ, Հոգիք, մարմինք, խոնարհք, հօտք, ևն:

Այլ գիտելի է, զի 'ի բարբառս մեր անուանք կրկնակի լինին յոգնականք: Նախ յաւելլով յեզականսն զտառ ինչ· որպէս յուղղական և 'ի գործիական հոլովս ք· զոր օրինակ, Բանք, բանիւք· Իսկ 'ի հայցական և 'ի ներգոյական հոլովս ս· զոր օրինակ, Զբանս, 'ի բանս· այլ 'ի սեռականն և 'ի բացառականն՝ ց· զոր օրինակ, Բանից, 'ի բանից:

Երկրորդ յաւելլով յեզականսն զվանկս ինչ, կամ զմասնիկս յոգնականակերտս· որպէս երևի 'ի սոսին, Աղախնայք, այգեստանեայք, դաշտորայք, գեղորեայք: կողմանք, բեռուէնք, սերմանիք, ատամունք, գահոյք, մոռացօնք, անդէք, գիւղօրէք, աւագանի, մանկտի, խոզեան, բարձկնեար, մարդիկ, բազմոկան, մանկտեակ:

Գիտելի է դարձեալ, զի ՚ի բարբառս մեր բազում անուանք կան, որք ը̅ ինքեանց անյոդնականք են. զոր օրինակ, Խաւար, լոյս, տիւ, սէր, յոյս, եւն: Սոյնպէս անյոդնական են և ամենայն յատուկ անուանք աստեղաց, ամսոց, քաղաքաց, գետոց լեռանց, կղզեաց, մարդկան, եւն. զոր օրինակ, Լուսին, Յունվար, Վաղարշապատ, Երասխ, Սինա, Կիպրոս, Հայկ, եւն:

Կան ևս բազում անուանք որք անեզականք են. զոր օրինակ, Աղաչանք, բաղձանք, բարք, փառք, կամք, խելք, մեղք, ալիք, ժանիք, կարծիք, ընթրիք, դժոխք, ցնորք, կուռք, աղօթք, և այլք բազումք:

Եւ ևս գիտել արժան է, զի անեզական անուանքս, մեղք, կամք, եւն, յորժամ յարին ՚ի բայս ինչ՝ իբրև մի վարելով ը̅ նոսին, կամ իբր դիմազուրկ, երբեմն եզականապէս դնին. զոր օրինակ, «Անձանց իւրեանց մեղ է, և ոչ փրկողին». Իգնատ.: «Որոց զիարդ կամ եղև անձանց իւրեանց, բերին նուէրս տեառն». Ելից:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Հոլովից անուանց:

Բառս Հոլով՝ հասարակ առմամբ նշանակէ թաւալումն և [illegible]րումն, կամ շրջումն: Այլ ըստ քերականաց նշանակէ պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան ՚ի սկիզբն, կամ ՚ի վերջն և կամ յերկոսին միանգամայն: Որպէս անունս Բոյս՝ ՚ի հոլովելն պէսպէս փոփոխի՝ կամ ՚ի սկիզբն կամ ՚ի վերջն և կամ յերկոսին ես. օր, Բոյս, բուսոյ, 'ի բոյս, զբոյս, 'ի բուսոյ, զբուսոյ, բուսով, զբուսով, 'ի բոյս, ո՛վ բոյս։

Եւ այսպիսի փոփոխութիւնք կամ զանազանութիւնք միոյ անուան կոչին հոլովք անուանց. և են տասն. այսինքն, Ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական։

Ուղղական կամ անուանական հոլով է, յորում իրն ուղղակի և արձակաբար նշանակի յինքեան. օր, Աստուած, անձն, հիմն, և այլն։ Իսկ յայլ հոլովս անուղղակի և հոլովակի նշանակին իրք։ Այս հոլով թէպէտ և փոփոխմամբ իւիք ոչ ձևանայ, բայց դասի 'ի հոլովս վասն երկուց պատճառաց. նախ զի է իբր արմատ այլոց հոլովից, և երկրորդ զի 'ի յոգնակին փոփոխի. օր, Աստուածք, անձինք, հիմունք, ևն։

Սեռական կամ ստացական հոլովն է, յորում ոչ իրն, այլ իմն իրին զօրութիւն նշանակի, թէ ազգ իցէ նորա, թէ տուն և թէ այլ ինչ. որպէս յասելն մարդոյ, զօրութիւն նշանակի իմն՝ որ մարդոյն է. որպիսի են միտք, խօսք, դէմք, ձեռք, զգեստ և կամ այլ ինչ, որ ոչ է նոյն ինքն մարդն, այլ՝ իմն նորա։ Եւ վասն այսորիկ այս հոլով կոչի սեռական, զի ցուցանէ, թէ որոյ սեռի է այս իր. այսինքն թէ որոյ է, և կամ ոյր ստացուած. նմին իրի ստացական ևս կոչի։ Եւ յայսմանէ է, զի երբեմն փոխանակ սեռականի վարեմք զստացական յարանուանս. օր, Լոյս երկնային, պարծանք պօղոսեան, և այլն. փոխանակ ասելոյ, լոյս երկնից, պարծանք պօղոսի, և այլն։

Տրական, այսինքն տուողական հոլովն է, յորում նշանակի իրն իբր այն ինչ՝ որում տալի է իմն, կամ առ որ հայելի է, կամ դիմելի, ևն։ Այս հոլով կրկին է, վերջահոլով և նախդրիւ։ Վերջահոլովն է, որոյ վերջաւորութիւն միայն այլայլի նման սեռականին. օր, Ազգի, դրան, դասու, ևն։ Որոց յոգնակին լինի, Ազգաց, դրանց, դասուց, ևն։ Իսկ նախդրիւն է, որոյ սկզբնաւորութիւն փոփոխի 'ի ձեռն նախդրացս 'ի, յ, առ, առ 'ի, ց։ ընդ. օր, 'Ի խունկ, յորուեստ, առ թագաւոր, ցանձն, ընդ լեառն, եւն. Որոց յոգնակին լինի, Ի խունկս, յարուեստս, առ թագաւորս, ցանձինս, ընդ լերինս, եւ այլն.

Հայցական հոլովն է, յորում նշանակի իրն իբր ենթակայ խնդրոյ, կամ իբր ենթակայ ներգործական գործողութե̃ց. եւ ձեւանայ այսպէս, Զկողով, զպտուղ, զմատն, եւն. Որոց յոգնակին լինի, Զկողովս, զպտուղս, զմատունս, եւ այլն. Այս հոլով բազում ուրեք զօրութ̃ ունի զշայ, եւ կոչի անորոշ հայցական. զի փոխանակ ասելոյ, զճանապարհ, զոգի, զաջ, ըզվիշտ, եւ այլն ասեմք երբեմն, ճանապարհ, ոգի, աջ, վիշտ, եւ այլն. որ, "Ցոյց ինձ ճանապարհ, յոր գնացից". Սաղմ.

Այլ սակայն 'ի դերանուանս ոչ է այսպէս. զի հայցական նոցա միշտ զ- ձեւանայ. զի ոչ լինի ասել, Յիշեա՛ իս. այլ "Յիշեա՛ զիս". Ղուկ. Նաեւ ոչ լինի ասել, Որո՛ւմ՝ որ որսայցէք, ըմբռնեսցէ ձեզ. այլ "Որո՛ւմ՝ զոր որսայցէք, ըմբռնեսցէ զձեզ". Խոր. Նաեւ ոչ լինի ասել, Այս ի̅մ եւ առաւել քան զայն խօսէր. այլ "Զայս ի̅մ եւ առաւել քան զայն խօսէր". Եզեկ. Ըստ այսմ իմա՛ եւ վասն այլոց.

Բացառական, կամ ըստ հնոց՝ առաքական հոլովն է, յորում նշանակի իրն իբր այն ինչ, յորմէ ելանէ իմն, կամ ծագէ, կամ 'ի բաց բառնի, եւ կամ առաքի. որ, 'Ի սենեկէ, 'ի բերանոյ, 'ի գայթակղութ̃է, եւ այլն. Որոց յոգնակին լինի, 'Ի սենեկաց 'ի բերանոց, 'ի գայթակղութե̃ց, եւ այլն.

Այլ գիտելի է, զի յորժամ մի եւ նոյն անունն 'ի բացառական եւ 'ի տրական հոլովն միանգամայն 'ի գործ ածի, նախդիրն բացառականին, կամ տրականին՝ իբր 'ի բազում ներգործութ̃ ոչ դնի. զոր օրինակ, "Զամենայն տիեզերս կրօնից 'ի կրօնս փոխեցին". Մակ. Բ. գլ. 4.

Այլ ուրեք ուրեք ներգործութ̃ եւս դնի. որ, "Հալածեալ շրջեցայ 'ի քաղաքէ 'ի քաղաք". Յուդ. չոր.

Պատմական, այսինքն ճառողական հոլովն է, յորում նշանակի իրն իբր առարկայ պատմելոյ, կամ ասելոյ, և կ՟մ առնելոյ ինչ վասն նորա. ո՟ր, Զտնկոյ, զփայտէ, զծագմանէ, և՟ն: Որոց յոգնակին լինի, Զտնկոց, զփայտից, զծագմանց, և այլն.

Գործիական հոլովն է, յորում նշանակի իրն իբր միջնորդ՝ կամ գործի, 'ի ձեռն որոյ առնեմք ինչ. ո՟ր, Սուսերաւ, գլխով, եղնգամբ, և՟ն: Որոց յոգնակին լինի, Սուսերօք, գլխովք, եղնգամբք, և այլն:

Պարառական հոլովն է, յորում նշանակի իրն իբր պարառեալ կամ փարեալ ուրեք. ո՟ր, Զքաղաքաւ, զսեղանով, զտամբ, և այլն: Որոց յոգնակին լինի, Զքաղաքօք, զսեղանովք, զտամբք, և այլն:

Ներգոյական հոլովն է, որով նշանակի իրն իբր այն ինչ, յորում լինի մնալ, կամ կալ, և կամ լինել. ո՟ր, 'Ի տապանակի, յատենի, 'ի լերին, և այլն: Որոց յոգնակին լինի, 'Ի տապանակս, յատեանս, 'ի լերինս, և այլն:

Այլ գիտելի է, զի նաև եզակի նախդրիւ տրականն փո՟խկ ներգոյականի վարի ը՟դ ուրեք՝ գրեթէ յա՟մ հոլովմունս. որգոն, 'Ի բանի կ՟մ 'ի բան, 'ի քաղաքի, կ՟մ 'ի քաղաք, և՟ն. ը՟ որում եդաք յառաջին մասին:

Կոչական կ՟մ հոչական հոլովն է, յորում նշանակի իրն իբրև կոչեցեալ. զոր օրինակ, ո՜վ ազգ անհաւատ, ո՜վ կին դու, ո՛ տ՟ր, ո՛ արք, ո՛ ոսկերք, և այլն:

Այս հոլով բազում անգամ առանց կոչական մասնկանց ևս ձևանայ. ո՟ր, "Բժիշկ բժշկեա զանձն քո". Պ՟րզ. փոխանակ ասելոյ, ո՜վ բժիշկ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս հոլովմանց անուանց:

Հոլովմունք անուանց են պէսպիսութիւնք վերջաւորութեանց նոցա 'ի սեռական և 'ի գործիական հոլովս միանգամայն: Իբր զի այն անուանք, որք ըստ սեռականին՝ միանգամայն և ըստ գործիականին՝ այսպիսի ինչ վերջաւորութիւնք յանգին, կացուցանեն զայս ինչ տեսակ հոլովման. որգոն, Բան, բանի, բանիւ: Իսկ որք այնպիսի ինչ վերջաւորութե՟ յանգին, կացուցանեն զայն ինչ տեսակ հոլովման. որգոն, Աղբիւր, աղբեր, աղբերբ:

Իսկ քանզի այսպիսի վերջաւորութի՟ք լինին առ հասարակ քսան օրինակաւ, հոլովմունք անուանց ևս համարին քսան. որոց չորեքտասանքն ասին հասարակք, կամ տարածականք, և վեցքն մասնաւորք կամ յատուկք:

Հասարակքն են սոքա, Բառ, ի, իւ: Քաղաք ի, աւ: Գետ, ոյ, ով: Եկեղեցի, ւոյ, եաւ: Աղեղն, ան, ամբ: Նեղութի՟, եան, եամբ: Գառն, ին, ամբ: Զգեստ, ու, ու: Փոր, ու, ումբ: Աղբիւր, եր, երբ: Աստղ, եղ, եղբ: Տրդատ, այ, աւ: Եսայի, եայ, եաւ: Հայաստանեայք, եայց, եօք:

Սոքա եթէ միայն ըստ վերջաւորութե՟ն եզակի սեռականացն առցին, թուին ութ ըստ ութից յանգից. ի, ոյ, ան, ու, այ, էն, եղ, եր. որգոն, Բառի կամ քաղաքի, գետոյ կամ եկեղեցւոյ, աղեղան կամ նեղութեան, զգեստու կամ փորու, տրդատայ կմ՟ եսայեայ, գառին, աստեղ, աղբեր: Այսոքիկ հոլովմունք կոչին հասարակ. զի իւրաքանչիւր սոցա՝ բազում անուանց հասարակ է. իբր զի բազում անուանք հոլովին ըստ օրինակի սոցա:

Իսկ մասնաւորքն են սոքին, Տէր, տեառն, տերամբ: Հայր, հօր, հարբ: Քոյր, քեռ, քերբ: Կին, կնոջ, կնաւ: Գիւղ, գեղջ, գիւղիւ: Օր, աւուր, աւուրբ: Սոքա ասին մասնաւոր կամ յատուկ, զի ըստ օրինակի իւրաքանչիւրոց 'ի սոցանէ՝ մի կամ երկու անուն հոլովի, և կամ բարդեալքն այնր անուան. որպէս եդաք յառաջին մասին:

Յայսոսիկ հոլովմունս բովանդակին ամ՟ անուանք լեզուիս հայոց թէ անեզականք իցեն և թէ անյոգնականք, թէ յատուկք իցեն և թէ ընդհանուրք. ոչ եթէ ամենեքին ընդ ամենեքումբք, այլ ոմանք ընդ առաջնով, ոմանք ընդ երկրորդիւ, և այլք ընդ այլովք, և բազումք ևս ընդ երկոքումբք. որոց քաջ կարես հասու լինել՝ ոչ կանոնօք և ոչ օրինակօք, այլ յաճախ ընթերցմամբ գրոց, և 'ի բառարանի դեգերելով. զի 'ի նմա եդեալ կան ըստ կարի հոլովմունք ամ՟ անուանց ։

Այլ աստ գիտելի է, զի կան անուանք ինչ որք 'ի հոլովիլն ընդ զանազան հոլովմամբ փոխեն զնշանակութիւնս իւրեանց. որպէս, Անուանս գայլ 'ի հոլովիլն՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զքէլէփչէ. որ է գործի ինչ տանջանաց. իսկ 'ի հոլովիլն՝ գայլս, ով, և այլն. նշանակէ զգուրտ գազանն ։

Անուանս փող 'ի հոլովիլն ի, իւ, ից, իւք, նշանակէ զխուչափողն. իսկ 'ի հոլովիլն փողոյ փողով. և այլն, նշանակէ զպօռուռ և զզուռնա. եւս և զդրամ ։

Անուանս գեղ 'ի հոլովիլն գեղոյ, ով, ոց, ովք, նշանակէ զգեղեցկութ՟ի. իսկ 'ի հոլովիլն գեղի, իւ, ից, իւք, նշանակէ զգիւղ ։

Անուանս որթ 'ի հոլովիլն ոյ, ով, ոց, ովք, նշանակէ զտունկ խաղողոյ. որ է ասմա. իսկ 'ի հոլովիլն, ու, ու, ուց, ուք կամ օք, նշանակէ զծնունդ կովու. որ է տանա ։

Անուանս օդ 'ի հոլովիլն ոյ, ով, ոց, կամ ից, ովք, նշանակէ զմին 'ի չորից տարերաց. որ է հաւա. իսկ 'ի հոլովիլն ի, իւ, ից, իւք նշանակէ զադանելիս ոտից ։ Ըստ այսմ են և այլ քանի մի անուանք ։

Այլ ևս գիտելի է, զի գտանին բազում անուանք ածականք, որք ոչ փակին ընդ իւիք հոլովմամբ, այլ նախդրիւ միայն հոլովին. որգոն, Ազազուն, բնիկ, զուրկ, խիտ, համակ, նկարէն, ուրախ, պատիր, տրտում, են ։ Ըստ այսմ և բարդեալք բազումք յոյժ. որգոն, լայնատարր, խաւարասնունդ, հրաշազննին, մահահրաւէր, որոգայթադիր, սաղարթափթիթ, օձաջամբ, և այլք բազումք ։

Ըստ այսմ են և բազում անուանք գոյականք, որք նախդրիւ միայն հոլովին. կամ ընդ բայս յարելով վարին. զոր օրինակ, Յամէոյ գործոյ ժամանել, պատճառ կալ, յաւարտ լինել, են ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Դերանուան:

Թէ զի՞նչ և քանիպատի՞կ է դերանունն:

Դերանունն է մասն բանի՝ որ փոխանակ անուան դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի. որպէս Դու, իմ, այն, որ, ևն, զոր օրինակ, “Իմ կամքս է այն, զոր դու սիրես”. Լամբ: ուր դերանուանքս այն, որ, իմ, եդեալ են փոխանակ անուանց. այն փոխանակ անուան որ ցուցանէ զկամեցեալ իրն. որն փոխանակ անուան՝ որ ցուցանէ զսիրեցեալ իրն. իսկ դու՝ փոխանակ անուանս Ած: Սոյնպէս և իմ եդեալ է 'ի վր անուանս կամք՝ 'ի տեղի անուան կամեցողին. իսկ յօդս ս՝ զկամմն որոշեալ է առ առաջին դէմս: Յորս որպ տեսանի՝ զերկուս պաշտօնս վարէ դերանունն. Մի՝ զի փոխանակ անուան դնի. ըստ որոյ և կոչի դերանուն. այսինքն փոխանակ անուան. քանզի դերն փոխ լսի. յոր միտ ասեմք, դերադատաւոր, դերասան, դերամտանել, և այլն: Իսկ երկրորդ՝ զի ցուցանէ, թէ յոր դէմս վերաբերի անունն՝ որոյ փոխան դնի. և վասն այսորիկ ասացաք 'ի սահմանի, թէ դերանունն առ որոշեալ դէմս վերաբերի. զորմէ ունիմք ևս խօսիլ 'ի յաջորդ գլուխ:

Դերանունն է հնգապատիկ, Իրական, ցուցական, ստացական, յարաբերական, և դիմորոշական:

Իրական դերանունն է, որ գոյականապէս և որոշակի նշանակէ զդէմս իրին. որպիսի են սոքա. Ես, դու, ինքն, իւր, իւրեան: Ընդ որս դասին և սոքին. մերայոց և ձերայոց. որք պակասին 'ի յուղղականն:

Ցուցական դերանունն է, որ փոխանակ անուան եդեալ՝ իբր յանդիման ցուցանէ զայն, զորմէ է բանն. որպիսի են սոքա. Սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն:

Ստացական դերանունն է, որ ածականապէս նշանակէ զիմն որոշեալ դիմաց. որպիսի են սոքին. Իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրոյ: Զի սոքա նշանակեն զայն ինչ, որ է այսր կամ այնր դիմի, թէ մարմին իցէ այն, թէ հանդերձ, և թէ գործք, ևն. Պր, յասելն, “Տուր 'ի խրատ զսիրտ քո”. Առակ. դերանունս քո ցուցանէ զիմն երկրորդ դիմի, առ որ է այս բան:

Եւ որպէս յայտնի տեսանես, այսոքիկ դերանուանք կազմին 'ի սեռականաց եական դերանուանցս: Ես, դու, Մեք, դուք. զի սեռական սոցա լինի, Իմ, քո, Մեր, ձեր: Եւ վասն այսորիկ բազում անգամ նաև սեռական հոլովք ցուցական դերանուանցս՝ Սա, դա, նա, յաւելմամբ յ տառին իբրև ստացական վարին. որգոն, Սորայ կամ սորայն, դորայ կամ դորայն, նորայ կամ նորայն. սոցայն, դոցայն, նոցայն. որոց յոգնականն լինի, Սորայք, դորայք, նորայք, սոցայք, դոցայք, նոցայք: Եւ սոքա հոլովին ը̅ հոլովման ստացական դերանուանս քոյ, քոյոյ, որգոն, սորայ, սորայոյ, նորայն, նորայոյ. դոցայք, դոցայոց, ևն:

Յարաբերական դերանունն է, որ 'ի կարգս բանի՝ զօրութեամբ յառաջ բերեալ զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նորա, յոր հոլով և պահանջեսցէ բանն. և է բառս այս որ. Պր, “Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն”. Առակ: Որ բառս որ եդեալ է 'ի տեղի անուանս այր:

Դիմորոշականքն են երեքին տառքս այսոքիկ ս, դ, ն. որք իբր յօդք ինչ յարելով 'ի մասունս բանի՝ որոշեն զդէմս նոցա. Պր, “Իմ կամքս 'ի քո ճշմարիտ ճանապարհիդ սերտ է”. Լամբ:

Սոքա թէպէտ ը̅ դերանուանս դասին, բայց չեն յատկապէս դերանունք. զի ոչ դնին փոխանակ անուան. բայց քանզի որոշեն զդէմս բառից, և լինին ևս սկզբունք կամ վերջատառք, յորոց բղխեն ցուցական դերանունքս, Սա, դա, նա. սոյն, դոյն, նոյն. այս, այդ, այն. վասն այսորիկ առ դերանուանս վերաբերին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Պարագայից դերանուանց:

Պարագայք դերանուանց են հինգ. Տեսակ, դէմք, Թիւ, հոլով և հոլովումն: Ոմանք եօթն դնեն, յաւելեալ 'ի սոսա զսեռ և զձև. բայց յայտ է՝ թէ 'ի դերանուանս սեռ ամենևին ոչ գտանի 'ի լեզուի մերում ևս և ոչ ձև. զի դերանուանք 'ի բարդելն ը̅ այլ մասունս բանի ոչ ևս միան դերանուն, այլ փոխադրին յանուն. որգոն, Իւրակերտ, նոյնահրաշ, ինքնակալ, քոյինաշունչ, ևն. որք իբր անուն վարին:

Տեսակք դերանուանց են երկու, ո̃պ և անուանցն. այսինքն նախատիպք, և ածանցականք: Նախատիպք են սոքին. Իմ, քո, մեր, ձեր, նոյն, իւր, ինքն, և ևս՝ սորա, դորա, նորա, ևն:

Իսկ ածանցականք են նոյն նախատիպ դերանուանք վերածեալք յայլ իմն եղանակ նշանակելոյ 'ի ձեռն աննշան մասնկանցս, ային, ին, ական, աւոր, ութի̃ւն. որգոն, Մ՝երային, քոյին, իւրական, ինքնաւոր, նոյնութի̃ւն:

Դէմք դերանուանց են յայտարարութի̃ք որոշեալ անձանց կմ̃ այնց՝ որք իբր դիմաւոր նկատին, և իբր դիմօք որոշին. և են երրեակ. առաջին, երկրորդ և երրորդ:

Առաջին դէմքն յայտ առնէ զայն, յորմէ է բանն. կմ̃ որ խօսի. որգոն, Ես, մեք:

Երկրորդ դէմքն յայտ առնէ զայն, առ որ է բանն. կմ̃ ը̅ ում լինի խօսիլ. որգոն, Դու, դուք:

Երրորդ դէմքն յայտ առնէ զայն, զորմէ է բանն. կամ յաղագս որոյ լինի խօսիլ. որգոն, Նա, նոքին, իւր:

Առ այս երրորդ դէմս վերաբերին և այլ ամենայն դերանուանք. թէ ստացականք. որգոն, Իմ, մեր, քոյ, ձեր, իւր, ոյ. և թէ ցուցականք. որգոն, Սա, դա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն. զի սոքա ամենեքին յայտ առնեն զայն ինչ, զորմէ լինի բան ։ Այլ սակայն համեմատութ̃բ միմեանց՝ 'ի սոսա ևս կան որոշմունք երից դիմաց․ զի 'ի ստացականս՝ ոմանք նկատեն ը̃ առաջին դիմաց․ որգոն, իմ, մեր, իմային․ մերոյին, ևն․ վասն զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է առաջնոյ դիմի ։ Ոմանք նկատեն ը̃ երկրորդ դիմաց․ որգոն, քո, ձեր, քոյին, ձերոյին, ևն․ զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է երկրորդ դիմի ։ Այլ ոմանք նկատեն ը̃ երրորդ դիմաց․ որգոն, իւր, իւրային, ևն․ զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է երրորդ դիմի ։

Սոյնպէս և 'ի ցուցականս համեմատութեամբ միմեանց՝ ոմանք նկատեն իբր առաջին, կամ իբր մօտաւոր․ որգոն, սա, այս, սոյն ։ Ոմանք նկատեն իբր երկրորդ, կամ իբր մերձ մօտաւորին․ որգոն, դա, այդ, դոյն ։ Այլ ոմանք նկատեն իբր երրորդ, կամ իբր հեռաւոր․ որգոն, նա, այն, նոյն ։

Իսկ դերանունս ինքն յորժամ առանձինն վարի, թէպէտ յերրորդ դէմս վերածի, սակայն յորժամ ը̃ դերանուանս յարի, կարէ վերաբերիլ յառաջին և յերկրորդ դէմս ևս․ ո̃ր, “Ես ինքն սպանի զնա”․ Արք հարց ։ “Դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութ̃”․ Նար ։ “Նոյն ինքն զդժոխս աւերեցեր”․ Շար ։

Թիւք դերանուանց են երկու․ եզական և յոգնական ։ Զի որ իբրև զմիաւոր նշանակէ՝ ասի եզական, թէ միոյ դիմի իցէ, և թէ բազմաց․ որգոն, Ես, դու, իմ, մեր, ձեր, ևն ։ Իսկ որ իբրև զբազումս նշանակէ ո՛ և իցէ դիմի, ասի յոգնական․ որգոն, Մեք, դուք, մերք, իմք, նոքա, և այլն ։

Հոլովք դերանուանց են տասնապատիկ փոփոխումն մի և նոյն դերանուան՝ ը̃ օրինակի անուանց․ որոց և բազմաց կոչականքն պակասեն, ը̃ որում եգաք յառաջին մասին ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութ̃իք հոլովից նոցա․ որպէս և անուանցն․ ը̃ որում յայտ է յեդելոյ յառաջին մասին անդ ։

Բայց գիտելի է նախ, զի ցուցական դերանուանքս՝ Սոյն, դոյն, նոյն՝ որք իբր ածական վարին՝ նախդրիւ միայն հոլովին. իսկ յայլ հոլովսն լրանան 'ի ցուցական դերանուանց, Սա, դա, նա, 'ի հոլովիլ նոցա Սա, սորին, դա, դորին. են, 'ի վարիլ նոցա ածականապէս որպէս եդաք յառաջին մասին։

Գիտելի է երկրորդ, զի ցուցական դերանուանցս, Այս, այդ, այն. սա, դա, նա, եզակի տրականքն, որք են այսմ կամ այսմիկ, այդմ կամ այդմիկ, այնմ կամ այնմիկ, սմին, դմին, նմին, յորժամ յարին յառաջոյ 'ի բացառական նաև 'ի պատմական հոլովս անուանց, իբր բացառական և պատմական վարին. որպէս, "Բազում ծնանին հերձուածք յայսմ պատճառէ". Շնորհալի։

"Այսուհետև զգոյշ լեր յայդմ ամէ". 'Ի Սարգսէ։

"Առին զսուրբսն յայնմ անապատէ". Եղիշէ։

"Եհան 'ի նմին քաղաքէ ասորի քրիստոնեայս". Նոյնն։

Եւ դարձեալ այսոքիկ ցուցական դերանուանք, որք են այս, այդ, այն, երբեմն եզական ձայնիւ՝ վարին իբր յոգնական, մանաւանդ յուղղականն. որպէս, "Երկու այլ ես քահանայք երանելիք, որոց անուանքն են այս, սամուէլ և աբրահամ". Եղիշէ։

"Այդ և 'ի մարդիկ երևին". Նոյնն։

"Այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած". Նոյնն։

Գիտելի է երրորդ, զի ստացական դերանուանց եզակի սեռականքն՝ բազում անգամ իբր տրական վարին. որպէս, "Որդեակ, իմոյ իմաստութեան անսա". փոխանակ ասելոյ, իմում իմաստութեան. Առակ։

"Տուր փրկութիւն քոյոյ ծառային". այսինքն քում ծառայի. Նար։

"Անկարօտ է Աստուած. այլ սակայն քաղցեալ և կարօտ է մերոյ փրկութեան". այսինքն մերում փրկութեան. Նար. երգ։

"Թողու զթագաւորութիւն՝ Արտաշրի որդւոյ իւրոյ". այսինքն որդւոյ իւրում. Յովհ. կաթ։

Եւ ներհակ այսմ, եզակի տրականք սոցա բազում անգամ իբրև սեռական վարին. որպէս, "Իմում խռովութեան հաշտարանք". փոխանակ ասելոյ, իմոյս խռովութեան. Նար։

"'Ի ներքոյ քում թագաւորութեան եմք գրաւեալ". Լամբ. պատմ։

“ Ընկա՛լ զերգաբան օրհնութ՟ի մերոյ լեզուի „ Նար.
“ Օ համայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրոյն
գլխոյ „. Նոյնն ։

Իսկ քումն՝ ուրեք ուրեք դնի եւ փոխանակ սեռականի եզական դերանուանն՝ դու, երբ յատկացուցիչ. զոր օրինակ, “ Դու քեզէն 'ի քումդ լրութ՟է փառաւորեալ իսկ էիր „. փոխանակ ասելոյ, 'ի քո լրութ՟էդ. Նարէկ ։

Գիտելի է չորրորդ, զի յարաբերականն որ բազում անգամ յարի 'ի բառս, ինչ, միանգամ, եւն. եւ վարի ընդ նոսա իբր մասնական անուն. բայց այնու եւս ոչ կորուսանէ զյարաբերականութ՟ի իւր. որպէս երեւի 'ի սոսա. “ Որ ինչ հայի ոք, 'ի նոյն փոխի մտօք „. Նար. երգ.
“ Որ միանգամ ունի զոխութիւն 'ի սրտի իւրում, դեղ բժշկութ՟ե նորա չիք „. Մծբ.
“ Որ ոք աստ սիրէ երկայնել զբանս վարդապետութ՟ե, զգիրսն յովհաննու ընթերցցի զոսկեբերանին „. Լամբր.

'Ի վախճան դերանուանց ամենայն գիտելի է եւ այս, զի 'ի հոլովս սոցա գտանին ուրեք ուրեք խոտորմունք ինչ արտաքոյ սովորութ՟ե. յորոց գործածու՟է պարտ է զգուշանալ ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Բայի ։

Թէ զինչ եւ քանիպատիկ իցէ բայն ։

Բայն է մասն բանի, որ զառս կ՟մ զկիրս եւ կամ զլինելութ՟իս իրաց ընդ ժամանակաւ նշանակէ ըստ որոշեալ դիմաց. վասն զի յայտ առնէ կ՟մ զներգործել իրաց յայլս, կ՟մ զկրել նոցին յայլմէ, եւ կ՟մ լոկ զգործել եւ զլինել նոցին՝ ըստ այս ինչ՝ կ՟մ ըստ այն ինչ դիմաց. որպէս յասելն, “ Ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց „. Սաղ. Նշանակէ ներգործել մեղաւորացն յաղեղունս. և այս յերրորդ դէմս. Իբր յասելն, «Ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ». Որ. նշանակէ կրելն անձին 'ի նետից բանսարկուին. և այս՝ յառաջին դէմս: Իբր յասելն, «Եղեր դու հաւատարիմ յամենայնի». Որով. նշանակէ հաւատարիմ լինելն անձին. և այս յերկրորդ դէմս:

Արդ որովհետև յատուկ է գործողութեանց և լինելութեանց 'ի ժամանակի կատարիլ, կամ 'ի ներկայն, կամ յանցեալն և կամ յապառնին, բային ևս որ զգործողութիւնս և զլինելութիւնս նշանակէ, ցուցանէ զնոսին ընդ ժամանակաւ կամ ընդ ներկայիւ. որգոն, գործեմ. կամ ընդ անցելով. որգոն, գործեցի. և կամ ընդ ապառնիւ: որգոն, գործեցից:

Բայք բաժանին յերկուս, յէական և յառքական:

Էականք են, որք նշանակեն սոսկ զլինելութիւն իրին ընդ ժամանակաւ. և են չորեքին, Եղանիմ, լինիմ, եմ և գոմ:

Իսկ առքականք են, որք զառնել կամ զկրել իրացն նշանակեն. որպէս, Տնկեմ, լուամ, աղօթեմ, մատչիմ, ազատիմ, ևն:

Առքական բայք բաժանին 'ի կանոնաւորս և յանկանոնս. Կանոնաւորք են, որք 'ի խոնարհմունս, կամ 'ի վերացմունս իւրեանց՝ հասարակօրէն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ, և անպակաս դիմաւ. և են սոքա. Գործեմ, հատանեմ, զօրացուցանեմ, աղամ, խոստանամ, թողում, ընկենում, և որք ընդ սոքօք պարունակին:

Իսկ անկանոնք են, որք ոչ խոնարհին ամբողջ, այլ կամ պակասին 'ի ժամանակս ինչ, և յայլոց լրանան. և կոչին պակասաւորք. և են սոքա. Ուտեմ, կերայ. ըմպեմ, արբի. ճանաչեմ, ծանեայ. ունիմ, կալայ. երթամ, չոգայ: Կամ զարտուղին, այսինքն այլայլին ձայնիւ 'ի խոնարհիլն իւրեանց. և կոչին զարտուղիք, և են սոքա. Առնեմ, արարի. դնեմ, եդի. լսեմ. լուայ. տամ, ետու. մեղանչեմ, մեղայ. յառնեմ, յարեայ. գամ, եկի: Իբր կամ երբեմն պակասին յառաջին և յերկրորդ դէմսն, ևս և 'ի յոգնականսն, և կոչին դիմազուրկք. որպիսի են սոքա. Յաջողէ, լուսանայ, թուի, հարկ է. և որք ընդ սոքօք են, զորոց ամենեցուն զխոնարհմունսն եղաք առանձինն յառաջին մասին։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս պարագայից Բայից. և նախ յաղագս Սեռից։

Պարագայք բայից են պէսպէս հետևմունք որպիսութե̄ նոցա. և են ինն. Սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, և լծորդութի̄ք։

Սեռք բայից, որք 'ի հնոց կոչին տրամադրութի̄ք, են որոշմունք նոցա ը̄ ներգործականութե̄, ը̄ կրաւորականութե̄, ը̄ հասարակ լինելոյ և ը̄ չէզոք գոլոյ։ Ուստի և են չորք. Ներգործական, կրաւորական, հասարակ և չէզոքական։

Ներգործականք են նոքա, որք նշանակեն զներգործել իւրին 'ի կրողն՝ որով և իցէ գործողութե̄, թէ արտաքին իցէ, և թէ ներքին. որգոն, Խորտակեմ, գովեմ, սիրեմ, ևն։ Որովք նշանակի այնպիսի գործողուի̄, զոր խորտակողն՝ գործով ներգործէ 'ի խորտակեալն. գովողն՝ բանիւ ներգործէ 'ի գովեալն. սիրողն՝ սրտիւ ներգործէ 'ի սիրեցեալն. զ̄ր, “Դու խորտակեցեր զգլուխս վիշապին”. Սաղ։ “Գովեսցէ՛ զքեզ ընկերն, և մի՛ քո բերան”. Առակ։ “Սիրեսցո՛ւք զԱ̄ծ, որ սիրեաց զմեզ”. Կաթող։

Կրաւորականք են, որք նշանակեն զկիրս իւրին յումեքէ ներգործողէ՝ որով և իցէ կրելութե̄. որգոն, Խորտակիմ, գովիմ, սիրիմ, ևն. յորս նշանակի կրելութիւն խորտակելոյն 'ի խորտակողէն, գովեցելոյն 'ի գովողէն, սիրեցելոյն 'ի սիրողէն. զ̄ր, “Վէմք խորտակեցան 'ի նմանէ”. Նաւում։ “Բերան իմաստնոց գովի 'ի մարդկանէ”. Առակ։ “Որ սիրէ զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ”. Յովհ։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ զներգործութի̃ իւրեն առ կրողն նշանակեն. և մերթ զկրելութի̃ իւրեն յումեքէ ներգործողէ. որգոն, Ծնանիմ, դատիմ, ևն։ Որովք մերթ նշանակի ներգործութի̃ ծնողին, և դատողին. և մերթ կրելութի̃ ծնելոյն, և դատելոյն. զր, "Մի՛ ոք պարծեսցի զընկեր իւր, զի մի՛ և ինքն պարծեսցի յարդարադատն ա̃յ". Շնորհ։

Չեզոքականք են՝ որք զներգործութի̃ գործողին յինքեան 'ի գործողն նշանակեն. և ոչ իբր 'ի ներգործողէ առ կրող ոք. զր, "Փախուցեալ երթայ ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ". Առակ։

Սոքա կ̃մ ը̃ ներգործական բայից լծորդին, և կ̃մ ը̃ կրաւորականաց։ Որք ը̃ ներգործականաց լծորդին, կոչին ներգործակերպ չեզոքական. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք յանգին 'ի եմ, 'ի ամ, և ում՝ զր, Դիմեմ, գնամ, զարթնում, և որ ը̃ սոքօք։

Իսկ որք ը̃ կրաւորականաց լծորդին՝ կոչին կրաւորակերպ չեզոքականք, կամ ձայնակրականք. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք 'ի իմ յանգին. զր, Հաշտիմ, մնանիմ, փախչիմ, և որ ը̃ սոքօք։

Նաև գիտելի է. զի են բազում բայք ներգործականք՝ որք երբեմն իբր չեզոքական վարին. որգոն, ասպատակեմ, ծագեմ, յաճախեմ, կարդամ, համբառնամ, յաւելում, զեղում, ևն։

Նոյն ը̃ հակառակն՝ են բազում չեզոքական բայք, որք իբր ներգործական վարին. որգոն, լռեմ, խընայեմ, մաղթեմ, ստեմ, փայլեմ, անգիտանամ, ըղձամ, վստահանամ, ևն։

Կան և բազում կրաւորական բայք բղխեալ 'ի բայից եղելոց ը̃ գործեմիւ և ը̃ հաւանեմիւ, որք իբր ձայնակրական վարին. որգոն, ամբոխիմ, բորբոքիմ, զինիմ, թաւալիմ, կանգնիմ, ձկտիմ, գտանիմ, լքանիմ, ևն։

Գիտելի է ևս՝ զի գրեթէ ամենայն ձայնակրական բայք, որք ըստ կրաւորականի գործեմ բային լծորդին, իբրև զներգործակերպ չէզոքականս եւ խոնարհին. որգոն, հակառակեմ, հրաժարեմ, սարսափեմ, բնակեմ, եւն:

Հարկաւոր է եւ գիտել, զի բաղում բայք կան՝ որք փոփոխուբ̃ իւիք ը̃ այլ և այլ լծորդութբ̃ խոնարհին. որգոն, խոնջամ, խոնջեմ. ծփամ, ծփիմ. կարօտիմ, կարօտանամ. զբաղնում, զբաղիմ. թագչիմ, թագնում, եւն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Ձեւոյ Բայից:

Ձեւք բայից մտածին ը̃ պարզուե̃, ը̃ բարդուե̃, և ը̃ բաղադրուե̃ նոցա. ուստի և բայք երեք են ը̃ ձևոյն. Պարզ, բարդ, և բաղադրեալ: Պարզ բայն է, որ զպարզ նշանակութի̃ առից կմ̃ կրից ցուցանէ. որգոն, Բեկանեմ, հարկանեմ, զարդարեմ, ստեղծում, եւն:

Բարդ բայն է, որ զօդեալ ը̃ այլում նշանական բառի՝ զերկուս իմացուած առից կմ̃ կրից միայարէ. որգոն, Ահաբեկեմ, յաղթահարեմ, գեղազարդեմ, կենդանաստեղծում, և այլն:

Ոմանք յայսպիսի բայից վասն բարդութե̃ այլազգ խոնարհին, քան զոր յառաջն. գր̃, Բերեմ, բերի, բեր. ընծայաբերեմ, բերեցի, բերեա՛: Հարկանեմ, հարի, հա՛ր. յաղթահարեմ, հարեցի, հարեա՛, եւն:

Բաղադրեալ բայն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք. և այս քառակի:

Նախ՝ առ 'ի զարդ, կամ առ 'ի եղանակաւորել զնշանակութի̃ն. որգոն, Տարակորզեմ, բաղհիւսեմ, բացորոշեմ, վիճակաւորեմ, յանկաւորեմ, եւն:

Երկրորդ՝ առ 'ի փոփոխումն նշանակութե̃. գր̃, Անարգեմ, ապգտանեմ, ապդխտանամ, դժգոհեմ, արտաբերեմ, համաձայնեմ, տրամաբանեմ, եւն: Այլ յաճախ գործածութիւն մասնկանցս՝ արտ, համ, մակ, տրամ, տար, բաղ, ևն, աղաւաղէ զշնորհս կազմութեան բայից :

Երրորդ՝ առ 'ի վերածել յայլ իմն լծորդութիւն 'ի ձեռն մասնկանն՝ ան. զր, Օծեմ, օծանեմ. բուծեմ, բուծանեմ, ևն :

Չորրորդ՝ առ 'ի յաճախապէս նշանակել 'ի ձեռն յօդիցս, ոտ, ատ, տ, զ, և այլն. զր, Խոցել. խոցոտել, պատել, պատատել, քակել, քակտել, գրգռել, զգրգռել, եղծանել, զեղծանել, ընկենուլ, զընկենուլ, անցանել, զանցանել, և այլն.

Այս կերպ յաճախման բայից լինի երբեմն նաև կրկնելով առաջնոյ վանկի բային. որգոն, Բեկել, բեկբեկել. կցել, կցկցել. բախել, բաբախել. ջաղխել, ջաղխջախել. շրջել, շրշրջել. և այլն :

Լինի այս երբեմն նաև կրկնմամբ նոյն բային. զր, "Զարթիցուք զարթիցուք . . . . յարբեցութենէ սատանայական մոլորութեանց". Խոսրով:

Երբեմն դրութեամբ դերբայից այնր բային. զր, "Երթալով երթայր և զօրանայր". Յովհաննէս Կաթ. :

Երբեմն դրութեամբ աներևութին, կամ ընդունելութեան ընդ անցելոյն. զր, "Են բազումք՝ որ սիրել սիրեն, այլ ոչ սերտիւ". Ոսկեբ. :

Այլ զգուշանալ պարտ է 'ի յաճախելոյ զայսպիսիս :

Երբեմն դրութեամբ արմատոյ բային. զոր օրինակ, "Արհամարհանօք արհամարհեն զօրէնսդիրն". Յաճախ. Ե :

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս Տեսակաց Բայից :

Տեսակք բայից որոշին ըստ նախնական և ըստ անցողական նշանակութեան իւրեանց. ուստի և բայք կրկին են ըստ տեսակին. նախագաղափար, և անցողական :

Նախագաղափար կամ նախատիպ բայք են, որք կան 'ի նախկին նշանակութե՟ իւրեանց, թէ պարզ իցեն, թէ բարդ, և թէ բաղադրեալ. և ցուցանեն զառս գործողին միայն. որգոն, Բարկանամ, խոնարհիմ, զարթնում, ևն: Սոքա կոչին Նախագաղափար կ՟մ Նախադէպ, զի են իբր գաղափար և տիպ անցողականաց. մանաւանդ թէ՝ իբրև արմատ նոցին:

Իսկ անցողական կ՟մ ածանցական բայք են, որք 'ի ձեռն ածանցակերտ մասնկանս ուցան՝ ածին և իբրթէ անցուցանին յայնպիսի որպիսութի՟, որով նշանակեն ոչ միայն զգործողութի՟ առնողին, այլ և զգործել կրողին 'ի ներգործելոյ անտի արարողին. որգոն, Բարկացուցանեմ, խոնարհեցուցանեմ, զարթուցանեմ, ևն. այսինքն առնեմ, զի այլ ոք բարկասցի. առնեմ, զի խոնարհեսցի. առնեմ, զի զարթիցէ, ևն:

Արդ թէպէտ բազում բայք լինին անցողականք, բայց առաւելապէս չեզոքականքն. ոպ՟, Ճեմեմ, ճեմեցուցանեմ. մերձենամ, մերձեցուցանեմ. զայրանամ, զայրացուցանեմ. ևն: Եւ յաճախագոյն ևս ձայնակրականքն. ոպ՟, Ոկծիմ, ոկծեցուցանեմ. Թմրիմ, թմրեցուցանեմ. խոնջիմ, խոնջեցուցանեմ. տողիմ, տողեցուցանեմ. հանգչիմ, հանգուցանեմ, ևն:

Ուշ գիտելի է՝ զի ոմանք 'ի ձայնակրական բայից՝ յանգեալ 'ի եմ՝ երբեմն իբր անցողական նշանակեն. որգոն, աշխատիմ, աշխատեմ. զբաղիմ, զբաղեմ. հնազանդիմ, հնազանդեմ. սասանիմ, սասանեմ. ևն. որք երբեմն իբր ներգործակերպ չեզոքական ևս վարին. որպէս ասացաք 'ի գլ. ծէ:

Իսկ ներգործական բայք հազիւ երբեք փոխին յանցողականն. և եթէ հարկ լիցի վարել իբր անցողական՝ կազմեմք զայն 'ի ձեռն բային տալ. ոպ՟, „Եթէ ծառայ քո ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմ՟„. այսինքն լսեցուցանեն նմա՝ գանելով զնա ընդ մկանունս. Նոննէ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Թուոյ և Դիմաց բայից :

Վասն Թուոյ և դիմաց բայից սակաւ ինչ ունիմք ասել. զի զոր ինչ խօսեցաք զԹուոյ անուանց և զդիմաց դերանուանց, նոքօք յայտնին ը՟ իմիք և Թիւք և դէմք բայից : Զի որպէս Թիւք անուանց մտածին ը՟ եզականութե՟ և ը՟ յոգնականուե՟ նոցին, սոյնպէս և Թիւք բայիցն մտածին ը՟ եզականութե՟ և ը՟ յոգնականութե՟ իւրեանց. ուստի և են երկու. եզական, և յոգնական :

Եզականն է, որ նշանակէ զմիակի ներգործուն՟ կ՟մ կրելութն՟ միոյ գործողի կամ կրողի. ո՟ր, Գործեմ, գործիմ, և այլն :

Յոգնականն է, որ նշանակէ զբազում ներգործութիս կ՟մ կրելութիս բազում գործողաց կ՟մ կրողաց. ո՟ր, Գործեմք, գործիմք, և՟ն :

Դէմք բայից են այնք, որք ցուցանեն զգործողութիւն լինել որոշեալ անձին. և են երեք, առաջին, երկրորդ, երրորդ : Քանզի գործք և կիրք, կամ նորա են, որ խօսի. և ը՟ այսմ է առաջին դէմքն. որգոն, Գնամ, պատմեմ, և՟ն : Կամ նորա ը՟ որում լինի խօսելն. և ը՟ այսմ է երկրորդ դէմքն. որգոն, Գնաս, պատմես, և այլն : Եւ կ՟մ նորա, զորմէ լինի խօսելն. և ը՟ այսմ է երրորդ դէմքն. որգոն, Գնայ, պատմէ, և այլն :

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս Ժամանակաց բայից :

Ժամանակք, կամ ը՟ հնոյ ամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ, կամ յայն ինչ ժամանակի. այսինքն, կամ՚ի ներկայն, կ՟մ յանցեալն, և կամ յապագայն. ուստի և են երեք.

Ներկայ, անցեալ և ապառնի : Եւ անցեալն քառակի որոշի· այսինքն իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար և իբր գերակատար : Եւ ըստ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց· այսինքն, Ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար, և ապառնի :

Ներկայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս յառաջիկայ կէտ ժամանակի, կամ այժմ նորոգ ըսկըսեալ· որգոն, Վարեմ, վարես, վարէ· զենում, զենուս, զենու, են :

Անկատար ժամանակն, կամ ըստ հնոց՝ յարաձգականն է յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս արդէն սկսեալ բայց դեռ ձգի 'ի կատարիլ· որգոն, Վարէի, վարէիր, վարէր· զենուի, զենուիր, են :

Կատարեալ ժամանակն, կամ ըստ հնոց՝ յարակայն է, յորում բայն նշանակէ, զառս և զկիրս կատարեալ կամ վճարեալ· որգոն, Վարեցի, վարեցեր, վարեաց· զենի, զեներ, են :

Յարակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս վճարեալ, և ժամանակ ինչ ևս 'ի վերայ անցեալ· որգոն, Վարեալ եմ, ես, է· զենեալ եմ, ես, է, են :

Գերակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս ոչ միայն վճարեալ, այլև յետ վճարման բազում ժամանակ ևս 'ի վերայ անցեալ 'ի վճարման անդ· որգոն, Վարեալ էի, էիր, էր· զենեալ էի, էիր, էր, են :

Ապառնի ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս իբր եղանելի, կամ իբր հանդերձեալ առ 'ի լինել· որգոն, Վարեցից, վարեսցես, վարեսցէ· զենից, զենցես, զենցէ, են :

Վասն յարակատար և գերակատար ժամանակաց, (ըստ որս և վասն անցելոյ ստորադասական եղանակին) գիտելի է նախ, զի յոգնական սոցա կրկնակի ձևանայ : Երբեմն առանց ւէէ· որպէս, "Ընտրեալ են պաշտք սուրբք առաջի նորա"· Մծէ :

Իսկ երբեմն չէ. զոր օրինակ, «Քրիստոսի շնորհիւն փրկեալք եմք». Լամբրոնացի։

Այլ յայսպիսիս յաճախութ̄ի չէին ծանրալուր առնել զխոնարհմունս բային։

Սոքա առ հասարակ թէպէտեւ 'ի եալ յանգին, բայց երբեմն 'ի եցեալ եւս գտնին, թէ ներգործականք իցեն և թէ հասարակ. զոր օրինակ, այրեցեալ, սերեցեալ, խօսեցեալ, կարծեցեալ, և այլն։

Գիտելի է երկրորդ, զի սոքա թէպէտ նախադաս լինելով էական բայի ձեւանան, որգոն, Հատեալ եմ, ես, է. թողեալ էի, էիր, էր, և այլն, բայց 'ի գործածութ̄ յետադաս լինելով վայելուչ եւս կերպաւորին. զոր օրինակ։

«'Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր աստուծոյ մերոյ». Շար։

«Նոյն մարմին է, որում դուդ ես վիճակեալ». Լամբ. ատէն։

«Նա միայն է պատառեալ և անջատեալ յեկեղեցւոյ, որ 'ի հաւատս կործանի, և մեղաց լինի պաշտօնեայ». Սահակ հայր. հարց եկեղ։

Երբեմն այլ մասն բանի եւս ը̄ մէջ անկանի. զոր օրինակ, «Իմ է օրն լինելութե̄ նզովեալ, և ոչ յօբայ, կամ երեմիայ». Նարեկ։

«Քանզի խաւար խոր և գիշեր տխրալից էր 'ի վերայ բնութ̄ս մերոյ մածուցեալ». Սարգ. ա̄. պետ. դ̄։

Գիտելի է երրորդ, զի սոցա եզակի երրորդ դէմն վարի 'ի տեղի երից դիմաց եւս, թէ իբրեւ եզական, և թէ իբրեւ յոգնական. որգոն, Գործեալ է իմ, գործեալ է քո, գործեալ է նորա. գործեալ է մեր, գործեալ է ձեր, գործեալ է նոցա։ Գործեալ էր իմ, քո. նորա. գործեալ էր մեր, ձեր, նոցա։ Գործեալ իցէ իմ, քո, նորա. գործեալ իցէ մեր, ձեր, նոցա. զոր օրինակ, «Օ ի՞նչ վնաս գործեալ է իմ». Եղիշէ։

«Ընդէ՞ր տրտմեալ է քո հայր». Սարգ. հարց։

«Եթէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց, լինէր քեզ իբրեւ զգետ խաղաղութի̄ քոյ». Եսայ։

«Մազիւ յայս ժամ իցէ, ահա մոռացեալ իցէ մեր զամենայն նեղութի̄ս և զչարչարանս». Եղիշ.

Գիտելի է չորրորդ, զի սոքա բազում անգամ առանց էական բայի վարին 'ի բանս. որգոն, Թողեալ, ծնեալ, կործանեալ, և այլն. և յայնժամ կոչին դերբայք. և այս կարի յաճախեալ է 'ի գիրս մեր. զոր օրինակ, “ Թողեալ ոմանց զօրէնս՝ պարծին 'ի մեղս ”. Մծբ :
“ Մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող ”. Խորէն :
“ Կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ ”. Նար. տե՛ս և յընդարձակն :

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Եղանակաց բայից .

Եղանակք բայից են պէսպէս կերպք կամ աստիճանք նշանակելոյ նոցա զառս և զկիրս, կամ զլինելութիւն, և են չորս : Սահմանական, հրամայական, ստորադասական, և աներևոյթ՝ կամ անորոշ :

Յաղագս Սահմանական եղանակի :

Սահմանական եղանակն է, յորում բայքն արձակաբար և որոշակի նշանակեն զառս կամ զկիրս՝ առանց ցուցանելոյ զկախումն ինչ. որգոն, Գրեմ, գնացի, տեսից, և այլն : Եւ ամենայն բանք սահմանականք, պատմականք, ծանուցականք, խոստացականք և հաստատողականք՝ այսու եղանակաւ ձևանան :

Այս եղանակ բայից ունի կատարելապէս զվեց ժամանակս. այսինքն զներկայ, զանկատար, զկատարեալ, զյարակատար, զգերակատար, և զապառնի :

Այլ վասն կատարեալ ժամանակի սորա գիտելի է, զի ըստ հին սովորութեան լեզուի մերում երկրորդ դէմն յոգնականի սորա ոչ յանգիւր 'ի եք, այլ 'ի էք. կամ 'ի բուք իբր զի որոց հրամայականի յոգնակի երկրորդ դէմն յանգիւր 'ի էք, կատարեալն ևս գնիւր էք. ուստի փոխանակ ասելոյ գործեցիք, հատիք, բացիք և այլն, ասէին. գործեցէք. հատէք, բացէք, և այլն. առանց շեշտի։ Իսկ որոց յոգնակի հրամայականն յերկրորդ դէմս յանգիւր 'ի ուք, կատարեալն ևս գնիւր ուք։ Ուստի փոխանակ ասելոյ, լուայք, դարձայք, և այլն, ասէին, լուարուք, դարձարուք, և այլն. Թէպէտ երբեմն այք ևս գնէին, այսինքն է, լուայք, դարձայք. և այլն։

Յաղագս Հրամայական եղանակի։

Հրամայական եղանակն է, յորում բայքն ցուցանեն զառս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, կամ իբր անկախ, այլ ընդ հրամայողութեամբ. որգոն, Արա, տուր, գթա՛, հայեա՛ց, և այլն։ Եւ ամենայն բանք հրամայողականք, մաղթողականք, սպառնականք, կոչականք, յորդորականք, խրատականք և արգելականք այսու եղանակաւ ձևանան։

Այս եղանակ ունի զերկուս ժամանակս միայն, զներկայ և զապառնի, այլ ոչ զանցեալ. զի զանցելոց հրամայել ոչ լինի։ Ներկայն ունի զմի դէմ միայն. այսինքն զերկրորդն. որգոն, Թող, մի՛ թողուր. Թողէք, մի՛ թողուք։ Եւ ապառնին ունի 'ի յեզականն զերկուս դէմս միայն. այսինքն զերկրորդն և զերրորդ. որգոն, Թողջի՛ր, Թողցէ՛։ Իսկ 'ի յոգնականն ունի զերիս դէմսն ևս. որգոն, Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցե՛ն։

Սոքա թէպէտ (բաց 'ի յանգելոցն 'ի ջիր) ըստ ձայնին նոյն են ընդ սահմանականի ապառնւոյն, բայց կարեն որոշիլ յեղանակէ նշանակելոյն. զի հրամայականն հրամայողականապէս նշանակէ. զոր օրինակ, "Այսուհետև յօժարեսջի՛ս սի՛րելի առ աղօթս,,. Մծէ։
" Լեզու քո սիրեսցէ՛ զլռութիւն,,. Նոյնն։
" Սանձահարեսցո՛ւք զլեզուս. սանձահարեսցո՛ւք զակն,,. Սարգ։

Իսկ սահմանականին՝ ծանուցողապէս. որպէս, "Արդարութիւն խոնարհի առաջնորդեսցէ նմա,,. Մծէ։

“Եթէ հաւատասջիք, և ոչ բաժանեսջիք 'ի միտս ձեր, չիք այն ինչ՝ զոր դուք ոչ կարիցէք առնել„· Նոյն ։

Յաղագս Ստորադասական եղանակի ։

Ստորադասական եղանակն է, յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, այլ ցուցմամբ ըղձի կամ թէութեան, կամ պատճառի, կամ ժամանակի, կամ տարակուսանաց, կամ հարցման, և այլն· այսինքն ստորադասելով զնշանակեալ գործողութիւն ը՟ ըղձիւ, կամ ը՟ թէութ՟բ, կամ ը՟ պատճառաւ, և այլն· յոր սակս իսկ այս եղանակ Ստորադասական կոչեցաւ ։

Երբ եթէ ընդ ըղձիւ նշանակեսցէ, կոչի Ըղձական· զոր օրինակ, “Երանի թէ չէի պատահեալ այնմ ամենայնի„· Պետրոյեց ։

Եթէ ը՟ թէութ՟բ նշանակեսցէ, կոչի Թէական· և ը՟ ոմանց ստորակցական, կամ անկատարական· ոպ՟, “Դատաւոր է 'ի մեզ միտքս· թէ զբարին գովլիցէ, և զչարն խոտիցէ, դատաւոր արդար է„· Գէորգ ։

Եթէ ը՟ պատճառաւ նշանակեսցէ, կոչի պատճառական· զոր օրինակ, “Վասն այսորիկ տուան կերակուրք, զի կերակրիցիմք· և ոչ զի կերակրովք զոգի և զմարմին կորուսանիցեմք„· Գէորգ ։

Եթէ ը՟ ժամանակաւ իւիք նշանակեսցէ, կոչի Ժամանակական· ոպ՟, “Մի՛ հաներ յինէն զշնորհս մինչ չև մեռեալ իցեմ„· Նարեկ ։

Եթէ ը՟ տարակուսանօք նշանակեսցէ, կոչի Երկբայական կամ տարակուսական· ոպ՟, “Թերևս արդեօք 'ի հանդերձեալ յաւիտենին 'ի Քրիստոսէ ընդ նոյն ճշմարտապէս վայելլիցեմք„· Յոհն· Իմաստ ։

Եթէ ընդ հարցմամբ նշանակեսցէ, կոչի Հարցական· ոպ՟, “Զիարդ օտար եղելոց 'ի մօրէ կարիցէ լինել ոք ծնօղ„· Շնորհ ։

Այս եղանակ ունի զերկուս յատուկ ժամանակս· այսինքն զանցեալ· որգոն, Տեսեալ իցեմ, իցես, իցէ, և այլն. և զապառնի. որգոն, Տեսանիցեմ, իցես, իցէ, և այլն:

Ասացի յաղագս ժամանակս. քանզի բաց յերկուց աստի բազում անգամ իբր զիւր ժամանակս վարէ նաև զժամանակսն սահմանականին. թէ ըստ ներկային, թէ ըստ անկատարին և թէ ըստ այլոց:

Ըստ ներկային. զոր օրինակ, “Մանուկ կրօնաւոր Թէպէտ և զերկինս բանայ, մի՛ մտանէր ”. Նեղոս.

Ըստ անկատարին. զոր օրինակ, “Երանի՛ թէ զազատութիւն, զոր ետ ած բնութեանս, բարուօք 'ի կիր արկանէին ”. Շնորհ:

Ըստ կատարելոյն. զոր օրինակ, “Եթէ յարեայք ընդ քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք ”. Կողոս:

Ըստ յարակատարին. զոր օրինակ, “Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ ”. Ա. Կոր:

Ըստ գերակատարին. զոր օրինակ, “Թէ կացեալ էր 'ի պատուիրանին, պահէր զնա կենդանարարն կենդանի ”. Եզնիկ:

Ըստ ապառնւոյն. զոր օրինակ, “Գուցէ մոռացոյց զչափ բնութեան ”. Լամբրոնացի:

Յաղագս Աներևոյթ եղանակի:

Աներևոյթ կամ անորոշ եղանակն է, յորում բայն իբր վերացեալ նշանակէ զառս կամ զկիրս առանց որոշման ժամանակաց, դիմաց և թուոց. զոր օրինակ, Փրկել, բարերարել, խոնարհել, ընթանալ, լինել, ևն: Այս եղանակ բայի վասն այսորիկ կոչի աներևոյթ, զի ոչ երևի 'ի նմա ժամանակ ինչ. կոչի և անորոշ, զի դիմօք ոչ որոշի. և սակայն 'ի ձեռն դերանուանց կամ դիմորոշական տառից՝ կարէ նկատիլ 'ի նոսա կարգ ինչ ըստ օրինակի դիմաց. զոր օրինակ,
“Փրկելս ոչ է իմով զօրութեամբս, այլ քոյին խնամօքդ ”. Լամբր:
“Քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին ”. Նար:
“Խոնարհելն նուաստին է անդ քան մեծին ”. Լամբ:

Այս եղանակ բայի ձեւանայ յառաջին դիմաց սահմանակի ներկային՝ զտառդ մ՝ 'ի լ փոխարկելով․ որպէս, Գործեմ, գործել․ գործիմ, գործիլ․ բանամ, բանալ․ բանիմ, բանիլ․ թողում, թողուլ․ թողանիմ, թողանիլ․ շահիմ, շահիլ․ և այլն :

Այլ գիտելի է, զի 'ի հնումն սակաւ ուրեք 'ի կիր առնուին զվերջաւորութիւնս իլ, թէ 'ի հասարակ բայս, թէ 'ի ձայնակրականս, և թէ 'ի կրաւորականս․ մանաւանդ այնոցիկ՝ որոց ներգործականի ներկային յանգի 'ի ամ և 'ի ում․ այլ ըստ վերջաւորութեան ներգործականացն ձեւացուցանէին զնոսին : Աստի փոխանակ ասելոյ՝ ծագիլ, բառնիլ, լնանիլ, թողանիլ, զեղանիլ, ևն․ ասէին, ծագել, բառնալ, լնուլ, թողուլ, զեղուլ, հերձուլ, առնուլ, որպէս երևի յառաջիկայ օրինակդ :

“ 'Ի ծագել Ճշմարտութեան պարտ է բառնալ ստուերին ” ․ Նոննոս :

“ Յայնժամ ահաւոր նշանք լինիցին, պատառել վիմաց, հերձուլ վարագուրի, և այլն ” ․ Նանայ :

Նա սակայն յորժամ հարկն պահանջէր, դնէին նաև վերջաւորութեամբս իլ․ զոր օրինակ, “ Զեմ արժանի կոչիլ, և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան ” ․ Նարեկ :

“ Ատեսցուք շարժիլն յերևելիս ” ․ Լամբրոն :

“ Ո՜ ինչ չարաչար կիրք մեզ քան զթշնամանելն և թշնամանիլ, անպատուել և անպատուիլ, ատել և ատիլ, հարկանել և հարկանիլ, տրտմեցուցանել և տրտմիլ, բամբասել և բամբասիլ ” ․ Սարգ :

Գիտելի է ևս, զի այս եղանակ բայի որպէս յիշեցաք յառաջին մասին, իբրև անուն հոլովի ըստ Գերոյն յեզականին ևեթ․ որպէս,

Ուղղական․	Գովել․
Սեռ․	Գովելոյ․
Տրա․	Գովելոյ․ 'ի գովել, առ 'ի գովել․
Հայց․	զԳովել․
Բաց․	'ի Գովելոյ․
Պատ․	զԳովելոյ․

Գոր. Գովելով.
Պար. զԳովելով.
ՙՆեր. 'ի Գովել՝ 'ի գովելս, 'ի գովելդ, 'ի գովելն կմ՟ ը՟ գովելն։

Նաև այսպիսի հոլովեալքս դերբայք կոչին, այսինքն փոխանակ բայի. զի չեն յատկապէս բայ. որովհետև ոչ նշանակեն ը՟ ժամանակաւ և դիմաւ, այլ ընդ մէջ բայի վարին. օ՟ր յասեն, “Ի խաղաղանալս իմում ամբոխիմ”. ՙՆար. դերբայս 'ի խաղաղանալս՝ իբր անուն հոլովեալ ներգոյական հոլովիւ եդեալ է իբր բայ. որպէս եթէ ասէր. յորժամ խաղաղիմ՝ ամբոխիմ։

Գտանել պարտ է և զայս, զի 'ի հոլովիլ սոցա՝ բազում անգամ նախդիրն զօրութ՟ դնի 'ի տրականն. օ՟ր, “Որ եկն կեցուցանել, ոչ կարաց անտես առնել”. փոխանակ ասելոյ, որ եկն 'ի կեցուցանել. Իգնատ։
“Բան զսաստելն և զյանդիմանելն՝ ողոքելն թուի թէ զօրաւորագոյն է՝ խոնարհեցուցանել զսիրտ հոգւոյն 'ի հնազանդութի՟”. այսինքն առ 'ի խոնարհեցուցանել”. Մարգ։

Նաև երբեմն ևս 'ի մէջ սոցա և 'ի մէջ նախդրին անկանի խնդիր սոցին. օ՟ր, “Ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի”. փոխանակ ասելոյ, 'ի խուզելն զերկրորդ՝ զնախնին կորուսի. ՙՆար։
“Ոչ է ժամանակ յերկարաձգութե՟ առ 'ի զպարտսն հատուցանել”. փոխանակ ասելոյ, առ 'ի հատուցանել զպարտսն. ՙՆար։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Խոնարհմանց և լծորդութեանց բայից և եղանակաց նոցին։

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութի՟ք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութի՟ս, 'ի դէմս, և 'ի ժամանակս. թէ յեզականն և թէ 'ի յոգնականն. որգոն, Գործեմ, գործես, գործէ. գործեմք, գործէք, գործեն. գործէի, գործէիր, գործէր. գործեալք, գործելիք, գործելին. գործեցի, գործեցեր, և այլն։ Ըստ այսմ և յայլ ամ՟ բայս։

Այսպիսի փոփոխութիւնք վասն այսորիկ կոչին խոնարհմունք բայից, զի սոքօք զիջանին և խոնարհին բայք առ այս կամ առ այն դէմս, առ այս կամ առ այն ժամանակս, և այլն։ Զի որպէս յանուանս պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն անուան կոչին հոլովք, վասն հոլովելոյ և թաւալելոյ անուան յայնպիսի փոփոխումս, սոյնպէս և ՚ի բայս պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի՝ կոչին խոնարհմունք, վասն խոնարհելոյ և իջանելոյ բային յայնպիսի այլայլութիւնս։ Եւ այսպիսի խոնարհմունք բայից այնչափ են, որչափ փոփոխի մի և նոյն բայն ՚ի զանազան դէմս և ՚ի թիւս։

Իսկ ստորոգութիւնք բայից ոչ են պէսպէս փոփոխութիւնք նոցա ըստ դիմաց և ըստ ժամանակաց, այլ որոշմունք նոցին ըստ զանազան վերջաւորութեանց սահմանականի ներկային. որպէս և հոլովմունք անուանց ոչ են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն անուան, այլ որոշմունք նոցա ըստ զանազան վերջաւորութեանց սեռականացն և գործիականաց։

Արդ քանզի այսպիսի վերջաւորութիւնք սահմանականի ներկային են չորք, եմ, ամ, ում, իմ, ստորոգութիւնք բայից ևս ասին չորք. Առաջինն լինեալ և յանգեալ ՚ի եմ. Երկրորդն ՚ի ամ. Երրորդն ՚ի ում. և Չորրորդն ՚ի իմ. ընդ որովք լինին ամենայն բայք և լինելով որոշին առ այս կամ առ այն տեսակ ստորոգութեանց, ըստ որում եդաք յառաջին մասին. յորս պարտ է ուսանողին զգուշանալ, զի մի բռնադատեսցէ զամենայն բայ՝ ուր և իցէ՝ յամենայն ժամանակս և ՚ի դէմս խոնարհեցուցանել. մանաւանդ զայնոսիկ, որք են ըստ օրինակօք հաստատելին և Եղանակին։

Եւ ևս պարտ է զգուշանալ ՚ի գործածութիւնս կրաւորական բայից. զի բաց ՚ի յառաջին ստորոգութեանց, որք են՝ Գործեմ և հաստատեմ. և որ ըստ նոքօք, ոչ է արժան յաճախել զկրաւորականս այլոց ստորոգութեանց. բայց եթէ զկատարեալն և զապառնին ևեթ։ Մանաւանդ զի բազումք ևս ՚ի նոցանէ ՚ի կրաւորականսն պակասին. ըստ որում կարգեցաք յառաջին մասին։ Նոյն զօրս եդաք եւ անդ, ոչ է պարտ նաեւ զնոսին վարել անխտիր. այլ ըստ տեղւոյն, ուր հարկն ստիպեսցէ, եւ կամ վայելչութիւն բանին պահանջեսցէ՝ 'ի բացատրութիւնս մեկնութեանց եւ մակացութեանց։ Այսմ քեզ յարացոյց առ զնախնիս մեր, որք միայն 'ի հարկաւոր տեղիս եւ ըստ պահանջելոյ բանին 'ի գործ ածէին զայսպիսիս. որպէս է տեսանել յօրինակսդ որ զկնի. “Լուանամ, եւ նովին զազրանամ”. Նարեկացի։

“Ոետնիւ լուանամ եւ ոչ բժշկիմ”. Նոյնն։

“'Ի խոնարհն առաւել հեղանի (շնորհք)”. Սարգ։

“Հոգի մարդոյ, որ ոչ բերէ պտուղ աստուածպաշտութեան... լքեալ թողանի 'ի պահպանութենէն Աստուծոյ”. Գէորգ։

“Որ էրն լինի, եւ ստացիչն տրտմանի, եւ անտանելին տարեալ լինի”. Շնորհալի։

“Զոր օրինակ զօրեղ հանդերձ անկասկած լուանայցի... այսպէս է եւ անխնչ անձն”. Սուրբ հարց։

Իսկ եթէ կրաւորականապէս դնելն խորդ թուեսցի 'ի սոսա, մարթ է կազմել զայն էական բայիւ. որպէս եւ նախնիքն մեր առնէին. օր. “Լուացեալ լինիմ եւ ոչ պայծառանամ”. Նարեկ։

“Աստուածայինքն ամենայն հաւատովք ընդունելի լինին եւ ոչ քննութեամբ”. Իգնատ։

Առեալ լինի արծաթն 'ի չար ծառայից. Սծէ։

“Վասն Աստուծոյ 'ի հուր ընկեցեալ լինէին”. Խոսրով։

“Գործ սինկլիտոսին է յոյժ այպանելի. զի առ դոսա 'ի քննութիւն մարդկան տուեալ լինի աստուածութիւն”. Խոր։

Իսկ յաղագս բղխմանց ժամանակաց բայից, եւ վասն կերպաւորելոյ դիմաց նոցին գիտելի է, զի սոքա են հետեւմունք խոնարհմանց բայից. իբր զի 'ի խոնարհիլ բայից յարմատոյ նոցին ծագին եւ հետեւին ժամանակք եւ դէմք նոցա. որգոն, Գործ=եմ, ես, է. եմք, էք, են. էի, էիր, էր. էաք, եւն։ Գործ=եցի, եցեր, եաց. եցաք, եցիք, եւն։ Գործ=եցից, եսցես, եսցէ. եսցուք, եւն։ Զայսցանէ երկար գրէ հայրն մեր 'ի քերականութեան իւրում, մասն Է. գլ. ԻԲ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Ընդունելութեան:

Թէ զինչ իցէ, և զայլ պարագայս նորա:

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն 'ի յառնելութեան կամ 'ի կրելութեան, և մերթ զառս կամ զկիրս ընդ ժամանակաւ. որգոն, Այրող, այրեալ կամ այրեցեալ, այրելոց, այրելի: Զի այրողն նշանակէ զիրն յառնելութեան այրելոյ զայլս 'ի ներկայ ժամանակի:

Իսկ այրեցեալն նշանակէ զիրն 'ի կրելութեան այրման յանցեալ ժամանակի: Այնպէս և այրելոյն իմնապէս նշանակէ զիրն 'ի ներգործութեան այրելոյ յապայն, և այրելին 'ի կրելութեան այրման յապառնին: Յորս որպէս երևի, ընդունելութիւնք ունելով զզօրութիւն անուան ունին միանգամայն և զզօրութիւն բայի. զի են իբր անուն 'ի բայից բղխեալ՝ 'ի ձեռն չորից վերջաւորութեանց օղ, եալ, լի, լոց: Իսկ միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զկիրս, զորպիսի նշանակեն բայքն, յորոց բղխեն:

Այս մասն բանի՝ կոչի ընդունելութիւն՝ վասն երկուց. Նախ զի ընդունի զգոլ և զանուն 'ի յառից, կամ 'ի կրից, յորս իբրն նշանակի լինել. զի որ այրէ, 'ի յայրելոյն առեալ զնշանակութիւն և զանուն այրող ասի. և որ այրի, յայրմանէ անտի այրեալ կամ այրեցեալ ասի. ընդ այսմ իմա և վասն այլոցն: Երկրորդ զի ունի ըզժամանակցութիւն ընդ երկուց մասանց բանից, այսինքն ընդ անուան և ընդ բայի և 'ի նոցունց ընդունի զպարագայս. որպէս տեսցի այժմ:

Պարագայք ընդունելութեանց են վեց. այսինքն, Սեռ, ձև, տեսակ, ժամանակ, թիւ և հոլով: Սեռն, ձևն, տեսակն և ժամանակն ընդ բայից, իսկ թիւն և հոլովն ընդ անուանց:

Սեռք ընդունելութեանց չորք են, որպէս և բայից.

Ներգործական. փրկող, փրկեալ, փրկելոց։ Կրաւորական. զրկեալ կամ զրկեցեալ, զրկելի կամ զրկելոց։ Չեզոքական՝ ընթացող, ընթացեալ, ընթանալոց. ընթանալի։ Հասարակ՝ խօսող, խօսեալ կամ խօսեցեալ, խօսելոց, խօսելի։

Ձևք ընդունելութեանց են երեք։ Պարզ՝ գործող, գործեալ։ Բարդ՝ կենագործող, կենագործեալ։ Բաղադրեալ՝ ներգործող, ներգործեալ.

Տեսակք ընդունելութեանց են երկու։ Նախատիպ՝ հնչող, հնչեալ։ Անցողական՝ հնչեցուցանող, հնչեցուցեալ։ Ոմանք ըստ անուանց ևս կազմեն տեսակ ընդունելութեան այսպէս. հնչողական՝ հնչողութիւն, և այլն. բայց այս կազմութիւն վերաբերի առ անուանս, զի այսպիսի բառք իբր անուն վարին։

Ժամանակք ընդունելութեանց են երեք։ Ներկայ. գրաւող։ Անցեալ. գրաւեալ։ Ապառնի. գրաւելոց, գրաւելի։ Թիւք ընդունելութեանց են երկու։ Եզական. ծագող, ծագեալ, ծագելի։ Յոգնական. ծագողք, ծագեալք, ծագելիք։

Հոլովք ընդունելութեանց են տասն, որպէս և անուանց. զորս գիտելի է, զի որք 'ի եալ յանգին, հոլովին՝ որպէս գետ, գետոյ. օր̃, զօրացեալ, զօրացելոյ. զօրացեալք, զօրացելոց, և այլն։ Եւ որք 'ի լի յանգին, հոլովին որպէս եկեղեցի, եկեղեցւոյ. օր̃, գովելի, գովելւոյ. գովելիք, գովելեաց։ Իսկ որք 'ի ոց յանգին, ոչ հոլովին։ Այլ որք 'ի ող յանգին, ըստ եզականին հոլովին որպէս բան, բանի. իսկ ըստ յոգնականին որպէս քաղաքք, քաղաքաց. օր̃,

Առող.	Առողք.
Առողի.	Առողաց.
Առողի, ցառող.	Առողաց, ցառողս.
զ Առող.	զ Առողս.
յ Առողէ.	յ Առողաց.
զ Առողէ.	զ Առողաց.
Առողիւ.	Առողօք.
զ Առողիւ.	զ Առողօք.

յ Սիրող կամ յսիրողի․ յՍիրողս․
ով Սիրող։ ով Սիրողք։

Բայց գիտելի է՝ զի առ նախնիս ոչ պահիւր ձեւդ այս որոշութեան, քանզի հանդիպանի ունելով հնչմանցս ո և օ կամ հնոց ող, անխտիր դնէին ող կամ օղ, մ օղ․ զի և ո դնելով սուր հնչէին իբր օ․ ըստ աւանդելոյ երզնկացւոյն ՚ի քերականութեան։

ԳԼՈՒԽ ԻԳ․

Գործածութիւն ինչ ՚ի նոցանէ ընդունելութեանց ՚ի մասնաւորի։

Վասն ընդունելութեանց յանգելոց ՚ի ող գիտելի է, զի ՚ի կրաւորական բայից բնաւ ոչ ելանեն ընդունելութիւնք վերջաւորութեամբ ող․ այլ, եալ, լի և լոց։

Իսկ թէպէտ ուրեք ուրեք դնի եցող․ որզոն, Սիրեցող, ատեցող, և այլն, բայց այսոքիկ ՚ի գործ ածին ՚ի ներգործականս և ՚ի չէզոքականս․ զոր օրինակ,

“Զբոցն ՚ի բաբելոն՝ (արար ա՛ծ) մանկանցն ցող, և քաղդեացւոցն հուր այրեցող․ Շնորհ․ Խղխ։

“Զօրէն դիւաց ատեցողք ամենայն”․ Գէորգեց։

“Օրինակ բարեաց և դու լինիցիս հայեցողացն ՚ի քեզ”․ Սարգիս։

Իսկ ՚ի կրաւորականս՝ փոխ ողի դնեմք եալ․ զր,

“Հրաշալի ձգնութեամբ ՚ի յերկրի նահատակեալ, և ՚ի յերկինս պսակեալ”․ Շար։

“Բացեր զաղխեալ դուռն դրախտին”․ Նշնչ։

“Զարչարեալք արիաբար ընդդէմ մահու չար իշխանին”․ Շար։

Սոյնպէս իմա և վասն էական բայիցս եղանիմ, լինիմ և եմ․ զի ՚ի սոսա ևս փոխանակ ողի միշտ եալ դնի․ որզոն, եղեալ, եղելոյ, և այլն․ զր,

“Զիմ այսպէս ստորաքարշ եղելոյս զաղօթս․․․ ո՛չ արար անտես”․ Լամբրոն։

“Զուղիղս փափկութեան քո տացես ըմպել արժանի եղելոցն”․ Սքանչ։

Ըստ այսմ և ընդունելութիւնք այնց չեզոքական բայից, որք են ը՟ օրինակաւ չարըն̃աւմին, ոչ լինին ող, այլ եալ. զոր օրինակ, “Նշղեն որպէս երազք զարթուցելոց”. Սաղ.

“Մի՛ կշտամբեր զհարթուցեալս”. Նարեկ.

“Տաց նմ՟ ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ”. Յայտ.

Սոյնպէս և ընդունելութ̃ի գոծ բային հասարակօրէն ոչ դնի յանգիւս ող, այլ եալ. որ՟, “Զգուշացուք զկնի եկեալքս. կ՟ եկողքս. Խոսրով.

“Յորժ̃մ վարսել հրամայէ (արամ զնիւքար) 'ի տեսիլ անցաւորաց և ա՟մ եկելոց անդր”. Խոր.

Թէպէտ դուն ուրեք ող յանգիւ ևս գտանի եդեալ. զոր օրինակ, “Գրով աւանդեցին զամենայնն զկնի եկողացս”. Շնորհ.

Վասն ընդունելութ̃եց յանգելոց 'ի եալ գիտելի է, զի սոքա երբեմ̃ն իբրև բայ վարին, և երբեմ̃ն իբրև անուն. որպէս ունիմք ասել յերրորդ մասին. Գլ. ԻԲ.

Դարձեալ գիտելի է. զի սոքա երբեմ̃ն դնին փոխանակ աներևութի. որ՟, “Այնպէս ուրախացեալք 'ի սէրն այ՟ մինչև չհամարեալ զինքեանս 'ի մարմնի, այլ՝ յերկինս”. կ՟ չհամարել. Նրշնհ.

“Ոչ ներքինք շարժեալ կարեն, (կ՟ շարժել կարեն), և ոչ վերինք դրդուեցուցանեն”. Նրշնհ.

Այլ պարտ է 'ի գործածութ̃ սոցա զգուշանալ.

Վասն ընդունելութ̃եց՝ որք յանգին 'ի ող գիտելի է, զի սոքա միշտ իբր բայ վարին, թէ 'ի ներգործականս, թէ 'ի կրաւորականս, և թէ 'ի չեզոքականս.

Ի ներգործականս. որ՟, “Խնդրելոց է զվրէժ յափշտակութ̃եցն”. Գէորգ.

Ի կրաւորականս. որ՟, “Դատապարտելոց են, որք գիտեն տիրապէս, թէ ոչ գիտեն, և ձևանան, թէ գիտեն”. Մարգ.

Ի չեզոքականս. զոր օրինակ, “Արդ զի՛նչ արարից. մեղուցեալ անձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն”. Շար.

Բայց գիտելի է, զի յաճախ գործածութ̃ի այսպիսի ընդունելութ̃եց տգեղացուցանէ զկազմութ̃ի շարադրութե՟ց, վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբայսդ՝ հանդերձեալ, կամ տանիլ. և մերթ ևս՝ հառանէ. զբ՟,

“Եթէ հանդերձեալ էք քո՟ի լինել գործակից, պարտիք և ճանապարհի նորին լինել հետևող”. յ՟մ, եթէ լինելոց էք գործակից Քրիստոսի. Շնորհ։

“Եւ եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի Տ՟ին”. այսինքն վճարելոց է. Շնորհ։

Գիտելի է ևս, զի ընդունելութ՟իքս գալոց և լինելոց՝ ուրեք ուրեք նաև իբր անուն վարին՝ նախդրիւ միայն հոլովելով. զոր օրինակ, “Եւ զգալոցն պատմեսցէ ձեզ”. Յո՟հ։ “Յազդմանէ հոգւոյն զլինելոցս նախատեսեալ... պատրաստէր”. Յո՟հ. Իմաստ։

Վասն ընդունելութե՟ց յանգելոց 'ի լի՝ գիտելի է, զի սոքա բղխեն յա՟մ կրաւորական և 'ի ձայնակրական և 'ի հասարակ բայից. և նշանակեն իբրև լինելի. որգոն, Պատմելի, հրաժարելի, դաւանելի, ե՟ն։

Իսկ եթէ բղխեսցեն ևս 'ի ներգործականաց, ունին յայնժամ զզօրութ՟ի ողի. զոր օրինակ, “Գործն և գործելին առհասարակ տանջեսցին”. Իմաստ։

“Դառնացաւ ցքի ըմպելեաց”. այսինքն ըմպողաց. Եսայ։

“Խթան ընդդէմ աքացելեաց ոչ վնասի, այլ զոտս նոցա ծակոտէ”. այսինքն խթան ընդդէմ աքացողաց ոչ վնասի. Գէորգ։

“Յարեաւ նախապատմելին”, այսինքն նախապատմողն. որ է ասել՝ յարեաւ նա, որ յառաջն պատմէր՝ թէ յառնեմ. Շար։

Ոմանք յընդունելութե՟ց աստի դնին երբեմն ևս և փոխանակ ընդունելութե՟ց յանգելոց 'ի եալ, մանաւանդ ընդունելութե՟դ խնդրելի. զոր օրինակ, “Խնդրե ջերմեռանդն արտասուօք զքաւութ՟ի, և առնու զխնդրելին”. Յաճախ։

Գիտելի է ևս, զի այսպիսի ընդունելութ՟իք բազում անգամ յարելով յէական բայս՝ վարին գրեթէ իբր դիմազուրկ բայ. զոր օրինակ, “Անկարելի է... երկուց հակառակ տերանց ծառայել, և հաճոյանալ”. Շնորհ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս Նախադրութեան։

Նախադրութիւն է մասն բանի, որ 'ի յարին յանուանս՝ ևս և յայլ մասունս բանի իբր յանուանս, ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ. կամ թէ յայտ առնէ զայն ինչ, որ շուրջ զիրօք մտածի. զորս ժբ կարգի հոլովից եդաք յառաջին մասին. գլ. ժէ. Տե՛ս յընդարձակն է. 25։

Այլ գիտելի է նախ՝ զի ոմանք 'ի նոցանէ երբեմն առնուն զկրկին խնդիր 'ի միասին. և ոմանք զայլ՝ փոխանակ բուն խնդրոյ իւրեանց. որպէս է տեսանել 'ի յետագայսդ։

Նախադրութիւնքս ընդ, ընդէ, երբեմն առնուն միանգամայն զբացառական և զնախդրիւ տրական. օր̅,

„Ի Դաւթէ ընդ 'ի Ք̅ս հազար ամ է,,. Վարդան։

„Ի մերոյն Հայկայ ընդէ ցթագաւորեն Արշակայ գտանեն ամք ուջծը,,. Յովհ. կաթ.։

Նախադրութիւնքս յառաջ քան, յետոյ քան, 'ի վեր քան, են, առնուն միանգամայն զհայցական և զգործիական. օր̅,

„Գտանեմք զժամանակս Քրիստոսի՝ երկերիւր ամաւ յառաջ քան զՆեքտանեբայ (ժամանակն),,. Խոր.։

„Ինն հարիւր ամաւ յետոյ քան զԱբրահամ շինեցաւ սիոն 'ի Դաւթայ,,. Վարդան.

Նախադրութիւնքս՝ հեռի, 'ի բացեայ, մեկուսի, առնուն երբեմն զբացառական և զգործիական, մանաւանդ 'ի վերին էական բայիւ. ոպ̅ և նախադրութիւնքս, մերձ, մօտ, հուպ, առնուն երբեմն զտրական և զգործիական. օր̅,

„Թաղեցին պատուով 'ի մէջ պողոտային՝ չորս ասպարիսաւ հեռի 'ի քաղաքէն,,. Յայսմաւ.։

„Էր այր նորա 'ի բացեայ 'ի մէնջ ասպարիսօք հինգ,,. Վարք հարց։

„Մերձ էր գեղն յերուսաղէմ մղոնաւ երեք,,. Մամբրէ։

Դարձեալ նախադրութիւնքս մերձ, մօտ, հուպ, երբեմն

հանդերձ նախդրիւս առ՝ առնուն զվերջահոլով տրականն . ո̃ր , " Մերձ առ նմին հանգուցեալ ,, . Երզնկայե :
" Մօտ առ մ̃զ կացոյց (զհողեղէն բնութիւն) ,, . Սարգ :
" Հուպ առ նմին տեսանէք և զնա եկեալ յերկնից ,, . Իգնատիոս :

Գիտելի է երկրորդ , զի գտանին և ևս նախադրութիւնք ինչ , զորս մեք ոչ եդաք յառաջին մասին . վասն զի առ նախնիս մեր հազիւ ուրեք երևին նոքին , և կ̃մ յոտանաւոր բանս միայն . որպիսի են սոքա . Ըարց , Ըանց , դէմ , հետ , շերը , և այլն :

Գիտելի է երրորդ , զի երբեմն ոմանք 'ի մակբայից ևս խնդիր առեալ՝ վարին իբրև զնախադրութիւն . ո̃ր .
" Փրկեաց զժողովուրդդ 'ի ներքոյ ձեռին եգիպտացւոց ,, . Ելից :
" Հասարակաց ամենեցուն գայ 'ի կութս (որթ) ,, . Պիտոյից :
" Եւ 'ի լուր ամ̃ ժողովրդեանն ասէ ցաշակերտսն ,, . Ղուկ :
" Աստուածան լերուք … զանխուլ 'ի լողաց ,, . Սարգ :
" Ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ,, . Խորեն :

Երբեմն ևս ածական անուանք ինչ խնդիր առեալ՝ վարին իբր նախադրութիւն . ո̃ր , " Որ սիրէ զա̃ծ , նման նմին սիրէ զա̃մ մարդոյ զկեանս ,, . Խոսրով :
" Հանգոյն իժի և քարբի խցեալ զլսելիս ,, . Շնորհ :
" Աղաղակեցին և երկու ծերքն կից նմին ,, . Դան :
" Ոչինչ ընդհատ յայսմ պատուոյ տայ Սմբատայ ,, . Խոր :
" Զոյգ ը̃ն հրամանին և գործն վճարեալ լինէր ,, . Իգն :
" Աման ընդ նոսա … սկսանի նուագել ,, . Յովհ . Իմաստ :

Գիտելի է չորրորդ , զի նախադրութիւնք թէպէտ հասարակօրէն յառաջոյ դասին խնդրոյ իւրեանց , ըստ որոյ և կոչին նախադրութիւնք , բայց բազում անգամ ևս յետոյ դնին . ո̃ր , " Չարին ընդ միտեցայ ,, . Նարեկ :
" Զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի ,, . Նար :
" Անմարթ էր զսրբութիւն շանց առաջի արկանել ,, . Լամբ :

Եւ երբեմն ևս՝ ընդ մէջ նախադրութե̃ և խնդրոյն անկանի այլ մասն բանի . իբր կամ բայ , կամ խնդիր խնդրոյն , և կամ այլ ինչ . ո̃ր , " Զխաչ առաքինութեան բարձին , և զկնի գնացին Ք̃ի ,, . այսինքն գնացին զկնի Ք̃ի . Շնորհ :

“Ուղխ չարի 'ի վերայ խորոխտայր հաստուցանել արքայի”. իբր 'ի վերայ արքայի հաստուցանել. Յոհ. Ոսկ։
“Զաղքատն վասն զցնցոտին զգենլոյ անպատուէք”. այսինքն վասն զգենլոյ զցնցոտին. Մարգ։

Գիտելի է հնգերորդ, զի յայնպիսի նախադրութիւնս, որք ունին զնախդիր, որպիսի են, զկնի, զհետ, յաղագս, եւ այլն, երբեմն կրկնի նախդիրն նաեւ 'ի վերայ խնդրոց նոցա. իբր, “Զմիմեանց զկնի անհետ 'ի վերայ դայլին”. Խոր։
“Յայն ժամ զբարեաց զհետ երթայք”. Ա. Պետ։
“Մի ինչ պատճառս տալ հակառակորդին 'ի հայհոյութեան յաղագս”. Ա. Տիմ։

Իսկ երբեմն դնի միայն 'ի վերայ խնդրոց նոցին. իբր,
“Զմիմեանց կնի կարգեալ տողեսցին”. Ագաթ։
“Զնորին անպիտանութեան վարեցաւ հետ”. Պիտոյից։
“Եւ ինքն 'ի ճշմարտութեան վերայ չեւ է հասեալ”. Եղիշէ։
“'Ի պատուիրանազանցութեան աղագս դարձաւ առ փչողն”. Մամբրէ։

Երբեմն եւս՝ ուր պիտոյ է կրկնել նախադրութեան նախդիր միայն կրկնի 'ի տեղի նորա. զոր օրինակ,
“Ե՛րթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան”. Ա. Տիմ։ Յորս զօրութեան կրկնի նախադրութիւնս զհետ. որպէս թէ ասէր. Ե՛րթ զհետ արդարութեան, զհետ աստուածպաշտութեան, զհետ հաւատոյ, եւ այլն։
“Վէրս 'ի վերայ վիրաց՝ եւ ցաւս 'ի ցաւոց յաւելուն”. այսինքն ցաւս 'ի վերայ ցաւոց. Շնորհալի։
“Աներեւոյթ զօրութիւն իւր կալով 'ի մէջ ձեր, որք յերից մանկանցն”. իբր որք 'ի միջի երից մանկանցն. Ճառընտիր։
“Ջանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն իւր՝ ոչ յիւր պէտս, այլ 'ի մերն”. այսինքն 'ի մեր պէտս. Լամբ։

Վասն խնդրառութեան նախադրութեանցս, Իբրեւ, Իբր, Իբրու, Որպէս, Քան։

Սոքա թէպէտ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի հայցական հոլովս, բայց բազում անգամ եւս ըստ պահանջման բանին եւ 'ի զօրութենէ բային պէսպէս խնդդիրս առնուն՝ դրեթէ յամ հոլովս, յուղղականն, 'ի սեռականն, և այլն ։

Յուղղականն. օր̃, "Եթէ այլազգիք և այլալեզուք տանիմք և բերեմք (բամբասանօք) զմիմեանս". Յովհ. Իմաստ. ։

"Որպէս վտանգաւորք ողորմութիւն հայցեսցուք". Խոսրով ։

Ի սեռականն. օր̃, "Եթէ օձի զթոյնս 'ի բաց եդեալ՝ դեսպանս առ իշխանն ատոմ առաքէր". Յովհ. Ոսկ. ։

"Եղիցի միատարր խաղաղութիւն 'ի մէջ մեր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ". Յովհ. Ոսկ. ։

"Մարթ էր զայդ իւր վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի". Մարկ ։

Ի վերջահոլով տրականն. զոր օրինակ, "Եթէ անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց". Եղիշէ ։

"Ունկնդրութիւն և հպատակութիւն (մատուցի քահանայի) որպէս հրեշտակի Այ". Խոսրով ։

"Մեզ արդարև 'ի դէպ է երից մանկանցն երգ առ Այծ քան իսրայելեան տոհմին յայնժամ". Շնորհ ։

Ի նախդրիւ տրականն. օր̃, "Զգէ զբանն առ Պետրոս՝ եթէ 'ի գլուխ աշակերտացն". Իգնատ. ։

"Որպէս յամենայն սեղան՝ խոյն մերձենայ". Լամբ. պատ. ։

"Փափաքէ 'ի մահ քան 'ի կեանս". Եղիշէ ։

Ի հայցականն. զոր օրինակ, "Մի՛ ոք աստանօր անուսումն զմեզ համարեալ բամբասեսցէ եթէ զանվարժս". Խորեն ։

"Որպէս զմտերիմ ծառայս պատիւ ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն". Շնորհ ։

"Չիք ինչ զգուշաւոր ամրութիւն քան զերկիւղն Այ". Խոսրով ։

Սոքա երբեմն զօրութ̃ ունին զհայցականն՝ և ներգործութ̃ զյատկացուցիչ նորա. զոր օրինակ, "Ո՛չ եթէ զմահկանացուի համարի զմահս մեր". փ̃ ո՛չ իբրև զմահս մահկանացուի համարի զմահս մեր. Եղիշէ ։

"Բանք ձեր ո՛չ լինիցին անհամ և անաղ, որպէս զռամկաց". այսինքն որպէս զբանս ռամկաց. Շնորհ ։

“Բարձր է ծառայութեան պատիւ քան զառաքելութեան ”. այսինքն քան զպատիւ առաքելութեան. Մարգ։

Ի բացառականն. որպ, “Ի բարկութենէ և 'ի նորին չարութենէն իբրև 'ի կատաղի գազանէ զերեսս 'ի բաց դարձուսցուք ”. Մարգ։

“Գրեալ ես երկնչել 'ի կեղծաւորութենէ որպէս յանհաւատութենէ ”. Շնորհալի։

“Են որ քան յանտի կենացն վրիպել՝ յաստեացս զարհուրին ”. այսինքն, են որք զարհուրին վրիպել յաստեացս՝ քան յանտի կենացն. Իգնատ։

Ի պատճառականն. որպ, “Ոչ ասէ զաւակաց՝ իբրև զբազմաց, այլ՝ իբրև զմիոյ ”. Պօղ։

“Զհօրէն իւրմէ որպէս զմարդոյ ումեքէ պատմէ ”. Մեկն. Ղուկ։

“Աշխարհ է առաւել հոգալ զմարմնոյ քան զհոգւոյ ”. Վարք հարց։

Ի գործիականն. որպ, “Վերակացուք մարդկան ունին բանիւ կակղել զխստութիւն մտաց՝ իբրև բրչաւ ”. Իգնատիոս։

“Են որ բանիւք իւրեանց խոցոտեն որպէս սրով. բայց լեզուք իմաստնոց բժշկեն ”. Առակ։

“Զթռչունս վայրենիս և զգազանս սիրով քան բռնութեամբ սովոր են մարդիկ վարժել ”. Շնորհ։

Ի պարառականն. որպ, “Իբրև զփեսայիւ նարկ զինև զվակասն ”. Կոչ. ընծայ։

“Իսկ երկրորդն անհմուտ գոլով՝ ծիծաղի զնովաւ որպէս զանմտաւ ”. Նանէ։

“Քան զբազմօք առաւելեալ մեծապէս 'ի փառս ”. Սահակ Հաբ։

Ի ներգոյականն. զոր օրինակ, “Տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի ”. Նարեկ։

“Զի յորչափ արտաքոյ կամացն ոչ լինի մերս ոգի, որպէս 'ի ծովու ալեկոծիմք ”. Խոսրով։

“Որքան խաղաղութիւն է 'ի տունս շինականաց՝ և անհոգութիւն, քան 'ի տունս թագաւորաց ”. Մարգ։

Նախադրութեամբ. որպ, “Զամենայն իւր եդ 'ի վերայ ձեր իբրև 'ի վերայ սիրելեաց ”. Մարգ. Ա. դէպ. Բ։

“Կապեալ են ա՟մ ուրեք ազգ մեր յաղքատութ՟ե որպէս ընդ երկաթով 'ի ներքոյ լծոյ ծառայութ՟ե ,,. Շնորհ։

“Անէծք ցաւագինք վ՟ս այլ մեղաց ո՛չ ևս շարժին 'ի մէջ եկեղեցւոյ, քան յաղագս գողութ՟ե ,,. Նոյն։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս Մակբայի ։

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս կամ զեղանակս գործողութ՟եց նշանակէ. զի եդեալ մակբայից, այսինքն 'ի վերայ բայից՝ ցուցանէ զպէսպէս եղանակաւ կատարիլն գործողութ՟եց. և զի այս պէսպիսութ՟ի կարէ մտածիլ երեսուն և երեք օրինակաւ ըստ պէսպիսութ՟ե նշանակութ՟ե իւրեանց. Տես յընդարձակն. ա. 19. և բ. 26։ Յայն սակս երեսուներեք տեսակք մակբայից թուին. Որակական, քանակական, ժամանակական, տեղական, և այլն՝. որպէս եդաք յառաջին մասին ։

Այլ գիտելի է նախ, զի մակբայից ոմանք են բնականք. ո՛րպէս, Այժմ, աստ, անդ, դեռ, մերթ, երբ, միշտ, հիմ, այո, ոչ, ուր, և այլն ։

Իսկ ոմանք, մանաւանդ թէ բազումք՝ կազմին յանուանց, ևս և յայլ մասանց բանի՝ 'ի ձեռն պէսպէս վերջաւորութ՟եց կամ մասնկանց. որգոն, Առիւծաբար, մեծապէս, ինձէն, հայերէն, ուժգնակի, նշանաւոր, ինքնին, բիւրեցս, այլուստ, և այլն ։

Գիտելի է երկրորդ, զի մակբայք՝ երբեմն նախադասին բայից. որ՟պ, “Միշտ ուսանիմ, և երբէք 'ի գիտութ՟ի ճշմարտութ՟ե ոչ հասանեմ… սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ,,. Նարեկ։

Իսկ երբեմն յետադասին. զոր օրինակ, “Կցորդակից լեր բժշկապէս, և մի՛ 'ի խոյզ ընտրութ՟ե կոչեր դատաւորաբար ,,. Նար։

Նաև երբեմն ևս ընդ մէջ մակբայի և բայի այլ բան անկանի. և կամ այլ մասն բանի. որ՟պ, “Յորժամ որ

այժմս բանապաձոյծ՝ խրոխտաձայն՝ սիգացօղ՝ բարձրապարանոց, անկեալ դնել դի անկենդան ,,. Նարեկ.
“Եւ դու ե՛ զանբանիցս կենդանութիւն ինձ 'ի դէմս Բէբէր ,,. Մարգ.

Գիտելի է երրորդ, զի մակբայք բազումանգամ երկու կամ երեք 'ի միասին դնին. Երբեմն նովին տեսակաւ. որ̄, “Օ մարդոյ բարին ընդ Այ̄ բարւոյ համեմատեալ՝ արդարև ստուգապէս չար գտանի ,,. Մարգ.

Երբեմն ևս այլևայլ տեսակօք. զոր օրինակ, “Ահաւասիկ արդարապէս կանխեցաք ասացաք, իբրու պարանաւ յինքեանս ձգել զմեղս ,,. Մարգ.

Եւ երբեմն ևս մի և նոյն մակբայն կրկնելով դնի առ 'ի յաճախականապէս նշանակել. զոր օրինակ, “Մեծացաւ այրն յոյժ յոյժ ,,. այսինքն կարի յոյժ. Ծննդոց.
“Ես՛ այս և ես մի եմ 'ի նոցանէ ,,. Նարեկ.
“Մօտեղ մօտեղ զմարտ հինին 'ի վ̄ր հեղուին ,,. Յոհ. կաթ.

Ըստ այսմ լինի երբեմն և բացասական մակբայս՝ ոչ, կրկնելով 'ի սկզբան և 'ի վերջոյ. որ̄, “Եւ ոչ մի ինչ առանց շնորհացն Այ̄ 'ի գլուխ ոչ ելանէ ,,. այսինքն և ոչ մի ինչ բնաւ. Մարգ.

Գիտելի է չորրորդ, զի մակբայք ոչ միայն դնին 'ի վերայ բայից, այլև 'ի վերայ ընդունելութե̄. որ̄,
“Ամենից տիրող հաւասարապէս ,,. Նարեկ.
“Եղև վերստին ծնող մարդկութեան ,,. Գրիգ. Լուս.
“Անճառելի դրախտին աստէն տեսող ,,. Ի շար. ԻԱ.
“Մեծ է փառք քահանայութե̄ յարժանապէս ունողսն ,,. Լամբրոն.

Երբեմն 'ի վերայ բայանուանց ևս. որ̄, “Լուեցոյց զմոլեգնաբար գոչումն ,,. Եղիշէ.
“Անասնաբար սահեցմամբ ... ը̄ երկիր մածաք ,,. Նար.
“Վերստին առումն բանին՝ զհաւատարմութի̄ իրացն ցուցանէ ,,. Մարգեր.

Երբեմն ևս դնին 'ի վերայ այնպիսի ածականաց, որք ունին զհաղորդութի̄ ը̄ բայից. որ̄, “Նայեա վերստին 'ի բնութեան կերպարան՝ միշտ սխալական ,,. Նար.
“Ըստ հոգւոյ՝ ամենևին անշարժք 'ի բարիս ,,. Շնորհ. ընդհ.

“Հեղցես զաղբիւրաբար զառատաբուղխ շնորհս„. Մաշտոց: Ուր աղբիւրաբարն է մակբայ՝ ածական անուանդ առատաբուղխի:

Երբեմն և դնին յայնպիսի բանս, յորս զօրութիւն կայ բային. որ, “Այսօր 'ի կառս, վաղիւն 'ի դագաղս„. այսինքն այսօր նստեալ կայ 'ի կառս, ևն. Լամբրոն:

“Եթէ կանոնն թիւր իցէ, քանի՛ մանաւանդ, որք ուղղին նմա„. Սարգ:

“Իսկ արդ չար արժա՞ն է ասել թագաւորին, քա՛ւ ես ո՛չ ասեմ„. Եղիշէ:

Գիտելի է հինգերորդ, զի երբեմն մակբայք ինչ ածական լինին գոյականաց, և իբր ածական վարին. որ, “Օտար կենցաղս գիշեր կոչեաց առաքեալն„. Խոսրով: Ուր օտարն լեալ է ածական՝ անուանս կենցաղ:

“Չար է նախանձ, և 'ի չարէ յանդգնութիւն ածէ„. Իգնատիոս:

“Յայտնեցին որդւոց մարդկան զծածկագոյն խորհուրդ„. Շար:

Նա և՝ երբեմն նախդիրք խնդրոյն դնին 'ի վերայ մակբայից. որ, “Բարեպաշտ արքայն Կոստանդիանոս յայնր անդր տարբերեալ տուն հաւատոյ... անխախտելի ամրութ̃ պնդեալ հաստատեաց„. Լամբ:

“Զայնուր եղեալն... առաջի աչաց տեսանէր„. Կոչ:

“Գայր առ նա ապա և մեծ իշխանն վրաց Ատրներսեհ 'ի յառաջագոյն վշտակցութե„. Յովհ. կաթ:

Գիտելի է վեցերորդ, զի բազում անուանք ածականք երբեմն իբրև զմակբայ վարին. որ, “Երբ ծաղկեաց գարունն հաւատոյ„. Շնորհ:

“Եթէ նոքա (այսինքն առաջնորդք), ուղիղ գնան, հետեւեալքն անխոտոր ճանապարհորդեն„. Լամբրոն:

“Քաջ միտ դիր աղաչեմ„. Մամբրէ:

“Սուտ ձեւանամ և իրօք խոստորիմ„. Նար. հտ:

Այս կիրառութի̃ յաճախ է 'ի բարդ ածականս. որ, “Պարզերես կացջիք առաջի աւանդողին ձեզ զտաղանդ պատուիրանին„. Շնորհալի:

“Զմեզ ինքեանս բոլորապատրաստ ընծայել պ̃յ„. Սարգ:

“Արագաթռիչ ելանել 'ի կամարս լուսեղէնս„. Մաշտոց:

Այնպէս և ածական անուանք, որք ունին զբաղադրական մասնիկս՝ ան, կամ զբաղդատական մասնիկս՝ գոյն, բազում անգամ վարին իբրև զմակբայ. որ, "Անսայթաք կարող եմք գնալ ընդ ճանապարհ կենցաղոյս 'ի յերկինս,,. Լամբ.

"Անձուա նաւեցիք, և հասիք առ քեզ,,. Շար.

"Վերագոյն գոչէ փող գաբրիէլեան,,. Շար.

"Որք խանխագոյն զմեծեղէն բանն ընկալան, կատարելագոյնք են և առաջինք,,. Մամբրէ.

Երբեմն ևս անուանք ինչ ածականք ունելով՝ ի վերջոյ զյօդս ս կամ զբառդ չեն, իբր մակբայ վարին. որ,

"Բազումս առաքինանամք,,. Խոսրով.

"Ամբարտաւանս և բարձրայօնս փքայր,,. Յովհ. Կաթ.

"Գեղեցիկ չեն անդ կարգելով,,. Խոր.

"Որ սքանչելի չեն դիպեալ եղև ըստ գործոյն՝ և անուանն,,. Նոյն.

Գիտելի է եօթներորդ, զի՝ երբեմն անուանք ինչ, թէ ածականք և թէ գոյականք հոլովմամբ իւիք իբր մակբայ վարին. որ, "Մինչ կենդանեօք խօսիմ, մեռեալ եմ անհասից,,. Նար. ԿԲ.

"Յանպատրաստից եկեալ սրտաբեկ առնէր,,. Գէորգ.

"Յանխտիրս հայեցեալ յանդգնս տեսանէր,,. Կոչ.

"Անմիտն առ օրէն յայտնէ զարկութիւն իւր,,. Նար.

"Խափանեսցի առ աչօք կարծեցն,,. Շնորհ.

"Օ՜ ինչ վիճելիք պճնապարհոյն,,. Մարկ.

Նաև երբեմն ևս մի և նոյն անուանն կրկնելով իբրև մակբայ վարի. որ, "Խմբեցաւ պատերազմն, և մարտեան ճակատ առ ճակատ,,. Խոր.

"Ոտն առ ոտն յառաջ մատուցեալ՝ միապետել ջանայր,,. Յովհաննէս. Կաթ.

"Բերան 'ի բերան զմիմեանս համբուրիցեն,,. Սէյօր.

"Օր ըստ օրէ յաւելուած լիցի 'ի լաւութեն,,. Յաճախ.

"Տօնէ իսրայէլ ամ յամէ պենտակոստէ առ ձայնեալ,,. Խոր. Վարդ.

"Ամ ամ առնուլին զքահանայութեն պատիւ,,. Նանայ.

"Գնայր 'ի գնայէ կայլին յօրէնման առաջինս,,. Գ. Մագ.

Նաև ևս երբեմն այլևայլ անուանք և կամ նաև այլ

մասունք բանի 'ի միասին եկեալ՝ իբրև մակբայ դնին. զր, "Մեծ ամուրդ այդ հնի 'ի ձէր տապալեցաւ". Եղիշէ:
"Շեղջ ընդ շեղջ ճեղքէր զամուր գլխանոցն". Յովհ. կաթ.
"Մա՛ն յետն պարապ տեսանեմք զգործն բանիցս վըկայ". Լամբրոն:
"Յան և յեր սփռեալ է գլուխս կոհակացն". Յովհ. կաթ:
"Քանզի ողորմութիւն է, որ բարձր 'ի գլուխ պարծի առ դատաստանաւն". Շնորհ:
"Կոչելոյ հրաման տայր՝ յաջմէ յահեակէ". Եղիշէ:
"Եւ այսպէս սք (որ սելևկիոս և անտիոքոս) թագաւորեալ ընդ հօր և ընդ շառ՝ իբրև ամս կ, ապա ապըստամբեին պարթևք 'ի մակեդոնացւոց". Յովհ. կաթ:

Գիտելի է ութերորդ, զի ցուցական դերանուանքս այն, դոյն, նոյն յարեալ յանունդ օրինակ՝ վարին ընդ նմա իբրև մակբայ, ունելով երբեմն զնախդիրդ զ. զոր օրինակ, "Սոյն օրինակ և ծերունին այն (Եղ) յայնժամ 'ի սուգ տրտմութե վտանգեալ էր". Ոսկ:
"Դոյն օրինակ և Յոյնք ... ունէին զկրաւոնս". Յաճախ:
"Նոյն օրինակ և 'ի տունս են տմ պահպանութիւնք". Եզր:
"Մի ևս ձեզ չնոյն օրինակ գնալ". Եփես:
Ըստ այսմ ձևանայ և ցուցական դերանունդ այս. զր,
"Եւ նա այս օրինակ փոխեցաւ յաշխարհէ". Բ. Մակ:
"Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ այս". Եզր:

Դարձեալ և բայս է, վարի երբեմն իբրև ժամանակական և տեղական մակբայ ընդ բառիցս ուրեք, ուր, ուր, ուր. զր, "Է ուրեք ուր բանիւ վճարէ ... և է ուր ձեռն դնէ". այսինքն ուրեք ուրեք, կամ երբեմն. Իգնատիոս:
"Է ուրեք ուր քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է՝ ուր նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ ուր յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք". Եղիշէ:

Գիտելի է իններորդ, զի մակբայքս Աստի, այտի, անտի, աստ, անդ, այսր, այդր, անդր, դնին երբեմն փոխանակ ցուցական դերանուանց. զոր օրինակ, "Եւ են կրկին կարօտ 'ի տարաբնակ լինել 'ի բնակութէ աստի". այսինքն յայսմ բնակութէ. Յովհ. կաթ:

“Բայց արդ դա՛րձ 'ի բարկութենէ այտի ”. Նոյնն :

“Անյոյս եղեն . . . 'ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ կան յերկինս ”. Ղեւոնդ :

“Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք ”. Յովհ :

“Յո՞ գնայ 'ի գերեզման անդր, ուր եդեալ էր Ղազար ”. Մամբր :

Երբեմն եւ դնին 'ի տեղի դիմորոշական տառից. ո՟ր, “Գողորդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր 'ի մերոց աստի ”. այսինքն 'ի մերոցս. Յովհ. կաթ :

“Ահա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի զոր ընդ իմ կրեցեր ա՟ծ բոլորից ”. Նար :

“Ոչինչ կարաց շարժել զնոսա 'ի սիրոյ անտի ա՟յ ”. Մարգ :

“Վաղվաղակի փոփոխեալ գտայց 'ի լաւ անդր ”. Նար :

Եւ երբեմն եւ դնին իբր զարդ. ո՟ր, “Կեցցեմ 'ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ ”. Դ. Թագ :

“Ելանելոց էք 'ի մարմնոյ այտի ”. Մամբրէ :

“Որք 'ի լոյս անդ են՝ ցնծան, եւ որք 'ի խաւարի անդ են, յոգւոց հանեն ”. Մծբ :

“Առ իւրսն անտի եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան ”. Նոյնն :

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս Շաղկապի.

Շաղկապն է մասն բանի, որ յարէ եւ միաւորէ զը՟ միմեանս զայլ մասունս բանի, նաեւ զնոյնն իսկ զբանս. եւ բաժանի 'ի զանազան տեսակս. որք են՝ բաղհիւսական, տրոհական, եւն. որպէս կարգաւ եդաք յառաջին մասին. տե՛ս եւ յընդարձակն. Ե՟. 27 :

Այլ գիտելի է, զի երբեմն վասն վայելչութե՟ բանին զօրութե՟ դնին շաղկապք ինչ. որպիսի են հասարակօրէն սոքա. Բայց, սակայն, այլ, վասն այսորիկ, եւն. յորժամ յառաջոյ սոցա դնին շաղկապքդ Թէպէտ, վասն զի, եւն. ո՟ր, “Թէպէտ փակեաց եւ կնքեաց զդրունս եկեղեցեաց ընդ ա՟մ աշխարհն պարսից, (բայց) նոքա զա՟մ տուն եկեղեցի արարին. Եղիշէ :

“ Վասն զի ոչ կացաք յուխտի նորա, (Վասն այսորիկ) անփոյթ արար զմեզ ” . Յովհ . կաթ ։

Իսկ երբեմն ներհակ այսմ շաղկապս և իբր յաւելորդս դնի 'ի դլրադէմ բանս և 'ի դերբայաւորս . որ,
“ Առ երկիւղի անկանելոյն զարհուրեալ և թմրեսցի ” . Սարգ . ուր ևն ամենևին թարմատար դնի .

“ Ո՛վ ոք լսելով զարժանի ողբոց բանքս և ոչ բեկանի սիրտն ” . Սարգիս ։

“ 'Ի յընթանալս իմում և կասիմ . . . 'ի յաթոռս ծերոց բազմեալ` և խելայեղից կցորդիմ ” . Նար . Այլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։

Գիտելի է դարձեալ, զի շաղկապս ևս երբեմն միայն առ 'ի զարդ դնի 'ի բանս . որ . “ Ինքն ևս է ամենայնի աղբիւր բարեաց ” . Յաճախ ։

“ Զբոլոր ևս զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ առնել իմաստից ” . Խոր ։

“ Քանզի արդարև գիտակ ևս ես, թէ չար է արալն, և ընդաբոյս չարութիւն մեր ” . Նարեկ . տե՛ս յընդարձակն ։

ԳԼՈՒԽ ԻԸ .

Յաղագս Միջարկութեան ։

Ի վերայ միջարկութեան ևս սակաւ ինչ ունիմք խօսել . զի սակաւ է և գործածութիւն սորա . և զորս եդաք յառաջին մասին, այն բաւական է ։

Զսա ոմանք ընդ մակբայս դասեն, բայց ոչ երևի այս ուղիղ . զի մակբայն ցուցանէ զպարագայս գործողութեանցն, իսկ միջարկութիւն 'ի միջի արկեալ 'ի բանս` յայտ առնէ զընական կիրս հոգւոյն . որպիսի են կիրք ուրախութեան, տրտմութեան, ցաւոց, երկիւղի, ևն ։ Քանզի յասելն, “ Բաբէ, ո՛րչափ է որովայնամոլութեան բռնաւորութիւն ” . Ոսկ . միջարկութիւնս բաբէ ոչ ցուցանէ զպարագայս գործողութեանցն, այլ զկիրս հոգւոյն պատճառեալ 'ի զարմանալոյն 'ի վերայ բռնութեան որովայնամոլութեան ։ Նաև յասելն, Ապա՛` որո՞վ օրինակաւ զի՞նչ կամիս առնել կատարեալ ” . Նշնչէ . միջարկութիւնս հապա՝ յայտ առնէ զկիրս եռանդեան հոգւոյն առ ընդունելոյն իրիք. Նոյն յասելն. «Ո՛հ, զիա՛րդ միանգամ վճիռ եհատ, և զեղկելի ձայնն արձակեաց». Մարգ. ոճն ցուցանէ զկիրս զարհուրանաց ընդ ահագին վճռոյն. Ըստ այսմ իմն և զայլոց.

Այլ գիտելի է նախ, զի միջարկութիւնք երբեմն յարին յանուանս նշանակիչս այնց՝ յորոց վերայ է կիրք հոգւոյն. որպէս, «Ո՛վ սքանչելեացս, գործ՝ առ որ տկարանայ բնութիւն թագաւորաց». Նար.

«Բա՛բէ անխափանութեան (Քրիստոսի), չև՝ եւս յանդիմանէր զմատնիչն, այլ ստուէր արկեալ ծածկէր զիրն». Ոսկ.

«Վա՛յ ախտացելումն յախտէ, որ խոցի և ոչ ընդոստանու». Շնորհ.

«Աւա՛ղ ՚ի վերայ չարչարելոցդ և հնձելոցդ առ հասարակ հարցդ և եղբարցդ». Մաշտոց.

Յայսպիսի բանս գրեթէ միշտ զօրութիւն գտանի բայ լինել. որ և երբեմն ներգործութիւն դնի. զոր օրինակ, «Վա՛յ է նոցա, զի ընդ ճանապարհին Կայենի գնացին». Յուդայ.

«Երանի՛ տանն և երկրին, ընդ որ նա անցանիցէ». Եղիշէ.

«Երանի՛ է մարդոյ, զոր ոչ յաղթահարեցին երկունք ապահովութեան». Մծբ.

Գիտելի է երկրորդ, զի առ միջարկութիւնս վերաբերին ընդ իմիք և կոչական անուանք. զի ընդ օրինակի միջարկութեանց իբր անկախ ՚ի բայէն և ՚ի խնդրոյ նորա դնին ՚ի բանս՝ յերկրորդ դէմս. որպէս, «Ընկալ ո՛վ Աստուածայինդ Գրիգորիոս՝ զփոքրիմայց բանս նուազ մերոյ տեսութեան». Ագաթ.

Այլ զպէսպիսութիւն միջարկութեանց ասացաք յառաջին մասին հանդերձ օրինակօք. Բայց պարտ է և գիտել, զի գտանին և այլ բազում միջարկութիւնք, զորս ոչ եդաք ՚ի նմին՝ վասն ոչ գոլոյ նոցա ՚ի հասարակ գործածութեան. որպիսի են սոքին. ա ա, ա, ահ, հա, է, հէ, յէ, եհէ, էհ, ըհ, իհ, իհ թէ, ուհ, իշտ, տի, տիր, իցիւ, իցիւ թէ, ոչ թէ, ոչ եթէ, վայ վաղայ, բեք, ափսոս, և այլ այսպիսիք. զորս չէ արժան ՚ի կիր առնուլ ՚ի հասարակ շարագրութիւնս. Տես յընդարձակն.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Յաղագս համաձայնութեան մասանց բանի։

Հանդէս արուեստի քերականութեան յայսմ մասին պայծառանայ. զի 'ի սմին ա̃մ բառք առ միմեանս եկեալ պէսպէս համաձայնութ̃ կազմեն խընջոյս բանի. որով և միտք ուսանողաց տեսեալ զխայտալ բառից ընդ իրեարս յայս սեղան՝ զուարձանան և բերկրին. ևս և արժանօք վայելեն զպտուղս վաստակոց իւրեանց, զոր վաստակեցին յառաջին և յերկրորդ մասին։ Եւ յանձանձիրն ճաշակել՝ սկսանին պարարտանալ ոգիք նորա յանուշունչ կազմաւորութ̃ բանից։ Զայս սեղան՝ կամեցեալ կազմել բարելից՝ ախորժական և ընտիր օրինակօք ունիմք կարգել. խօսեալ նախ համառօտիւ զհամաձայնութենէ մասանց բանի 'ի հասարակի։

Արդ համաձայնութի̃ք մասանց բանի են կապակցութի̃ք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբան։ Այս կապակցութի̃ք լինին ութ եղանակաւ ըստ ութից մասանց բանի։ Նախ անուան ընդ անուան։ Երկրորդ դերանուան ընդ դերանուան, և ընդ անուան։ Երրորդ բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութ̃։ Չորրորդ ընդունելութ̃ ընդ ընդունելութ̃, ընդ անուան և ընդ դերանուան։ Հինգերորդ նախադրութ̃ ընդ անուան, և ընդ այնս որք իբր անուն հոլովին։ Վեցերորդ մակբայի ընդ բայի, և ընդ այնս որք ունին՝ զզօրութ̃ բայի։ Եօթներորդ միջարկութ̃ ընդ բանի։ Ութերորդ շաղկապի ընդ բանի և ընդ մասանց նորա։

Յայսոսիկ ութ համաձայնութի̃ս առաջի դնին ութ հարկաւոր գիտելիք 'ի շարադրութ̃. որք են սոքին. ա̃, բացայայտիչ և բացայայտեալ. բ̃, յատկացուցիչ և յատկացուցեալ. գ̃, ածական և գոյական. դ̃, յարաբերական և յարաբերեալ. Ե, անուն բայի. Զ, խնդիր. Է, արգելիչ խնդրոյ. Ը, նախդիր։ Որոց հանգամանք և պիտանութիւնք յայտնի լինին 'ի բացատրութ՟է վերոյգրեալ ութից համաձայնութեանց։

Նախ գիտելի է, զի զհամաձայնութ՟է նախադրութ՟ե, մակբայի, միջարկութ՟ե և շաղկապի՝ զոր ինչ արժան էր գիտել, խօսեցաք յառաջին և յերկրորդ մասին. ուստի չունիմք ինչ խօսել զսոցանէ յայսմ մասին. այլ միայն զհամաձայնութ՟է անուան, դերանուան, բայի և ընդունելութ՟ե. յորս բովանդակին ամ՟ զօրութիւնք արուեստի քերականութ՟ե.

Եւ նախ կամեցեալ խօսիլ զհամաձայնութ՟է անուան ը՟ անուան՝ գիտելի է, զի անուանք որովհետև կամ գոյական են, և կամ ածական, 'ի գալ սոցա առ միմեանս՝ հա՛րկ է, զի կամ գոյականք ընդ գոյականաց յօդեսցին. կամ ածականք ընդ ածականաց. կամ գոյականք ընդ ածականաց. և կամ ածականք ընդ գոյականաց։ Իսկ գոյական անուանք երրակի կարեն յօդիլ ը՟ գոյականաց. նախ՝ իբր բացայայտիչ. երկրորդ՝ իբր յատկացուցիչ. և երրորդ՝ իբր խնդիր. զորոց խօսեսցուք կարգաւ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց իբր բացայայտիչ. կամ

Յաղագս բացայայտչի։

Յորժամ 'ի բանս կամիմք զգոյական անուն ինչ բացայայտել՝ թէ յի՞նչ միտս դնի, և կամ փոխանակ որո՞յ նշանակէ, յարեմք 'ի նոյն զայլ միւս ևս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին առանց շաղկապի, և զայն կոչեմք բացայայտիչ. որպէս երևի յայս բան. „Այսօր բուսաւ յաննայէ մօրենին մարիամ„. Շարակ։ Ուր անունս մարեամ յարեալ յանունս մօրենի եղեալ է նմին բացայայտիչ. զի բացայայտէ, թէ մօրենին աստ առեալ լինի փոխանակ մարխամու ։

Այլ գիտելի է նախ, զի բացայայտիչն երբեմն դնի և յառաջ քան զբացայայտեալն ․ որ, «Մովսէս հիմն մարգարէից ասաց, մի՛ ատեր զեղբայր քո» ․ Մծբ ․ Որ անունս Մովսէս է բացայայտիչ բառիս՝ հիմն մարգարէից ։

Երբեմն ևս 'ի մէջ բացայայտչին և բացայայտելոյն անկանի բայ ․ որ, «Զկորուսեալ դրամն խնդրեաց՝ զթագաւորական պատկերն» ․ Իգնատ ։ Որ անունս թագաւորական պատկեր՝ է բացայայտիչ կորուսեալ դրամոյն, 'ի մէջ անկանելով բայիս՝ խնդրեաց ։

Գիտելի է երկրորդ, զի երբեմն բազում եզական անուանք լինին բացայայտիչ միոյ յոգնականի ․ որ, «Որդիք սբ̃յ յուսկանն պապ և աթանագինէս . . . մահ անձանց նիւթեցին» ․ Յովհ ․ կաթ ։ Որ երկու եզական անուանքս պապ և աթանագինէս՝ են բացայայտիչ միոյ յոգնական անուանս՝ որդիք սբ̃յ յուսկանն ։

Գիտելի է երրորդ, զի թէպէտ բացայայտիչն առանց շաղկապի յարի 'ի բացայայտեալն՝ որպէս և եդաք 'ի վերոյ, բայց որովհետև բացայայտիչն է իբր մեկնութիւն բացայայտելոյն, ուր ուրեք կայ բացայայտիչ, անդ կայ զօրութ̃բ և մեկնական շաղկապ ինչ ․ որպէս յայս բան, «Զտիրական մարդն՝ զհոգին թշնամանեցին» ․ Մարգ ․ կայ զօրութ̃բ մեկնական շաղկապդ՝ այսինքն ․ որպէս եթէ ասէր ․ զտիրական մարդն, այսինքն զհոգին թշնամանեցին ․

Եւ զի յա̃մի 'ի սոսա միշտ զօրութ̃բ կայ շաղկապ մեկնական, վասն այսորիկ բազում անգամ հանդերձ նովաւ դնի բացայայտիչն ․ զոր օրինակ, «Յամաքեցին պտոյտք գետոց ․ այսինքն՝ մեղաց յորդութիւնք» ․ Նար ։ Որ անունս մեղաց յորդութիւնք՝ հանդերձ շաղկապիւս այսինքն՝ լեալ է բացայայտիչ անուանս՝ պտոյտք գետոց ։

Երբեմն ևս բայիւ հանդերձ դնի ․ որ, «Ընթացուք այսուհետև 'ի սբ̃ լերինս, 'ի մարգարէսն ասեմ և յառաքեալս» ․ Գրիգ ․ լուս ։ Որ անուանքս 'ի մարգարէսն և յառաջեալսն՝ հանդերձ բայիւս ամէն՝ են բացայայտիչ անուանդ՝ 'ի վերինս:

Եւ դարձեալ երբեմն ամբողջ ինչ բան իբրև անուն ինչ՝ լինի բացայայտիչ անուան. զոր օրինակ. "Ամ̃ք օրէնք 'ի մի բան կատարին, 'ի սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո". Գաղ: Ուր բանս՝ սիրեսցես զընկեր քո ևն, է բացայայտիչ անուանս 'ի մի բան:

Այլ այսպիսի բացայայտիչք հասարակօրէն յանուրոց բանս դիպին. այսինքն յայնպիսիս, որք աներևոյթ բայիւ կազմին. զոր օրինակ. "Այս խաբեութե̃ մտաց ողորմելի է քան զամ̃ խաբեութե̃, համակ կարգաւորութե̃ յանկարգութե̃ կալ, և լուսով 'ի խաւար". Սարգ. Ուր բանս՝ համակ կարգաւորութե̃ յանկարգութե̃ կալ և այլն, է բացայայտիչ անուանդ՝ այս խաբէութե̃:

Այս եղանակ բացայայտչի առաւելապէս 'ի գործ ածի 'ի վերայ ցուցական դերանուանցս՝ այս. այդ, այն, սոյն, դոյն, նոյն. զոր օրինակ, "Զիարդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանին". Խոր: Ուր բանս փոխանակել զիմ և այլն, է բացայայտիչ դերանուանս այդ:

Գիտելի է չորրորդ, զի ուրեք ուրեք յատուկ անուանք առանց համաձայնելոյ ևս լինին բացայայտիչ հասարակ անուանց. իբր զի երբեմն դնին յուղղական հոլովի (իբր ածական). զոր օրինակ, "Ջուրն յորդանան գետոյ երիցս անգամ բաժանեցաւ". Մծբ:

Ուր յատուկ անունս յորդանան՝ է բացայայտիչ գետոյն յուղղական հոլովի (իբր ածական):

Եւ երբեմն ևս յարելով 'ի բառդ անուն՝ նովաւ հանդերձ լինին իբրև մի բացայայտիչ հասարակ անուան. (և այս յաւէտ 'ի յատուկ անուանս մարդկան). որ, "Երէց մի պետրոս անուն". Եղիշէ: Ուր պետրոս անունն է բացայայտիչ բառիս երէց մի:

Գիտելի է հինգերորդ, զի 'ի բացայայտիչս նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վերայ երկուցն ևս, այսինքն 'ի վերայ բացայայտելոյն և 'ի վերայ բացայայտչին. մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի մէջ այլ մասն բանի. որ, "Զփրկականն սաղաւարտ 'ի գլուխ եդեալ զնշան խաչին „. Շար ։ Ուր նախդիրդ զ եդեալ է 'ի վերայ երկուցն եւս . այսինքն 'ի վերայ բացայայտելոյն՝ որ է բառս փրկչականն սաղաւարտ , եւ 'ի վերայ բացայայտչին՝ որ է բառս նշան խաչին ։

Թէպէտ երբեմն միայն 'ի վերայ նախընթացին դնի . որպ , “Զառաւօտ խաղաղութեան քո սիրով 'ի մեզ ընկալցուք „. Խոսրով ։ Ուր նախդիրդ զ՝ եդեալ է 'ի վերայ նախընթացին միայն , այս է առաւօտ խաղաղութեան . որոյ լեալ է բացայայտիչ անունս քո ։

Ի վերոգրեալ օրինակդ արժան է նկատել եւ զայս , զի բացայայտիչն եւ բացայայտեալն բազումուրեք դնի հանդերձ յատկացուցչաւ՝ կամ ածականաւ , որպ երեւի եւ յայսմ , “Շուրջ եղեն շունք բազումք՝ զինուորք պիղատոսի „. Շար ։ Ուր բացայայտիչն , այսինքն անունս զինուորք՝ եդեալ է հանդերձ յատկացուցչաւ , որ է բառս պիղատոսի . եւ բացայայտեալն , այսինքն անունս շունք՝ եդեալ է հանդերձ ածականաւ , որ է բառս բազումք ։

Գիտելի է վեցերորդ , զի երբեմն թէպէտ գոյական անուանք համաձայն դնին 'ի բանս առանց շաղկապի , բայց ոչ համօրէն բացայայտիչ միմեանց , այլ իբր խնդիր բայի . զոր օրինակ , “Երեւեցաւ մովսէսի վառմամբ հրոյ 'ի մորենւոջ յանապատին „. Զաքար ։ Ուր երկոքին գոյական անուանքս 'ի մորենւոջ եւ յանապատին թէպէտ առանց շաղկապի յարեալ են ընդ միմեանս համաձայն թուով եւ հոլովիւ , բայց ոչ են միմեանց բացայայտիչ . այլ երկոքին եւս խնդիր բայիս երեւեցաւ ։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց՝ իբր յարակայութեան . համ

Յաղագս յարակայութեան ։

Ի բանս յորժամ կամիմք յայտ առնել , թէ արդեօք նշանակեալն իրիք գոյական անուան, որում յատկանայ. կամ որո՞յ է, դնեմք առ նմին զայլ գոյական անուն 'ի սեռական հոլովն, որ զնշանակութիւն միւս անուան իւրացուցանէ, կամ ինքեան յատկացուցանէ. այսինքն ցուցանէ՝ թէ նշանակեալն այնր անուան՝ իւր է, և զայն սեռական հոլով կոչեմք յատկացուցիչ. զոր օրինակ. "Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն քրի", Գաղ: Աստ գոյական անունդ ընկերին լեալ է յատկացուցիչ բեռին. զի իւրացուցանէ զբեռն. այսինքն ցուցանէ զբեռն որ ընկերին է. և ոչ որ նաւուն, կմ այլոյ իրիք: Այսպէս և գոյական անունդ քրի լեալ է յատկացուցիչ բառիս օրէնսն. զի սեպհականէ ինքեան զնոյն. այսինքն յայտ առնէ՝ թէ քրի է այն օրէնք, և ոչ աշխարհի, կմ այլոց:

Այլ գիտելի է նախ, զի յատկացուցիչն բազում անգամ նախադասի յատկացուցելոյն. զոր օրինակ, "Որում շատ տուաւ գիտութե իմաստ, շատ խնդրեսցի 'ի նմանէ առաքինութե տեսակ". Խոսրով: Աստ անունս գիտութեան՝ լեալ է նախադաս յատկացուցիչ իմաստին. որպէս և անունս առաքինութեան տեսակին:

Երբեմն 'ի մէջ յատկացուցչին և յատկացուցելոյն այլ մասն բանի անկանի. զոր օրինակ, "Յախտս թշուառի մեղաց". որ յախտս մեղաց թշուառի. Շնորհ:

Երբեմն և ամբողջ բան մտանէ 'ի միջի. զոր օրինակ, "Զի զմեղացն՝ որով ստուգ բամբասեցեր զարդարն 'ի մեծամեծաց կմ 'ի փոքունց, զդատաստանն դու ինքնին անձամբ քո բարձցես". որ դու ինքնին բարձցես զդատաստան մեղացն. Նարկ:

Գիտելի է երկրորդ, զի երբեմն միոյ անուան լինին բազում յատկացուցիչք. որ, "Մթերս՝ ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց... բազմացոյց". Խոր: Աստ անուանքս ոսկւոյ, արծաթոյ, քարանց, ևն, են յատկացուցիչ անուանս մթերս:

Երբեմն և բազում գոյական անուանք լինին միմեանց յատկացուցիչ. որ, "Տիպք կերպարանաց ճշմարիտ բանից զգեցեալ ունին զհոգւոյն իմաստս". Իգնատ: Աստ ճշմարիտ բանիցն է յատկացուցիչ կերպարանոյ, և կերպարանոյն է յարակցուցիչ անուանս՝ Փիլ․

Գիտելի է երրորդ, զի եթե յարակցուցիչն կամ յարակցուցեալն իցէ նախադասեալ, նախդիրն հասարակօրէն դնի միայն 'ի վերայ նախընթացին․ որպ՟, "Զլուսոյն ձաճայթ տալաւորէր 'ի յինքեան„․ Շար․

Երբեմն և՝ այլ սակաւ ուրեք դնի միայն 'ի վերայ յետադասին․ որպ՟, "Զծառայիս առեր զկերպարան„, այս՟ առեր զկերպարան ծառայի․ Շար․

Երբեմն 'ի վերայ երկուցն և՛ դնի, մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի․ զոր օրինակ, "Զմահու փարատեաց զերկիւղ„․ Շար․ Ուր նախդիրն եդեալ է 'ի վ՟ր երկուց անուանցս մահու և երկիւղ, որոց մինն է յարակցուցիչ, և միւսն յարակցուցեալ, որպէս եթէ ասէր․ զերկիւղ մահուն փարատեաց․

Իսկ երբեմն դնի նախդիրն նաև 'ի վերայ այլոց բառից՝ որք յարին 'ի յարակցուցիչն կ՟մ 'ի յարակցուցեալն, զիարդ և իցէ․ որպ՟, "Զմեծին 'ի ծնունդս կանանց զկարապետին և զմկրտչին Յովհաննու զառաքինութե՟ զհանդէս տօնելով այսօր 'ի ձայն հնչման, և այլն„․ Շար․ Ուր փոխանակ միոյ նախդրի եդեալ կան բազումք․ զորս հնար էր չդնել և կարգել այսպէս․ 'ի ձայն հնչման տօնելով այսօր զհանդէս առաքինութե՟ կարապետին և մկրտչին Յովհաննու՝ մեծին 'ի ծնունդս կանանց։

Պարտ է նկատել և զայս, զի եթէ յարակցուցիչքն կամ յարակցուցեալքն իցեն բազում, նախդիրն իբր 'ի բազումս կրկնի նաև 'ի վերայ երկրորդ յետադասին․ և երբեմն 'ի վերայ ամ՟ի․ իսկ երբեմն ոչ կրկնի․ որպ՟, "Դուք զիմն արհամարհեալ զիւրոյն պատուիրան՝ զթշնամւոյն ձեր ընկալայք դարձեալ զխրատ, զատելութիւն և զբաժանումն„․ Շնորհ․

Երբեմն և զօրութբ՟ եդեալ զյարակցուցեալն՝ նախդիրն դնի 'ի վերայ յարակցուցչին, և այնու իբր զօրութբ՟ իմացեալ լինի յարակցուցեալն․ զոր օրինակ, "Խնդրեն ուսանել, և զՅովհաննուն առաջի դնեն„․ այսինքն զօրինակ աղօթելոյն յովհաննու առաջի դնեն․ Իգնատ․

Ըստ այսմ պատահի և 'ի դերանուանս. զոր օրինակ, “Պտուղ հոգւոյն զմերս ասէ առաքեալն (այսինքն զգործ մեր), որ է սէր, խաղաղութիւն. և ոչ թէ զնոցայն (այսինքն զգործ նոցա), որ էր հեռ, նախանձ, և այլն„. Լամբրոն։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց իւր իբր խնդիր. համ

Յաղագս խնդրոյ գոյականաց։

Գոյական անուանք բաց 'ի համաձայնելոյ ընդ գոյականաց իւր բացայայտիչ և իւր յատկացուցիչ, յաւելուն 'ի նոսա նաև իւր խնդիր՝ համաձայն բնութեան նոցին։ Վասն զի բազումք 'ի նոցանէ ունելով զհաղորդութիւն ընդ բայից ըստ պահանջելոյ բնութեան բայիցն առնուն երբեմն զխնդիր 'ի պէսպէս հոլովս. որպիսի են բայանունքն, որ են այնք որք 'ի բայից ածանցին. որգոն, Ճաշակումն, առումն, տեսութիւն, ժառանգութիւն, ասացուած, եւն. և կամ են իբր արմատք նոցին. որպէս, Պատճառ, քարոզ, վիշտ, բարբառ, և այլն.

Ոմանք յայսպիսի անուանց ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից, և կոչին ներգործականահաղորդք. ոմանք ընդ կրաւորականաց. և կոչին կրաւորականահաղորդք. և ոմանք ընդ չէզոքականաց, և կոչին չէզոքականահաղորդք։ Ըստ այսմ իմա և զածական անուանց։

Այսպիսի անուանք երբեմն ունին զզօրութիւն դերբայի՝ մանաւանդ 'ի հոլովիլն. և երբեմն ևս զզօրութիւն ընդունելութեանց յանդելոց 'ի օղ և 'ի եալ։ Ուստի և ըստ այնմ առնուն զխնդիր։

Այլ գիտելի է, զի 'ի մէջ սոցա ներգործականահաղորդքն և կրաւորականահաղորդքն առնուն զկրկնատեսակ խնդիր. մի՝ խնդիր սեռի, և մի ևս՝ խնդիր բնութեան. իսկ չէզոքականահաղորդքն՝ միայն զխնդիր բնութեան։

Գիտելի է ևս, զի այսպիսի գոյական անուանք ոչ միայն առնուն խնդիր զգոյական անուանս, այլ և 'ի տեղի նոցա զածականս, ևս և զդերանուանս և զընդունելութիս, որպէս տեսցի զկնի ։

Կանոն ․ Զ̄ ։

Անուանք ներգործականաձայնք յորժամ իբր դերբայ վարին, առնուն խնդիր սեռի 'ի սեռական հոլովս ․ ո̄ր, " Ճաշակմանք մեղաց՝ ճաշեցի զմահ ". Ժամագիրք ․ Որ սեռականն հոլով՝ մեղաց լեալ է խնդիր սեռի ճաշակման ․ ո̄պ եթէ ասէր, ճաշակելով զմեղս ճաշեցի զմահ ։

Սոյնպէս է եթէ այսպիսի անուանք ունիցին զզօրութի̄ բառից յանգելոց 'ի օղ, և 'ի իչ ․ ո̄ր, " Աղբիւր կենաց ա̄ծ, և բղխումն ողորմութե̄ ". այսինքն բղխող ողորմութե̄ ․ Ճ ար ։

Երբեմն ևս առնուն զխնդիր հայցական փոխանակ սեռականի ․ ո̄ր, " Կենդանացուցեր զնա՝ փչմամբ քո 'ի նա զհոգի բանական ". Մաշտոց ։ Որ հայցական հոլովդ զհոգի բանական՝ լեալ է խնդիր սեռի փչման ․ որպէս թէ ասէր ․ կենդանացուցեր զնա փչելովդ զհոգի բանական ։

Այլ եթէ համբակք և նորավարժք չիցեն բաւական որոշելոյ զսեռական խնդիրն 'ի յատկացուցչէ, մարթ է նոցա հասու լինել այսու, զի եթէ սեռական հոլովն կարիցէ փոխիլ 'ի հայցական՝ է խնդիր ․ որպէս տեսանի յառաջին եդեալ օրինակդ յասելն ․ ճաշակելով զմեղս ․ և ևս ողորմութիւն բղխող ․ Իսկ եթէ ոչ կարիցէ փոխել 'ի հայցական, ոչ է խնդիր ․ այլ յատկացուցիչ և կամ այլ ինչ ։

Կանոն ․ Է̄ ։

Անուանք ներգործականաձայնք բաց 'ի սեռական և 'ի հայցական խնդրոց, և կամ առանց նոցա ևս ․ առնուն երբեմն յընտիր շարադրութիս զխնդիր բնութե̄ յայնպիսի հոլով, զորպիսի պահանջեն բայքն, ը̄ որոց ունին զհաղորդութի̄ ։

Յուղղականն, (Թէպէտ և 'ի սակաւս.) ոպ՟, " Որ զդաւանութիւն պետրոսի զքեզ որդի հօր ամ՟ հայր 'ի յամպոյն վկայեալ այսօր ". Շար. Ուր անունս որդի է ուղղական խնդիր դաւանման. որպէս թէ ասէր. զդաւանանելն պետրոսի զքեզ որդի հօր ամ՟՝ հայրն ած՟ վկայեաց այսօր 'ի յամպոյն.

Ի վերջահոլով տրականն. ոպ՟, " Լուայք զձ՟ն անսուտ ձեզ խոստմանն ". Լամբրոն. Ուր ձեզն է տրական խնդիր բառիդ խոստմանն.

Ի նախդրիւ տրականն. ոպ՟, " Տուր մեզ զխաղաղութիւն քո, զոր շնորհեցեր սբ՟ց քոց առաքելոց՝ փչմամբ քո 'ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո սբ՟ ". Ժամագիրք. Ուր բառդ 'ի նոսա է նախդրիւ տրական խնդիր փչմանն, որպէս թէ ասէր. փչելով քո 'ի նոսա զհոգիդ.

Ի բացառականն. զոր օրինակ, " Առաւել քան զարարչութիւն յոչնչէ զաշխարհս՝ մեծագոյն փրկութիւն զվերջինսն իմանայիր ". Նոշէշէ. Ուր յոչնչէն է բացառական խնդիր արարչութեան. որպէս թէ ասէր. առաւել մեծագոյն փրկութի՟ իմանայիր զվենջինսն՝ քան զարարչագործել զաշխարհս յոչնչէ.

Ի պատմականն. ոպ՟, " Վերագոյն է այս զրպարտութեան ատեցուած զմ՟նջ՝ քան զհեթանոսականացն առասպելեալ ած՟աբանութիւն ". այսինքն ասելն զմ՟նջ զայս զրպարտութի՟ վերագոյն է, ևն. Շնորհ.

Ի գործիականն. զոր օրինակ, " Զէնն ինչ 'ի միտ առնլոց տ՟ հոգւոյն սբ՟յ կանխասացութեամբն բերանով դաւթի ". այսինքն տ՟ ասելոյ կանխաւ զայս հոգւոյն սբ՟յ բերանով դաւթի. Նանայ.

Ի պարառականն. ոպ՟, " Օրհնաւոր լուացմունք քահանայիցն, և սրսկմունք զժողովրդեամբն՝ նշանակեն զհոգևոր մկրտութիւնս ". այ՟ սրսկելն զջուրս և զարիւնս զժողովրդեամբն նշանակեին, ևն. Գրիգ.

Ի ներգոյականն զոր օրինակ, " Որ 'ի սկզբան օրէնադրէր պահոցն 'ի դրախտին ". Շար. Ուր 'ի դրախտին է խնդիր բնութեան օրէնադրելն. որ աստ փոխանակ գոյականի դնի. իսկ խնդիր սեռին 'ի բարդութեան տեսանի.

այլ պահոցն է յատկացուցիչ․ որպէս թէ ասէր, որ 'ի սկզբան եդիր զօրէնս պահոց 'ի դրախտին ։

Նախադրութ․ զոր օրինակ, " Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո տէր՝ պատուեցեր զմեզ „ այսինքն ստեղծանելով ըստ պատկերի քո․ Ճառ ։

Իսկ անուանք հրաժարականացն հաղորդք առնուն զբացառական խնդիր սեռի․ զոր օրինակ, " Օտարացեալն 'ի տուանց մեղացն դիւրեր կոչէ „․ Լամբ ։ Որ բացառական հոլովս 'ի տուանց մեղացն է խնդիր սեռի կրաւորականահաղորդ բայանուանս օտարացելոյն ։ [illegible] նուն խնդիրն առնուն եւ ներգործականաց իւրեանց ։

Կանոն․ Գ ։

Անուանք չէզոքականաց հաղորդք յայնպիսի՝ հոլով առնուն խնդիր յորպիսի պահանջեն բայքն՝ որոց հաղորդքն ։

Ի վերջահոլով տրականն․ զր̄, " Ակնկալութն վարձուցն հատուցման՝ ընդարձակէ զոգիս 'ի գործս բարութ „․ Կոչ ։ Որ բառս հատուցման վարձուցն՝ է տրական խնդիր ակնկալութեանն․ որպէս թէ ասէր, ակնունելով հատուցման վարձուց՝ ընդարձակէ զոգիս 'ի բարեգործութիւս ։

Ի նախդրիւ տրականն․ զր̄, " Ո՞ այլ զտապանակն տն̄ արար գերի այլազգեաց, թէ ոչ քահանայիցն առ 'ի պաշտօն իւրեանց հեղգութիւնն „․ Լամբ ։ Որ բառս առ 'ի պաշտօն իւրեանց է խնդիր հեղգութեանն․ որպէս թէ ասէր․ ո՞ այլ զտապանակն տն̄ գերի արար այլազգեաց, եթէ ոչ հեղգանալն քահանայից առ պաշտօն իւրեանց ։

Ի բացառականն՝․ զր̄, " Հասանէ նմա կէտ հրաժարման 'ի կենացս „․ Յովհ․ կաթ ։ Որ 'ի կենացս է բացառական խնդիր հրաժարման, որպէս թէ ասէր․ հասանէ նմա կէտ վճարելոյ 'ի կենաց ։

Ի պատմականն (այլ 'ի սակաւս․) զր̄, " Յաւիտեան է մեր զնմանէ գոհութիւն, որպէս և շնորհն „․ Լամբ ։ Որ զնմանէն է պատմական խնդիր գոհութեանն ։

Ի պարառականն (այլ 'ի կարի սակաւս․) զոր օրինակ, " Թագաւորէին մեզ 'ի ժամանակէ անտի յանցուածոյն Ադամայ զպատուիրանն,,. Մծէ. Որ պարառական հոլովս զպատուիրանն է խնդիր յանցուածոյն ։

Ներգործականն. որ, „Խոստացաւ զերանութիւն և զհանգիստ յարքայութեան իւրում,,. Մծէ. Որ բառս յարքայութեան է ներգործական խնդիր հանգստեան ։

Ի ձեռն նախադրութեան. որ, „Որդի հօր ասելով զբնութենակցութիւն ընդ հօր յայտ առնէ,,. Խոսրով. Որ ընդ հօրն՝ է նախադրութեան խնդիր բնութենակցութեան ։ Ըստ այսմ է և յայլ բազումս ։

Նշանակելի է, զի ոմանք յայսպիսի անուանց երբեմն հանդերձ բուն խնդրով իւրեանց առնուն նաև զայլ խնդիր. որ, „Որ առաքեցեր նախընթաց քում գալստեան որ զմարգարէսն աւետարանել տիեզերաց զէջմանքն ՚ի հայրական ծոցոյ ՚ի փրկութիւն տիեզերաց,,. Շար. Որ անունս էջման առեալ է զերկուս խնդիրս՝ զբացառական, այս է ՚ի հայրական ծոցոյ, և զնախդրիւ տրական, այս է ՚ի փրկութիւն տիեզերաց ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց. կամ

Յաղագս խնդրոյ ածականաց ։

Համաձայնութիւն գոյականաց ընդ ածականաց ոչ այլ ինչ է բայց եթէ լինելն գոյականաց՝ խնդիր ածականաց. զի որպէս գոյական անուանք ունելով զհաղորդութիւն ընդ բայից՝ առնուն զխնդիր ՚ի պէսպէս հոլովս, սոյնպէս և բազումք յածականաց, վասն ունելոյ զհաղորդութիւն ինչ կամ զվերաբերութիւն առ բայս՝ առնուն զխնդիր ըստ կանոնաց խնդրառութեան գոյականացն. որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ ։

Նշանակելի է, զի որպէս ասացաք զգոյականաց, սոյնպէս և ածականք ոչ միայն զգոյական անուանս առնուն իւրեանց խնդիր, այլ և ՚ի տեղի նոցա երբեմն զածականս իբր զգոյականս, և զդերանուանս, և ըզգերբայս, եւս և զընդունելութիւն · զորոց զօրինակսն կարես տեսանել զկնի :

Կանոն · Ա :

Ածականք ներգործականահաղորդք ունելով զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց 'ի օղ առնուն զխնդիր սեռի 'ի սեռական հոլովի · որ̅պ, " Եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգորդք երկնից խորանաց ,, · Շարակ :

Ուր սեռական հոլովս խորանաց երկնից է խնդիր սեռի անուանս ժառանգորդք :

Երբեմն ոմանք յայսպիսի ածականաց, այլ սակաւք յոյժ՝ առնուն զհայցական փոխանակ սեռականի · որ̅պ, " Գտիչք չարեաց, զծնօղս անարգօղք ,, · Հռովմ :

Այլ գիտելի է, զի բարդ ածականք բաղում անգամ 'ի բարդութեան ունելով զխնդիր սեռին առնուն միայն զխնդիր բնութեան յայլ հոլովս · որ̅պ, " Հրամանահան յընդհանուր եկեղեցիս քոյ ,, · ա̅յ հանող զհրաման յընդհանուր եկեղեցիս քոյ · Ագաթ :

Կանոն · Բ :

Ածականք ներգործականահաղորդք բաց 'ի խնդրոյ սեռի առնուն երբեմն նաև զխնդիր բնութեան յայնպիսի հոլով յորպիսի պահանջեն բայքն՝ ընդ որոց ունին զհաղորդութիւն · որ̅պ, " Գործակից է առն իւրում ա̅մ բարեաց ,, · Առակ : Ուր բառս ա̅մ բարեաց է խնդիր սեռի գործակցին · իսկ բառս առն իւրում է խնդիր բնութեան 'ի տրական հոլովի · որպէս թէ ասէր գործող է ա̅մ բարեաց ընդ առն իւրում :

" Ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան ,, · Նար :
Ուր 'ի հեղձմանէ ալեացն է բացառական խնդիր պահապանին · որոյ խնդիր սեռին գնի զօրութեամբ · որպէս թէ ասէր · պահպանող մարդկան 'ի հեղձմանէ ալեաց կենցաղոյս :
Ժառանգաւոր հին օրինացն արդարութեան ընդ մարգարէից ,, · Շար : Ուր բառս արդարութեան հին օրինաց՝ է

խնդիր սեռի ժառանգաւորէն. իսկ բառս ընդ հարգարելոց է խնդիր բնութեան նախադրութեամբս ընդ։ Երբեմն ևս առանց խնդրոյ սեռի. օր̄, “Աւետաւոր հայոց մեծաց„. Շար։ Ուր հայոց մեծաց է տրական խնդիր աւետաւորին. իսկ խնդիր սեռին զօրութեամբ դնի. որպէս թէ ասացեալ էր. աւետօղ բարեաց առ հայս։

Կանոն. Է։

Ածականք կրաւորականահաղորդք ունելով զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց 'ի լի կամ'ի եալ, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովն. զոր օրինակ, “Եղեգն շարժուն 'ի հողմոյ„. Ղուկ։ Ուր բառդ 'ի հողմոյ է խնդիր շարժունին. ոպ̄ թէ ասէր. շարժեալ 'ի հողմոյ։

“Յերևելի զգայութեանցս անճառելւոյն՝ առնել հաղորդս„. Շար։ Ուր բառս յերևելի զգայութեանցս՝ է խնդիր բառիս անճառելւոյն. որպէս թէ ասէր. առնել հաղորդ այնց, որք ոչ ճառին յերևելի զգայութեանց։ Իսկ զխնդիր բնութեանն առնուն ըստ ներգործականացն։

Կանոն. Ը։

Ածականք չէզոքականահաղորդք հասարակօրէն զայնպիսի խնդիր առնուն զորպիսի պահանջեն բայքն՝ ը̄ որոց ունին զհաղորդութիւն։

Ոմանք առնուն զվերջահոլով տրական. օր̄, “Գովութեան արժանաւոր այն բժիշկ է, որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել„. Սարգ։

Ոմանք զնախդրիւ տրական. օր̄, “Բնութեամբ մարդսիրող է բանի, որպէս պատուեցաւ յարարչէն, և արտաբերիչ 'ի խօսս„. Սարգ։

Ոմանք զբացառական. օր̄, “Մահն ազատ 'ի մահուանէ՝ արձակէ զմահու ըմբռնեալսն„. Մամբրէ։

Ոմանք (այլ սակաւք) զպատմական. օր̄, “Փանձրամիտք էին փարիսեցիքն, և անգէտք զհոգեկան խընդրոյն„․ Նանայ ։

Ոմանք զգործիական․ զր̃, „Ամբողջքն անդամօք անկարօտք են բժշկութե̃„․ Նար ։

Ոմանք զներգոյական․ զոր օրինակ, „Քաջողջք 'ի հաստատութե̃„․ Նար ։

Ոմանք 'ի ձեռն նախադրութե̃․ զոր օրինակ, „Թողեալ են չարք խառն ընդ բարիս յաշխարհի աստ„․ Մծբ ։

Նաև աստ գիտելի է, զի ածականք չէզոքականահաղորդք երբեմ̃ն բաց 'ի բուն խնդրոյն առնուն նաև զայլ խնդիր․ զր̃, „Երկնայնոցն 'ի յերկրի հաղորդ ճըգնութե̃ ․․․ ո՞ք գանիւել„․ Շար ։ Ուր երկնայնոցն է բուն տրական խնդիր հաղորդին․ իսկ ճգնութեանն և 'ի յերկրին՝ են երկրորդական և պատահական խնդիրք նորա ։ „Ես ինձէն անձամբ իմով ընծայագրաւ 'ի մահ„․ Նար ։ Ուր 'ի մահն է բուն խնդիր ընծայագրելին․ իսկ բառս անձամբ իմով՝ է երկրորդական խնդիր նորուն․ „Ի հաւատս բանից և 'ի պատմութիւն խօսից հաւատարիմք իրերաց․ և 'ի հաւատոյն՝ որ առ ած̃, միմեանց անհաւանք„․ Լամբ ։ Ուր իրերացն է բուն տրական խնդիր հաւատարմին․ իսկ 'ի հաւատս բանից են՝ երկրորդական խնդիր նորին ։ Այնպէս և միմեանցն է բուն տրական խնդիր անհաւանին․ իսկ 'ի հաւատոյն է երկրորդական խնդիր նորա ։

Գիտելի է դարձեալ, զի ածական անուանք բաղադրեալք մասնկամբս ան, թէպէտ ըստ բնութե̃ իւրեանց զայլ խնդիր պահանջեն, բայց իբր 'ի բազումս առնուն զբացառական ։ զոր օրինակ, „Քահանայք ․․․ անպարտք 'ի հաւատոց„․ Մամբրէ ։

Նաև ևս գիտելի է, զի ածական անուանք ինչ՝ որք նշանակեն զհայրենիս, հասարակօրէն առնուն զխընդիր 'ի գործիական կամ 'ի բացառական հոլովս․ զոր օրինակ, „Վարբակէս՝ գաւառաւ մեդացի ․․․ յինքն յանկուցանէ զպարսս„․ Խոր ։ Ուր գաւառաւն է գործիական խնդիր բառիս մեդացի ։

„Եգիտ հրեայ զոմն անուն Ակիւղաս յազգէ պոնտացի,,. Գործ. Ուր յազգէն է բացառական խնդիր բառիս պոնտացի.

Վասն խնդրոյ ածականաց յանգելոց 'ի իչ.

Այսպիսի ածականք բղխեն 'ի ներգործական բայից. և առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն իբր զխնդիր սեռի. զոր օրինակ, "Ի գերեզման իջեր խափանիչ մահու,,. Շար. Ուր սեռական հոլովդ մահու լեալ է խնդիր սեռի ածական անուանս խափանիչ. Եւ այս յաճախեալ է 'ի գիրս.

Բայց երբեմն փոխանակ սեռականի առնուն զհայցական. զոր օրինակ, "Ետուն մեզ զգեղմն ընդունիչ զցօղն երկնային,,. Շար. Ուր հայցական հոլովդ ցօղն երկնային է խնդիր բառիս ընդունիչ, որ լեալ է ածական գեղմանն. Այսպիսի ածականք ուրեք ուրեք հանդերձ սեռական կամ հայցական խնդրով առնուն նաև զայլ խնդիր՝ յայլ հոլովս իբր զխնդիր բնութե̃.

Ի վերջահոլով տրականն. զոր օրինակ, "Ոչ մատնեցեր ամօթոյ շնորհիչին զքեզ տանջանաց մահու,,. Նարեկ.

Ի նախդրիւ տրականն. զոր օրինակ, "Համոզիչ 'ի խաղաղութի̃ մրրկածուփ շարժմանց կացուցար,,. Նարեկ.

Ի բացառականն. զոր օրինակ, "Ի նմա հանգեաւ... տապանն ապրեցուցիչ 'ի հոսանաց մեղաց հայաստան ազանց,,. այսինքն որ ապրեցոյցն զազինս զհայաստանեայց 'ի հոսանաց մեղաց. Շար.

Ի գործիականն. զոր օրինակ, "Քաղցրաձայն հնչմամբ դարձուցիչ մոլորեալ հօտին,,. Շար.

Ի ներգոյականն, և այն իբր ըստ պատահման. զոր օրինակ, "Յահաւորն ատենի յայտնիչ խրատամբք զմատակարարութիւն որ առ մեզ,,. Նար.

Ի ձեռն նախադրութե̃. զոր օրինակ. "Աղօթքն է... զա̃ծ ը̃ մարդկան հաշտեցուցիչ.,, Սարգ. ա̅. պետ. է̅.

Գտանին և քանի մի ածականք սակաւք յոյժ այսպիսի վերջաւորութ̃ բղխեալք 'ի չէզոքական բայից. որք են բառքս, ննջիչ, կարօտիչ և սպասաւորիչ. որք երբեմն առնուն զխնդիր ը՟ բայիցն, և երբեմն փոխանակ նոցին զսեռական. զոր օրինակ. «Բնակիչք 'ի խաւարի տեսաք զլոյս գիտութեան եկեալ հասեալ». Խոսրով։

«Ընդարձակասուն բնակիչք ծիւնեղէն լերանց՝ եղէն բնակիչք խորշակաբեր դաշտաց». Ներսէս։

Վ՟ խնդրոյ ածական անուանց բաղդատականաց։

Սոքա չորեքկին առնուն զխնդիր։ Երբեմն զսեռական, կամ զտրական. ո՟ր, «Վեհագոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից». Շար։

Ուր բառքդ վերոյիշեալդ և ներքոյիշեալդ են խնդիր վեհագոյն բառին։

Երբեմն զբացառական. ո՟ր, «Օ դաժանագոյնն 'ի կենդանեաց զօձն՝ դնէ օրինակ իշխանին մահու». Իգն։

Ուր բացառական հոլովս 'ի կենդանեաց է խնդիր դաժանագունին։

Երբեմն զներգոյական. ո՟ր, «Ծանուցար վեհագոյն 'ի սիրողս իմաստութե՟». Շնորհ։ Ուր ներգոյական հոլովդ 'ի սիրողս իմաստութե՟ է խնդիր վեհագունին։

Երբեմն ևս և բազում անգամ նախադրութ՟բս քան, և ուրեք ուրեք ևս նախադրութեամբս 'ի վեր. ո՟ր, «Թէ և քան զգազանս խստագոյն իցէ, քան զուղխարսն հանդարտագոյն լինիցի». Շնորհ։

Ընթեռնուլ արժանաւորեցաք (զբանս առն)... 'ի մէջ իմաստնոց երանելագունի». Խոր։

Գիտելի է ևս, զի բազումք յածականաց ուրեք ուրեք իբր բաղդատական վարելով ը՟ բաղդատական անուանց առնուն զխնդիր. զոր օրինակ, «Թագաւորայ վեհափառ, որ ոչ ցուցաւ 'ի դարս». ո՟ր Թագաւորաց վեհափառագոյն. Շար։

«Գիտեա, ասէ, ո՛վ մեծդ գիւցազանց, զի դիմեալ գայ 'ի վերայ քո Բէլ». այսինքն մեծագոյնդ գիւցազանց. Խոր։

«Խաբեն զարդարեալս 'ի մարդկանէ». Իգնատ։

«Տատրակ... խաղաղիկս 'ի հաւս վայրենիս». Ներսէս։

« Յիմար է՝ որ ընդ վեհօք զինքն հակառակէ ». Պետրոս։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց։

Ածական անուանք յարելով 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութիւն իրացն, զորս գոյականքն նշանակեն. որպէս յայտ է 'ի գրելոց յերկրորդ մասին. Գլ. Է։ Եւ քանզի պէսպէս յարին սոքա 'ի նոսա, պէսպէս համաձայնին ընդ նոսին. որոց վասն գիտցուք զվեց կանոնս։

Կանոն. Ա.

Ածական անուանք յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. օր., « Որդւոյ նենգաւորի բարի ինչ մի եղիցի ». Առակ։ Ահա 'ի սմին ածական անուանդ նենգաւորի՝ համաձայնեալ է ընդ գոյականի իւրում, այսինքն ընդ բառիս որդւոյ՝ թուով և հոլովիւ. զի որպէս որդւոյն է եզական, և վերջահոլով տրական, սոյնպէս և նենգաւորին։

Սոյնպէս ևս եթէ բազումք իցեն յետադաս ածականքն, պարտին համաձայնիլ ընդ գոյականին թուով և հոլովով զոր օրինակ, « Եցոյց՝ եթէ ուստի ո՛ւր խոնարհեցաւ և էջ վասն մարդկան մեղաւորաց անարժանից ». Սարգ։

Այլ գիտելի է նաև, զի սակաւ ուրեք յետադաս ածականք 'ի նախդրիւ հոլովս՝ և յուղղականս յոգնական անուանց դնին երբեմն անհամաձայն. օր., « Զպսակս անապական 'ի քէն ընկալան ». փոխանակ դնելոյ, զպսակս անապականս. Շար։

Երբեք ուրեք ևս յերգս և յոտանաւորս նաև 'ի վերջահոլովսն վասն յարմար ձևացուցանելոյ զոտս բանիցն. զոր օրինակ, « Ետես մովսէս զօրինակ կուսին 'ի սինա լցեալ լուսովն անմատոյց ». այսինքն անմատոյց լուսով. Շար։

Դարձեալ գիտելի է, զի ածականք յանգեալք 'ի եայ և եան իբր անհոլով գոլով, 'ի յետադասիլն՝ հասարակօրէն ոչ համաձայնին ընդ գոյականացն. պ՟ր,
“ Բարլինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ ընդդէմ Գողիադու „. Նար։

Ըստ այսմ է և 'ի յազգային և 'ի տոհմային ածականս. զոր օրինակ,
“ Տունկք տենչալիք տանս Թորգոմեան „. Նարեկացի։

Կանոն Է։

Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց, ոչ համաձայնին ը՟ նոսա ոչ թուով և ոչ հոլովիւ. այլ դնին պարզապէս, որպէս էին յուղղական հոլովին. պ՟ր, “ Անապական պսակաց արժանի եղեն „. Շար։ Ահա 'ի սմին ածական անունս անապականն նախադասեալ գոյական անուանս պսակաց, ոչ իւիք համաձայնեալ է ը՟ նմա. զի պսակացն է տրական հոլով, և յոգնակի. իսկ անապականն է ուղղական և եզակի։

Նոյնպէս է և յորժամ նախադաս ածականքն իցեն բազում. պ՟ր, “ Աներկեայ և անպղտոր ոգւով դրօշմեսցուք զմեզ „. Խոսրով։ Ուր ածականքս աներկեայ և անպղտոր առանց համաձայնութե՟ նախադասին գոյական անուանս ոգւոյ։

Այլ գիտելի է նախ, զի ածականք միավանկք նաև երկավանկք՝ որպիսի են, մի, այլ, մեծ, փոքր, նոր, հին, ամէն, ողջ, յոգնագոյն, բազում, բոլոր, ամ՟ն, բազում անգամ 'ի նախադասիլն համաձայնին ը՟ գոյականաց թուով և հոլովիւ, զոր օրինակ.
“ Միով հոգւով զօրացեալքս վիմարդ 'ի միմեանց խորշիմք „. Լամբրոնացի. 'ի ճառն կարգ. եկեղ։
“ Յամենայն պատուիրանս իւ՟ր կամաւոր գործելն է գովութե՟ արժանաւոր, և մեծաց վարձուց առիթ „. Մագ։
“ Բոլորով սրտիւ եկի առ քեզ աստ „. Մագ։

Նոքա ուրեք ուրեք միայն հոլովիւ համաձայնին անեզական անուանց, և ոչ թուով. զոր օրինակ,

“Տեսե՛ր զարհաւատչեայն նորոյ շնորհացս, եթէ ուստի՞ սկսաւ և ո՞ւր կատարեցաւ”. Սարգիս:
“Մեծի աւետեաց եղև միջնորդ (Գաբրիէլ)”. Լւգնաւ:
“Զմեզ նորոգել՚ի հնոյ մեղաց”. Շար:
Ուրեք ուրեք նաև յոգնավանկ ածականք, մանաւանդ յանգեալքն 'ի գոյն՝ համաձայնութ՟ նախադասին գոյականաց՝ ը՟ պահանջելոյ վայելչութե՟ բանին այլ 'ի սակաւս. որ՟, “Ոմանք ճայելլագործութեանց սովորութե՟ց ջանան խափանումն 'ի վերայ բերել”. Յովհ. Իմաստ:

Կանոն. Գ:

Եթէ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականին անկցի բայ՝ կամ ընդունելութի՟, ածականն իբր 'ի բաղումս համաձայնի ը՟ գոյականին թուով և հոլովիւ. զոր օրինակ, “Առաքելականացն աշակերտեցան բանից”. Գրիգոր Նար: Ուր ածականս առաքելականացն համաձայնեալ է թուով և հոլովիւ գոյական անուանս բանից վասն ընդ մէջ անկանելոյ բայիս աշակերտեցան:
Այլ երբեմն առանց համաձայնութե՟ դնի. զոր օրինակ, “Համակերծեան կարօտանամ մեքենայից”. Լամբ:

Կանոն. Դ.

Եթէ նախադաս ածականն ունիցի զդիմորոշական տառ, երբեմն դնի համաձայն յետադաս գոյականին, և երբեմն անհամաձայն, ը՟ պահանջելոյ բառիցն, և ը՟ վայելչութե՟ բանին. զոր օրինակ, “Ոչ յօժարութ՟ ունկնդիր լինել վնասակարացն բանից. այլ օգտակարացն”. Շնորհ: “Արբուսցուք ծարաւեաց չափաւորապէս 'ի ծայրածաւալն ծովէ գոյզն ինչ ճաշակ”. Շնորհ:

Կանոն. Ե:

Եթէ նախադաս գոյականքն իցեն բաղում յատուկ անուանք եզականք, յետադաս ածականքն թէ մի իցեն՝ և թէ բազում, պարտին լինել ըստ թուոյն յոգնական և ը՟ հոլովին համաձայն. զ՟ր, “ Խորանօք բնակեաց սահակաւ և յակոբաւ հանդերձ ժառանգակցօք նոցին աւետեաց ”. այսինքն հանդերձ սահակաւ և յակոբաւ ժառանգակցօք այնց աւետեաց. Եբր։

Այնպէս և 'ի նախադասին եթէ ունիցին զդիմորոշական տառ, համաձայնութ՟ դնին. զոր օրինակ, “ Դու ա՟ծ ոչ եդեր ապաշխարութի՟ վասն արդարոցն աբրահամու, իսահակայ և յակոբայ, որք ոչ մեղան քեզ ”. Մանասէ։

Կանոն. Է՟։

Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականի, նախդիրն դնի 'ի վերայ ածականին. զոր օրինակ, “ Աղաչեմ զամենեսեան զարթնուլ 'ի մահահրաւէր թմբրութէ կենցաղոյս ”. Շնորհալի։ Աստ նախդիրն բացառական հոլովոյս 'ի թմբրութէ եդեալ է միայն 'ի վերայ նախադաս ածականի նորա, այսինքն 'ի վերայ մահահրաւէրին։

Նաև եթէ նախադաս ածականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, զնախդիրն պարտ է դնել 'ի վերայ ամ՟ ածականաց. զոր օրինակ, “ Զանօգուտ և զվնասակար բանս ոչ տալ խօսել լեզուի՛ն, այլ՝ լռել ”. Շնորհ։

Իսկ եթէ յառաջ քան զշաղկապաւոր ածականսն կայցէ բառ ինչ, որպէս դերանուն. կամ միջական անուն. ևն, յորոց վերայ իցէ եդեալ նախդիրն, ոչ ևս է հարկ միշտ կրկնել զայն 'ի վերայ յաջորդ ածականաց զո՛ր օրինակ, “ Ուրեմն 'ի ձեռոց ստայօդ և չարաթոյն բանից մոլորեալ են 'ի պանրոյ հայոց զգուշանալ ”. Շնորհ։

“ Յամ՟ աղտաղտուկ և ալեկոծ փորձանաց մեկուսի բընակեալ ”. Լամբ։

“ Վայրենացեալ յառաջին ընտանի և խաղաղ բնու՟էն՝ կո՛հակս լեռնաձևս յարուցանէ ”. Սարգ։

“ Որոց պատուիրեմք յայսմհետէ 'ի բաց կալ յայդպիւէ աներկիւղ և չար սովորութեանց „. Շնորհ։

Այլ եթէ նախընթաց ածականքն իցեն առանց շաղկապի, նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վերայ առաջնոյն միայն. ո͞ր, Հրաժարեցոյց 'ի հեթանոսական անկարգ շատխօսուէն „. Իգնատ։

“ Բժշկեա՛ զհրատապ ջերմնական տօչորումն մղձկեալ սրտիս „. Եփրեմ։

“ Իբրև բազմութի զօրաց զմեծանիստ լայնատարած դաշտովքն իջանեն (մարախք) „. Սեւեր։

Իսկ եթէ յետադաս գոյականքն իցեն բազումք յօդեալք շաղկապաւս և, նախդիրն դնի ոչ միայն 'ի վերայ ածականին, այլ և 'ի վերայ երկրորդ գոյականին, և հետադայից նորա. ո͞ր, “ Զպատշաճ կարծիս և զգիտութի վասն նորա ոչ ունէին „. Իգնատ։

“ Զեկամուտ չարիսն և զամբարտաւանութիւն մերկացին „. Իգնատ։

“ Զհրեշտակական կարգս և զվարս յաշխարհի յանձին առեալ բերեն „ (կուսանք). Կոչ. ընծայ։

Զայս վեցերորդ կանոն մերձեցո՛ նաև առ նախադաս գոյականս. իբր զի եթէ գոյականն նախադասեսցի ածականին, զնախդիրն պարտ է դնել 'ի վերայ գոյականին. ո͞ր, “ Զայր հաւատարիմ գործ է գտանել „. Առակ։

Այլ եթէ յետադաս ածականքն իցեն բազում, նախդիրն իբր 'ի բազումս դնի միայն 'ի վերայ նախադաս գոյականին ո͞ր, “ Զարս պատուականս և պիտանիս հաստատէր 'ի նահապետութիս „. Յովհ. կաթ.

“ Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծեր և անմիտ „. Ժողով։

“ Ունի զօրէնս խաղաղականս և փրկականս „. Եղիշէ։

“ Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ „. Ղուկ։

Իսկ երբեմն դնի նաև 'ի վերայ երկրորդ յետադաս ածականին. ո͞ր, “ Զայր զուարթ և զառատ սիրէ ա͞ծ „. Առակ։

“ Ընկալաւ . . . զկեանս տրտմական և զխստալից „. Շնորհ։

“ Տանջին 'ի ձգունս զանազանս և 'ի բազմապատիկս „. Սարգ։

Ի վախճան այսր կանոնի պարտ է գիտել, զի եթէ 'ի մէջ գոյականի և ածականի մտցէ բայ, նախդիրն պէսպէս կարէ դասիլ. զի երբեմն դնի 'ի վերայ նախադասելին միայն. որպէս, “Ի ծայրագոյնն ժամանեցաք մաքրուէ”. Լամբ։

Երբեմն դնի 'ի վերայ երկուցն ևս. որպէս, “Կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զխնամս”. Նար։

Գոյական անուանք՝ 'ի տեղի ածականաց։

Գիտելի է, զի ուրեք ուրեք գոյական անուանք ինչ իբր ածական յարին յանուանս. զոր օրինակ, “Որ ապառաժ սիրտ... 'ի յիշատակէն զայս ոչ երկրպագէ առաջի նորա”. Լամբ։ “Սպառէր և մաշէր վշտաւր խորհուրդս նորա”. Եղիշէ։ “Օձաղան ցանկութիւն 'ի բաց վարել, և զնտանի ողջախոհութիւն անխնաս 'ի ներքս բնակեցուցանել”. Սարգ։

Սոյնպէս վարին երբեմն և անուանք ազգաց. ևս և տնկոց. որպէս, “Յոյն լեզու ուսեալ (Եղիազար) պատմագրեաց զգործսն Շապհոյ և Յուլիանու”. Խորէն։ “Որ կոչի 'ի հայ բարբառ կորուստ”. Յայսմաւ։ “Օ տունն մեծ դրուագեաց հայր փայտիւք”. Է. Ճառ։ “Առաւել պատիւ մի դնէք Եւրոպ ծառոյն քան այլ ծառոց”. Շնորհալի։

Առ սոսա վերաբերին և այնք, որք յարին 'ի բառդ անուան։ զոր օրինակ, “Եպիսկոպոսն անուն 'ի հելլենացի լեզուէ է”. Լամբ։ Ուր բառս եպիսկոպոսն դնի իբր ածական բառիս անուն, և կամ իբր բացայայտիչ։

Ըստ այսմ է տեսանել և յօրինակդ որ զկնի։ “Հոգէն անուն զանմարմին նշանակէ զէնուէ”. Շնորհ։ “Հայրդ անուն մի է հոգևորաց և մարմնաւորաց”. Եղիշէ։

Երբեմն նաև վերացեալ անուանք յատկացուցչաբար եդեալ 'ի մէջ բերեն զզօրութի ածականի. զոր օրինակ, ”Հոգի քոյ բարուէ առաջնորդեսցէ ինձ”. Կոչ. այսինքն հոգի քոյ բարի առաջնորդեսցէ ինձ.

“Անօթ ընտրութե՟ է ինձ նա„. այսինքն անօթ ընտիր. Գործ:

“Հպարտացայ հողս անարգութե՟ „ այսինքն անարգ հողս. Նար:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց:

Զորեքկին համաձայնին ը՟ միմեանս ածական անուանք. Նախ իբր ածական. զոր օրինակ, “Իմաստակ խելագար. ճարտասան անձնանէ... ունայնաբան շաղակրատ.... դժոխային ագահ„. Նարեկ. Ուր բառքս խելագար, անձնանէ, ունայնաբան և դժոխային են ածական բառից իմաստակ, ճարտասան, շաղակրատ և ագահ:

Երկրորդ իբր խնդիր. զոր օրինակ, “Ի մարմնի վարս ստացեալ անհամեմատ մարմնաւորաց„. Շար: Ուր մարմնաւորացն է տրական խնդիր անհամեմատին:

Երրորդ՝ իբր բացայայտիչ, այլ ՚ի սակաւս. զոր օրինակ, “Զներգործութ՟ի լեզուին ՚ի ներհակացն կամի ցուցանել, ՚ի բարւոյն ասեմ և ՚ի չարէն„. Սարգ: Ուր ածականքդ ՚ի բարւոյն և ՚ի չարէն լեալ են բացայայտիչ ածական անուանս ՚ի ներհակացն:

Չորրորդ՝ իբր յատկացուցիչ. այլ այս ՚ի սակաւս յոյժ. զոր օրինակ, “Յայտ արար զտնօրինականն չենարարէն„. Արեոպ. Հ՟րպ: Ուր ածական անունս չենարարէն է յատկացուցիչ ածականին զտնօրինականին:

Յայսմ ամենայնի զորս ասացաք, թէպէտ ածականք ընդ ածականս կային, բայց յամենայնի ևս զօրու՟ք դնին գոյականք նոցին, որպէս և յայտ է:

Ուրեք ուրեք ևս համարին եդեալ իբր գոյական. որպէս յասելն, “Որ ելեր ՚ի բարձրագունան քառաթևին„. Շար. ածական անունս բարձրագունան համարի իբր գոյական եդեալ. որում լեալ է յատկացուցիչ ածական անունդ քառաթևին իբր գոյական:

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս համաձայնութե̃ միջական անուանց, որք են, Թուականք, հանրականք, վերբերականք, հարցականք և մասնականք ։

Սոքա առ հասարակ թէպէտ ը̅ համաձայնութե̃ այլոց անուանց վարին, բայց քանզի ուրեք ուրեք փոքր մի այլազգ դնին, վասն այնորիկ արժան համարիմ ասել ինչ ինչ զոցանէ 'ի մասնաւորի. խօսեցեալ նախ զխնդրառութե̃ սոցին. զորմէ գիտելի է, զի 'ի մէջ սոցա հանրականքն և վերբերականքն ոչ առնուն զխնդիր. բայց եթէ գուցէ ը̅ պատահման, և կմ̃ վասն կարգի բանին ։

Իսկ թուականք, հարցականք և մասնականք հասարակօրէն առնուն զխնդիր 'ի հոլովս բացառական. զոր օրինակ, " Արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց ". Մատ ։

" Ո՞ յարարածոց ... այնպէս պատուեաց ած՝ ոպ̃ զքեզ ". Մարգ ։

" Անմեղ լինել ումեք 'ի մարդկանէ անկար է ". Լամբ ։

" Չար է նախանձ. և որք նովաւ վարակեալք են, չածեն ինչ 'ի պատշաճիցն զմտաւ ". Իգնատ ։

" Ոչ երբեք անչէր ոք յելից ը̅ իւրում ընթացիցն ուղղէ ". Լամբ ։

Ուրեք ուրեք ևս առնուն սոքա առ հասարակ ընդ-նէրգոյական. զոր օրինակ, " Չորրորդն 'ի նոսա ... 'ի կերպարանս արծուոյ ". Եզեկ. ա ։

" Չունի ոք 'ի նոսա անուն չարութե ". Հար ։

" Ո՞ 'ի նմ̃ իւրումն ոչ ծառայեաց ախտի ". Արիստակէս ։

Երբեմն ևս թուական անուանք 'ի յարկն 'ի բաղ-ըստ առնուն խնդիր զնոյն 'ի գործիական հոլովս. զոր օրինակ, " Անկան առաքեալքն առաքինիք 'ի բով անդր թուով երկոտասանք ". Ագաթ ։

" Մատունք ձեռաց նորա և ոտից վեց վեց՝ քսան և չորս թուով ". Բ̅. Թագաւորաց ։ Մատիցուք այժմ խօսել զայսմանէ 'ի մասնաւորի ։

Վասն Թուական անուանց:

Սոքա առ հասարակ միշտ իբր ածական վարին. և ը̄ իմիք ը̄ կանոնի ածականաց համաձայնին ը̄ գոյականաց, յորս յարին. վասն որոյ կամեցեալ համառօտիւ անցանել զսոքօք՝ պարտ է գիտել, զի 'ի մէջ սոցա բացարձակքն, որպէս Մի, երկու, տասն, երկոտասան, քառասուն, եօթանասուն, հարիւր, երկերիւր և այլն, յորժամ յետադասին գոյականաց՝ հասարակօրէն համաձայնին ը̄ նոսա. զր, “Երևեցաւ աշակերտաց իւրոց երկոտասանիցն”. Շնորհ. ընդհանր:

Բայց երբեմն և ս առանց համաձայնութե̄ դնին. զոր օրինակ, “Մերձ է յեէմ իբրև ասպարիզօք հինգ”. Բ. Մակ:

Նաև 'ի նախդրիւ հոլովս գրեթէ միշտ անհամաձայն դնին. զր, “Յետ Արշակի Թագաւորէ Արշակ ամս չորեքտասան, Արտաշէս ամս քսան”. Խոր:

Իսկ 'ի նախադասելն հասարակօրէն ոչ համաձայնին. զր, “Զկնի երեսուն ամաց սպան Կայէն զՀաբէլ”. Զափար. Հար:

Ուրեք ուրեք և ս համաձայնութ̄ դնին. զր, “Եկն 'ի յորդանան 'ի լրումն երեսնից ամաց”. Շնորհ:

Թուական անուանք դասականք, որպիսի են՝ Երկրորդ, երրորդ, եօթներորդ, մետասաներորդ, ևն, յորժամ յետադասին անուանց՝ միշտ համաձայնին ը̄ նոսա. զոր օրինակ, “Յամսեանն տասներորդի որ օր առաջին էր ամսոյն, երևեցան գլուխք լերանց”. Ծննդոց:

Իսկ յորժամ նախադասին, իբր 'ի բազումս անհամաձայն դնին. զոր օրինակ, „Յերրորդ ժամուն ստեղծաւ ադամ”. Խոսրով:

Նաև երբեմն համաձայն. զոր օրինակ, “Ի հինգհարիւրերորդի ամի (կենաց Նոյի) սպառնալիք պատուհասին ելանէին յա̄յ. և 'ի վեցհարիւրերորդի ամի անդ ջրհեղեղն հասանէր յաշխարհ”. Կոչ. ընծայ:

Թուական անուանք ամբողջականք, որպիսի են Եր-

կոքեան կամ երկոքին, չորեքեան կամ չորեքին, եօթանեքեան, տասնեքեան, եւն, հասարակօրէն համաձայնութի̄ գոյականաց վարին․ թէ 'ի նախադասին եւ թէ 'ի յետադասին․ որ, " Զի ոչ եթէ երկոքումբք ոտիւք կաղայցէ ոք, եւ ոչ յայտ լիցի ,,․ Խորեն։
" Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն ,,․ Է․ Մակաբ։

Թուական անուանք հաւաքականք, որք են Երրեակ, չորրեակ, եօթնեակ, ութեակ, յիսնեակ, եւն, եւս եւ կրկնականք, որք են Երեքպատիկ, տասնպատիկ, քսանապատիկ, եւն, հազիւ երբեք յետադասին գոյականաց․ այլ հասարակօրէն նախադաս լինելով յարին 'ի նոսա առանց համաձայնելոյ ընդ նոսա․ զոր օրինակ․ " Տօնեմք (զվարդավառն) յեօթներորդում ամսեանն ըստ յաւիտենից ըստ այսմիկ եօթնեկին շրջագայութեան ,,․ Խոր․ Վարդ։
" Հատուցանէր զդարձ փոխարինին տասնպատիկ յաւելուածով ,,․ Յովհ․ կաթ։

Վասն հանրական անուանց ։

Հանրական անուանք որք են ամենեքեան եւ ամենեքին, ը̄ որս են եւ բոլորեքեան եւ բոլորեքին որք եւ իբր ածական վարին, հասարակօրէն ինքնին 'ի գործածին՝ զօրութե̄ ունելով զգոյականն․ զոր օրինակ, " Որ ամենեցունց իշխէ՝ յամենեցունց դողայ ,,․ Սար։
" Տեառնեն … զդատաւորն ամենեցուն քս̄ նստեալ ընդ աջմէ հօրն բոլորեցուն ,,․ Իգնատ։

Իսկ 'ի յարելն յանուանս եւ յընդունելութի̄ս՝ եւ մանաւանդ 'ի դերանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասին եւ թէ 'ի յետադասին․ զոր օրինակ, " Զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից ,,․ Նար։
" Զամենեսեան զնոսա այսու միով բանիւս աւետաւորէ ,,․ Խորեն։

Նաեւ գիտելի է, զի յաճախ գործածութի̄ հանրական անուանց ը̄ անուանց՝ ծանրացուցանէ զընթացս բանին. վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբառդ ամենայն. զորոյ զգործածութ՟է արժան է գիտել, զի սա յորժամ յարի յեզակի ցուցական դերանուանս, միշտ և յամ՟ի համաձայնի ընդ նոսա. զոր օրինակ, “Վասն այսր ամ՟ ածցէ զքեզ ած՟ 'ի դատաստան”. Ժողով։

“Ի վերայ ամ՟ այսորիկ անսա՟ս տ՟ր”. Եսայ։

Եւ յորժամ 'ի յոգնականս յարի, ըստ Թուոյն եզական դնի. զի ըստ նշանակութ՟են գոլով բազմաւորական՝ եզական ձայնիւ յոգնական համարի. որ՟, “Այսոցիկ ամ՟ ապերախտ գտան”. Իգնատ։

„Դու ես տ՟ր և գլուխ նոցա ամ՟”. Վարք հարց։

Իսկ յորժամ նախադասի անուան կամ ընդունելութ՟ե, ոչ համաձայնի ընդ նոսա. որ՟, “Ամենայն պարծանաց պարծանք խոնարհութ՟ին է”. Վարգ։

Այլ 'ի յետադասելն՝ 'ի յեզականսն համաձայն դնի. որ՟, “Առն ամենայնի գլուխ Քս՟ է”. Ա. Կորնթ։

Իսկ 'ի յոգնականսն՝ անհամաձայն դնի ը՟ Թուոյն. զոր օրինակ, “Արարածոցս ամենայնի արար խաղաղութ՟ի”. Վարգ։

“Դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի”. Նար։

“Առեալ զգլխաւորսն ժղ՟վ չուէ 'ի մծբին”. Խոր։

Այլ գիտելի է, զի սա յորժամ նախդրիւ հանդերձ լինի՝ ածական, նախդիրն երբեմն կրկնի 'ի վերայ իւր և 'ի վերայ այնր՝ յոր յարի. որ՟, „Առնիցես զարդարութ՟ի յամենայն 'ի կեանս քո”. Տոբ։

“Եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն 'ի մէնջ 'ի բաց բարձցուք”. Եզեկ։

“Զհպարտութ՟ի զամենայն 'ի բաց ընկեցուք”. Եբր։

Վասն Վերբերական անուանց։

Վերբերական անուանք, որք են այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, և՟ն, իբր ածական վարին, և 'ի յետադասելն միշտ համաձայնին ըստ կանոնի ածականաց, թէպէտ և հազիւ ուրեք է յետադասիլ սոցա։ Իսկ 'ի նա-

խառնասիլն ընդ 'ի բազումս անհամաձայն դնին . որ,
“ Բաղձամ տեսանել այսպիսի տնկոյ ”. Մագիստ :
“ Պարտիմք լինել արթուն, զի լինիցի մեզ յայսքան
վտանգից զերծանել ”. Իգն :

Իսկ երբեմն համաձայն դնին 'ի վերջահոլովս . զոր
օրինակ, “ Ի բաց լերուք յայդպիսեաց ոչխարազգեստ
գայլոց ”. Ներս :
“ Զիա՛րդ բժշկեսցես, անձն իմ եղկելի, 'ի յայսքանեաց
տիգաց խոցոտեալ ”. Նարեկ :

Դարձեալ՝ եթէ անկցի 'ի միջի բայ, ընդ 'ի բազումս համաձայն դնին . որ, „ Որք այսպիսեօք վարին
խորհրդովք ... զամենայն տուժեցան ”. Իգնատ :
“ Յայսքանեացս սա որոշեալ պատշաճագոյն յարմարութեանց ”. Պիտոյից :

Ասացի 'ի վերոյ՝ 'ի վերջահոլովս . զի 'ի յուղղական և 'ի նախդրիւ հոլովս յոգնականին ոչ երբեք համաձայնին . զի ոչ լինի ասել այսպիսիք բանք, յայնպիսիս իրս, զայսքանս ժամանակս, են . այլ այսպիսի բանք, յայնպիսի իրս, զայսքան ժամանակս, են :

Վասն հարցական անուանց :

Հարցական անուանք, որք են ո՞, ո՞վ, զի՞նչ, ի՞նչ, ո՞ր, ո՞րքան, քանի՞, որպիսի՞, զինչպիսի՞, պէսպէս վարին. և նախ 'ի մէջ սոցա բառքս ո՞ և ո՞վ, յորժամ 'ի գործ ածին ընդ անուն հարցական, ընդ գոյական վարին . որ, “ Ո՞ կարէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակման ”. Եղիշէ :

Իսկ վասն այլոց հարցականաց գիտելի է, զի ի՞նչ երբեմն հանդերձ բայիւ վարի ընդ գոյական կամ ընդ նոյն . որ, “ Զի՞նչ իցէ, որ լինելոց իցէ ”. Իգնատ :
“ Եւ արդ զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ ”. Նար :

Եւ երբեմն յարի յանուանս ընդ ածական առանց հոլովման . որ, “ Զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւօք ուտիցեմ ”. Նար :

Ըստ այսմ և հարցական անունս ի՞նչ երբեմն ընդ գոյական վարի առանձինն, և երբեմն ընդ ածական յարի յանուանս . օր՟, « Իւ արդ զի՞նչ կային այս ամենայն արթնութ՟ե պէտք » . Իգնատ :

« Ծածկէ (բանսարկուն) խաբէութ՟ք իւրով զսկիզբն բարւոյն և չարին, եթէ ուստի՛ և զի՞նչ իրս գոյանայ » . Սարգ :

Իսկ հարցական անուանքս ո՞ր, ո՞րքան, քանի՞, որպիսի՞, զինչպիսի՞, որք իբր ածական վարին, հասարակօրէն նախադասին անուանց . երբեմն առանց համաձայնելոյ . օր՟, « Յո՞ր մահուանէ յորպիսի՛ կենդանութ՟ի փոխեցաք սիրելով զեղջարս » . Սարգ :

Բայց երբեմն համաձայնութ՟ք, մանաւանդ ո՞րն և ո՞րքանն . օր՟, « Որո՞մ կորստեան և գեհենի ակնկալութ՟ե ոչ է առաջի ձեր » . Շնորհ :

« Ո՞րքանեա՞ց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութ՟ի յուսոյ կենաց խառնեցիր » . Ներսէս :

« Զայսպիսի կարծրութ՟ի նիւթոյ . . . ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեա՞ց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց » . Նար :

Վասն մասնական անուանց :

Մասնական անուանք ոմն, ոք, իմն, ինչ, ընդ որս են և սոքա, մի իմն կամ մի ոմն, որ ոք, որ ինչ, ոչինչ, ինչ ինչ, ամ՟ ինչ, որ ինչ միանգամ, եւն, սոքա երբեմն ինքնին վարին 'ի բանս իբր գոյականք . օր՟, « Ոմն իշխէ, և ոմն իշխի » . Սոփրոն :

« Որ ոք զախտսն իշխանութ՟ք կարէ սպանանել, և զառաքինութ՟ս կեցուցանել, թգ՟ր արդար է » . Սարգ :

« Զոր ինչ միանգամ խոստովանի ոք, կորուսանէ, եթէ զմեղս և եթէ զարդարութ՟ի » . Սարգ :

Այլ յորժամ վարին սոքա ընդ անուանց կամ ը՟ ընդունելութ՟ց, լինին իբր ածականք մասնաւորիչք նշանակութ՟ե նոցա . օր՟, « Աշխարհ իմն է բնութ՟ս » . Իգնատ :

« Զմի ոմն դեսպան ձիովփութ անպս առաքեցին » . Եղիշէ .

« Ինչ ինչ և յաստուոյ ընկալան տեղեկութ՟ի կարգաց », որ՟ ինչ ինչ տեղեկութ՟ի . այս է, քանի մի . Լամբ .

Սոքա 'ի յետադասին անուանց կամ ընդունելութեանց, երբեմն եւ 'ի նախադասին, եթէ իբր մասնաւորիչ նշանակութեն նոցա վարեսցին, հասարակօրէն թուով և հոլովիւ համաձայնին ընդ նոսա . զոր օրինակ, " Զգաղթեալսն անդրէն դարձուցանէ . . . բայց 'ի նախարարէ ումեմնէ, որոյ անուն Օտայ կոչիւր " . Խորէն :
" Պատուասիրաց ումանց գանձս առաջի դնէին " . Յովհաննէս կաթ :
" Ոչ 'ի ժամանակի՛ ինչ, այլ ժամանակք 'ի նմանէ գոյացան " . Եղիշէ :
" Լուսոյ յումեմնէ ոչ պարտաւորէ " . Նարեկ :
Իսկ սոսա ինքն երբեմն առանց համաձայնութեն դնի . զր,
" Մեծի ինչ ցանկացար " . Կոչ :
" Նա աւանիկ ազնուականի ինչ ցանկացեալ էն " . Եփր :
" Հանէ իբր թաթաւուն ինչ ջուր 'ի ծովէն " . Սարգ :
Սա, այսինքն ինքն և բառդ ինչ բազում ուրեք իբր զարդ դնին . զր, " Այսպիսեաւ ինչ պատրաստութբ անձին հանդերձանաց կուռ վառեալ " . Նար :
" Զպատճառս հարստութեն մեք ինչ ոչ գիտեմք " . Եղիշ :

Վասն մասնական անուանցս Մին, երկաքանչիւր և իւրաքանչիւր :

Սոքա իբրածական վարին . բազում անգամ գօրութբ ունելով զգոյականն . զր, " Մին դասուն ձայնակցի 'ի յանցանելն " . Լամբ :
" Երկաքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա " . Շար :
" Իւրաքանչիւր 'ի վերայ իւրոյ արմատոյ արձանասցի " . Լամբ :
Իսկ յորժամ յարին 'ի գոյականս, հասարակօրէն նախադասին նոցա, և իբր 'ի բազումս անհամաձայն դնին . զր, " Ի միոյ կողմանէ գետոյն " . Խոր :
" Երկաքանչիւր ծայրիւք ... ծածկեալ է յեղականացս բնութեց " . Շնորհ :
" Իւրաքանչիւր գործոց հատուցմունք լինելոց է . և խորհրդոց և բանից քննութիւք " . Սարգ :

Բայց երբեմն և համաձայնութ՟ դնին. որպ՟, " Ըստ չորրորդում բանի սոյն այս յայտնի ցուցանի ". Խորեն։ " Տեսցուք զչորեքտասաներորդաց սոցա բարեբախտութիւնս ". Պետ։ " Արածելին անվեհեր փութով զհաւատացեալ հօտն յչորեքտասաներորդումն ժամանակի ". Յոհն. Կաթ. " Վասն զի չորեքտասաներորդաց նոցա չարափառութիւնք յոյժ աննմանիք են միմեանց ". Յոհն. Իմաստ.

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ դերանուանս։

Համաձայնութիւն դերանուանց ընդ դերանուանս յայսմ է, զի եկեալ սոցա առ միմեանս համաձայն թուով և հոլովիւ՝ վարին 'ի բանս իբր նոյն, այսինքն իբրև մի դերանուն։ Իսկ թէ ոյք ընդ որս յարին, գիտելի է, զի 'ի մէջ սոցա էական դերանունս ինքն՝ յարի յայլ ամ՟ դերանուանս ը՟ իւրաքանչիւր դիմաց նոցին, (բաց 'ի ստացականաց)։

Նախ յարի յէականս. որպ՟, " Զայլս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ ". Նարեկ։

Երկրորդ՝ յարի 'ի ցուցականս. որպ՟, " Սա ինքն ըզմեղս մեր բառնայ ". Եսայ։

Այնպէս յարին ընդ միմեանս նաև ցուցական դերանունք. որպ՟, Այն այս ձայն զամենեսեան յարուցանելոց է 'ի գերեզմանացն ". Նանայ։

Պարտ է գիտել, զի 'ի յարիլ սոցա ընդ միմեանս 'ի նախդրիւ հոլովս, նախդիրն դնի 'ի վերայ ամենեցուն. որպ՟, " Ի սոյն յայս միտս երգեաց զերեսներորդ առաջներորդ սաղմոսն ". Սարգ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ անուանս. և նախ յաղագս համաձայնութեան էական դերանուանց Ես, դու, ինքն, իւր ։

Դերանունք որովհետև այլևայլ են տեսակաւ, այսինքն էական, ցուցական, ստացական, յարաբերական, և դիմորոշական, այլևայլ օրինակաւ յարին յանուանս, և պէսպէս եղանակաւ համաձայնին. զորոց կամեցեալ խօսիլ կարգաւ՝ ասասցուք նախ զհամաձայնութիւն էական դերանուանցս ես, դու, ինքն, իւր. ընդ որս են և դերանունքս միմեանց և իրերաց. (Ես և ցուցական դերանունքս սա, դա, նա. յորժամ'ի գործ ածին էականապէս ։)

Սոքա ամենեքին գոյականապէս վարին. և ըստ օրինակի գոյական անուանց լինին անուն բայի. խնդիր բայի և խնդիր ընդունելութեանց : որպէս ունիմք ասել յիւրեանց տեղիս ։ Նաև ես՝ խնդիր նախադրութեանց. որպէս յայտ է յեդելոցն յառաջին մասին ։

Իսկ 'ի յարելն յանուանս, լինին նախ խնդիր անուանց գոյականաց և ածականաց, որպէս ունիս տեսանել'ի խնդրառութեան նոցա. որպիսի է և այս. "Զփառաւորիչս իւր փառաւորէ". Եզն ։ Ուր դերանունս իւր է խնդիր ածական անուանս փառաւորիչս ։

Երկրորդ՝ լինին յատկացուցիչ. որպէս, "Սիրտ իմ ուրախ եղև յիմ վաստակս իմ". Ժողով.

Երրորդ՝ լինին բացայայտեալ 'ի ձեռն գոյական անուանց համաձայնելով ընդ նմին թուով և հոլովիւ. զոր օրինակ, "Ես իմաստութիւն բնակեմ'ի խորհրդեան". Առակ ։ Ուր եսն լեալ է բացայայտեալ. և իմաստութիւնն բացայայտիչ ։

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածական անուանց. որպէս, "Զմեզ զմեղաւորս արժանի արարեր փառաւորել զքեզ". Յաճխ. իմաստ ։

Ըստ այսմ յարին սոքա բազում անգամ և յածական ընդունելութիս իբր բացայայտիչք . որ, “ Թէ յուսահատելոյս ինչ միջնորդեսցես . . . Թէ 'ի կործանեալս ոչ ականարկեսցես „ . Նարեկ :

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց

Սա, դա, նա :

Սորա յորժամ հոլովին՝ սա, սորա . դա, դորա, և այլն, վարին գոյականապէս . և պէսպէս օրինակաւ 'ի գործ ածին :

Իսկ 'ի հոլովելն սա, սորին . դա, դորին . նա, նորին կամ նորուն, հասարակօրէն վարին ածականապէս . և իբր ածականք յարին յառաջոյ յանուանս՝ համաձայնելով ընդ նմա թուով և հոլովիւ . և այս հասարակօրէն 'ի հինգ հոլովս միայն :

Ի սեռականն . որ, “ Պտուղն Թէպէտև նորին ծառոյն է և ծաղկին, այլ համիւ որոշեալ է 'ի նոցանէ „ . այսինքն նոյն ծառոյն . Սարգ :

Ի վերջահոլով տրականն . զոր օրինակ, “ Նուքանգի այս ըստ նորին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ, առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ „ . Նար :

Ի գործիականն . որ, “ 'Ի նոյն փառաւորութիւն նորին հոգւով կոչեցաք „ . Նարեկ :

Ի պարառականն . որ, “ Օն զբանակն նորին տեղեաւ գումարէր „ . Պատմ . Աղեք :

Ի ներգոյականն . զոր օրինակ, “ Ի նմին յամառութեան կան „ . Նարեկ :

Իսկ յայլ հոլովս հասարակօրէն իբր գոյական վարին . և եթէ հարկ լիցի ածականապէս վարել, 'ի տեղի սոցա դնեմք զցուցական դերանունս Այս, այդ, այն . սոյն, դոյն . որպէս տեսցի 'ի ստորև :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց
Այս, այդ, այն։

Սորա միշտ իբր ածական վարին, բազումանգամ զօրութիւն ունելով զգոյականն. զոր օրինակ, " Որ ինչ 'ի խոր է քան զքեզ, զայն մի քններ. և որ ինչ հզօր է քան զքեզ, զայն մի հարցաներ. որ ինչ հրաման տուաւ, զայնու ած զմիտս քո ". Սիր։

Այլ յորժամ յարին սոքա յանուանս 'ի նախադասիլն հասարակօրէն համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ՝ բաց 'ի բացառականաց յանգելոց 'ի է. որպէս, " Ապաշխարութիւն չիք յայնժամ աշխարհի ". Մծբ։

Բայց երբեմն ևս առանց համաձայնութեան դնին, այլ սակաւ ուրեք. զոր օրինակ, " Ընդէր է կորուստ այդ իւղոյդ ". Մատ։

Այսպէս բաց 'ի բացառականաց յանգելոց 'ի է. զի ըստ այսմ ոչ համաձայնին ա̃ք 'ի նախադասիլն, բայց եթէ կրկնեսցի նախդիրն. որպէս, " Իսկ քահանայական կարգն յայսցանէ 'ի գործոցս որիշ է ". Լամբ։

Իսկ յորժամ յետադասին սոքա անուանց համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. որպէս, " Ամենայն պըտուղք իմաստութեան այնորիկ, որ զողորմութիւն ծնանի, բարի են ". Սարգիս։

Հազիւ ուրեք ևս անհամաձայն դնին. որպէս, " Թեթևս կացո զաշխատութեանս այս սկիզբն ". Նար։

Ի համաձայնութեան այսոցիկ դերանուանց հարկ է գիտել և զայս, զի 'ի նախադասիլն սոցա, նախդիրն հասարակօրէն դնի միայն 'ի վերայ սոցա. զոր օրինակ, " Ոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս ". Եղիշէ.

Իսկ 'ի յետադասիլ սոցա նախդիրն միշտ և անվրէպ դնի թէ 'ի վերայ սոցա, և թէ 'ի վերայ անուանցն, բաց 'ի նախդրէս առ. և այս՝ 'ի վեց հոլովս.

Ի նախդրիւ տրականն. զոր օրինակ. “Այսպէս ասէ տ͞ր տ͞ր ցոսկերսդ ցայդոսիկ“. Եզեկ.

Ի հայցականն. դ͞ք, “Ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութ͞իս զայս”. Եղիշէ։

Ի բացառականն. դ͞ք, “Ուրախարար զոհագործութեամբս ապրեցուսցե՛ս զիս յորոգայթէ ցայսմանէ”. Յովհ. Իմաստ։

Ի պատմականն. զոր օրինակ, “Եւ որ մարզպան աշխարհին լեալ էր ... մեծապէս գոհ էր զառնէս զայսմանէ”. Եղիշ։

Ի պարառականն. զոր օրինակ, “Զբազմօք զայսոքիւք զանց արարեալ՝ փութասցուք հասանել յընչաւէտ հօր առատ որդին”. Եփրեմ։

Ի ներգոյականն. դ͞ք, “Թագաւոր առնես զամենեսին ... որք թագաւորեցին 'ի վերայ ախտից 'ի կեանս յայսոսիկ”. Խորեն։

Ըստ այսմ կրկնին հասարակօրէն և նախադրութ͞իքս ըստ և ընդ. դ͞ք, “Դնել զնոսա յաւերակ և յանապատ ... ըստ աւուրս ըստ այսմիկ”. Երեմ։

“Վայ անձանց նոցա, որք զյաւիտենականն բարեկենդանութ͞ի ընդ ապականացուիս ընդ այսմիկ փոխանակեն”. Իգնատ։

Սոյնպէս ևս եթէ նախդիրքդ զ, յ և 'ի, իցեն եդեալ 'ի վերայ նախընթաց ածականի, հարկ է կրկնել զնոսին, եթէ գոյականն անկեալ իցէ 'ի մէջ ածականին և դերանուանն. զոր օրինակ, “Զարթոյց զմիտս նոցա ... զճշմարիտ պատկերէն զայնմանէ բուռն հարկանել”. Սարգիս. տես յընդարձակն. Գ. 11.

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս համաձայնութ͞ե ցուցական դերանուանցս
Սոյն, դոյն, նոյն.

Սոքա միշտ իբր ածական վարին. և զի յատուկ հոլովումն ոչ ունին, այլ միայն նախդրիւ հոլովին, յորժամ նախադասին անուանց, անհամաձայն դնին.

զոր օրինակ, “ Զայնակից սոյն ուղղափառութեանս է՛որ եկեղեցիս մեր ”. Գրիգոր նար։

Այսոքիկ դերանունք՝ մանաւանդ նոյնն՝ հազիւ ուրեք անմիջապէս յետադասին անուանց. իսկ եթէ յետադասեսցին, պարտ է զնախադիրն կրկնել. զոր օրինակ, “ Նա յորոգայթ 'ի նոյն անկցին ”. Սաղ։

Ի վախճան ցուցական դերանուանց ամի՛ գիտել արժան է և զայս, զի սոքա առհասարակ դնին երբեմն 'ի բանս իբր թարմատար, կամ իբր բացայայտելի 'ի ձեռն այնց բառից, յորս յարին յառաջոյ կամ զկնի. զոր օրինակ, “ Ամենայն ինչ որ յաշխարհի է. չէ նա մեր ”. Իգնատ։

“ Բազմաց արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա ”. Իգնատ։

“ Յօղդ որ ցօղի 'ի քէն, այդ բժշկութի՛ է նոցա ”. 'ի Գեղչէրաց. յօրհ։

“ Օվէմն զոր անարգեցին՝ նա եղև գլուխ անկեան ”։ Սաղմ։

Յորս դերանունքդ նա, նոցա, այդ, նա, իբր թարմատար դնին, կամ իբր բացայայտելի 'ի ձեռն բառից ամենայն ինչ, և արդարոց, և ցօղդ, և վէմն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս համաձայնութեան ստացական դերանուանց իմ, քո. մեր, ձեր, իւր, իւրոյ։

Սոքա միշտ ածականաբար վարին. և յորժամ յարին յանուանս եւս և յընդունելութիւնս, յամի համաձայնին ընդ նոսա 'ի վերջահոլովսն, թէ 'ի յետադասին, թէ 'ի նախադասին, և թէ անկցի 'ի միջի այլ մասն բանի. որպէս, “ Օխարդ շրթամբք ետուն զանձն իմ անիծից ”. Նար։

“ Ընդէր տեսանեմք զարև յետ մերոյ սիրելեացն ”. Նշնհ։

“ Բռնամտ առնուս ախտի ջատագով (զթիւրեալ ճըշմարտութի՛ն ”. Լամբ։

Բացի համաձայնիլ սոցա 'ի վերջահոլովսն, զի 'ի նախ-

դրիւ հոլովս և յուղղականս միշտ անհամաձայն դնին․ որ, "Ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին". Եսայ․ և ոչ լինի ասել՝ խորհուրդք իմք:
"Ուսո՛ ինձ առնել զկամս քո". և ոչ քոյս․ Սաղ:
"Նաժանեաց զկեանս մեր". և ոչ մերս․ Խոսրով:
"Կատարեսցէ զկամս ձեր ՚ի կամս իւր". և ոչ ձերս և իւրս․ Մաշտոց:

Սոքա լինին ևս ածական դերբայից նովին համաձայնութբ, որով յարին յանուանս․ որ, "Ի բարեպաշտելս իմում գայթակղիմ". Նար:
"Տացի կեանս նմա ՚ի կենաց տուողէն քոյով արգահատելովդ". Սարգիս:

Իսկ եթէ ուրեք ուրեք երևեսցի անհամաձայն, այն ոչ է ստացական դերանուն իբր ածական, այլ սեռական հոլով էական դերանուանց․ որպէս յասելն, "Յարդարանաւս իմ և մեղանչեմ". Նար: Դերանունս իմ ոչ է ստացական, այլ էական․ և եդեալ է աստ իբր անուն դերբայիդ յարդարանաւս:

ԳԼՈՒԽ ԺԳ․

Յաղագս համաձայնութեան յարաբերական դերանուանս Որ:

Յառաջ քան զխօսիլ զհամաձայնութէ սորա՝ գիտելի է, զի սա ՚ի կարգս բանի զօրութբ ՚ի մէջ բերեալ զայլ մասն բանի՝ դնի ներգործութբ ՚ի տեղի նորա․ որպէս զի մի կրկնեսցի մի և նոյն բառ:

Արդ նախ առաջին՝ յարաբերէ սա զանուն, զդերանուն և զընդունելութի․ զոր օրինակ, "Ամենայն նիւթոյ՝ որ մարմին է, սպականութի հետևի". Լամբ:
Ուր որն յարաբերէ զանունդ՝ ամենայն նիւթոյ:
"Նարուօք է խոնարհութի յամ ժամ, և յամ նեղութեց ապրեցուցանէ զայնոսիկ, ոյք մերձենան առ նա". Մծբ:
Ուր ոյքն յարաբերէ զդերանունդ զայնոսիկ:
"Արժանի գտայ ճաշակել զջուր յաղբերէ փրկութե նորոգողին զմեզ, զորոյ զաթոռն իսկ ընկալայ". Յովհ․ կաթ:
Ուր բառս որոյ յարաբերէ զընդունելութիւնդ նորոգողին:

Ուրեք ուրեք յարաբերէ սա նաև զբայ և զբան . որպ, " Մարմինս ճգնի, տքնէ և պահէ, որոյ և օգնէ մտաց և կամաց ". Լամբ ։ Ուր բառդ որոյ յարաբերէ զբայսդ ճգնէ, տքնէ . ևն ։

" Մարդ բարի . . . զյաղթելն սիրէ, որով և նուաճէ . և ոչ զյաղթելն, որով զմարտն գրգռէ ". Լամբ ։ Ուր բառդ որով յարաբերէ զյաղթելն և զյաղթելն ։

" Ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով'ի մուտս ձեան աւուրցն խռովումն կերակրել պատրաստեցայց ". Նար ։ Ուր որովն յարաբերէ զայս բան ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն ։

Գիտելի է ևս, զի այս դերանունն երբեմն յարաբերէ զնախընթացն . որպ, " Ի գործոյն, զոր գործէ, առնու զանունն ". Նիւսէ ։

Եւ երբեմն զհետևեալն . որպ, " Զոր վասն այլոց կորստեան խօսիմք՝ անձամբ 'ի նմին եմք ". Իգնատէոս . կորստեան խօսիմք՝ անձամբ 'ի նմին եմք ". Իգնատէոս . Ուր զորն յարաբերէ զ'ի վերջոյ եդեալ բառդ 'ի նմին ։

Երբեմն ևս մտանէ 'ի մէջ յարաբերելի անուանն, և 'ի մէջ բայի նորա, կամ յատկացուցչի նորին, և կամ ածականի նորուն, և այլն . զոր օրինակ, " Արդ զբեռնդ զոր դու ոչ ես բառնալոց, էր վասն հոգաս և դատիս ". Լամբ . առակ ։

" Ենստգիւտ արդարութեամբ լցի՝ զոր պահանջեաց, փրկութի ". այսինքն արդարութբ լցի փրկութին, զոր պահանջեաց . Լամբ ։

" Զի ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար զճշմարտութին ". այ ծանիցես զճշմարտութի բանիցն, որոց աշակերտեցար . Պօղ ։

" Զոգեկանն, որ յառաքինութեն է, պինդ պահիցեմք ազատութի ". այսինքն պինդ պահիցեմք զոգեկան ազատութին, որ յառաքինութեն է . Յովհ . ոսկեբ ։

Բազում անգամ ևս զօրութ ունի սա զյարաբերելն . որպ, " Որ նախ խոնարհի, նախապատիւ բարձրասցի ". Լամբ ։ Ուր զօրութ կայ բառսն . որպէս թէ ասէր . նա որ խոնարհի, բարձրասցի ։

" Իշխան ոք կոչի, յորժամ ունի որոց իշխէ . և արքայ, յորժամ ունի որոց առաջնորդէ ". այսինքն յորժամ ունի զհպատակս, որոց իշխէ, ևն. Իամէ։

Համաձայնութիւն այսր դերանուան կրկնակի նկատի։ Նախ՝ զի թուով համաձայնի ընդ այնմ, զոր յարաբերէ. զի որովհետև դնի ՚ի տեղի նորա, զայնքան պարտի նշանակել, զորքան նայն նշանակէ։ Ապա եթէ յարաբերեալն միակի նշանակեսցէ, պարտի դնիլ եզակի. որ, “Այն է տիրապէս իմաստութիւն, որ գործով ուսուցանէ զիւրն իմաստութիւն, այն է ը̃ ա̃յ վարդապետ, որ նախ առնէ, և ապա ուսուցանէ„. Սարգ։ “Բուռն հարի զանհաստատ հողմոյ, որոյ միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ„. Նարեկացի։

Իսկ եթէ յարաբերելին իցէ բազմաւորական, յարաբերականն դնի յոգնակի. զոր օրինակ, “Մի պատրեսցուք ՚ի հեշտալեաց, որք կախարդեն զզգայութիւնս„. Սարգ։

Նա քանզի բազում եզականք ևս ունին զզօրութիւն յոգնականի, եթէ յարաբերեալքն լինիցին բազում եզականք, յարաբերականն ևս իբր ՚ի բազումս յոգնակի դնի. որ, “Կուռք են փառասիրութիւն և մարդահաճութիւն, այլ և զհաւատն իսկ հալածեն„. Սարգ։

Իսկ եթէ յարաբերելին իցէ անեզական անուն, որովհետև այն ըստ նշանակութեան իբր եզական է, յարաբերականն ևս բազում անգամ եզակի դնի. զոր օրինակ, “Յիշեա՛ զշնորհս աւազանին՝ որով լուսաւորեցար„. Նրշնհալի։

Նա ներհակ այսմ՝ եթէ յարաբերելին իցէ անուն հաւաքական կամ հանրական, ՚ի վարիլ նշ̃ իբր յոգնական վասն զօրոյ նշանակութեան նոցա բազմաւորական, յարաբերական որն դնի յոգնակի. որ, “Զիա՛րդ կարիցեմք և զքահանայապետական դատաւորութիւնս ՚ի գործ արկանել առ ազգ այնպիսի, որք . . . դատաւորաց եկեղեցւոյ նստին դատաւորք„. Շնորհ։

Ասացի ՚ի վարիլն իբր յոգնական. զի եթէ իբր եզական վարեսցին այսպիսի անուանք, յարաբերական որն ևս դնի եզակի. որ, “Ամենայն, որ զչար գործէ, ատեայ զլոյս„. Յովհ. “Ժողովուրդ, որ գնայր ընդ խաւար ետես զլոյս մեծ„. Եսայ։

Այլ գիտելի է, զի այս դերանուն բազում ուրեք ըստ թուոյն զօրութ̃ համաձայնի. քանզի բազում անգամ փոխանակ յոգնական դնելոյ եզական դնի՝ մանաւանդ յուղղականն և 'ի նախդրիւ հոլովն. գր̃. “Են բազումք 'ի մարդկանէ, որ երևին բազմաց, եթէ ոքք են և առաքինիք . . . և նախատանաց և ոչ միոյ համբերեն”. Սարգ. “Զսոյն զայս միտս ամենայն ոք ստասցի առ ա̃ծ 'ի վերայ ա̃մ նեղութե̃ց և չարչարանաց, զոր վասն նորա կրեմք”. Իգնատ.

Երկրորդ համաձայնութի̃ այսր դերանուան նկատի յայսմ, զի յայնպիսի հոլով դնի, յորպիսի դնելի էր յարաբերելին, եթէ եդեալ էր ներգործութ̃ ըստ պահանջելոյ բային կամ անուանն։ Ուստի.

Երբեմն դնի յուղղական հոլովի՝ երբ անուն բայի. գր̃, “Ամենայն որ զչար գործէ, չար գտցէ”. Աթան.

Երբեմն դնի 'ի սեռական հոլովի՝ երբ յատկացուցիչ գր̃. “Ատանելի առաջի ա̃յ՝ նոցա է, որոց սիրտն է ուղիղ ընդ նմա”. Լամբ.

Երբեմն դնի յայլ հոլովս՝ երբ խնդիր բայի, ևս և երբ խնդիր անուան, և ընդունելութե̃, և նախադրութե̃. զոր օրինակ, “Զի զոր սերմանեսցես՝ զնոյն և հնձեսցես”. Վարք հարց։ Ուր զորն է խնդիր բայիս սերմանեսցես։

“Որում ցանկացաւն ոչ եհաս 'ի կէտն”. Երզն. Ուր որումն է խնդիր ցանկացաւին։

“Որոյ համեմատ և զաս ցուցանէ”. Գէորգ. Ուր որոյն է խնդիր անուանս համեմատ։

“Այս այն (երկիր) է . . . որոյ ցանկացողն աղաղակէր, հոգի քո բարի” Եւ̃. Միքայէլ։ Ուր որոյն է խնդիր ընդունելութե̃ս ցանկացող։

“Ամենայն 'ի քէն է, և որդւովդ. առանց որոյ եղև և ոչինչ”. Աթան. Ուր որոյն է խնդիր նախադրութե̃ս առանց։

Այլ սակայն 'ի գերապանծ շարադրութի̃ս երբեմն այլազգ կարգի այս համաձայնութի̃ ըս̃ չորից. նախ՝ յորժամ յարաբերականն համաձայնի ընդ յարաբերելոյն 'ի նոյն հոլով, թէ և յայլ հոլով էր դնելի (ըս̃ յունական ոճոյ). որպէս, “Բաշխնորդեա ժողովրդեանն այնմիկ 'ի տեղին յոր ասացի քեզ”. Ելից. փոխանակ դնելոյ, 'ի տեղին ուր ասացի քեզ. (որպէս եդեալ է Ոսկան):

Երկրորդ՝ ընդ հակառակն, յորժամ յարաբերեալն համաձայնի ընդ յարաբերականին. որպէս, “Եւ զբանն ուր խօսիք մի՛ մնասցէ առ ձեզ”. Թագաւորաց. փոխանակ ասելոյ. և բանն զոր խօսիք մի՛ մնասցէ առ ձեզ:

Երրորդ՝ ըստ երկուցն ևս անհամաձայն գալոյ եթէ յարաբերականին, և եթէ յարաբերեցելոյն. որպէս. “Զնոյն գրէ առ որս 'ի խուժաստան էին ժողովուրդք”. Թովմ. Արծր. փոխանակ ասելոյ, զնոյն գրէ առ ժողովուրդսն որք 'ի խուժաստան էին.

Չորրորդ՝ ըստ համաձայնելոյ զօրութեան եդեալ յարաբերեցելոյն. որպէս, “Քաղցր է Տէր՝ որոց սպասեն նմա յաւուր նեղութեան”. Նաւում. փոխանակ ասելոյ. քաղցր է Տէր այնոցիկ, որք սպասեն նմա: Եւ այս չորեքին եղանակք զորս եդաք, հասարակ են առ նախնիս մեր՝ ոչ 'ի ստորին չարադրութիւնս, այլ 'ի գերապանծս:

Ի վախճան ճառիս արժան է գիտել և զայս. իբր զի երբեմն 'ի յարաբերականն յարին և այլ դերանունք Թարմատարաբար, կամ իբր զարդ. և այս՝ մանաւանդ 'ի Թարգմանեալ գիրս. որպէս, “Երանեալ է այր, որոյ օգնութիւն նորա 'ի քեն է”. Սաղ: Ուր դերանունս նորա դնի իբր զարդ, կամ իբր Թարմատար ինչ. և կամ իբր բացայայտիչ յարաբերականին՝ որպէս ասացաք զցուցական դերանուանց 'ի վերջ ԺԶ. գլխոյն:

Գիտելի է դարձեալ, զի յարաբերական որն երբեմն առանց ունելոյ զզօրութիւն յարաբերականի այլ յաւէտ զզօրութիւն անորոշ հարցականի, դնի յառաջ իբր ածական՝ Թուով և հոլովիւ համաձայն. որպէս, “Որով չափով չափէք չափեսցի ձեզ”. Մատթ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս դիմորոշական յօդիցս ս, դ, ն:

Այսոքիկ յօդք նախ յարին 'ի դերանուանս իբր զարդ. զոր օրինակ, " Ինեւ կորացեալ ամաչեսցէ (սատանայ) ,, . Եղիշէ:

" Չեմ իբր զձեզդ անագորոյն ,, . Նոյնն:

" Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի ,, . Յոհ:

Այլ գիտելի է, զի 'ի յարիլ սոցա յայնպիսի դերանուանս որք 'ի ձայնաւորս յանգին, հանդերձ յ տառիւ դնին. որ, " Քսն յորժամ գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր դայ առնէ ,, . Իմ քան զոր սա առնէ. Յոհ:

" Յօղն որ 'ի քոյդ կողէ ցօղեալ ,, . այսինքն 'ի քո կողէդ. Շար:

" Օգուտ զայն գիտէ՝ զոր նոյն առնէ ,, . այսինքն նա առնէ. Խոսրով:

Այլ 'ի յարաբերականս՝ ըստ որում են յարաբերականք, ոչ յարին այս յօդք. զի ոչ լինի ասել՝ որս երեւին, որդ փառաւորեալ ես, որն խօսէր, որն առաքեաց, են. այլ որ երեւինս, որ փառաւորեալդ ես, որ խօսէրն, են. որ, " Մարդիկ մատակարարեն զայս, որ երեւինս, այլ հոգին որ տայ զայն որ ոչն երեւի ,, . Կոչ:

" Որ փառաւորեալդ ես 'ի վր̃ ա̃մ տիեզերաց ,, . Ագաթ:

" Դաւիթ արքայ ոչ բարկանայր (ընդ բանսն Սաթանայ), զի ոչ 'ի նա հայէր որ խօսէրն, այլ 'ի նա հայէր որ առաքեացն ,, . Կոչ:

Երկրորդ՝ յարին սոքա յանուանս. որ, " Եթէ աշակերտ ես, վարդապետիս նման լեր ,, . Մարգ:

" Քառասուն թիւդ 'ի հնգութիւնցաւարտի ,, . Արէոփ:

" Բարբերարայն և հեղոցն բնութիւնք քարշէ զքեզ կալ 'ի ծառայութ̃ի ,, . Մարգ:

Երրորդ՝ յարին 'ի բայս. որ, " Մինչ դեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյսն հակամիտեմ ,, . Նարեկացի:

" Օրհնեալ որ գասդ յանուն տն ,, . Յոհ:

“Որ կոչէն 'ի բժշկել զօրաւոր է և պատրաստ„ · Մարգ ։

Չորրորդ՝ յընդունելութիւն, զոր օրինակ, “Ձայնես չլսողիս և ոչ սրտմտիս· փութաս մեղկելոյս և ոչ խափանիս„ · Նար ։

“Նստեալդ յաթոռ քերովբէից նիստ գթուք 'ի մեր հոգիս„ Շար ։

“Զամենեսեան աշակերտեցին հոգւով զօրացեալքն և մարմնով տառապեալքն„ · Լամբ ։

Հինգերորդ՝ (այլ սակաւ ուրեք) 'ի մակբայս· զր,

“Վն ժողովրդեան՝ որ շուրջս կան՝ առնեմ„ · Նանայ ։

“Բայց զիարդ այժմդ տեսանէ ոչ գիտեմք„ · Յովհ ։

“Որ իրաւապէսն դատի· զմարմնականն 'ի ծոցս մեր հատուցանէ տանջանս„ · Յովհ · Իմաստ ։

Այսոքիկ յօդք ուրեք ուրեք դնին փոխանակ միմեանց· քանզի «էն դնի յերիս դէմս ևս· զր, “Որպէս սկսաքդ 'ի նմին և կատարեսցուք„ · Նշնհ ։

“Ի գրելոց ձեր ծանուցաւ„ · Շնորհալի ։

“Մարտիր է այնոսիկ՝ որ մարտնչինս է մեզ„ · Նշնհ ։

Սոյնպէս և դէմն· զր, “Եւ ինչ արդեօք հրամայեսցես քան թէ հրամայեցիք„ · Նշնհ ։

“Զոր ասէքդ ցուցէք գործով„ · Գէորգ ։

“Որ նստինդ աւագիկ ամենեքեան առաջիկքս„ · Լամբ ։

Ըստ այսմ և նոյն· զոր օրինակ, “Իսկ եթէ ոչ զայն առնիցեմք՝ զոր հրամայեցաքն· և զայն խօսիցիմք՝ զոր վարդապետեցաքն, աղատուէ օրինօքն եմք դատելոց„ · Մարգ ։

“Զիարդ ուսուցանես ինձ, եթէ առնու ոք զքոյդ՝ դու մի պահանջեր, երբ դու զքոյն պահանջես„ · Մծբ ։

“Որ մեռանին արդարացեալ է 'ի մեղաց անտի„ · Հռովմ ։

Սոքա երբեմն փոխանակ դնելոյ 'ի վերայ բուն անուան, կամ դերբայի, կամ խնդրոյ բային, ևն, դնին 'ի վերայ այլոց բառից առ 'ի գեղեցկացուցանել զշարադրութիւն· զոր օրինակ, “Զինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի„ · փոխանակ ասելոյ, ողբալի հոգիս· Նար ։

„ Գովեմ զճշմարտութենդ լինել օժանդակ„ · փոխանակ ասելոյ, գովեմ զլինելդ քո օժանդակ ճշմարտութեան. Իամէ:

« Ամենայն ոք որ հակառակամարտն է, զյաղթօղն լինել որքան կարէ ախորժէ ». փոխանակ ասելոյ, ըզյաղթօղ լինելն. Իամէ:

Այլ աստ գիտելի է, զի այսպիսի յօդք բազում անգամ դնին 'ի տեղի դերանուանց զօրութեամբ յարելոց յանուանս և յընդունելութիւնս և 'ի բայս պէսպէս օրինակաւ. զոր օրինակ, « Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի ». փոխանակ ասելոյ, 'ի վեր ամբարձայ ես, մոխիրս, կամ 'ի վեր ամբարձայ ես, որ եմ մոխիր մերժելի. Նարէկ:

« Կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում, թէ և ես քեզ նմանիցիմ ». այսինքն կարծեցեր դու, որ անօրէն ես, և այլն. Սաղ:

« Որ գթայն, ողորմութիւն գտցէ ». այսինքն նա, որ գթայ, ողորմութիւն գտցէ. Առակ:

« Որ եղեն լինել ոչ ունի ». այսինքն, այն որ եղև, ոչ ևս է լինելի. Իգնատիոս.

Դարձեալ գիտելի է, զի յօդդ ն, դնի երբեմն փոխանակ անուան, որ զօրութեամբ իմանի. և այս երրակի.

Մի՝ յարելով 'ի յատկացուցիչն՝ զօրութեամբ իմացեալ անուանն. զոր օրինակ, « Գոյ է բարկութիւն, որ գովելի է 'ի գրոց. որպէս մովսէսին, որով զեգիպտացին սպան... և է բարկութիւն, որ պարսաւելի է. որպէս կայենին, որով զեղբայրն իւր սպան ». այսինքն որպէս բարկութիւն մովսէսի. և այլն. Սարգ:

Երկրորդ յարելով 'ի յածականն. որպ., « Զպղատոնականն համարձակագոյն այժմ բարբառիմ ». փխ. զպղատոնական բանն. Խորէն:

Երրորդ՝ յարելով 'ի խնդիրն նախադրութեանց, յորս իցէ եղեալ ներգործութեամբ նախդիրդ ն՝ զօրութեամբ իմացեալ անուանն. այլ այս 'ի սակաւս յոյժ. զոր օրինակ, « Ընդ զօրս հրեշտակաց միաբանական օրհնութեամբ բարեբանեցէք զն 'ի վերայ քերովբէիցն ». այսինքն բարեբանեցէք զնստեալն 'ի վերայ քերովբէից, կամ զայն որ է 'ի վերայ քերովբէից. Շարակ:

« Զդիւրալուրն և զառանց խոր բանիցն յարգեն »․ այսինքն զբանն, կամ զայն որ առանց խոր բանից. Սարգ. « Զվասն մեղացն ոչ խնդրեցեր »․ այսինքն զմատուցեալսն քեզ վասն մեղաց. կամ զայն որ վասն մեղաց. Սաղ.

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս համաձայնութեան բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան։

Բայց կրկնակի համաձայնին ընդ անուանս, ընդ դերանուանս և ընդ ընդունելութիւնս. Նախ՝ եթէ ընդ այնս, որք առին անուան բայի։ Երկրորդ՝ եթէ ընդ այնս, որք առին խնդիր բայի. զոր օրինակ յասելն, « Բերան ամպարշտաց կլանէ զդատաստանս »․ Առակ։ Ի սմին բանի բայս կլանէ ունի զերկուս անուանս, որոց առաջինն՝ այսինքն Բերանն եղեալ է անուն բայի, և նշանակէ զտէր գործողութեան կլանելոյն. իսկ միւսն՝ այսինքն զդատաստանս եղեալ է խնդիր բայի, և նշանակէ զենթակայն՝ առ որ լինի գործողութեան կլանելոյն։ Իսկ անունս ամպարշտաց է յատկացուցիչ Բերանոյն։ Արդ նախ խօսեսցուք զառաջին համաձայնութենէ, այսինքն զանուանէ բայից. և ապա զերկրորդէն այսինքն զխնդրոյ նոցին։

Յաղագս առաջին համաձայնութեան բայից, կամ

Յաղագս անուան բայի։

Անուն բային է այն՝ որ նշանակէ զտէր գործողութեանն. այսինքն զգործողն կամ զկրողն, և կամ զայն որ լինի. որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ. և քանզի յատկապէս անուանք և դերանուանք և ընդունելութիւնք կարգեն նշանակել զգործողն կամ զկրողն, նոքա միայն յատկապէս լինին անուն բայի, որպէս յայտ լիցի 'ի յաջորդ գրելոցդ ։ Այլ զի աներևոյթ բայք ևս երբեմն իբր անուն վարին, նոքա ևս լինին բազում անգամ անուն բայի ․ որպէս ունիմք ասել 'ի ստորև 'ի վերջ Է ․ կանոնին ։

Իսկ այլ մասունք բանի որովհետև պիտակաբար միայն կարեն վարիլ իբր անուն, անյատկապէս կարեն լինել անուն բայի ․ ըստ որում են բառք ինչ ․ զօ,

« Իբրև նախադիր է բանի » ․ Լամբ ․

« Օ այս արդեօքն յայտ առնէ » ․ Իգնատ ։

« Ո՛ւ նան այլ է, և ն նան այլ » ․ Խոսրով ։

« Ահն՝ փափաքանաց որում ոչ հասանեմք՝ է տարացոյց ապաշաւանաց » ․ Լամբ ․

« Գիտելն ամենեցուն յայտ է » ․ Նանայ ։

Արդ այժմ զսոքօք զանց արարեալ՝ դիցուք զհինգ կանոնս վասն համաձայնութեան անուան բայի ը բայի ։

Կանոն Ա ։

Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային պարտի դնիլ յուղղական հոլովն ․ զոր օրինակ, « Դադարեցին նեղութիւնքն, և եհաս հանգիստն » ․ Իգնատ ։ Ուր անուանքս նեղութիւնք և հանգիստն են անուն բայիցս դադարեցին և եհաս ․ և եդեալ են յուղղական հոլովն վասն դիմաւոր լինելոյ բայիցն ։

Իսկ եթէ բայն իցէ անդէմ, որպիսի են աներևոյթք, դերբայք և դրադէմք, անուն բային հասարակօրէն դնի 'ի սեռական հոլովն ․ զոր օրինակ, « Այն է ժամանակ, յորում երանութիւնքն լնուն ․ աղքատաց մեծանալ և սգաւորաց մխիթարիլ և հեզաց զվերին երկիրն ժառանգել » ․ Իգնատ ։ Ուր անուանքս աղքատաց, սգաւորաց և հեզաց են անուն բայի 'ի սեռական հոլովն վս անդէմ լինելոյ բայիցս մեծանալ, մխիթարել և ժառանգել ․ որք եթէ որոշեալ դիմօք կարգէին, անուանքն ևս յուղղական հոլովն դնէին ․ որգոն, աղքատք մեծանան, սգաւորք մխիթարին և հեզք ժառանգեն զվերին երկիրն ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ ։

“ Ի ճարակել խոցոտածոյս անդրէն վիրաւորիմ ”. Նար։ Ուր բառդ խոցոտածոյս է անուն բայիս ՚ի ճարակել.

“ Բազում անգամ գամ ըմպելով մանկանն ՚ի բաց ոչ դառնայ ”։ Ուր մանկանն է անուն բայի դերբայիս ըմպելոյ. Սարգ։

“ Սէգն Վարդանայ մորակեալ զերիվարն ՚ի փախուստ զախոյեանն պարսից դարձուցանէր ”. Թովմ. արծր։ Ուր բառս սէգն Վարդանայ է անուն դրադեմ բայիս մորակեալ.

Ուրեք ուրեք և դնի յուղղական հոլովի. որ, “ Հասեալ ՚ի թիկունս աներևոյթ օգնութեանն խորտակեաց յայտնապէս զզաղտնի պատերազմս ”. Շար։

Իսկ դերանուանք դնին երբեմն նաև ՚ի տրական հոլովի, և այս յաւէտ ՚ի դերբայս և յաներևոյթ եղանակս. որ, “ Փափաքեաց անձն իմ ՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո ”. Սաղ։

Գիտելի է և, զի անուն բային յարակատար և գերակատար ժամանակաց, և անցելոյ ստորադասականին՝ ՚ի յերրորդ դէմս եզականին իբր ՚ի բազումս դնի ՚ի սեռական հոլովի. որ, “ Եւ իմ եղեալ է ՚ի մտի իմում բազում չարչարանօք կարծել զձեզ ՚ի կենաց ձերոց ”. Եղիշէ։ Ուր սեռական դերանունս իմ լեալ է անուն բայիս եղեալէ։

“ Գրեալ էր ձեր յառաջագոյն տառիս, զի մի մոռացայց զձեզ ”. Մագիստ։ Ուր սեռական հոլովս ձեր լեալ է անուն բայիս գրեալէր։

“ Թէ մոռացեալ իցէ ձեր զանուն այ մերոյ ”. Սաղմոս։ Ուր սեռական հոլովս ձեր լեալ է անուն բայիս մոռացեալիցէ։ Տես և ՚ի մասն. Բ. գլ. ԺԹ. ՚ի վերջն։

Իսկ երբեմն դնի յուղղական հոլովի. զոր օրինակ, “ Հանգուցեալ է հոգի իմ ՚ի քեզ ով եղբայր ”. Սարգ։ “ Ունիս զոք, որ ստացեալ իցէ զճշմարիտ հնազանդութի ”. Սարգ. հարց։

Կանոն Է։

Դարձեալ եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային պարտի թուով և դիմաւ համաձայնիլ ընդ նմա. զոր օրինակ, “ Ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ „ ․ Յովհ ։ Ուր որպէս բայս ազատեսցէ ըստ թուոյն է եզական, նոյնպէս և անուն բային այսինքն ճշմարտութիւն է եզական ․ և որպէս բայն է յերրորդ դէմս, նոյնպէս և անուն բային 'ի ձեռն ն յօդին ։

Իսկ բառս զձեզ է խնդիր ազատելոյն ։ Սոյնպէս է և 'ի յաջորդ օրինակդ յերիս դէմս ևս ։

“ Ամբարտաւանեցայ հողս շնչաւոր „ ․ Նար ։
“ Մեռար անմահդ, և զմահացեալսն նորոգեցեր „ ․ Նար ։
“ Պատիժք ուսուցանեն զզգաստութի “ ․ Պիտոյք ։

Բայց գիտելի է, զի այսպիսի յօդք որոշիչք դիմաց բազում անգամ զօրութբ դնին յերրորդ դէմս ․ զոր օրինակ, “ Դև զդև ոչ հանէ „ ․ Մաշտ ։ Ուր զօրութբ գոյ յօդս ն ․ որպէս թէ ասէր, դևն ոչ հանէ զդև ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակդ ։

“ Խոնարհութի բանակետղ է սրբութն „ ․ Մծբ ։
“ Այր փորձի 'ի բերանոյ գովչաց իւրոց “ ․ Առակ ։
“ Ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել „ ․ Նար ։

Իսկ դերանուանք յիւրեանց ունելով զդէմս՝ ոչ կարօտին դիմորոշական տառից, այլ առանց նց համաձայնին ․ զոր օրինակ, “ Նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի և մեղաց ախտի ․ արդ ես գնացի ը̅ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի „ ․ Նարեկ ։

“ Որովհետև մարդ ես դու, ոչ պակասին 'ի քէն բիծք „ ․ Վարք հայրց ։

“ Նա ետ ինձ զանվրէպ գիտութի զեղելոցս „ ․ Իմաստ ։

Նաև թէպէտ յարաբերական դերանունն չունի զորոշեալ դէմս, բայց զօրութբ ունելով զայն յերիս դէմս ևս կարէ համաձայնիլ առանց յօդի ․ զոր օրինակ, “ Տունկս դառնութեան՝ որ զգարշութի անառակ վարուց ծաղկեցի „ ․ Նար ։

“ Դու ես որ օրէնսգէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի՝ ը̅ բանի երգողին Դաւթայ „ ․ Նոյն ։

“ Որք մեղօք ժանգացուցանեն զհոգիս, ոչ կարեն ըզլոյս ա̅ծութեն յինքեանս կերպարանել „ ․ Շնորհ ։

Այլ աներևոյթքն զոր յօդ և ունիցին, լինին ա-

նուն բայի միշտ յերրորդ դէմս. որպէս, "Նստելդ վեհագոյն բնաւիցդ ոչ է իմ, այլ քո". Լամէ:
"Տիրելդ ամենեցուն՝ խնայել տայ քեզ յամենայն". Իմաստ:
"Ողորմելն չթողու զարժանին խնդրել". Խոսրով:

Սոքա բազում անգամ առանց յօդի ևս լինին անուն բայի. մանաւանդ էական բայից. զոր օրինակ, "Մեկնել 'ի չարեաց՝ է հանճար". Յոբ: Ուր աներևոյթ բայս մեկնել առանց յօդի լեալ է անուն բայիս է:

Ըստ այսմ լինին սոքա անուն բայի և բացարձակ դիմազուրկ բայից. որպէս, "Առաջի մարդկան ձևանալ դիւրին է, այլ ոչ առաջի Աստուծոյ". Իգնատ: Ուր յառաջինն է անուն բայիս դիւրին է. իսկ առաջի մարդկան, ևն. է խնդիր յառաջնոյն.

Կանոն Գ.

Եթէ անուն բային իցէ բազում եզական՝ ըստ նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի: Զի որովհետև յայնժամ ըստ գործողութեան կամ կրողութեան է բազում, բայն ևս որ նշանակէ զգործողութիւնս, պարտի դնիլ բազմաւորակի. զոր օրինակ, "Յուդա և Եփրեմ օրհնեցան 'ի Յակոբայ". Գէորգ:
"Գինի և արբեցութիւն ապականեն զարս իմաստունս". Յաճախ:
"Գողն և գողակիցն 'ի միում պատժի են". Նոյն:
"Յորժամ կարեն և կամին 'ի միասին իցեն, չիք ինչ այլ՝ որ արգելուլ կարիցէ". Գէորգ.

Բայց բազում անգամ ևս դնի բայն եզակի. և դրեթէ զօրութեամբ կրկնի. որպէս, "Աւուրն հատուցման պահի պատիւն և պատուհասն". Յովհ. կաթ.
"Անօգուտ է անդ խոստովանութիւն և զղջումն". Խոսրով:
"Եթէ ոչ լուծանի ագահութիւն, սէր և ողորմութիւն ոչ հաստատի". Իգնատ:

Կանոն Դ.

Եթէ անուն բային իցէ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուականագոյն դէմն, այսինքն յայն դէմ, որ համեմատութ՟ է առաջին. իբր զի եթէ մին յանուանց բային իցէ յառաջին դէմն, և միւսն յերկրորդն, կամ յերրորդն, բայն դնի յառաջինն. զի առաջին դէմն պատուականագոյն է քան զերկրորդն. և երկրորդն քան զերրորդն. ո՟ր, "Ես և դու և ա՟մ բազմութիւնդ . . . աշակերտեսցուք ա՟ծային գրոց". Եղիշ. և ոչ լինի ասել՝ ես և դու և ա՟մ բազմութի՟դ աշակերտեսջի՛ք, կամ աշակերտեսցին ։ "Իշխեա՛ մեզ դու և որդիք քո, և որդիք որդւոց քոց". Դատ. և ոչ լինի ասել դու և որդի քո իշխեսցէ ։

Կանոն. Է ։

Եթէ անուն բային իցէ ըստ ձայնին եզական, իսկ ըստ նշանակութ՟են բազմաւորական, (որպիսի են անուանք թուականք), բայն դնի յոգնակի. զոր օրինակ,
"Հինգն 'ի նոցանէ յիմարք էին". Մտթ ։
"Չորեքեանն (այսինքն չորք տարերք) հային կամաց անկնարկելոյ արարչին իւրեանց". Եղիշէ ։

Իսկ եթէ անուն բային իցէ բառ հաւաքական, ո՟պ գունդ, ազգ, ե՟ն, կամ հանրական, որպէս բառս ա՟մ, և կամ կրկնակ, ո՟պ մի մի, այր ցընկեր, իւրաքանչիւր, այրաջի. ե՟ն, բայն երբեմն դնի յոգնակի՝ վասն ունելոյ նո՟ց զնշանակութի՟ բազմաւորական. ո՟ր, "Տիրեցին աշխարհիս հայոց ազգն Սասանայ պարսկի". Եղիշէ ։
"Լի են փառօք նորա ամենայն երկիր". Յովհ.
"Ասեն այր ցընկեր իւր, եկայք արկցուք աղիւս". Ծն ։
"Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգոյշ լերուք". Երեմ ։

Այլ երբեմն, մանաւանդ թէ բազումանգամ, դնի եզակի. զոր օրինակ, "Այսուհետև վտանգեցաւ ազգ քրիստոնէից". Լամբ ։
"Ամենայն մարդ զլաւն ցանկայ ունել, և ոչ զնուազն առնուլ". Պատմ. Աղէքս ։
"Պատուեսցէ իւրաքանչիւր զընկեր յաշխարհի աստ". Մծբ ։

Ըստ այսմ համաձայնին բայք և ընդ անեզական անուանս. երբեմն յոգնակի և երբեմն եզակի. ո՟ր,

“ Ծուլութիւն և հեղգութիւն ձեզ ոչ քաւեն ”. Խորէն.
“ Բանական մտօք մի զբաղեսցի յիրս կենցաղոյս, այլ միշտ յերկինսդ բնակեսցէ ”. Նար.

Ի վախճան այսոցիկ հինգ կանոնաց՝ զայս մի ինչ արժան համարիմ ծանուցանել. եթէ զի բազում անգամ անուն բային դնի զօրութ. զոր օրինակ, “ Եթէ կամիս հետևիլ ինձ, պահեա զբանս նորա ”. Առք. նարդ. Ուր անուն բայիցս կամս և պահեա զօրութ դնի. այսինքն է դու.

Իսկ երբեմն ներհակ այսմ՝ բայն դնի զօրութ, և անուն բային ներգործութ. զոր օրինակ, “ Բանիւ և կերպարանօք բազում խոնարհք, իսկ արդեամբք և ճշմարտութ դուն ուրեք ”. իբ բանիւ և կերպարանօք բազում խոնարհք գտանին, են. Աւգ.

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս երկրորդ համաձայնութեան բայից, կամ Յաղագս խնդրոյ բայից.

Բայց յետ համաձայնելոյ ընդ այնս որք ասին անուն բայի, և նշանակեն զտէր գործողութեան կամ կրելութեան, պահանջեն համաձայնիլ և ընդ այնս՝ որք ասին խնդիր բայի, և նշանակեն զենթական, այսինքն զկրողն գործողութեան կամ զեղըն, կամ զպատճառ նոցին, կամ զվախճան, կամ զգործ, կամ զայն յորմէ լինի կրել.

Արդ յութից մասանց բանի՝ այնք լինին տիրապէս խնդիր բայի, որք լինին յատկապէս անուն բայի. այսինքն է անունն, դերանունն և ընդունելութիւն, ևս և աներևոյթքն, ընդ որս և դերբայքն. որպէս յայտ լիցի 'ի ստորև գրելոցդ.

Իսկ այլ մասունք բայի նիւթապէս միայն կարեն լինել խնդիր բայի. իբ, “ Յաճախաբար դնէ զէտուրն ինձ ”. Սող.
“ Զայս դիւէս մի յանյուսութէ կարծիս ձգեր ”. Նար.
“ Առաչս և ողս 'ի նմանէ յառաջբերեալ հաստատէ ”. Անդ.

“Իսկ ես առ̃ղեզկելի անձին իմոյ կարգայի„ · Յովհ․ կաթ․
“Օձն խորոց եդ ՚ի միջի„ · Սարգ ։
“Գլուխ զօրութե̃ն պէտքն դնէ„ · Ոսկեբ ։
“Զայն միայն յաւել, և հայր ազգաց բազմաց արար„ · Նոյնն ։

Երբեմն նաև ամբողջ բանք լինին խնդիր բայի · ոպ̃, “Եւ ՚ի հնումն զայսր տպաւորութի̃ օրինակաւ նկարագրեցեր՝ զդարձարուքն առ իս, և ես դառնամ առ ձեզ„ · Նար ։ Ուր բանս դարձուածս են, է խնդիր սեռի բայիս նկարագրեցեր ։

Այլ արդ որովհետև բայք պէսպէս են սեռից, և իւրաքանչիւրն այլևայլ նշանակութ̃, վասն որոյ կրկին խնդիր կարեն առնուլ․ մի ըստ սեռի, և միւս ևս ը̃ բնութե̃ ։ **Խնդիր սեռին** է այն, զոր պահանջէ բայն վասն սեռից զանազանելոյ · իսկ **խնդիր բնութեն** է այն, զոր իւրաքանչիւր բայ պահանջէ ը̃ իւրում՚նշանակութեն ։ Արդ ներգործական բայք, ընդ որս և հասարակք և կրաւորականք առնուն նախ զխնդիր սեռի, և երկրորդ՝ զխնդիր բնութե̃ ։ Իսկ չէզոքականք ընդ որս և էականք առնուն զխնդիր բնութե̃ ևեթ․ զորոց ունիմք խօսիլ այժմ ՚ի մասնաւորի․ (տես զայսմանէ յընդարձակն․ գ̃․ 17 ։)

ԳԼՈՒԽ ԺԲ․

Յաղագս խնդրոյ սեռի Ներգործական և Հասարակ բայից ։

Ներգործական բայք առ հասարակ առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի · ոպ̃, “Զքարինս ողորկեցին ջուրք„ · Յոբ ։ Ուր հայցական անունդ զքարինս է խնդիր սեռի ներգործական բայիս ողորկեցին ։

Նոյնպէս և հասարակ բայք յորժամ վարին իբրև զներգործական, առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի · ոպ̃, “Քանզի յիմարն յիմարութի̃ խօսեսցի, և սիրտ նորա զնանրութի̃ խորհեսցի„ · Եսայ ։ Ուր հայցական հոլովքս յիմարութիւն և ցնորութիւն են խնդիր սեռի հասարակ բայիցս խօսեցայ և խորհեցայ։

Այլ երբեմն այս խնդիր սեռի զօրութիւն դնի. որ, «Երանելի այն ոչ է որ ուսուցանէ, այլ այն որ առնէ և ուսուցանէ»։ Մարկ հայր։ Ուր զօրութիւն կայ խնդիր սեռին. որ է զբանն Աստուծոյ. որպէս թէ ասէր. ոչ է այն երանելի՝ որ զբանն Աստուծոյ ուսուցանէ, այլ այն որ առնէ զնոյն։

Գիտել արժան է աստ՝ զի ներգործական բայք ինչ ՚ի յարիլն յարմատս իւրեանց կամ ՚ի բայանուանս առնուն զնոսա ՚ի հայցական հոլովն ոչ իբր խնդիր սեռի, այլ իբր խնդիր բնութեան. որ, «Զհարուածս թշնամւոյ հարի զքեզ»․ այսինքն հարուածովք թշնամւոյ. Երեմ։

Եւ երբեմն ՚ի տեղի այսպիսի խնդրոյ դնի անորոշ հայցական կամ ուղղական. որ, «Եհար զնա հարուած յոյժ»։ Նաւէ։

«Եւ ելաց Եզեկիա լալիւն մեծ»․ այսինքն լալով մեծաւ. Եսայ։ Այս յաճախ ևս պատահի ՚ի չէզոքական բայս. զորմէ տես ՚ի գլ. իա. ՚ի կանոնն ժա։

Այսպիսի խնդիր ՚ի գործ ածի և ՚ի յարաբերականս. որ, «Սէրն զոր սիրեցեր զիս ՚ի նոսա լիցի»․ որ է սէրն որով սիրեցեր զիս. Յովհ։

Գիտելի է ևս, զի ոմանք ՚ի ներգործական բայից փոխանակ հայցականի առնուն զխնդիր սեռի ՚ի տրական հոլովն. որ, «Երկրպագեսցուք աստուածայինն սուրբ նշանիս»․ Շարակնոց։

«Զօրացոյց զմեզ, զի յաղթեսցուք այնմիկ՝ որ յաղթահարեաց զբնութիւնս մեր»․ Իգնատ։

«Ոչինչ կարէին սպանանել նմա»․ Յովհ. Ոսկ։

«Մի՛ ստգտանեսցուք պատուիրանին»․ Մարգ։

Եւ ընդ հակառակն ոմանք ՚ի չէզոքական բայից՝ ուրեք ուրեք ներգործականապէս վարելով, խնդիր սեռի առնուն ՚ի հայցական հոլովն. որ, «Եթէ տղայքդ լռեն զօրհնաբանութիւնն»․ Մամբրէ։ Զայսցանէ տես յընդարձակն. գ. 18։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս խնդրոյ բնութեան ներգործական բայից :

Բայք ներգործականք բաց 'ի խնդրոյ սեռին առնուն նաև զխնդիր բնութեան 'ի պէսպէս հոլովս . և այս չորեքկին : Նախ՝ երբ ըստ էութեան, որ և ասի բուն խնդիր բնութեան . այսինքն այնպիսի զոր բնութիւն բային ըստ առաջին նշանակութեան իւրում պահանջէ . որպէս բայս սպասել ըստ ինքեան պահանջէ առնուլ խնդիր բնութեան զնախդրիւ տրական . գր̅, " Սպասեաց առ մեզ զհոգի իւր „ . Մծբ : Ուր նախդրիւ տրական հոլովդ առ մեզ, է բուն խնդիր բնութեան բայիս սպասել :

Երկրորդ՝ երբ յարմարական կամ ըստ յարմարութեան . այսինքն այնպիսի խնդիր որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ բնութեան, յարմար այնմ նշանակութեան զոր ունի բայն 'ի բանի անդ : Որպէս եթէ բայս սպասել՝ որ ըստ ինքեան պահանջէ առնուլ զնախդրիւ տրական, փոխանակ նորա առնուցու զպարառական, կամ զայլ հոլով 'ի ձեռն նախադրութեան . գր̅, " Հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ սպասէ զկողմամբք Նուաշ գաւառի „ . Յովհ . կաթ : Ուր բառդ զկողմամբք եդեալ է փոխանակ բուն խնդրոյ սպասել բային՝ երբ խնդիր յարմարական . այսինքն յարմարեալ և եդեալ 'ի տեղի բուն խնդրոյ սպասելոյն, մինչև ոչ ևս զօրութիւն պահանջել զայն :

Երրորդ՝ երբ երկրորդական . այսինքն այնպիսի խնդիր զոր բայն ըստ բնութեան իւրում երկրորդաբար պահանջէ : Որպէս բայս սպասել երկրորդաբար պահանջէ առնուլ զխնդիր 'ի հոլովս բացառական . գր̅, " Սպասէաք 'ի մեզ Տէր զօգնութիւն 'ի լեռնէ սիոնի քումմէ „ . Շար : Ուր բացառական հոլովս 'ի լեռնէ դնի երբ երկրորդական խնդիր բայիս սպասէաք :

Չորրորդ՝ երբ պատահական կամ ըստ պատահման . այսինքն այնպիսի խնդիր՝ որ ըստ պատահման դիպի

բային. որպէս նոյն աւետել բայն կարէ առնուլ ըստ պատահման զխնդիր յայլեայլ հոլովս, և կամ նախադրութիւնք կամ դերբայիւք. օր, ՙՙ Որ աւետաւոր քում գալստեանդ աւետեցեր յաշխարհ զօր մարգարէսն,, . Շար. Ուր ուղղական հոլովս աւետաւոր՝ է պատահական խնդիր բայիս աւետեցեր։
ՙՙ Աւետեցին զերիտասարդս իւրեանց զջրոյ,, . Երեմ.։ Որ պատմական հոլովս զջրոյ է պատահական խնդիր բայիս աւետեցին։ Սոյնպէս և խնդիրս։

Իսկ առ 'ի որոշել թէ ներգործական բայք յո՛ր հոլովս պահանջեն տիրապէս զխնդիր բնութեան ըստ ինքեան, դիցուք քանի մի կանոնս հանդերձ օրինակօք։ Եւ թէպէտ զորս կանոնադրեմք աստ՝ նոքին զայլ խնդիր ևս առնուն, բայց այնոքիկ ոչ են բուն խնդիր. այլ կամ երկրորդական, կամ յարմարական, և կամ պատահական։ Եւ զի որք երկրորդականքն են և պատահականք՝ ինքնին որոշին, թողումք զայնս, և միայն վասն յարմարականաց յարեմք զկնի բուն խնդրոց երիս երիս օրինակս։

Կանոն ա։

Բայք որք ասին առաջին կարգի, այսինքն որք նշանակեն զգործողութիւն առնելոյ զիմն այս ինչ, կամ համարելոյ և կամ անուանելոյ զիմն այսպիսի ինչ, առնուն զխնդիր բնութեան յուղղական հոլովի. և սոքա են սակաւ յոյժ. զոր օրինակ, ՙՙ Այլ ամ մեղք... մեղաւոր միայն առնէին զմարդն, իսկ ամբարտաւանութիւն սատանայ գլխովին առնէ,, . Սարգ.։
ՙՙ Զահեակն հեթանոսաց աջակողմնադրեցին,, . Նար.։
ՙՙ Զեղբարս ջատագովս օրինաց փոխարէն նմին համարեմք,, . Լամբ.։
ՙՙ Բանտ զկեանս աշխարհիս անուանէ,, . Յովհ. Իմաստ.։
ՙՙ Բան զնա աւետարանիչս յորջորջէ,, . Նանայ։

Ոմանք 'ի տեղի բուն խնդրոյ ընդ յարմարականին առնուն զուղղական. օր, Ապաշխարութիւն զմարդ հրեշտակ յարդարէ,, . Սարգ.։

“Իմաստասէրք փոքր աշխարհ ասացին զմարդ”. Խոսրով։
“Եթէ զշամբս եղեգանց յօրինես գրիչ... ոչ ճարտարական կարծես զնոսա”. Սարգ։

Կանոն Բ.

Բայք որք առին երկրորդ հարցն, այսինքն որք ունին զնշանակութիւն տուչական՝ կամ իբր տուողական, առնուն զվերջահոլով տրական. որպէս, “Տուր իմաստնոյն պատճառս և իմաստնագոյն ևս լիցի”. Առակ։
“Առաքելոյն դասք արբուցին հեթանոսաց զջուրն կենդանի”. Եպիփանոս։
“Տնօրինեաց մարդկան ազգի զփրկութիւն”. Լամբ։
“Յաջողեաց նմա շահս ՚ի վաստակոց իւրոց”. Իմաստ։
“Հորդեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի”. Լամբ։
“Ստութեան և առասպելեաց բանից (զլսելիսն) յօժարութիւն”. Շնորհ։

Նմանք ըստ յարմարութեան առնուն զվերջահոլով տրական. որպէս, “Բարի առնէ տէր բարեաց”. Սաղ։
“Ամենայն փոխանակեսցուք սիրոյն Քրիստոսի”. Խոսրով։
“Շրթանց և լեզուոյ դնել դրունս աղաչեմք”. Շնորհ։

Կանոն Գ.

Բայք որք առին երրորդ հարցն, այսինքն որք նշանակեն զգործողութիւն ածելոյ զինչ առ այլ, առնուն ըզնախդրիւ տրական. որպէս, “Խոստովանելն ՚ի խոնարհութիւն ածէ զմեզ”. Խոսրով։
“Դուք ոչ երբէք բռնէր զոք վարէք ՚ի կորուստ”. Եղիշ։
“Ոչ դադարեն մատուցանել [illegible] յառագաստ խաղաղութեան երկնաւոր հարսնարանին”. Շնորհ։
“Կարկառեա առ իս զաջդ ամենազօր”. Նար։
“Ի սեղան արքայութեան զմեզ հրաւիրէ”. Սարգ։
“Օգիրն ՚ի հոգի փոխարկէ”. Արիստակէս։

Նմանք ըստ յարմարութեան առնուն զնախդրիւ տրական. որպէս,
“Մի ես համարեցից զնոսա ՚ի մարդիկ”. Եսայ։

"Եթէ ես ինչ սուտեցի այսմիկ երդմանս, հատո՟ տ՟ր ա՟ծ զվնաս սուտութ՟ե իմոյ 'ի գլուխ իմ,,. Յովհ. Ոսկ.
"Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա,,. փոխանակ ասելոյ, յորմէ խնդրիցէ. Մատ. և Ղուկ.

Կանոն Զ.

Բայք որք ասին չորրորդ կարգի, այսինքն որք ունին զնշանակութ՟ի բացառողական, (այս է՝ բառնալոյ կամ առնլոյ զի՟ն յայլմէ), առնուն զխնդիր 'ի հոլո՟վ բացառական. զոր օրինակ, "Բարձէք 'ի ձէնջ զընդունայն մխիթարութ՟ին ձեր,,. Եսայ.
"Զձեզ ընտրեաց տ՟ր յա՟մ ազգաց,,. [illegible].
"Մի՞ ոք զձեր բաժինն 'ի ձէնջ հատանիցէ,,. Եղիշէ.
"Փարատեա 'ի մտաց իմոց զմէգ մթութ՟ե,,. Նարեկ.
"Հայցէր 'ի կենացդ զմահ,,. Շար.
"Նոքա ուսան 'ի քէն զհեզութ՟ի, և մեզ աւանդեցին,,. Լամբ.
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զբացառական. ո՟ր,
"Զտուն իւր յանիրաւ ստացուածոյ անտի լնու, և մեծանալ կարծէ,,. Շնորհ.
"Հաստատեաց զաշխարհս յանկերպարան նիւթոյ,,. Իմաստ.
"Սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն,,. [illegible].

Կանոն Է.

Բայք որք ասին հինգերորդ կարգի, այսինքն որք ունին զնշանակութ՟ի պատմողական, (այս է՝ պատմելոյ, կամ խորհելոյ ինչ զայլմէ), առնուն զխնդիր պատմական. զոր օրինակ, "Պատմեսցուք կշռով զանպատումն զօրութ՟ե,,. Սեբեր.
"Հրեշտակք զնմանէ խօսէին պարծանօք,,. Կոչ.
"Զսահմանակից ազգայն [illegible],,. Գէորգ.
"Զորոց և ոչ մի ոք յանձին կալաւ ժամանակագրել,,. Խոր.
"Ո՞չ ապաքէն զայս ա՟մ ուսաւ զնմանէ [illegible],,. [illegible].

“ Մի՛ խորհեսջիր չար զումեքէ ”․ Վարք հարց ։
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զպատմական ․ զր ,
“ Արք անօրէնք հուր հարին զքաղաքէ ”․ Առակ ։
“ Հանիցեն անուն չար զձէնջ վն որդւոյ մարդոյ ”․ Ղուկ ։
“ Գրէր և կնքէր զերդումն ․ և կարդէր զաւետարանէն ”․ Եղիշէ ։

Կանոն Զ ։

Բայց որք ասին վեցերորդ կարգի, այսինքն որք նշանակեն զգործողութի առնելոյ զկնի իւիք՝ իբր գործեօք, կամ իբր միջնորդօք, առնուն զխնդիր գործիական ․ զր , “ Ի ծակօք իմն կշռէր զիւր և զամենեցուն կենցաղս ”․ Յովհ․ կաթ․ ։
“ Կերակրեցին զնս քաղցրութբ բանին ճշմարտութե ”․ Ագթ ։
“ Զի որով պատժեցեր զհակառակորդսն, նովին զմեզ առ քեզ կոչեցեալ փառաւորեցեր ”․ Իմաստ ։
“ Զանազան ծաղկօք զարդարեաց զերկիր ”․ Նանայ ։
“ Ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս ”․ Եղիշէ ։
“ Որ առատապէս սերմանէ, նա բազմապատիկ ածմամբ զգիրկս իւր որայիւքն ”․ Շնորհ ։
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զգործիական ․ զր ,
“ Նովաւ ուսանեն իշխանք նց զմարդասիրութի ”․ Եղիշէ ։
“ Վարեսցէ զաշխարհ սրբութբ և արդարութբ ”․ Իմաստ ։
“ Զըմպելի իմ արտասուօք խառնեցի ”․ Սաղ ։
Նաև գիտելի է, զի որովհետև գործողութիւնք հասարակօրէն իւիք կատարին, բայց վասն նշանակելոյ ըզգործողութիւն՝ գրեթէ առ հասարակ կարեն առնուլ զխնդիր գործիական, մանաւանդ անցողականքն ․ որոյ վասն ոչ է հարկ տալ օրինակս ։

Կանոն Է ։

Բայց որք ասին եօթներորդ կարգի, այսինքն որք նշանակեն զներգործել իրիք շուրջ զայլով, առնուն ըզխնդիր պարառական․ և սոքա են սակաւ յոյժ ․ զր ,

“Որսերեն զօրէնս, պատեն զինքեամբք պարիսպ„. Բուզ.
“Շուրջ ձուլեալ զպարսպաւ զբոլոր քաղաքն„. Պատմ. Եղիշ.
“Զաչսն իւր յածեալ զբազմականօքն„. Նոյնն.
“Զի՞ անցուցանես զքեւ զպարգևս արքայութեան երկնից„. Սեւերիանոս.

Ոմանք մանաւանդ թէ բազումք ըստ յարմարութեան առնուն զխնդիր պարառական. որպ, “Զամենայն վնաս զիւր գործոցն զխորհրդակցօքն արկանէր„. Եղիշէ.
“Իսկ զգօսացելովքն որ 'ի հաւանութիւն ոչ կամէին գալ, տեղասցէ զանձրև փայլատականցն 'ի կիզուլ„. Եզն.
“Ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարհաւն շրջէր„. Յովհ. կաթ.
“Զօրս իւր զթիկամբք թողեալ, և ընտրեալ արս իբրև Ի միայն՝ գան հասանեն 'ի ձորափոր„. Նոյնն.
“Զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին„. Մով.

Գիտելի է, զի ոմանք 'ի ներգործական բայից որք հային 'ի ծաղր կամ յարհամարհանս, զպարառական խնդիրն այնպէս սեպհականեն ինքեանց, մինչև 'ի տեղի խնդրոյ սեռի առնուլ զայն. որպ, “Մի՛ ոք յանմըտաց... այպանեսցէ զբանիւք մերովք„. Շնորհ.
“Որ խածանէ զընչիւք, անտրտում կայ„. Եզնիկ.
“Փաղաքշէր զպօղոսիւ՝ տալ նմա արծաթ„. Ճառընտ.
“Որ հաւատայ պատժոց մեղաւորացն, և փառաց արդարոցն, և զիմաստութիւն 'ի գործ ածէ, նշկահէ զմեղօք„. Լամբ.

Գիտելի է ևս, զի երբեմն ներգործական բայք ինչ (մանաւանդ բայս առնել) վասն յարելոյ 'ի պէսպէս անուանս իբր յանորոշ հայցականս, որովք իբր մի բայ վարին, առնուն զխնդիր 'ի պարառական հոլովի. որպ,
“Ծաղր արարէն զբանիւք հրամանաց իմոց„. Յուդիթ.
“Մի՛ զանց արասցուք զմերով փրկութեամբս„. Մարգ.
“Ոչ երբեք անփոյթ արարեալ զքոյում խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի„. Խոր.

Կանոն Է :

Բայք որք ասին ուներորդ կարգի, այսինքն որք ունին զնշանակութի առնելոյ կամ ունելոյ ինչ յիմիք 'ի ներքս, առնուն զխնդիր ներգոյական . զր, “Դիցուք զգանձս մեր յերկինս. զի յորժամ երթայցեմք անդ, բացցուք, և ուրախ լիցուք ”. Մծբ :
„Մի՛ պահեսցես 'ի գանձարանիդ զխիւթեալ իմ պարտուցս անօրէնութի ”. Նար :
“Որ կամաւ կուրութի յինքն կրէ, ոչ երբէք կարէ նա գալ յառողջութիւն ”. Յովհ. կաթ :
“Զսէրն ո՟յ ոչ ունէր յանձինս ”. Յովհ :
“Զկոյրն թեպէտև յոսկի համակեսցի ոչ ինչ զգայ, և նոքօք ոչ ամբարտաւանէ ”. Սարգ :
“Զհոգին կենդանի 'ի նմա պղտորէ ”. Լամբ :
Ոմանք ըստ յարմարութե առնուն զներգոյական . զր,
“Զայնչափ չարչարանս բերէր 'ի մարմնի ”. Գրիգ. լուս :
“Ի հրահանգս կրթութե ջերմեցին զնոսա ”. Եղիշէ :
“Պարարեցաք զանձինս մեր 'ի զանազան խորտիկս ”. Նոյնն :

Կանոն Ը :

Բայք որք ասին իններորդ կարգի, այսինքն որք նշանակեն զներգործել ինչ ընդ պարագայիւք իւիք, առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութե . զոր օրինակ,
“Մի՛ ընդ ստուերի այսր մթութե զանճառելիդ լոյս փոխանակէր ”. Նարեկացի :
“Տուն ը՟ տուն կցեմք . և ագարակ ընդ ագարակ խառնեմք ”. Մեցոր :
“Զիւր կամսն ոչ դաշնանեայ ընդ կամացն ո՟յ ”. Սարգ :
“Եթէ ցանկալի է քեզ ընդ նոսա (ո՟ր ը՟ սէս) բուել զանձն քո, որբեա զնա ո՟ւ պարգևացն քոյ ”. Սեբեր :
“Զհոգս կենցաղոյս նկարեմք 'ի վերայ անձանց ”. Լամբ :
“Արձակէր զատամունսն 'ի վերայ թագաւորին Պագկայ ”. Յովհ. կաթ :

Բազում բայք եւս ըստ յարմարութեան անուան զխնդիր 'ի ձեռն նախադրութեան. որ, "Ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի". Նար։
"Եւ զգուան ջգետոյ (զովտ) գնէր իւր". Օննդոյ։
"Իսկ կէսքն ... զմահ քան զկեանս ընտրեցին". Եղիշէ։

Նշմարելի է, զի գրեթէ ամենայն բայք կարեն առնուլ զխնդիր 'ի ձեռն նախադրութեան պէսպէս օրինակաւ։

Կանոն Ճ։

Անցողական բայք հասարակօրէն զայնպիսի խնդիր ընութեան անուան, զորպիսի պահանջեն բայքն յորոց բղխեն. որ, "Յեցուցաք զդրդուեալ եկեղեցի մեր 'ի գաւազանն երկաթի". Լամբ։
"Ճանապարհի նմանեցոյց զարդարութիւն". Խոսրով։
"Խոնարհութիւն զԱստուած 'ի մարդիկ խոնարհեցոյց, և զմարդիկ 'ի խոնարհութենէ յերկինս բարձրացոյց". Մարգ։
"Անհնար է զրկողին ողորմութիւն գտանել յԱստուծոյ՝ եթէ զզրկանսն 'ի զրկելոյն ոչ դարձուցանէ". Նոյնն։
"Որպէս անցոյց ընդ ընկերսն իւր՝ նոյն անցք անցանեն ընդ նա". Մծբ։
"Որ ախտիցն՝ յօժարութեամբ տուեալ տեղի ... (և) խնամով։ Դարձուցանէ յինքեան զխմորն չարութեան . . . ոչ է, և ոչ ասի ոք այնպիսին". Շնորհ։

Կանոն ՃԱ։

Բայք բարդք և բաղադրեալք, թէ ներգործականք, և թէ չէզոքականք, որոց նշանակութիւն չիցէ ըստ ամենայնի փոփոխեալ, իբր 'ի բազումս զայնպիսի խնդիր ընութեան անուան՝ զորպիսի պահանջեն 'ի պարզ գոյն իւրեանց. զոր օրինակ, "Զամենայն բարեաց ըղձտիպսն և զօրինակսն փութասջիք յանձինս ձեր նկարագրել. Շնորհ։
"Սերականչեայ յորդեգրութիւն զտիեզերս". Զաքար կթղ։
"Չհնազանդեալ աստուածական հրամանին՝ մատուցեր 'ի չարիս. և անտի լինէր սկիզբն չարեաց". Եզնիկ։

“ Ասա նմա զպատիւ արդարոցն ... զի առ յոյս քաղցրագունից՝ ’ի բարիսն ձեռնարկեսցէ ”. Մարգ :

Իսկ որք զայլ խնդիր առնուն վերաբերին ’ի նշանակութիս այնց բայից, զորս եդաք և դնելոց եմք յայլ կանոնս :

Այլ վասն բայից որք բարդին ’ի բառից բանել և խօսել, գիտելի է. զի սոքա առհասարակ երբեմն իբր ներգործական վարին, և երբեմն իբր չէզոքական : Յորժամ իբր ներգործական վարին, հասարակօրէն առնուն զխնդիր բնութե̅ ’ի հոլովս տրական. ո̅ր, “ Զմարմնոյն յատկութի̅ն ոչ խորշի Պօղոս ծոփրաբանել մեզ ”. Գր. նար :
“ Յանլուր ականջս ոչ է օգուտ ինչ (զյորդորանս) երկայնաբանել. այլ՝ զուր աշխատանք ”. Խոսրով:
Իսկ յորժամ իբր չէզոքական վարին, ըստ ինքեան պահանջեն զխնդիր ’ի հոլովս պատմական. ո̅ր, “ Պատկառեալ զիմօք համայնից ունօղս՝ զմնալից աղերսաբանել զմեռելոցն՝ քեզ կենդանեաց ”. Նարեկ :
“ Որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ՝ մահու վախճանեսցի ”. Մարկ :

Կանոն ԺԷ :

Ներգործական բայքս Չափել, առնել, շինել, ևն, յորժամ յարին յայնպիսի անուանս, որք ունին զնշանակութիւն չափմանց՝ որպէս լայնութե̅, երկայնութե̅, կանգնոյ, կշռոյ, ևն, առնուն զնոսա իբր երկրորդական խնդիր ’ի պէսպէս հոլովս :
Երբեմն մանաւանդ թէ բազում անգամ յուղղականն. ո̅ր, “ Եւ չափեաց զերկայնութի̅ նորա ե̅ կանգուն և զլայնութի̅ն ե̅ կանգուն ”. Եզեկ :
“ Արար բարձրութի̅ պարսպին հ̅ կանգուն ”. Յուդիթ :
“ Եւ շինեաց ի̅ կանգուն ... զմի կողմանոցն ”: Թագ :
“ Առ քեզ ... հիրիկ՝ հինգ հարիւր սիկղ ”. Ելից :
Երբեմն ’ի բացառականն. ո̅ր, “ Եւ չափեաց զորմ

տաճարին 'ի վեց կանգնոյ, և զլայնութիւն կողման տանն 'ի չորից կանգնոց „. Եզեկ։

“ Ի տասն կանգնոյ զերկայնութիւն միոյ սիւնակին տանիցես, և 'ի միջէ կանգնոյ և 'ի կիսոյ զթանձրութիւն և զլայնութիւն միոյ սիւնակին „. Ելից։

“ Եւ նեցուկք 'ի ներքոյ նոր՟ շուրջանակի պատէին զնա 'ի տասն կանգնոյ „. Գ. Թագ։

Երբեմն 'ի գործիականն. որպէս, “ Եւ չափեաց հազար չափովն զուղխոմն „. Եզեկ։

“ Եւ... իւղ ձիթենեաց հիմենեաւ միով „. Ելից։

“ Եւ գոգեալք երեսուն և երեք կանգնովք պատէին զնա շուրջանակի „. Ա. Թագ։

Երբեմն յուղղականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն. որպէս, “ Եւ չափեաց զսրահն յերկայնութիւն Ճ կանգուն, և 'ի լայնութիւն Ճ կանգուն „. Եզեկ։

“ Եւ զկամար սեանցն արար յիսուն կանգուն յերկայնութիւն, և երեսուն 'ի լայնութիւն „. Գ. Թագ։

“ Շինեաց խորձիթ 'ի լայնութիւն ոտնաչափս չորս, և յերկայնութիւն ոտնաչափս ութ „. Մարգ. հարց։

Երբեմն 'ի գործիականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն. որպէս, “ Արասցես զնա կանգնաւ յերկայնութիւն, և կանգնաւ 'ի լայնութիւն „. Ելից։

“ Արասցես զնա չորեքանկիւնի՝ թզաւ յերկայնութիւն, և թզաւ 'ի լայնութիւն „. Նոյն։

“ Չորեքկուսի և կրկին գործեաց զտախտակն թզաւ յերկայնութիւն, և թզաւ 'ի լայնութիւն „. Նոյն։

Կանոն ԾԳ։

Ներգործական բայքս Վաճառեմ, գնեմ, վարձեմ, 'ի վարձու տամ, սակ արկանեմ, են՝ և որք յարին յանուանս գնոց, առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն՝ իբր վերկրորդական. որպէս, “ Վաճառեսցեն զՅովսէփ իսմայելացւոցն քսան դահեկանի՝ „. Ծնն։

“ Գնեաց զնա իննսուն դահեկանի „. Մարգ. հարց։

“ Որ վաճառեաց Լ արծաթոյ „. Եփրեմ։

“ Ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս „. Մատթ։

« Ստացաւ զվիճակ անդին ... ճ ոչխարի »։ Ծնն ։
« Բայց թէ կամիս՝ փողոյ առնում »։ Վարք հարց ։

Այսպիսի բայք երբեմն փոխանակ սեռականի առնուն զայլ հոլովս․ կամ նախադրութիւն ընդ․ զոր օրինակ, « Զեղբայր իւրեանց վաճառեցին՝ ընդ Ի դահեկանի »։ Յհ̃ սրբ ։
« Նա վարձեաց նոքօք (այն է արծաթովք) Աբիմելէք արս սրիկայս և զարհուրեցուցիչս »։ Դատ ։
« Արկ վարձս մշակացն աւուրն դահեկան »։ Մատ․
« Տուգանեաց զիս հարիւր լիտր ոսկւոյ »։ Ոսկէբ ։
« Ստացայ ես զնոսա 'ի գնոց արծաթոյ »։ Յովհ․ կաթ․

Իսկ բայքս հարկանել և շարժանել կամ շարժուցանել՝ իբր 'ի բազումս առնուն զնախդրիւ սեռական իբրև զխնդիր յարմարական․ որ, « Զմանկունս ծնեալ մեզ 'ի քաղդէացւոց սերմանէն՝ զվիմի հարցուք »։ Լամբ ։
« Յետս յետս տարեալ՝ շարժոյց զգետնի »։ Խորեն ։

ԳԼՈՒԽ Ի․

Յաղագս խնդրոյ կրաւորական բայից ։

Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հոլովս բացառական․ որ, « Յաղթեցաւ ողորմութիւն յարդարութենէ »։ Լամբ․ ատեն։ Ուր կրաւորական բայս յաղթեցաւ առեալ է խնդիր սեռի զբացառական հոլովդ յարդարութենէ․ իսկ ողորմութիւն է անուն բայիս յաղթեցաւ ։

Ըստ այսմ և հասարակ բայք՝ յորժամ կրաւորականաբար վարին, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովս․ որ, « Պետրոս՝ վէմ դաւանեցաւ յոսկեղէն բերանոյն »։ Մամբրէ վերծանող ճառ գալստեան ։

Բայց գիտելի է, զի բազում անգամ կրաւորական բայք, ևս և հասարակք, զօրութք ունին զխնդիր սեռին․ զոր օրինակ, « Հանապազ չաղիմ, և ոչ երբեք խրատիմ »։ Նարեկ ։

Երբեմն ևս կրաւորական բայք իբր չէզոքական վարելով՝ ոչ պահանջեն զխնդիր սեռի․ որ, « Հաւատով հաստատի սէրն ճշմարիտ »։ Մծբ ։

Գիտելի է դարձեալ, զի կրաւորական բայք երբեմն փոխանակ բացառականի զայնպիսի խնդիր առնուն, որ ըստ իմիք համարի նոցա այն իբր խնդիր սեռի և այս յաւէտ 'ի գործիական հոլովն. որ, " Զարն բարեաւն յաղթէ, և ոչ չարեաւն „. փոխանակ ասելոյ, 'ի բարւոյն՝ և ոչ 'ի չարէն „. Լամբ։

" Նշաւակեցաւ անմեղութիւն քո պարտականն մեղաց աշխարհի „. փոխ. ասելոյ, յանմեղութենէն քումմէ. Լամբ։

" Ի խեթ խղճիս խոցոտեմ, և բոցով շնչոյս ճենճերեմ „. փոխանակ ասելոյ, 'ի խթմանէ խղճիս, ևն. Նար։

Իսկ թէ զորպիսի խնդիր բնութեան առնուն կրաւորական բայք, ոչ է հարկ գրել ինչ. զի զայնպիսի առնուն՝ զորպիսի պահանջեն ներգործականք իւրեանց. և այն 'ի վարիլ իւրեանց իբր չեզոքական. որ, " Լոյս ոչ ծռի 'ի խաւար, այլ զխաւարն լուսաւորէ „. Յաճախ։

" Առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ „. Նարեկ։

" Նա ծանուցեալ եմ ինձ, և ոչ անծանօթ լինեն „. Շնորհ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս խնդրոյ չեզոքական բայից։

Չեզոքական բայք թէ ներգործակերպք և թէ կրաւորակերպք ոչ առնուն խնդիր սեռի. զի 'ի սեռէ իւրեանց ոչ նշանակեն զներգործել գործողին յենթակայն, այլ զենթակայիւ. վասն որոյ միայն առ նշանակելոյ բնութեան իւրեանց առնուն խնդիր 'ի պէսպէս հոլովս։ Նաև որպէս ասացաք զներգործականաց, սոյնպէս և սոքա չորեքկին առնուն զայսպիսի խնդիր։

Նախ՝ **ըստ ենթեան**, որ և ասի **բուն խնդիր**. այսինքն այնպիսի՝ զոր բնութիւն բային 'ի նշանակութենէ իւրմէ նախ պահանջէ. որպէս բայս **գամ** 'ի նշանակութենէ իւրմէ նախ պահանջէ զնախդրիւ տրական. զոր օրինակ, " Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն „. Յովհ։

Երկրորդ՝ **յարմարական**. այսինքն զայնպիսի՝ որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ՝ յայլ հոլով քան զոր բնութիւն բային ը՟ ինքեան պահանջէ ․ ո՟պ եթէ գամ բայն փոխանակ առնլոյ զնախդրիւ տրական՝ առնուցու զպարառական․ զոր օրինակ, „ Միշտ զերկրաւ գամք ,,․ Խոսր։ Կամ հանդերձ նախադրութե՟ ․ զոր օրինակ, „ Յանկարծակի գայցէ 'ի վերայ նորա մահ ,,․ Յաճախ ։

Երրորդ՝ երկրորդական․ այսինքն զայնպիսի՝ զոր երկրորդաբար պահանջէ բնութի՟ բային ․ որպէս բայս գամ երկրորդաբար կարէ առնուլ զբացառական ․ զոր օրինակ, „ Գային առ նա յա՟մ կողմանց ,,․ Մարկ ։

Չորրորդ՝ պատահական ․ այսինքն զայնպիսի՝ որ ըստ ինքեան ոչ պատշաճի բնութե՟ բային, այլ ըստ պատահման միայն, և կամ ըստ հեռաւոր ինչ պատշաճողութե՟ ․ որպէս եթէ գամ բայն ըստ պատահման առնուցու զխնդիր 'ի հոլո՟վ գործիական՝ կամ նախադրութե՟ ․ զ՟ր, „ Գամ անուամբ տ՟ն զօրութե՟ց ,,․ ա՟․ Թագ ։ „ Բազում հիւանդութի՟ք վ՟ մեղաց գան ,,․ Գէորգ ։

Իսկ առ 'ի որոշել թէ չէզոքական բայք յո՟ր հոլովս առնուն զխնդիր բնութե՟ ըստ ինքեան՝ դիցուք զմետասան կանոնս հանդերձ օրինակօք ինչ ․ յորս յարեսցուք և զօրինակս խնդրոց յարմարականաց ․

Կանոն ա՟ ։

Չէզոքական բայք ոչ առնուն զխնդիր բնութե՟ ըստ ինքեան յուղղական հոլո՟վ, այլ երկրորդաբար միայն, կամ ըստ պատահման և կ՟մ ըստ յարմարութե՟ ․ զոր օրինակ, „ Օրէնք ա՟ծային կայցեն թագաւոր 'ի վերայ ա՟մի ,,․ Եղիշէ ։ ։

„ Ընդէ՞ր (ո՛վ արծաթասէր՝) կապպարէշք և ագահ, տանիցես 'ի գերեզմանն ,,․ Մարգ ։

„ Ո՞ զի կեղծաւորութի՟ է, որ 'ի տեսարանսն ռամիկ գոլով (ոք՝) թագաւոր կերպարանի ,,․ Նոյնն ։

„ Ստութի՟ է և ճշմարտութե՟ն չնմանայ ,,․ Նոյն ։

„ Մարմին տարցի, և զմարմնոյ իրս սիրեցաք, և զկնի մարմնական իրաց ընթացաք ,,․ Խոսրով ։

„ Ախտացեալք ըստ մարմնոյ՝ գամք շնչաւորս ,,․ Լամբ ․

Կանոն Է:

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութիւն հետեւողական կամ հաղորդական, առնուն զվերջահոլով տրական. գբ, “Զտէրունի պատուէրն լքեալ՝ թելադրութեան օձին հետեւեցին”. Նարեկ:
“Ծառայեսցէ անմիտն իմաստնոյն”. Առակ:
“Հաւասարեսցէ մահս մեր մահուան արդարոցն”. Եղիշէ:
“Այս ամենայն չարիք յաջողեցանն նմա”. Եղիշէ:
“Կարօտեմ գերեզմանի եւ ոչ հասանեմ”. Յոբ:
“Բերան անխրատից տեղեկանայ չարեաց”. Առակ:

Նմանք ըստ յարմարութեան առնուն զվերջահոլով տրական. զոր օրինակ, “Շրթունք քահանային զգուշասցեն գիտութեան”. Մաղաք:
“Ծանրասցի գործ մարդկանն, եւ այնմ հոգասցեն. եւ մի հոգասցեն 'ի բանս տարապարտս”. Ելից:
“Կացաք ծառայք իրաւանց, եւ ոչ էր”. Եսայ:

Կանոն Զ:

Չեզոքական բայք որք ունին զնշանակութիւն առ այլ (այսինքն որք ցուցանեն իբր զերթումն առ իմն), առնուն զնախդրիւ տրական. զոր օրինակ, “Գնաց մարդ 'ի տուն իւր յաւիտենից”. Ժողով:
“Որ յուսայ 'ի մեծութիւն, կործանեսցի”. Առակ:
“Յանձն չար արուեստ իմաստութեան ոչ մտցէ”. Իմաստ:
“Մարդ հայի յերեսս, եւ Աստուած հայի 'ի սիրտս”. Ա. Թագ:
“Մի՛ նախանձիցես ընդ ճանապարհս անօրինաց”. Առակ:
“Ոչ այնքան ուրախանան յառեալ մեծութիւնն՝ որքան տրտմին 'ի պակասեալն”. Սարգ:

Նմանք ըստ յարմարութեան առնուն զնախդրիւ տրական. գբ, “Ի պատուիրանս քո հոգացայ”. Սաղմոս:
“Մի՛ ծարեր 'ի գիրկս, որ ոչ քո իցեն”. Առակ:
“Որչափ դեգերեսցիս առ քեզ, ախորժես”. Խոսրով:

Կանոն զ՟ ։

Չէզոքական բայք որք ունին զնշանակութի յայլմէ, առնուն զխնդիր բացառական. զ՟ր, “ Եւ հուր մեղաց 'ի կողէն Ադամայ հրդեհել զա՟մ մարդկային բնութիւն. եւ ջուր 'ի կողէն Յ՟սի շիջուցանել զա՟մ հրդեհն անօրէնութ՟է ”. Սարգիս ։
“ Ամբարհաւաճեալ... Վրիպեցաւ 'ի փառացն ”. Յաճախ ։
“ Զերծաւ 'ի մախմանացն գերութ՟է, ապրեցաւ 'ի ծառայեցուցչէն ոխակալութ՟է ”. Լամբ ։
“ Անմիտքն ոչ 'ի յանդիմանութ՟էն, այլ 'ի տանջանացն երկնչին ”. Գէորգ Վ՟րդ ։
“ Պատրանօքն նախաստեղծին մերկացաւ 'ի լուսոյն ”. Շնոր ։
“ Սթափեցաւ 'ի խելագարութենէ ”. Սարգ ։
Ոմանք ըստ յարմարութ՟է առնուն զբացառական. զ՟ր,
“ Հաւատացեալքն ոչինչ երկմտութ՟ բերահաւատէին յառաջին խրատուէ ս՟րբ վարդապետացն իւրեանց ”. Եղիշէ ։
“ Ի բարեաց գործոց և 'ի հաւատոց հեղգացան ”. Լամբ ։
“ Ի բազում փայտից զուարճանայ հուր ”. Նարեկ ։

Կանոն է՟ ։

Չէզոքական բայք՝ որք ունին զնշանակութի գոհանալոյ կամ տրտնջելոյ, առնուն զխնդիր պատմական. և սոքա են սակաւ յոյժ. Է՟ որս կարէ դասիլ և բայս հոգամ. զոր օրինակ, “ Գոհացաւ միշտ զառատ ողորմութ՟է նորա ”. Եփր ։
“ Ոյք տրտնջէին զյ՟ս ... Թոյլ տայ կրել չարչարանս ”. Շնորհ. Ընդհ ։
“ Տրտնջէին զքէն առ պարսպօքն ”. Եղիշէ ։
“ Զայսոսիկ գրելով զանձնէս տատախաղէմ ”. Սարգ ։
“ Ո՛վ, թէ որքան ածգոհ լինի զնոցանէ ա՟ծ ”. Լամբ ։
“ Զփառաց ինչ ոչ հոգայիր (սէ՟ք) ”. Սարգ ։
Ոմանք ըստ յարմարութ՟է առնուն զպատմական. զ՟ր,
“ Զկատարածէ աշխարհիս ակնարկէ ”. Գէորգ ։
“ Յորդորէր առաւելբանն զնմանէ ”. Գրիգ ։

"Դու և ժողովուրդ քո գումարեալէք զա̃յ". Թուոց։
"Լուեալ զա̃ծգիտութենն՝ անհնարին կորուստ". Մբանաս։

Կանոն Զ։

Չեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութիւն իւրք լինելի, առնուն զխնդիր գործիական. զոր օրինակ, "Բոյովքդ վաստակօք պճնեցայց … աւազանին զգեստիւ պերճացայց". Նար։
"Պարարտացան դաշտք արդարութե̃, և գեղեցկացան անապատք մաքուր կուսութե̃". Նար։
"Եւ սակայն ակն նորա ոչ յագի մեծութե̃". Ժողով։
"Օր ը̃ս օրէ աւուրք կենացս նուազին. զի բուսանիմք 'ի պատանեկութե̃, ծաղկիմք երիտասարդութե̃, թարշամիմք ծերութե̃, չորանամք մահուամբ". Լամբ։
"Ճառագայթիւք աղօթից նորա պայծառանայ". Եղիշ։
"Յաւօք վարակեալեմ". Յոբ։

Ոմանք ըստ յարմարութեն առնուն զգործիական. ո̃պ,
"Եթէ որդւովդ պարծիս դու, գերի վարին նոքա 'ի քէն". Մծբ։
"Մեք զա̃մ հաւատի ուսաք, և տակաւին ես կորըստեան ճանապարհաւ գնամ". Իգնատ։
"Իսկ որք ատեանն զյանդիմանութի̃, վախճանեսցին անարգանօք". Առակ։

Այլ դիտելի է, զի որպէս ասացաք զներգործական բայից, նոյնպէս և չեզոքական բայք՝ գրեթէ առ հասարակ կարեն առնուլ զխնդիր գործիական։

Կանոն Է։

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի̃ շուրջ գալոյ, առնուն զխնդիր պարառական. և սոքա են սակաւ յոյժ. ո̃պ, "Անկեալ 'ի վերայ փաթէին զպարանոցաւ նորա". Վարք հարց։
"Մի պատեսցեն զինև մառախուղք 'ի ձօնելն զքեզ". Նարեկ։
"Աչք անմտի զվայլօք յածին". Առակ։

“ Իսկ այս պատիւ, որ սորայս է գերազանցեաց զամենեքումբք ”․ Սարգ ։

Ոմանք ը՟ յարմարութե՟ առնուն զպարառական․ զոր օրինակ, “ Ծիծաղեն զինև յետինք ”․ Յոբ ։
“ Խորհուրդք բարեաց զգուշասցեն զքև ”․ Առակ ։
“ Սպառնալիք մահու անցեն զնոքօք ”․ Եզեկ ։
“ Նաև զամօթ արհամարհէր, և զերկիւղիւն 'ի վեր ելանէր ”․ Գրիգոր նար ։

Կանոն Է՟ ։

Չեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութի՟ յիմիք կամ ուրեք լինելի, առնուն զխնդիր ներգոյական․ օր՟, “ Ոչ գոյ 'ի սահմանեալ ուխտին որ 'ի մէջ նոցա ”․ Յոհ․ նար ։
“ Ի յոտս հաստատեմ և 'ի միտս փափագեմ ”․ Նար ։
“ Եթէ յիս բնակէ, կենդանի եմ ես ”․ Ոսկ ։
“ Ի սիրտ առատ հանգչի իմաստութի՟ ”․ Առակ ։
“ Որք 'ի մարգս և յաղբերակունս և 'ի մջ՟ օդս շրջօնուցուն, սրատեսք և քաջահայեցք լինին ”․ Խոսրով ։
“ Ի մշտնջենամռունչ սաղմոսս համակէր ”․ Յովհ․ նար ։

Ոմանք ըստ յարմարութե՟ առնուն զներգոյական․ օր՟,
“ Ուրեմն արդարանայ 'ի բանս իւր առաքեալ ”․ Եփր ։
“ Յանձանձրոյթ աղօթս նահատակէր ”․ Յովհ․ նար ։
“ Որ չարչարեցար 'ի խաչին վ՟ ազգի մարդկան ”․ Ճառ ։

Կանոն Ը՟ ։

Չեզոքական բայք՝ որոց նշանակութի՟ նկատի 'ի պարագայս իրիք, առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութե՟ց․ օր՟, “ Յորժամ բռնութե՟ հալածեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս 'ի բաց քանդի և մեք 'ի պատուհասէ չապրիմք ”․ Եղիշէ ։
“ Խաղայր ը՟ Իսահակայ որդւոյ իւրում ”․ Ծնն ։
“ Երթ նախ հաշտեաց ը՟ եղբօր քում․ և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո ”․ Մատ ։
“ Հեծեծեսցուք 'ի վերայ վիրալից հոգւոց ”․ Սարգ ։

“Թագաւորէ 'ի վերայ Պարթևաց Արշակ քաջ„. Խոր։
“Հովանասցէ աջ քո տ̃ր 'ի վ̃ր ստեղծուածոց քոց„. Շար։
Բազումք ևս ը̃ յարմարութե̃ առնուն զխնդիր նախադրութե̃. ո̃ր, “Յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութի̃ն ա̃յ„. Նար։
“Օժանդէի ես զկնի տկարութե̃ նորա„. Մար. Հարց։
“Տենչացան զհետ երանաւէտ ձայնին„. Շար։

Կանոն Ժ։

Բայց չեզոքականք կամ որք իբր չեզոքական վարին, յորժամ յարին յանուանս աւուրց և ժամանակաց, առնուն զնոսին խնդիր փոխանակ ներգոյականի 'ի հայցական հոլովի՝ իբր զխնդիր պատահական, կամ երկրորդական. ո̃ր, “Ի հաղորդութե̃ն զամ մի ողջոյն, և զևս բազումս հրաժարեն„. Լամբ։ Ուր հայցական հոլովքս զամ մի ողջոյն և զևս բազումս՝ են պատահական խնդիր՝ չեզոքական բայիս հրաժարեն։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ։
“Մարտնչանայր գործ պատերազմին դառնութե̃ զերկուս ամս„. Եղիշէ։
“Շրջեցաւ յաշխարհի կատարիչն ա̃մի զամս Լ̃„. Շնորհ.
“Մարտեցան կազմեցան զգիշերն ամենայն„. Եղիշէ։
“Դու ես որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբովանդակ կենացն սահման„. Նար։

Որպէս զչեզոքականաց ասացաք, սոյնպէս իմա և զներգործականաց և զկրաւորականաց, ևս և զէականաց. զի սոքա ևս 'ի յարելն յայսպիսի անուանս՝ առնուն զնոսին 'ի հայցական հոլովի. ո̃ր, “Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ զա̃մ աւուրս կենաց իմոց„. Շար։
“Պատուէր հրամանի տուեալ աշխարհին՝ զողջոյն ամիսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուած առ ա̃ծ„. Եղիշէ։
“Եւ տ̃ր ա̃ծ մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն„. Եսթեր։
“Փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս„. Ղուկ։
“Գետնախշտիք ընկէին զինն ամ և զվեց ամիս„. Եղիշ։

Այսպիսի խնդիրք բազում անգամ առանց նխդի դնին. որպ, "Եկաց (Յուսիկ) 'ի հայրապետութեան ամս Զ". Յովհ. կաթ.
"Կռուեցան տարի Գ ընդ Աղուանից արքային". Եղիշէ.
"Տիտոս ինն ամիս պաշարեաց զԵղմ". Զաքար. կաթ.
"Իսկ եղեն 'ի տապանին ԺԲ. ամիս և Ժ. օր". Մծբ.

Այլ քանզի այսպիսի խնդիրք ունին զզօրութիւն ներգոյականի, բազում անգամ 'ի ներգոյական հոլովն դնին. որպ, "Յաւուրս քառասուն երևել նոցա". Գործ.
"Յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն". Ղուկ.
"Յիններորդ ժամուն ետ զհոգի իւր 'ի ձեռս հօր". Մծբ.
"Յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց". Եղիշէ.

Գիտելի է ևս, զի այսպիսի խնդիրք երբեմն դնին նաև յայլ հոլովս մանաւանդ 'ի պարառականն. որպ, "Որ անձաշակ լինելով բազմաժամանակեայ աւուրբք յօժարութբ բարձեր զկարիս մարմնոյ". Ճառ.
"Զինն ժամաւն գոչեաց Յս 'ի ձայն մեծ". Մատ.
"Զհասարակ գիշերաւ ես մտից 'ի մէջ Եգիպտոսի". Ել.
"Իսկ այնպ կայր ութ ժամս յանհնարին պրկոցս". Եղիշէ.

Կանոն ծա.

Բայք չէզոքականք՝ ևս և կրաւորականք յորժամ յարին յայնպիսի անուանս՝ որք են արմատք նց կամ ածանցեալք յարմատոյ նոցին, իբր 'ի բազումս առնուն զնոսին 'ի հայցական հոլովն փոխանակ գործիականի. որպ, "Եթէ կամիս ով մարդ ճանաչել զանկշռելի մեծութիւն, ես ցուցանեմ զօրինակն". Մարգ.
"Զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս հայոց". Եղիշէ.

Ըստ այսմ լինի և 'ի յարաբերականս արմատոյ բայից. որպ, "Ընկալցին զանարգանս իւրեանց մոլորութեանն զոր մոլորեցան". Եզեկ.
"Զամենայն անիրաւութիւնս նորա, զոր անիրաւեալ իցէ, մի յիշեսցին". Եզեկ.

Այսպիսի հայցական հոլովք արմատոյ բայից՝ դնին երբեմն առանց զայի իբր անորոշ հայցական, կամ իբր ուղղական. որ՟, «Տրտմեցաւ Յովնան տրտմու՟ի մեծ», այսինքն տրտմութ՟բ մեծաւ. Յովն:

«Խնդացին յոյժ ուրախութի՟ մեծ». Մատթ:

Երբեմն ևս բայք ինչ վասն վայելչութե՟ և եթ յաւելեալ յայլ անուանս՝ առնուն զնոսին խնդիր բնութե՟ 'ի հայցական հոլովն, վասն ունելոյ զմերձաւորութի՟ ինչ, կամ զվերաբերութի՟ առ նշանակութի՟ արմատոյ այնր բային՝ որոյ լեալ է խնդիր. որ՟, «Յաղագս որոյ պետք են, զի և զհրագունս գիտութե՟ պայծառ ունիցին, զի մի խաւարեալք տգիտութ՟բ՝ թմրեսցեն զմեղացն քուն». Ագաթ. փոխանակ ասելոյ՝ թմրեսցին քնով մեղաց:

«Նոքա զծաղրալից երկիւղն ախտանային». Խոր:

«Լսելիք մեր առողջացան զանախտաւորութի՟ երկնաւոր». Նշնոր:

«Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել ք՟ի», այսինքն այնոքիւք չարչարանօք չարչարիլ. Ղուկ:

«Նա, որ այսմ ցանկայ, յորժամ 'ի ծայրս ա՟մ մեծութե՟ հասանէ՝ զտխրապէսն զուարճանայ», այսինքն տխրապէս զուարճութ՟բ զուարճանայ. Լամբ:

Գիտելի է ևս, զի բայքս Գնամ, երթամ, ընթանամ և ուղևորիմ, 'ի յարիլն 'ի բառս ճանապարհ, ուղի, պողոտայ, և ն՟, թէպէտև պահանջեն առնուլ զնոսա 'ի նախդրիւ տրականն, բայց բազում անգամ ևս առնուն 'ի հայցականն, որ՟, «Այր անօրէն և անզգամ գնայ ըզճանապարհս թիւրս». փոխանակ ասելոյ, 'ի ճանապարհս. Առակ:

«Սգով և տրտմութ՟բ երթային զերկայնութի՟ ճանապարհին». փոխանակ ասելոյ, յերկայնութի՟ ճանապարհին. Նշնոր:

ԳԼՈՒԽ ԻԲ·

Յաղագս խնդրառութեան Դիմաւորաց բայից։

Վասն խնդրառութեան սոցա պարտ է գիտել, զի այն բայք՝ որք ասին ըստ պատահման դիմաւորք · որպէս լուսանայ, մթանայ, յաճախէ, հասանէ, պատահէ, ձիւնէ, ևն։ Եւ և այն բայք որք ասին ըստ պատշաճի դիմաւորք · որպէս մարթէ, թուի, կարծի, ցաւի, ևն, առնուն զխնդիր 'ի վերջահոլով տրականն, ընդ նմին երբեմն և զայլ խնդիր · որ, “Եւ լուսացաւ նոցա 'ի Քեբրոն”· Բ· Թագ։ “Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ”· Յայտ։ “Չէ ոք արկանէ ձեռն զմաճով, և հայիցի յետս՝ եթէ յաջողեսցէ արքայութեան այ”· Ղուկ։ “Խաւարելոյն մտօք և զրկելոցն 'ի ճշմարտութենէ դառն թուի ածային օրինադրութի”· Խոսրով։ “Չարչարի, և անչարչարելի կարծի ինքեան”· Շնորհ· Ընդհ։

Սոյնպէս և այն բայք, որք ասին բայարձակ կամ ըստ ինքեան դիմաւորք · որպէս վայել է, պարտ է, ևն, առնուն զվերջահոլով տրական · որ, “Վայել է ծառայիցն այ միշտ օրհնել զնա”· Խոսրով։ Ուր ծառայիցն այ՝ է տրական խնդիր բայիս վայելէ · իսկ աներևոյթ բայս միշտ օրհնել է անուն բայի։ Ըստ այսմ է և 'ի սոսին։

“Անդէպ է եպիսկոպոսին հպարտութեամբ և գոռոզութեամբ լինել առ հնազանդեալ ժողովուրդսն”· Շնորհ· Ը։
“Իմաստասիրին պարտ և արժան է ազատամիտ լինել 'ի նախանձուէ”· Սարգ։

Այսպիսի բայք երբեմն առանց խնդրոյ գտին · որ, “Եւ զինչ արդեօք պարտ է յառակէս ուսանել”· Եզն։
“Պարտ է ուսուցանել · · · յորժամ նախ ինքն առնիցէ՝ զոր ինչ այլոց ուսուցանէ”· Վարք հարց։
“Անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ”· Նարեկ·

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս խնդրառութեան Էական բայից։

Էական բայք հասարակօրէն առնուն զխնդիր յուղղական հոլովս. որ, “Այգին փշաբեր՝ փշալից եղև”. Մծբ։

Ուր փշալիցն է ուղղական խնդիր էական բայիս եղև. իսկ այգին փշաբեր՝ է անուն բայի։ Ըստ այսմ են և սոքին.
“Ես եմ որթն ճշմարիտ, և հայր իմ մշակ է”. Յովհ.
“Բարք մարդկան հակառակասէր է”. Լամբ։
“Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութե”. Խորէն։

Այլ աստ պարտ է 'ի միտ առնուլ բարւոք, զի եթէ էական բայք՝ իցեն յոգնակի, ուղղական խնդիրն բազում անգամ դնի եզակի. որ, “Դուք էք աղ երկրի”. Մատ։
“Որոց առաջնորդութեն հայրենի դաստիարակութիք ուղեկից լինիմք”. Գրիգոր նար։
“Տաճար էիք հոգւոյն սբյ, արդ ղոհարան դիւաց լինէիք”. Նարեկ։

Այսպիսի ուղղական խնդիրք՝ ուրեք ուրեք դնին ևս և 'ի նախդրիւ տրականն իբր յարմարական խնդիր. որ, “Ես եղէց ձեզ 'ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս”. փոխանակ ասելոյ, ես եղէց ձեզ հայր, և դուք եղիջիք ինձ ուստերք և դստերք. Բ. Կոր։

Գիտելի է, զի էական բայք յորժամ յարին յայնպիսի անուանս՝ որք ունին զնշանակութի ժամանակաց, չափուց և գնոց, առնուն զնոսին խնդիր 'ի սեռական հոլովս. որ, “ʻՆոյ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև 'ի վերայ երկրի”. Ծննդոց։
“Այս էր լայնութի նր երից կանգնոց”. Ի ճառս ʻՆեկող։

Այսպիսի սեռական հոլովք անուանց ժամանակաց երբեմն յառաջական բայս ևս յարին՝ իբր պատահական խնդիր նոցա. այլ այս 'ի սակաւս. որ, “Նա ճախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց ,,. Ծնն ։

Գիտելի է ևս, զի անուանք չափուց և կշռոց յայլ հոլովս ևս լինին խնդիր էական բայից ։

Երբեմն յուղղականն . որպ՟, " Եւ երկայնութիւն նորա (էր) իննսուն կանգուն ,,. Եզեկ ։
" Քսան գանկ լիցի երկդրամեանն ,,. Ղեւ ։
" Եւ կշիռ զրահից նր՟ (էր) հինգ հազար սիկղ պղնձոյ և երկաթոյ ,,. Ա. Թագ ։

Երբեմն ևս յուղղականն և 'ի տրականն միանգամայն . որպ՟, " Եւ դրան սրահին վարագոյրք (էղիցին) քսան կանգուն 'ի բարձրութ՟ի ,,. Ելից ։
" Եւ էղև (չափն) ըստ չափոյ դրան, որ հայէր ընդ արևելս, յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ կանգուն 'ի լայնութ՟ի ,,. Եզեկ ։

Իսկ երբեմն 'ի բացառականն . որպ՟, " Ի քառասուն կանգնոյ էր տունն ,,. Գ. Թագ ։
" Ի քսան և հինգ սկեղէ էղիցի ձեզ մնաս մի ,,. Եզեկ ։

Երբեմն ևս 'ի գործիականն . որպ՟, " Եւ թանձրութ՟ի ծովուն (էր) թզաւ ,,. Բ. Մնաց ։
" Ով վայրապար դնէ զչափ ժամանակին՝ երկայնութ՟ հարիւր վաթսուն ասպարիզաւ լեալ ,,. Իգնատ ։

Իսկ վասն այլոց խնդրոց էական բայից ոչ է հնար որոշակի կանոն դնել . զի ըստ պահանջման բանին և ըստ զօրութ՟ անուանցն՝ յորս յարին՝ առնուն զխնդիր 'ի զանազան հոլովս՝ բազում անգամ իբր երկրորդականս . որպ՟,
" Ո՞ր մտ՟ կատաղիս ընդդէմ բնութ՟եդ ով մարդ . ո՞չ նորին բնութ՟ է ընկերն, որում զայրանաս ,,. Մարգ ։
" Տէր ինքնին էղիցի մեզ լոյս մշտնջենական ,,. Յոհ. Իմ.
" Բազմապատիկ էն առ այս մեզն բանք ,,. Իգն ։
" Պատերազմաց սկիզբն յագահութ՟է մարդկան եղև ,,. Եղիշ ։
" Ահաւասիկ բանքս մ՟ր 'ի կարգի զճշմարիտ օծելոյն է ,,. Մարգ. Յոհ ։
" Եւ էղիցի հանգիստ նորա պատուով ,,. Եսայ ։
" Ընկանիցիս դու, և ամենեքին՝ որ ընդ քեզ էցեն ,,. Եզեկ ։
" Բայց ոգիք արդարոց 'ի ձեռին այ՟ են ,,. Իմաստ ։

“Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել”. Խոսր:
“Ես արարիչ ձեր՝ մարդ եղէ վասն ձեր”. Շնորհ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Գիտելիք ինչ ՚ի վերայ խնդրոյ բայից և ՚ի վերայ նախդրի նոյին:

Կան ինչ ինչ գիտելիք ՚ի վերայ խնդրոյ բայից, զորս պատշաճ դատեցաք կարգել յայս գլուխ առանձինն, առ ՚ի տալ զնոցանէ զորոշ ինչ տեղեկութ̃ի. վ̃ որոյ,

Գիտելի է նախ, զի բայք բազում անգամ յարելով յանուանս ինչ՝ իբրև մի վարին ընդ նոսա, և առնուն խնդիր հաղորդական, այսինքն այնպիսի՝ որ ոչ սոսկ բային համարի, և ոչ լոկ անուանն. այլ՝ երկուցն միանգամայն. և այս՝ թէ ՚ի ներգործականս, թէ ՚ի չէզոքականս, և թէ յէականս.

Ի ներգործականս. որպ̃, “Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ”: Նար: Ուր վերջահոլով տրական հոլովս սիրոյ կենցաղոյս՝ է խնդիր գիրկս արկանելոյն:

Ի չէզոքականս. որպ̃, “Խրատեաց զաստի կենացս զա̃մ ինչ ՚ի բաց ընկենուլ, և անտի կենացն միայն պատկառ կալ”. Իգնատ: Ուր վերջահոլով տրական հոլովս անտի կենացն՝ է խնդիր պատկառ կալոյն:

Յէականս. որպ̃, “Այցորդ լեր հեզութե̃ տաժանաւորս տկարուե̃”. Նար: Ուր վերջահոլով տրական հոլովս տաժանաւոր տկարութեն՝ է խնդիր այցորդ լինելոյն. իսկ հեզութե̃ն է երկրորդական խնդիր նորին:

Գիտելի է երկրորդ, զի յորժամ բազում բայք գան ՚ի միասին, խնդիրն մօտագունին հետևի. որպ̃, “Նեղեալ անձինք օրհնեն և գոհանան զա̃յ՝ զերծեալք ՚ի վտանգից”. Իգնատ: Ուր խնդիր բային՝ այսինքն պատմական հոլովդ զա̃յ՝ եդեալ է ըստ բնութե̃ այնր բայի՝ որ մօտ է նմա, այն է՝ բայս գոհանան. և ոչ այնր՝ որ հեռի է ՚ի նմանէ, այն է՝ բայս օրհնեն, Ըստ այսմ է և ՚ի սոսին:

“Հայեցաւ և ետես զինքն լի տկարութե̃”. Եղիշէ:

“ Խորհուրդ արարեալ . . . հարցին և քննեցին և 'ի վերայ հասին մտացն անշարժութ͞ե ”․ Նոյն ։

“ Իսկ զհակառակ բարւոյն զչարն՝ այսինքն զսատանայ, և զորս 'ի նմանէ սերմանեալ զմեղս՝ ատել և 'ի բաց դառնալ ”․ Շնորհ․

Բայց երբեմն՝ այլ սակաւ ուրեք հեռագոյն բային հետևի խնդիրն․ ո͞պ, “ Առին գնացին զնա ”․ Ղուկ ։

Որ հայցական հոլովս զնա՝ ոչ է լեալ խնդիր այնր բայի որ մօտ է նմա, այսինքն է գնացին, այլ այնմ՝ բայի որ հեռի է 'ի նմանէ, այսինքն է առին․ որպէս թէ ասէր․ առին զնա և գնացին ։

Գիտելի է երրորդ, զի յորժամ բազում բառք նախդրիւ լինին խնդիր բայի, նախդիրն դնի 'ի վերայ ա͞մ խնդրոց․ ո͞պ, “ Ընդ տեսանել զերկիրն աւետեաց, զաշխարհն կենդանեաց, զլեառն սրբութեան ”․ Խորէն ։

“ Պահեա 'ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման յաներևոյթ մտածութ͞եց, 'ի մասնաւոր սխալութ͞եց, 'ի մեծագոյն գայթակղութ͞եց, 'ի փոքրագոյն ոտնառութ͞եց, 'ի խաբեբայ չար ձանձրութեանց ”․ Նար ։

“ Տրդատ արքայ Հայոց մեծաց՝ առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկ, որ ընդ իմով իշխանութ͞բ էք՝ յաւանս և 'ի շէնս 'ի գիւղս և յագարակս . . . ողջոյն ”․ Ագաթ ։

Գիտելի է չորրորդ, զի եթէ խնդիր բային ևս ունիցի զխնդիր՝ եդեալ նախ քան զինքն, և կամ զայլ ինչ բառ, նախդիրն հասարակօրէն դնի 'ի վերայ նորին, այսինքն 'ի վերայ խնդրոյ խնդրոյն․ ո͞պ, “ Պարծեցուցանես 'ի պայծառութ͞ի քումդ տեսակի ըզքե պանծացեալսն ”․ այսինքն զպանծացեալսն քե․ Նար ։

“ Որ բանիւ միայն ունի հաւատ 'ի յա͞ծ խոստովանութ͞ե, այլ ոչ գործով, այնպիսւոյն հաւատն մեռեալ է ”․ այ͞ն որ բանիւ միայն ունի զխոստովանութ͞ի առ ա͞ծ են, այնպիսւոյն հաւատն մեռեալ է․ Շնորհալի ։

“ Տարածեալ զանձն իմ առաջի 'ի մահ գլորմանն ցուցից կերպարան ”․ այսինքն ցուցից զկերպարան գլորմանն 'ի մահ. Նարեկ։

« Առողջս ոչ զորս յողջութ՟ե են, այլ զբիւր ախտիւք հիւանդացեալս ասիցէ ». այսինքն զհիւանդացեալս բիւր ախտիւք. Շնորհալի 'ի Ընդհանրն։

« Այն զի զոր ՟ը նախայօժար կամաց ատեցաք զհոգևորն խաղաղութ՟ի զրկեաց ա՟ծ և 'ի մարմնով զնոյն ունելոյն ». այսինքն 'ի ունելոյն զնոյն մարմնով. Լամբ։

« Եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն ». այսինքն զգործոց իմոց չարիս, որք են առանց համարոյ. Նարեկ։

« Պետրոս սէր կարծէր զ'ի վերայ փրկչին մեռանել ». այսինքն զմեռանել 'ի վերայ փրկչին. Լամբ։

Իսկ երբեմն դնի 'ի մ՟ջ երկուց կամ բազմաց ևս. ո՟րպ,

« Որք զառ 'ի ք՟ս զչարչարանս յանձն առեալ համբերեցիք, ով ա՟ծասէր հայրապետք ». Շար։

« Որ զփառակցի հօր հոգւոյդ զտաճարն զառ 'ի քէն հովանացեալն այսօր հանգուցեր 'ի լոյս անմատոյց ». անդ։

« Որ զարարչակիցն հօր զ'ի սկզբանէ զբանն ա՟ծ յորովայնի քում կրեցեր ». անդ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս աներևոյթ բայից ըստ լինելոյ նոցա արգելիչ խնդրոյ։

Զոր ինչ ասացաք զբայից, և զխնդրառութ՟եց նոցին, զայն ա՟մ պարտ է իմանալ և զաներևութից, ընդ որս և զդերբայից, ըստ որում են բայք։ Իսկ յաղագս լինելոյ սոցա անուն բայի և խնդիր բայի՝ խօսեցաք 'ի Գլ. ԺԶ. 'ի կանոնն Է։ Մնայ մեզ այժմ խօսել զսոցանէ՝ ըստ լինելոյ սոցա արգելիչ խնդրոյ։

Արդ սոքա ևս աներևոյթ բայք բազում անգամ 'ի բազում տեղիս ընդ առաջ եղեալ դիմաւոր բայի՝ արգելուն զխնդրառութ՟ի նորա. զի ինքնին լեալ խնդիր բային՝ ինքեանք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութե̃ իւրեանց ․ և յայնժամ կոչին **արգելիչ խնդրոյ**, զր, “ Որ խոստացար տալ զփականս արքայութե̃ երկնից երանելւոյն պետրոսի „ ․ **Շար** ։ Որ աներևոյթ բայս տալ ընդ առաջ ելեալ դիմաւոր բայիս **խոստացար**՝ լեալ է նմին իբր խնդիր, և արգելեալ է զխնդրառութ̃ի նորին ․ և ինքն է առեալ խնդիր սեռի զբառդ **զփականս արքայութե̃ երկնից** ․ նաև խնդիր բնութե̃, զբառդ **երանելւոյն Պետրոսի** ։

Նշանակելի է նախ, զի արգելիչ խնդրոյ լինին նախ՝ ներգործական աներևոյթք ներգործական բայից ․ զր, “ Բնութիւնս մեր սիրէ ծածկել զմերկութիւն „ ․ **Եղիշէ** ։

Որ ներգործական աներևոյթ բայս ծածկել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս **սիրէ** ․ և ինքն է առեալ խնդիր զբառդ **զմերկութիւն** ։

Երկրորդ՝ չէզոքականք չէզոքականաց ․ զոր օրինակ, “ Ճգնեսցուք մտանել ընդ նեղ դուռն „ ․ **Մարգ․ հարց** ։ Որ չէզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ չէզոքական բայիս **ճգնեսցուք** ․ և ինքն առեալ է խնդիր զբառդ **ընդ նեղ դուռն** ։

Երրորդ՝ ներգործականք չէզոքականաց ․ զոր օրինակ, “ Դու ջանա գործել զբարիս, և մի երկնչիր ՚ի տկարութե̃ քումմէ „ ․ **Մարգ․ հարց** ։ Որ ներգործական աներևոյթս գործել է արգելիչ խնդրոյ չէզոքական բայիս **ջանա** ․ և ինքն առեալ է խնդիր զբառդ **զբարիս** ։

Չորրորդ՝ չէզոքականք՝ ներգործականաց ․ զոր օրինակ, “Մովսէս աղաչեաց մտանել ՚ի պարգևական երկիր „ ․ **Մարգ** ։ Որ չէզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս **աղաչեաց** ․ և ինքն առեալ է խնդիր զբառդ **՚ի պարգևական երկիր** ։

Գիտելի է երկրորդ, զի երբեմն աներևոյթ բայս լինի արգելիչ խնդրոյ սեռի միայն, և ոչ խնդրոյ բնութե̃ ․ զր, “ Ուսո մեզ առնել զարդարութ̃ի ճշմարտութե̃ „ ․ **Ճառագիրք** ։ Որ աներևոյթ բայս առնել արգելեալ է զխնդիր սեռի բայիս **ուսո**, և ոչ զբնութե̃ ։

Գիտելի է երրորդ, զի երբեմն արգելիչ խնդրոյն նախադասի դիմաւոր բային ․ զր, “ **Ճառանել** փութայր զկապ միաբանութեան սիրոյ նոցա". Յովհ. Կաթ: Ուր արգելիչ խնդրոյն՝ հատանելն՝ նախադասեալ է բայիս ջանայր:

Եւ երբեմն եւս՝ խնդիր արգելչին նախադասի քան զգլխաւոր բայն, որ անկանի 'ի մէջ արգելչին եւ 'ի մէջ խնդրոյ նորա. որպէս, " Զտիեզերս բաւեցին լնուլ շնորհօք հոգւոյն սրբոյ". Իգնատ: Ուր խնդիր սեռի աներեւոյթ բայիս լնուլ որ է արգելիչ խնդրոյ, եդեալ է նախ քան զգլխաւոր բայս բաւեցին. իսկ խնդիր բնութեան եդեալ է զկնի. զոր մարթ էր դնել այսպէս. բաւեցին լնուլ զտիեզերս շնորհօք հոգւոյն սրբոյ:

Գիտելի է չորրորդ, զի բազում անգամ միոյ բայի լինին բազում արգելիչք խնդրոյ. որպէս, " Փութացաւ վաղվաղակի զօր ժողովել գունդ կազմել". Եղիշ: Ուր երկոքին աներեւոյթքս եւս ժողովել կազմել են արգելիչ խնդրոյ բայիս փութացաւ:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս Դերբայից:

Դերբայք են աներեւոյթ բայք հոլովեալք իբր անուն: Սոքա թէպէտ միշտ ունին զզօրութիւն բայի, բայց որովհետեւ իբր անուն հոլովին՝ գրեթէ ըստ օրինակի գոյականաց վարին: Ուստի եւ իբր գոյական անուն, Նախ՝ լինին յատկացուցիչ. որպէս, " Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ". Մատթ: Ուր դերբայս լսելոյ, է յատկացուցիչ ականջաց:

Երկրորդ լինին բացայայտիչ. որպէս, " Յերկոսին զօրաւոր է՝ 'ի պատժելն եւ 'ի բարեգործելն". Գէորգ: Ուր դերբայքդ 'ի պատժելն եւ 'ի բարեգործելն լեալ են բացայայտիչ անուանս յերկոսին:

Երրորդ՝ լինին խնդիր նախդրութեանց. որպէս, " Ա՛է ուսցուք զգիրս ոչ վասն կարդալոյ միայն, այլեւ վասն առնելոյ". Մծբ:

Չորրորդ՝ լինին խնդիր անուանց. որպէս, " Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ մեծն դաս... 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատակելոյ”. Նար։ Ուր դերբայս պարծելոյ, հանդերձ խնդրով իւրով, (որ է՝ 'ի փառս ընդ մեծն դաս), է տրական խնդիր անուանս արժանի ։

Հինգերորդ՝ լինին խնդիր բայի. երբեմն իբր բուն խնդիր ընուէ. որպ, “Լեզուաւ 'ի խրատել փութամք. և յարդեանցն պակասեալ գտանիմք”. Սարգ ։ Ուր դերբայս 'ի խրատել լեալ է բուն խնդիր փութալոյն ։

Երբեմն ևս մանաւանդ թէ բազում անգամ լինին խնդիր երկրորդական, և յաւէտ ևս պատահական. որպ, “'Ի նահատակել ճշմարտութեան լռեսցէ իմ կարծեցուցանող զօրութիւն”. Դաւիթ Անյաղթ ։ Ուր դերբայս 'ի նահատակել է երկրորդական և պատահական խնդիր բայիս լռեսցէ ։

Նաև աստ գիտելի է, զի բազում անգամ 'ի դերապանծ շարադրութիւնս դերբայք 'ի վերջոյ դնին 'ի գործիական հոլովի իբր խնդիր առ 'ի չքնաղ ընծայեցուցանելոյ զբանսն. որպ, “Ոչ զի որք բժշկենն (մարմնաւորապէս՝) զմարմինն ևեթ բժշկեն, առ հոգւոյն բժշկութիւն շահ և ոչ մի ինչ ցուցանելով”. Սարգ ։

Գիտելի է ևս, զի ներգործական դերբայք երբեմն 'ի խրթին շարադրութիւնս փոխանակ հայցական հոլովի առնուն զխնդիր (ըստ բայանուանց) 'ի սեռական հոլովի. և այն համարի նոցա իբր յատկացուցիչ. որպ, “Ի յուխտին պահել դաշինն դժրեցի”. փոխանակ ասելոյ, 'ի պահել զուխտն. Նար ։ “Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ 'ի քո գիրկս”. Շար ։

ԳԼՈՒԽ Ի ։

Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց 'ի հասարակէ ։

Ընդունելութիւնք, թող զյանգեալսն 'ի լոյ, կրկնակի համաձայնին ընդ միմեանս ։

Նախ՝ իբր խնդիր. օր, “Դատապարտողք զք՟ս ոչ խոստովանողաց”. Մար: Ուր ընդունելութի՟ս խոստովանողաց է խնդիր ընդունելութեանս դատապարտողս. իսկ հայցական հոլովս զք՟ս է խնդիր սեռի խոստովանողաց. որպէս թէ ասէր, դատապարտողք այնոցիկ՝ որք զք՟ս ոչ խոստովանին:

Երկրորդ՝ իբր ածական. օր, “Պարգեւատրտնջող… տարաժամեալ աշխատող”. Նար:

Իսկ 'ի յարելն յանուանս՝ բազում օրինակաւ համաձայնին ընդ նոսա: Նախ՝ իբր խնդիր. օր, “Փառաւորողին զգեցուցիչ, վերօրհնելոյն գովիչ”. Նար:

Երկրորդ՝ իբր յատկացուցիչ. օր, “Ձեռն ընտրելոյ դիւրաւ յաղթեսցէ”. Առակ: Բայց ոչ լինին յատկացուցանելի:

Երրորդ (այլ 'ի սակաւս) իբր բացայայտիչ եւ բացայայտելի. օր, “Առ ամե՟ն լինիցիր խոնարհ՝ առ սիրելիս եւ առ ատելիս”. Ոսկ. եփես: Ուր ընդունելութի՟քդ առ սիրելիս եւ առ ատելիս են բացայայտիչ անուանս առ ամե՟ն: “Զպարունակողն անպատուեալ՝ զտաճարն եւ զսեղանն, պատուեսցին յատուկ զպարունակեալսն”. Յովհ. իմաստ: Ուր ընդունելութի՟դ պարունակողն է բացայայտելի 'ի ձեռն բառիցս տաճարն եւ սեղանն:

Չորրորդ՝ իբր ածական, ածական անուանց. այլ այս 'ի սակաւս. օր, “Զհերձեալ վիճասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի մերժեսցես”. Նար:

Հինգերորդ՝ ըստ օրինակի գոյական անուանց՝ առնուն երբեմն զածականս. զոր օրինակ, “Անհանճար խնդրողն՝ յամենայնէ վրիպի”. Իգնատ: Ուր ընդունելութիւնս խնդրող առեալ է յինքեան ածական զանունդ անհանճար:

Իսկ թէ սոքա զիարդ իբր ածական համաձայնին ընդ գոյականաց, եւ կամ զորպիսի խնդիր առնուն, ասասցուք 'ի յաջորդ գլուխդ 'ի մասնաւորի:

ԳԼՈՒԽ ԻԲ․

Յաղագս ընդունելութեանց յանգելոց 'ի ող․

Սոքա միշտ իբր ածական անուն վարին, ունելով և զզօրութիւն բայիցն՝ յորոց բղխեն, ըստ որոց և առնուն զխնդիր։ Իսկ թէ զիա՞րդ, յայտ լիցի 'ի յաջորդ կանոնսդ։

Կանոն ա̄։

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք 'ի ող առնուն զխնդիր սեռի 'ի սեռական կամ 'ի հայցական հոլովն՝ ըստ պահանջելոյ վայելչութեան տեղւոյն․ զոր օրինակ, “Օրհնողն իշխոյ արքայ կացուցանէր”․ Մագիստ։ Ուր բառդ իշխոյ է խնդիր օրհնողին։ “Երանի թէ գոնեայ անագան ճանաչէաք, կամ 'ի բժշկութիւն մտէաք․ և ոչ խնդրողացն զճշմարտութիւն ընդդէմ լինէաք”․ Լամբ։ Ուր հայցական հոլովս զճշմարտութիւն՝ է խնդիր ընդունելութեանս խնդրողաց։

Կանոն բ̄։

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք 'ի ող բաց 'ի խնդրոյ սեռի առնուն երբեմն զխնդիր բնութեան, և զայն կամ ըստ ինքեան կամ ըստ յարմարութեան, և կամ իբր երկրորդական, ըստ պահանջելոյ բայիցն՝ յորոց բղխեն յայլ և այլ հոլովս։

Ուղղականն․ ոպ̄, “Օ քեզ ած̄ խոստովանողաց”․ Նար․ գանձ․ հոգ։ Ուր բառդ ած̄ է ուղղական խնդիր բնութեան ընդունելութեանս խոստովանողաց։

Ի վերջահոլով տրականն․ ոպ̄, “Նախապատճառող մարգարէից զխոնարհիլդ քո յերկնից”․ Շար։ Ուր բառս զխոնարհիլդ է խնդիր սեռի նախապատճառողին․ իսկ մարգարէից է տրական խնդիր նորա։

Ի նախդրիւ տրականն․ ոպ̄, “Պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութի ծագողէն զշող լուսոյ 'ի քեզ՝ մայր եկեղեցի „ . Շար ։ Ուր բառս զշող լուսոյ է խնդիր սեռի ծագողէն . իսկ բառդ 'ի քեզ է խնդիր բնութե՟ , և ինքն լեալ է յատկացուցիչ բառիս յօրհնաբանութե՟ , կամ իբր տրական խնդիր ։

Ի բացառականն . որ , “ Զառ 'ի յերկնից ասեմ իջեալ կենսատուն կերակուր՝ զնորն ուխտ և նորոգողն զմեզ 'ի մեղացն եղծմանէ „ . Յոհն . իմաստ ։ Ուր զմեզն է խնդիր սեռի ընդունելութեանս նորոգող . իսկ բառս յեղծմանէ մեղացն է խնդիր բնութե՟ ։

Ի գործիականն . որ . “ Լուսապայծառ իմաստիւք լոյս եղելոց աշխարհի համածագող „ . Շար ։ Ուր բառդ եղելոց է խնդիր սեռի համածագողէն . իսկ բառդ լուսապայծառ իմաստիւք է գործիական խնդիր նորա . այլ բառդ լոյս է ուղղական խնդիր ընդունելութեանս եղելոց , սոյնպէս և բառս աշխարհի է տրական խնդիր նորա . որպէս թէ եղեալ էր՝ լուսապայծառ իմաստիւք համածագող այնոցիկ , որք են լոյս աշխարհի , այս է կրօնաւորաց ։

Ի ներգոյականն . որ , “ Քնազօր զինուորաց համախմբող 'ի հոգևոր պատերազմին . . . երանելին բասիլիոս „ . Շար ։ Ուր բառս զինուորացն է խնդիր սեռի համախմբողին . իսկ 'ի հոգևոր պատերազմին է ներգոյական խնդիր նորա ։

Ի ձեռն նախադրութե՟ . որ , “ Զարարածս փոխանակ արարչին մեծարողք „ . Յոհն . իմաստ ։ Ուր բառս զարարածս է խնդիր սեռի մեծարողքին . իսկ նախադրութիւնս փոխանակ հանդերձ խնդրով իւրով՝ լեալ է նմա խնդիր բնութե՟ ։

Կանոն Գ ։

Ընդունելութիւնք չեզոքական յանգեալք 'ի ող առհասարակ զայնպիսի խնդիր առնուն , զորպիսի պահանջեն բայքն՝ յորոց բղխեն . որ , “ Չիք իմ թագաւոր իշխեցող հնչոյս բաց 'ի քէն քո „ . Նար ։ “ Փութեցին և զեղբայրն զայն ընդ գնացողն յարքունիս „ . Վարք հարց ։

"Յերկիւղէ ինչ ոչ դանդաղեալ,,. Մագիս. առ պետրոս նաբ:
"Պահպանող լինիջիք զմյ,,. Նարեկ:
"Խոնարհեալ 'ի տես մարմնով ճգնողին,,. Շար:
"Խոստովան լեր բարերարին մյ ... զոտիցդ հետոց իբրև զպատուիրանաւն մյ Հաղորդաց,,. Նար:
"փրկեա զանձինս 'ի փորձանաց՝ 'ի խաւարի շրջող դիւաց,,. Շար:

Նման համաձայնութե այսպիսի ընդունելութեց ընդ գոյական անուանց՝ գիտելի է, զի սոքա որովհետև միշտ իբր ածական վարին, ըստ կանոնի ածական անուանց համաձայնին ընդ գոյականաց. որ, "Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի, և ընդ բարեկամի զայրացողի մի բնակեր. գուցէ ուսանիցիս զճանապարհս նորա,,. Առակ:
"Հայցեմք 'ի ներող քաղցրութե ձերմէ,,. Շնորհ:
"Յոլով անգամ 'ի որսողացն թափէ զինքն թռչնոց,,. Պիտոյ:

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս ընդունելութեց յանգելոց 'ի եալ:

Այսպիսի ընդունելութիք յորժամ հոլովին միշտ իբր ածական անուն վարին, թէ և ներգործութե չունիցին զգոյական ընդ ինքեանս. որ, "Գործարին է յաճախելոցն 'ի սովորութիւն մեղաց՝ ազատիլ,,. Լամբ: Ուր ընդունելութիս յաճախելոցն եդեալ է իբր ածական. որոյ գոյականն զօրութե կայ. որ է մարդկան:

Իսկ եթէ առանց հոլովելոյ դիցին, երբեմն իբր բայ վարին և երբեմն իբր անուն: Որոց գիտելի է, զի եթէ սոքա ներգործականապէս առցին, միշտ իբր դրադէմ բայ 'ի գործ ածին. զոր օրինակ, "Թաքչեալ զպատճառն պատճառաւորացն պաշտօն մատուցանէին,,. Նիւսէ:

Իսկ եթէ կրաւորականապէս առցին, 'ի գործ ածին անխտիր. զի երբեմն իբրև զբայ վարին. զոր օրինակ, “Վատնեալ ՚ի բազմաց ՚ի մահ դատապարտեցայ„. Նար։

Նաեւ երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ իբրեւ ածական առնուն. զոր օրինակ, “Զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն... իբր օտարացաւ ծանօթեալն„. Նար։

Իսկ համաձայնութիւն սոցա նկատի ըստ կանոնի համաձայնութեան ածականաց թէ ՚ի նախադասելն, թէ ՚ի յետադասելն և թէ անկեալ իցէ ՚ի մէջ այլ մասն բանի. զոր օրինակ, “Ոչ այլ ինչ այնպէս զքեզ սիրելի առնէ այ, որպէս աղաչանեալ անդամոյն յուր դարման տանել և յառողջութիւն ածել„. Վարդ։
“Տանս ողբացելոյ մի՛ քարինս արձակեսցես, լուսոյս ջախջախելոյ մի՛ սաստիկս որոտասցես, հողոյս անպատուելոյ մի՛ իբր ամբարհաւաճի ուժգինս մռնչեսցես„. Նար։
“Հանդերձելոցն հասցուք բարութեանց„. Ոսկ։
“Զի եթէ զթագէ ասիցես կամ զծիրանեաց կամ զոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով, սակայն ոչինչ ասես„. Վարդ։ Ուր ընդելուզեալն յետադաս գոլով ոչ է համաձայնեալ ընդ գոյականի իւրում, որ է բառս հանդերձից։ Զի այսպիսի ընդունելութիւնք ուրեք ուրեք ՚ի գերապանծ շարադրութիւնս առանց համաձայնութեան եւս յետադասին։

Որպէս զկրաւորական ընդունելութիւնսդ ասացաք, նոյնպէս իմա և զչէզոքականաց. զի և նոքա ՚ի գործ ածին անխտիր։ Երբեմն վարին որպէս զբայ, և ունին զզօրութիւն դերբայի. զոր օրինակ, “Փութա մի՛ հեղգալ, գուցէ դարձեալ նորոգեալ ընդ խաւար գընասցես„. Շնհլ։
“Տենչացեալք անճառ լուսոյն վերասլացան ՚ի կեանս անմահ„. Ճառ։

Իսկ երբեմն՝ և բազում անգամ իբր ածական առնուն վարին ըստ կրաւորականաց, և ըստ նոցա համաձայնին. զոր օրինակ, “Անձն յագեալ զխորիսխ և զմեղր արհամարհէ, բայց անձին կարօտելոյ և դառն իբրև զքաղցր թուի„. Առակ։
Վասն խնդրառութեան այսոցիկ ընդունելութեանց յանգելոյ ՚ի եալ՝ ոչինչ պիտոյ է գրել. զի զայնպիսի խըն-

գիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն, յորոց բղխեն թէ կրաւորականք իցեն և թէ չէզոքական. զոր օրինակ, "Հայցեցէք զխաղաղութի Ճշմարիտ վկայք այ երրորդութեն՝ նեղելոց յանօրինաց բռնութէ ". Շար: Որ բացառական հոլովս 'ի բռնութենէ անօրինաց է խնդիր սեռի կրաւորական ընդունելութեդ նեղելոց. իսկ ինքն է տրական խնդիր բայիս հայցեցէք: "Պաւիթ շնորհացեալքն 'ի տր՝ երկին նմանեցուցանէ ". Գէորգ: Որ 'ի տէրն է ը ինքեան խնդիր չէզոքական ընդունելութես շնորհացեալքն:

Նաև պարտ է գիտել, զի ոմանք 'ի կրաւորական ընդունելութեց աստի ուրեք այլ 'ի սակաւս յոյժ՝ փոխանակ բացառականի առնուն զխնդիր 'ի սեռական հոլովի. զոր օրինակ, "Ուսուցանեն վարդապետութիս զմարդկան պատուիրեալս ". փոխանակ ասելոյ, զպատուիրեալս 'ի մարդկանէ. Մարկ:

Ըստ այսմ ևս և չէզոքականք երբեմն փոխանակ բուն խնդրոյ առնուն զսեռական կամ զտրական. զոր օրինակ, "Օտարացեալք աշխարհի՝ և որ ինչ աշխարհիս՝ փափկացան առաքինութե վարուք ". այսինքն օտարացեալք յաշխարհէ. Նար. Երգ:

Սոքա երբեմն ը բաղդատական անուանց ևս առնուն զխնդիր. զոր օրինակ, "Հիւանդացեալքն 'ի մարդկանէ՝ թէ և 'ի մահ աշխատիցին, սակայն առողջութեն յուսով թեթևանան ". Յոհ. Ճառ: "Գովեալդ 'ի վկայս հօրն մեծի համանման ". Շար:

ԳԼՈՒԽ Լ:

Յաղագս ընդունելութեց յանգելոց 'ի լի:

Վասն ընդունելութեց որք յանգին 'ի լի գիտելի է, զի սոքա իբր ածական վարին. և 'ի յարիլն յանուանս՝ ըստ կանոնի ածական անուանց համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասիլն և թէ 'ի յետադասիլն. զոր օրինակ, "Փոխանակ զգալի լուսոյն՝ Էմմա-

նէ լուսոյն ճառագայթիւք զսրտին խնդրէն լուսաւորել զաչս ,, . Յովհ . Ոսկ :
“Խորհրդեամբ ցուցաւ սքանչելւոյն Յակոբայ ,, . Շար :
“Արդարև հօր սքանչելւոյ որդիք զարմանալիք առաւել քան զառաւել (Արիստակէս և Վրթանէս) ,, . Խոր :
“Նահատակելւոյն հասին երանութե ,, . Շար :

Վասն խնդրառութե սոցա գիտելի է, զի որովհետև նոքա յերիս սեռս վերածին, 'ի չէզոքականս, 'ի կրաւորականս, և 'ի ներգործականս, ըստ այնց առնուն զխնդիր :

Չէզոքականահաղորդքն հասարակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հոլովս . զոր օրինակ, “Ա եւան բորբոքեցան մեծաւ ցանկութե՛ տեսանել զհաստիչն ամենեցուն, և զանձրչէնալէն հրեշտակաց՝ մարդ 'ի յերկրի երևեալ, և դիւրաձրչէնալէ մարդկան ,, . Եփրեմ : Ուր բառդ հրեշտակաց՝ լեալ է խնդիր չէզոքականահաղորդ ընդունելութեանս՝ զանձրչէնալէն. և անունս մարդկան՝ լեալ է խնդիր չէզոքականահաղորդ ընդունելութեանս դիւրաձրչէնալէ :

Սոքա 'ի բացառականն ևս առնուն զխնդիր . զր, “Օակատեցայ անձանելէ 'ի պատկառելեացն գործոց ,, . Նար : Ուր բացառականդ 'ի պատկառելեացն գործոց՝ լեալ է խնդիր չէզոքականահաղորդ ընդունելութեանս անձանելէ :

Կրաւորականահաղորդքն առնուն զխնդիր ըստ սեռի երբեմն 'ի տրականն . զոր օրինակ, “Երջանկութի խոտորձանելէ ամ երկրի ,, . Նար : “Մի՛ լար գերի բազմաց ողբալի ,, . Նար :

Իսկ երբեմն 'ի բացառականն . զոր օրինակ, “Ատանելէն 'ի համայնից . . . պարագրի այսօր ,, . Նար :
“Վէմ անձանելէ 'ի դրանց դժոխոց ,, . Նոյն :
“Ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անփիտելի ,, . Շնորհալի 'ի Դաւանութե :

Ներգործականահաղորդքն երբեմն ունելով զզօրութի ողէ (որպէս ասացաք 'ի մասն բ. գլ. խդ. 'ի վերջն) առնուն զխնդիր 'ի սեռական հոլովս՝ իբր զխնդիր սեռի . զոր օրինակ, “Ահա ած օգնական իմ, և տէր

ընդունելի հոգւոյ իմոյ „ . ո̃ր ընդունող հոգւոյ իմոյ . Սաղ ։
„ Ոչ եղև լսելի ներքին ականջօք տէրունական հրամանին „ . այսինքն լսող զտէրունական հրամանն . Շնորհ ։
„ Որ եղև առաջնորդ ունելեացն յս̄ի „ . այսինքն ունողաց, այս է ըմբռնողաց զյս̄ . Գործ ։

Երբեք ուրեք ևս առնուն զհայցական . զոր օրինակ, „ Ետուն զարծաթն զպատրաստեալն 'ի ձեռս գործելեաց զգործս կահի տանն տն̃ „ . այսինքն գործողաց զգործս են . դ . Թագ . ժբ . 11 ։
„ Յոր լսելոյ քո զաւետիս՝ խնդրեա լինել մեզ լսելի՝ զձայն աւետեաց քո միածնին, եթէ եկայք օրհնեալք հօր իմ „ . այսինքն խնդրեա լինել մեզ լսողս զձայն աւետեաց միածնի քո . այս է՝ եկայք օրհնեալք, և այլն . Շար ։
„ Եւ եղիցի իբրև մխեսցին ոտք քահանայիցն կրելեաց զտապանակ ուխտին տն̃ ամ̃ երկրի՝ 'ի ջուրն յորդանանու, պակասեսցէ ջուրն „ . այսինքն կրողաց զտապանակ ուխտին ։ Յեսու գ . 13 ։

Իսկ վասն ընդունելութեանց որք յանգին 'ի լոց տես յերկրորդ մասին . գլ . եգ ։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս համաձայնութեան պատասխանւոյ ընդ հարցման ։

Յորժամ 'ի բանս պատասխան լինի իմիք հարցման, հարկ է զի պատասխանին համաձայնեսցի հարցմանն՝ գոնէ զօրութբ̃ ։

Այս համաձայնութի̃ Նախ՝ նկատի ըստ հոլովին . զոր օրինակ, (հրց .) „ Զի՞նչ է կաթուղիկէն ։ (պատասխանի) . Տիեզերական . զի ամ̃ եկեղեցիք ուղղափառաց՝ որ ընդ տիեզերս, մի են . . . զոր և առաքելական կոչեմք „ . Խոսրով ։
„ Իսկ արդ ո՛վ է Պօղոս կմ̃ ո՛վ է Ապողոս ։ (պատասխանի .) „ Պաշտօնեայք, որովք հաւատացէքն „ . ա . Կոր ։
Դարձեալ . „ Ած̃ առ ինչ իրս բարկանայ ։ (պա ։)

Ընդ մեծատանց անխրատութիւն, և ընդ աղքատաց հպարտութի՟ ” . Պաղմ. աղէք :

“ Ո՞ւմ են նման սոքա : (պտս.) . Նման են մանկանց՝ ոչ անմեղաց, այլ յիմարաց ” . Իգնատ :

Երկրորդ՝ նկատի ըստ զօրութեն նշանակութեն բառիցն . եթէ զի պատասխանին լիցի այնպիսի բառիւ, որ համաձայն գտցի զօրութեն հարցմանն, թէ ըստ որպիսութեն, թէ ըստ տեղւոյն, և թէ ըստ ժամանակին, և այլն . որպէս երևի յօրինակսդ՝ որ զկնի .

“ Ընթացողացն զհետ քո՞ւ այսպիսի ճանապարհաւ ո՞ւր լինին օթևանք : (պտս.) Ոչ 'ի հարկս համապատիւ ծառայից, այլ ուր տէրն է ամենեցուն ” . Շնորհ :

Դարձեալ . “ Ուստի՞ արդեօք կոչեաց (զմեզ ա՟ծ) (պտս.) Ի մեղաց, 'ի փողոցաց, 'ի ճանապարհաց և 'ի ցանկոց . (հց.) “ Եւ ո՞ւր արդեօք կոչեաց : (պտս.) “ Ի հրեշտակական պատիւ, 'ի սրովբէական սրբաբանութի՟, յա՟ծութեն փառս ” . Սարգ :

“ Չեմք ապա 'ի խաւարի, չեմք 'ի ստուերս մահու : (հց.) “ Ո՛ր վասն : (պտս.) “ Վասն զի փոխեցաք 'ի մահուանէ՞ 'ի կեանս : (հց.) “ Զիա՞րդ և որո՞վ օրինակաւ : (պտս.) “ Զի սիրեմք զեղբարս ” . Սարգ . Տես յընդարձակն :

Այլ աստ գիտելի է, զի բայն որ ներգործութ՟ դնի 'ի հարցման, եթէ 'ի բազումս զօրութ՟ գտանի 'ի պատասխանին . որպէս է տեսանել 'ի վերոյ գրեալդ :

Եւ երբեմն ևս փոխանակ այնր բառի՝ որ լինելոց էր բուն պատասխանի հարցմանն, դնի բան ինչ՝ եթէ բացայայտիչ զօրութ՟ իմացեալ բառին . զոր օրինակ, “ Զի՞նչ է զոր կարդացերն : (պտս.) “ Զմի առէ խընդրեցի և զնոյն աղաչեմ : (հց.) “ Եւ ո՞ր է այն : (պտս.) Բնակել ինձ 'ի տան տ՟ն, և շուրջ զսեղանով նորա երգել ” . Խոսրով :

Գիտելի է ևս, զի բազում անգամ հարցումն դնի առանց պատասխանւոյ . զոր օրինակ, “ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց՝ եթէ զԱդամ 'ի ծառոյն կենաց ” . Նար :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս կազմութեան բանի, և պէսպիսութեան շարադրութեանց.

Ի համաձայնութենէ մասանց բանի կազմին պէսպէս շարադրութիւնք բանից. ոմանք սակաւաբառք, և ոմանք բազմաբառք։

Սակաւաբառք կազմին 'ի սակաւ բառից՝ գոնէ յերից. այսինքն 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի խնդրոյ նորին. զոր օրինակ, "Թորգոմ ծնանի զՀայկ". Խոր։ Ուր կան երեք բառք. այսինքն անուն բայի, բայ և խնդիր։

Բայց երբեմն մին յերից աստի զօրութեամբ դնի. զոր օրինակ, "Թմբրեցոյց ծուլութիւն". այսինքն Թմբրեցոյց զՍողոմոն ծուլութիւն. Նար։ "Ընկալ զսովեալս". այսինքն դու ընկալ զսովեալս. Նար։ "Անցեալն անյայտ". այսինքն անցեալն է անյայտ. Նար։

Իսկ բազմաբառք կազմին 'ի բազում բառից այլ և այլ եղանակաւ շարայարելոց ընդ միմեանս. այսինքն իբր խնդիր, իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլն. որպէս յայտ է 'ի բազում օրինակաց եդելոց 'ի քերականութեան աստ. և յայտնի ևս ցուցցի 'ի յաջորդ օրինակացդ։ Արդ այսպիսի շարադրութիւնք թէ բազմաբառք և թէ սակաւաբառք երրակի կարեն կազմիլ, Պարզ, միջակ և խրթին։

Պարզ շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի դիւրին շարայարութենէ ընտել և սովորական բառից. և է դիւրըմբռնելի ամենեցուն։

Միջակ շարադրութիւն ասի այն որ կազմի 'ի վայելուչ շարայարութենէ ընտիր բառից. յորում և գտանին յետ և յառաջութիւնք նոցին, և խնդրառութիւնք անուանց։

Խրթին շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի մանուածոյ շարայարութենէ ընտիր կամ մթին բառից զոր իմաստնոց միայն է իմանալ. տես յընդարձակն։

Օրինակ պարզ շարադրութեան.

“ Ոմն իմաստասէր 'ի հացկերոյթ կոչեցին. և
„ նա իբրև եմուտ 'ի տունն՝ և բազմեցաւ, նայեցեալ 'ի
„ վեր և 'ի վայր և 'ի չորեսին կողմունս տանն՝ ետես
„ զանազան գունովք զարդարեալ, և ազգի ազգի ե-
„ րանգօք պայծառացեալ. ապա լցեալ զբերանն խը-
„ խով եթուք յերեսս տանուտեառն: Եւ իբրև հար-
„ ցեալ եղև, թէ ընդէ՞ր արարեր զայդ, պատասխա-
„ նի ետ և ասէ, և զի՞նչ վնաս արարի. զոր դուք
„ պատուեալ էիք՝ և ես պատուեցի, և զոր դուք ոչ
„ էիք պատուեալ, և ես ոչ պատուեցի: Հայեցայ
„ յամենայն տունս, և տեսի զարդարեալ և պատուեալ
„ ամենայնի, և ոչ կարացի թքանել. իսկ զերեսս տանու-
„ տեառնն տեսի անպատիւ, զի ոչ էր զարդարեալ
„ առաքինութեամբ զներքին մարդն. վասն որոյ և անդ
„ թքի: Եւ արդ՝ եթէ այսօրիկ արտաքինք, որ զճըշ-
„ մարիտ աստուածածանօթութիւն ոչ գիտէին, այսպիսի իմն
„ նախանձ ունէին բարեաց գործոց՝ և առաքինասէր
„ վարուց, ապա ո՞րչափ ևս առաւել մեզ պարտ է բա-
„ զում զգուշութիւն և փոյթ ունել յառաքինութիւնս.
„ որք մեծագոյն շնորհաց արժանացաք գալստեամբն
„ Քրիստոսի, և պատուական խաչին փրկագործութեամբն ,,.
„ Մեկնութիւն Ժամագրոց:

Դարձեալ. “Կաքաւն գողանայ զօտար ձուս, և
„ թխսեալ ձայն հանէ. իսկ ձագքն իբրև լսեն զձայն
„ նորա և զձայն մօրն իւրեանց որ ծնաւն զնոսա,
„ թռուցեալ գնան յերամս իւրեանց: Այնպէս և
„ բանսարկուն 'ի ձեռն մեղաց գողացաւ և հեռացոյց
„ յարարչէն զազգս մարդկան. իսկ նոքա իբրև լուան
„ զձայն մարմնացելոյ բանին, գնացին զհետ նորա ,,.

Օտար. հատ.

Օրինակ միջակ շարադրութե՟ :

“ Քաջն Վարդան և ամ՟ զօրքն որ ընդ նմա էին ,
” իբրև տեսին զբազմութի՟ պատրաստութե՟ գնդին
” հեթանոսաց , հայեցան և յիւրեանց սակաւութիւն .
” Թէպէտ և կարի յոյժ նուազունք էին քան զնոսա ,
” ոչ ինչ զանգիտեցին առ 'ի յոյժ բազմութե՟ն . այլ
” առ հասարակ միաբան համբարձին յերկինս զձայնս
” իւրեանց աղաղակէին և ասէին . դատեա տ՟ր զայ-
” նոսիկ , և այլն . . : Եւ զայս ասելով խումբ արա-
” րեալ յարձակէին , և զաջ թեւն բեկեալ զձախոյ
” կողմանն արկանէին . և սրոյ ճարակ զամենեսեան
” տային , և ընդ երեսս դաշտին փախստական առ-
” նէին . . : Յայնժամ տեղւոջ դէտակն 'ի վեր ամբառ-
” նայր Արշաւիր արշարունի , գոչէր առիւծաբար և
” յարձակէր վարագաբար . հարկանէր սատակէր ըզ-
” Սուրկն քաջ զեղբայր թագաւորին Իփնեաց . և ըզ-
” բազում համհարզս նորին ընդ նմին կոտորէր . և
” այնպէս ամ՟քն առ հասարակ այր զախոյեան իւր յեր-
” կիր կործանէր : Եւ առ յոյժ յանդուգն յարձակ-
” մանն՝ յոլովագոյն այն էր , զոր գետամոյնն առնէին՝
” քան զանկեալսն սրոյ 'ի ցամաքի . և 'ի բազմութե՟
” դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարիւն
” դառնային ” . Եղիշէ . Է :

“ Իսկ 'ի ծագել արեգական ը՟դէմ մերոյ զօրացն՝
” 'ի պղնձապատ վահանացն նշոյլք զերամբքն փայ-
” լատակէին՝ իբրև յամպոյ մեծէ . և 'ի նոցանէ 'ի
” դուրս ոստչէին 'ի մերոց նախարարացն քաջք զրա-
” հաւորք որպէս 'ի փայլատականցն ճառագայթք .
” յորոց 'ի տեսութե՟ն միայն զանգիտեալ պարսկա-
” կանն գունդ , սակաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել
” հայել ընդդէմ արեգականն ծագման . . . և 'ի խառ-
” նակել մարտին՝ պատահէ կամսարականն Սպանդա-
” րատ խմբի մեծի , յորում էր քաջն Տ՟ երգիր . . . և
” հերձեալ զխումբն՝ որպէս զշանթահար՝ յերկիր
” կործանէր զքաջն , և զխումբն պտուտեալ 'ի փա-
” խուստ դարձուցանէր ” . Խորէն . Է . 37 :

“Իր երբեմն (Շապհոյ արքայի և Ռստոմայ նախարարի) զհետ երամակաց ցռուց յանդգնագոյնս արշաւել ընդ խորտաքորտս և ընդ վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ Շապուհ: Իսկ Ռստոմայ մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ. գնա՛ գնա՛ ա՟ծորդի՛դ պարսից, եթէ այր իցես. և նա ասէ. դու՛ երթիջիր. զի 'ի քարինս՝ դիւա՛ց է շահատակել: Դարձեալ յայլում ժամու դիպեցաւ 'ի շամբս կինճ որսալ հրովք. և Շապհոյ ոչ համարձակեալ 'ի թաւուն քաջարշաւ լինել՝ մինչև շրջապատել հրոյ. և նորա ըղհայեցուածս յերկուս բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երկիւղարան: Միւսանգամ ասէ Ռստոմ. ա՟ծորդի՛դ Պարսից՝ ահա հայր քո և ա՟ծ, ընդէ՞ր զանգիտես. իսկ Շապուհ ասէ. թողեալ 'ի բաց զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձո զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջեղն՝ ձիս իմ խրտչի: Յայնժամ այպանեաց զնա Ռստոմ՝ ասելով, միթէ և այդ քարինք իցեն՝ զի ես յառաջեցից. և արդ եթէ դու զմոկացիս կոչեսցես դիւազգիս, ես զսասանեանսդ կոչեմ կնամարդիս: Եւ մտրակեալ զերիվարն՝ իբրև ընդ հովիտ ծաղկանց անցանէր ընդ հուրն՝ զերծուցանելով զՇապուհ„. Խոր. Գ. 55:

Օրինակ խրթին շարադրութեան:

“Որ առ պատուիրանադրեալն ոչ ձկտի հասանել կանոն, նա յահեկակողմանն դանդաչէ խոտորեալ ճանապարհի. իսկ որ յառաւելազանցն նկրտի հրամայեցելոյն հասանել, զաջակողմանն այնպիսին տենչացաւ գտանել զխոտորումն: Մինն յանդգնաբար յապաշխարութե՟ն հոսելով վտանգս՝ յառաւել պնդութե՟ն յանյուսութե՟ն ընկղմի խորս. և միւսն՝ անչափաբար ընդարձակեալ թողութե՟ն յուսով զբովանդակ զերկիւղին 'ի բաց լուծանէ զկապ: Իսկ որ յերկաքանչիւրոցն զանգիտեալ հրաժարիցէ ծայրայեղ խոտորմանց, (նա) միջին իմն արդարակ և անստերիւրող ճանապարհաւ բերիցի. յորմէ ոչ փոփոխեսցի նախահայրցն հաստատեալ սահմանք. (այս է՝) ոչ տէրունականն աւուր զապաշխարութեն 'ի վերայ ածել զնսիր. և ոչ նմանօրէն սմա զծոմականսն դատարկացուցանել և փափկացուցանել զաւուրս. և ոչ դարձեալ յառ գերազանցագոյնն սոցա ումեք վերանալ ելանել. որպէս թէ՝ ընդ անգործութի և ընդ բերանալուծութի խառնել և զքնոյն խորութի և զգինէճանութեն որովայնամոլութի. իսկ 'ի տրտմականսն՝ ծանրաբեռնութեն 'ի ներքոյ դնանիլ տկար բնութես, մարմնասպան լինելով յաւէտ՝ քան թէ ախտասպան. և 'ի կքել մարմնոյն՝ գտանել հոգւոյն զվհատութեն տարակուսանս „. Յովհաննէս Իմաստասէր. Ե.

“Սուր ածամուխ բարձրացեալն այցելութե նշան սքանչելարուեստ փայլակնաձև փայլմամբ յեսանեալ՝ քառասայրեան գոլով բերանաւ, 'ի ձեռն աջողակ աջոյն յոր յեղմամբ շողշողեալ. որ 'ի փրկութի նորոգման մարդոյն՝ զջիլս ուժգնապիրկս չարին խստութե քև հատեալ՝ իսպառ պարուրեաց. զօրեղ երթմամբ 'ի խոր խոցոտեալ՝ անպատուասատելի լուծեալ խորտակեաց „. Նար. 'ի Գովեստն Խաչին:

“Իսկ հաւատոյն լուսոյ արմատ և աղբիւր՝ մերունակ բնութես պտուղ՝ բարեբանեալն ածածին, ընդ երկնաւս մաքրապայծառ լուսով կուսութեն ընդ իւր զհոգևորսն վառեալ ղամպարաշար սրբյն զաստեղս՝ զերրորդութեն ընդ տիեզերս շրջափայլէ հրաշապայծառ ճառագայթ „. Մովսէս. 'ի Ճառն Վարդավառի:

“Այժմ ամպք՝ տէրունւոյն սպասահարկեալ հրամանի՝ լուսատեսակք յարևելից՝ ոսկեճաճանչք 'ի հիւսիսոյ՝ զմիմեամբք կուտակեալ 'ի միագոյն թանձրութե փայլակնացայտք՝ որոտընդոստ ցօղաբուղխ առատութե զտիեզերս արբուցանեն: Եւ օդք շնչեալ մաքրագոյն՝ բիւրակերպեան ծաղկանցն և տնկոցն երփն երփն զարդուք զաշխարհս պայծառազարդեալ պսակեն „. Նոյնն:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս լուծման պէսպէս շարադրութեանց :

Շարադրութեանց լուծումն է որոշումն իւրաքանչիւր բառից միոյ բանի՝ ըստ զանազան պաշտաման նոցա, իբր անուն բայի, իբր բայ, իբր խնդիր բայի, իբր մակբայ, իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլն: Արդ թէպէտ յառաջելոցս ցայս վայր կարէ ուսանողն ինքնին լուծանել գրեթէ զա՟մ շարադրութիւս, բայց առ՚ի օգնել ևս նոցա՝ մանաւանդ տկարացն, և դիւրացուցանել զաշխատանս նոցին, դիցուք աստ քանի մի օրինակս. և լուծցուք զնոսին:

Լուծումն պարզ շարադրութեան :

" 1. Յարտաքնոցն իմաստասէր ոմն տուն շինեաց.
" 2. Եւ գեղազարդ ոմն ասաց ցնա, ծեփեա՛ զտունդ քո,
" զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք
" պատկերաց, և անկուածոյ յօրինուածովք: 3. Եւ
" իմաստասէրն, եկ յառաջ նկարեա, և ապա 'ի վե-
" րայ ծեփեցից. 4. զի զգարշելիսն ծածկելն է բար-
" ւոք՝ քան թէ յայտնելն ". Մեկն. Ժամագր:

Յայսմ բանի, յառաջին համարն՝ ածական անուանդ իմաստասէր է անուն բայի. որոյ գոյականն գնի զօրութ՟բ. այսինքն է այր ոմն իմաստասէր: Ոմն է մասնական անուն մասնաւորիչ նորա. այսինքն անուանս իմաստասէր. Յարտաքնոցն է բացառական խնդիր մասնական անուանս ոմն: Շինեաց է բայ: Տուն է խնդիր սեռի բայիս շինեաց. և է անորոշ հայցական:

Յերկրորդ համարն, Եւն է շաղկապ բաղհիւսական: Գեղազարդ է անուն բայիս ասաց: Ոմն է մասնական անուն՝ որպէս յառաջին տան: Խնդիր սեռի ասաց բային զօրութ՟բ գնի. այսինքն է ասաց զայս.

այս է ծեփեա զտունն քոյ: Ցնա է խնդիր բնութ՟ տայցին: Ծեփեա է բայ հրամայական. որոյ անունն դնի զօրութ՟, այսինքն դու: Զտունն է խնդիր սեռի ծեփելոյն: Քոյ է ստացական դերանուն. և լեալ է ածական տանն: Զի է շաղկապ պատճառական: Եկեալ է բայ դրադէմ, կամ ընդունելութ՟ իբր բայ եղեալ, որոյ անուն բային դնի զօրութ՟, այսինքն է նա: Գեղեցկացուցեր է բայ, որոյ անունն դնի զօրութ՟, ի՟ ես. Զնա է խնդիր սեռի գեղեցկացուցանելոյն: Նկարուք և յօրինուածովք են խնդիր բնութ՟ նորին: Զանազան է ածական բառիս նկարուք: Պատկերաց է յատկացուցիչ նորա: Նկարուածոյ է յատկացուցիչ բառիս յօրինուածովք:

Յերրորդ համարն, Իմաստասէրն է անուն բայիս ասէ, որոյ խնդիրն դնի զօրութ՟. ի՟ է ասէ ցնա զայսինչ, (որ է հետևեալ բանն): Եկ է չէզոքական բայ, որոյ անուն դնի զօրու՟. ի՟ դու: Նկարեա է բայ ներգործական, որոյ խնդիր սեռին դնի զօրութ՟. այսինքն զտունն: Յառաջ է մակբայ ժամանակական նկարել բային. և է շաղկապ: Ծեփեցից է բայ ներգործական. որոյ անունն է ես. և խնդիրն դնի զօրու՟. ի՟ զայն: Ապա և 'ի վերայ են մակբայ ծեփել բային:

Ի չորրորդ համարն, Զի է շաղկապ պատճառական: Ծածկեալքն և յայտնեալքն են անուն բայիս էարուք է: Զփորձելեան է խնդիր սեռի ծածկելոյն և յայտնելոյն: Քան թէ է շաղկապ նախընտրական 'ի մէջ երկուց բայիցս ծածկել և յայտնել:

Լուծումն միւս շարադրութեան:

“ 1 Այս արդ որպէս 'ի մասունս մարմնոյ քան զամ՟
„ պատուականագոյն և առաջին գլուխն է, յաղագս
„ տեղւոյն բարձրութեան և զգայարանացն 'ի նմա եղե-
„ լոց. և ապա այլքն յանդամոց մի ը՟ միոջէ. 2. այս-
„ պէս և յանդամս հոգւոյն մեծ և առաջին իբրև
„ գլուխ է հաւատոյն ճշմարտութիւն. 3. և ընդ նմին
„ յարմարեալ՝ որպէս անձն ընդ գլխոյ՝ գործք արդա-

„ րութե՛ մեծամեծք և փոքունք՝ ըստ պատուիրանացն „ քո՛ց „) Շնորհ. ընդհանր.:

Յայսմ բանի յառաջին համարն, Եւ արդ է շաղկապ սկզբնաւորական: Որպէս է մակբայ նմանական: Գոլովն է անուն բայի: Են է բայ: Պատուականագոյն և առաջին են ուղղական խնդիր, բային: Քան՝ է նախադրութի: Զամ՝ է խնդիր նախադրութե. և այս նախադրութի հանդերձ խնդրով իւրով լեալ է խնդիր անուանցս պատուականագոյն և առաջին: Ի մասունս՝ է երկրորդ խնդիր նոցին, (այսինքն պատուականագունին և առաջնոյն). և կամ պատահական խնդիր բայիս է: Մարմնոյ է յատկացուցիչ 'ի մասունսն: Յաղագս է նախադրութի: Բարձրութե է խնդիր նախադրութեան: Տեղւոյն է յատկացուցիչ բարձրութե, և է շաղկապ: Զգայարանաց է երկրորդ խնդիր նախադրութեան: Եղելոց է ընդունելութիւն 'ի հոլովս սեռական, և է լեալ ածական զգայարանաց: Ի նմա է խնդիր ընդունելութեն. և այս նախադրութի, այսինքն յաղագս հանդերձ խնդրովք իւրովք լեալ է երկրորդական խնդիր բայիս է: Եւ այլ է մակբայ դասական: Նայելն է անուն բայի, որոյ բայն ունի զօրութի, այս է տալին: Յանդիմոյ է խնդիր բառիս այլն: Մի ըստ միոջէ է դարձեալ դասական մակբայ զօրութի իմացեալ բային:

Յերկրորդ համարն, Նոյնպէս է մակբայ: Ճշմարտութի է անուն բայիս է: Հաւատոյն է յատկացուցիչ ճշմարտութեան: Մեծ և առաջին են ուղղական խնդիր բայիս է: Յանդամս է ներգոյական խնդիր բառիցդ մեծ և առաջին: Հոգւոյն է յատկացուցիչ յանդամսին: Իբրև է նախադրութի: Զգլուխ է խնդիր իբրևին. և սա հանդերձ խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր նոցա. այսինքն մեծին և առաջնոյն և կամ պատահական խնդիր բայիս է:

Յերրորդ համարն, Եւս է շաղկապ: Գործք է անուն բայի: Յարմարեալ է բայ: Ընդ է նախադրութի: Նմին է խնդիր նորա, որ և հանդերձ խնդրովն լեալ է խնդիր յարմարեալին: Նադարութեան է յատկացուցիչ գործքին: Մեծամեծք և փոքունք են ածական նորա, այսինքն գործելին ։ Ըստ է նախադրութի̄ ։ Պատուիրանացն է տրական խնդիր նորա ։ Ք̄ի է յատկացուցիչ պատուիրանացն, ըստ հանդերձ խնդրով իւրով լեալ է իբր պատահական խնդիր գործելին ։ Իսկ 'ի միջանկեալ բառս որպէս անձն ընդ գլխոյ, կայ զօրութե̄ կրկնումն բայիդ յարմարեալ. իբր թէ ասէր, որպէս անձն յարմարեալ է ը̄ գլխոյ. ուր Անձն է անուն բայի ։ Յարմարեալ էն է բայ ։ Ընդ է նախադրութի̄ ։ Գլխոյ է խնդիր նորա. որ և հանդերձ խնդրովն լեալ է խնդիր բնութե̄ յարմարելին]

Լուծումն երրեին շարադրութեան ։

« 1. (Զանսպառ խաղացմունս ա̄ծայնոցն 'ի քեզ շնորհաց, և զանդուլ հոգւոյն 'ի վերայ քո իմացուածոցդ զշարժմունս՝ ծանեայ 'ի ձեռն գեղեցիկ խընդրոյս. 2. յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութի̄. 3. որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է՝ առաւել ևս սովորութե̄ցս „. Նար. յառաջ ։)

Ի սմա յառաջին համարն անուն բային դնի զօրութե̄. այսինքն է ես, իսկ բայն է ծանեայ ։ Բառքդ զանսպառ խաղացմունս և զանդուլ զշարժմունս են խնդիր բայիս ծանեայ ։ Ա̄ծայնոցն շնորհաց է յատկացուցիչ կրաւորականահաղորդ անուանս խաղացմունս, և դնի իբր անուն բայի խաղացմանց ։ Ի քեզ է խնդիր նորա. այսինքն խաղացմանցն ։ Հոգւոյն է յատկացուցիչ կրաւորականահաղորդ անուանս զշարժմունս. և է եդեալ փոխան անուան բայի. որպէս յառաջնումն ։ Ի վերայ է նախադրութիւն ։ Իմացուածոցդ է խնդիր նորա ։ Քո է յատկացուցիչ իմացուածոցն. և այս նախադրութի̄ հանդերձ խնդրով իւրով լեալ է խնդիր անդուլ շարժմանցն ։ Ի ձեռն է նախադրութի̄ ։ Գեղեցիկ խնդրոյս է խնդիր նորա. և այս նախադրութի̄ հանդերձ խնդրով իւրով լեալ է յարմարական խնդիր բայիս ծանեայ ։ Որպէս թէ ասէր, 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս այսորիկ զոր յինէն խնդրես, ծանեայ ես զխաղաղն այսինքն զգեզանիւն ա̃ծային շնորհաց 'ի քեզ անսպառ, և զշարժիւն այսինքն զիջանելն հոգւոյն 'ի վերայ մտաց քոց անդադար:

Երկրորդ համարն, անուն բայըն դնի զօրութ̃բ. այսինքն է ես: Ընչաչեալ է բայ. (կամ որ նոյն է ընդունելութ̃ի եղեալ իբր դրադեմ բայ). Օ ծանօթութիւն է խնդիր սեռի բայիս ընչաչեալ: Օ հոգւոյդ է յատկացուցիչ ծանօթութեան: Յառաջ քան է նախադրութ̃ի որոյ խնդիրն զօրութ̃բ դնի՝ ընդ բառիւդ աշխարհոյդ. այսինքն է զծանօթութիւն. որոյ լեալ է յատկացուցիչ բառդ աշխարհոյդ. որպէս թէ ասէր, յառաջ քան զծանօթութ̃ի մարմնոյդ ընկալեալ զծանօթութ̃ի հոգւոյդ:

Երրորդ համարն, որն յարաբերէ զվերջին բառն առաջին համարոյն որ է բառդ խնդրոյս. և է լեալ անուն բայիս սիրելի է: Բառքդ, իմոյ իսկ աշխարհակացս առաւել ևս սովորութեանցս են խնդիր նորա. այսինքն է բայիս սիրելի է. ուր իսկն դնի իբր զարդ. իսկ իմոյն է ածական աշխարհակացս: Առաւել ևսն շաղկապ առաւելական որպէս թէ ասէր, այդ խնդիրդ սիրելի է աշխարհակացս իմոց. և առաւել ևս սովորութեանցս:)

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Յարմարագրութեան:

Յարմարագրութիւնն է ուղիղ գրութ̃ի բառից 'ի ձեռն յատուկ տառից. և պատշաճ կարգումն բանից 'ի ձեռն յարմար կէտից և նշանաց: Աստի երկու պաշտօնք են յարմարագրութե̃:

Առաջինն է զիւրաքանչիւր բառ գրել իւր սեպհական տառիւ. գ̃ր, Նօթ և ոչ նոթ. գոհար և ոչ քոհար. թանձր և ոչ թանցր. ըստ այսմ և այլքն. զորոց ոչ է հարկ գրել յերկար. ապա թէ ոչ պարտ էր զա̃մ բառ ներգործութ̃բ դնել աստ: Իսկ եթէ կամիս ա̃մի սոցա տեղեակ լինել, պիտոյ է քեզ պարապել ընթերցման գրոց, և քննութե̃ բառից. և ևս հայել յաճախ 'ի բառգիրքն, ուր որոշ եդեալ կան իւրաքանչիւր բառք ըստ բուն տառից իւրեանց։

Երկրորդ պաշտօն յարմարագրութեան է զիւրաքանչիւր բան ուղիղ և որոշ կարգել, թէ ըստ բառիցն, և թէ ըստ հատուածոյ բանիցն. թէ ըստ պարբերութեան, և թէ ըստ տրոհութեան։ Իսկ այս լինի 'ի ձեռն կետադրութեան, նշանագրութեան և պատուագրութեան. զորոց խօսեսցուք կարգաւ։

Վասն կետադրութեան։

Կետադրութիւն է ուղիղ կարգութիւն բառից և բանից 'ի ձեռն կետից։ Իսկ կէտքն են գիծք ինչ որոշիչք հատուածոց բանից. և կարգի բառից. և են երեք։

Առաջինն անուանի ստորակէտ և է այս (,) և դնի սա հասարակօրէն 'ի վերջ անկատար բանից և կամ այնպիսեաց որ թէպէտ յինքեանս ըստ իմիք համարին կատարեալ, բայց համեմատութեամբ այլում բանի որոյ են հատուած, են իբր անկատար և պահանջեն յարել 'ի նոյն 'ի կատարել։ Սա լինի ևս մակակէտ ընդ տառին, յորժամ իբր նախդիր վարի. Որ, 'ի տունն 'ի տան, 'ի տանէ, ևն։

Երկրորդն ասի միջակէտ և է այս (.) և դնի սա 'ի վերջ այնպիսի բանից որ թէպէտև են կատարեալ, բայց դեռևս չեն վերջացեալ. յորոց ըստ կանոնի ոչ սկսանի գլխագրով այլ բան։ Սա ասի միջակէտ, զի հասարակօրէն 'ի մէջ պարբերութեան բանից դնի։

Իսկ երրորդն ասի վերջակէտ որ է այս (։) և սա դնի 'ի վախճան կատարեալ բանից վերջացելոց. յորոց հասարակօրէն գլխագրով, կամ երկաթագրով սկսանի այլ բան։ Եւ ահա երեքին սոքա յայտնի երևին յառաջիկայ օրինակդ։

“Որք վիրաւորին 'ի պատերազմի աստ մերում, դեղ նոցա ապաշխարութիւն է. զոր դնեն 'ի վերայ վիրաց իւրեանց„. Սծէ։

Արդ նկատել արժան է, զի յորժամ բազում անուանք կամ բայք աւելի քան զերկուս՝ անմիջապէս շարայարին զհետ միմեանց, եթէ նախընթաց նոցին դիցի առանց շաղկապիս և, հասարակօրէն դնի 'ի միջի ստորակէտ կամ գոնէ բութ. որ̄, “Խորամանկ, մեքենաւոր և արուեստական է ախոյեանն մեր. բայց զէն նորա տկարագոյն է քան զմերն„. Մծբ:

Ասացի՝ աւելի քան զերկուս. զի եթէ երկու միայն իցեն, ոչ է հարկաւոր դնել զստորակէտ, այլ ոչինչ, և կամ առ առաւելն զբութ. որ̄, “Խաղային գընային այնուհետև 'ի վերայ պահակին հոնաց, զոր ունէին բռնութ̄բ պարսիկք. առնուին քանդէին ըզպահակն„. Եղէշ:

“Ե՛րբ իցէ, զի ելից 'ի թանձրագանգաղ ձանձրալի մարմնոյս„. Եղէշ:

Իսկ եթէ շաղկապս և յարեսցին, թէ երկու իցեն և թէ աւելի, ոչ է հարկ դնել զստորակէտ, այլ կամ զբութ, և կամ զոչինչ. որ̄, “Երկնէր և երեքկնէր զանսուտ երդումն„. Եղէշ:

“Ամ գնացից և վարուց և իրաց՝ 'ի չափու պարտ է կալ, և ոչ խոտորել՝ ոչ յաջ և ոչ յահեակ„. Եփր. Երգ:

Այլ եթէ յայսպիսի շարայարեալ շաղկապաւոր բառսդ յարեսցին այլ բանք իբր բացայայտիչք, կամ իբր յատկացուցիչք, կամ իբր ածականք, կամ իբր խնդիրք են, յայնժամ դնի ստորակէտ, կամ բութ. որ̄, “Յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորաւն այպանեն յոյժ. սիրեն զանշքութի̄ հանդերձից, և յարգեն զանարգն քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս„. Եղշէ:

Եւ ևս արժան է նկատել, զի 'ի բանս յորժամ յարին շաղկապք, պարտ է ըստ պահանջելոյ շաղկապման բառից և բանից դնել զկէտ. որոյ զօրինակն կարես գտանել կարգաւ յառաջին մասին. Գլ. Ե:

Արդ որպէս հարկ է քերթողին 'ի շարադրելն ինչ 'ի կիր առնուլ զայսոսիկ կէտս ըստ յարմարուե̄ տեղւոյն, սոյնպէս ևս հարկ է ընթերցողին կամ խօսողին կշռել զիւրաքանչիւր անդամ և զպարբերութիւն խօսից, և տրոհմամբ բանից 'ի ձեռն շնչառութեան արտասանել. 'ի ստորակէտս զխոնարհումն ձայնին կախ թողլով իբր կատարելի. 'ի միջակէտս՝ զձայնն հատանելով իբր ըստ իմիք կատարեալ. և 'ի վերջակէտս՝ զձայնն և զբանն վերջացուցանելով՝ իբր ամենևին աւարտեալ:

Գտանին դարձեալ և այլ երկու տեսակք գծից, որք երբեմն 'ի գործ ածին 'ի շարադրութիւնս. որոց մինն ասի փակագիծ, և միւսն ենթամնայ: Փակագիծն է այս ( ). և սա 'ի մէջ բանի զմասնաւոր բան ինչ և կամ բառ պարագրէ և իբր եղնգամբք 'ի վեր առնու. մինչև առանց ընթեռնլոյ զայն, ամբողջ մնալ իմացուածոյ միւս բանին, յորոյ միջի զետեղեալ կայ. որպէս, "Առցուք (թէ ախորժէք), նախ զօրէնս Աստուծոյ 'ի ձեռս մեր և ընթերցցուք". Լամբ: Ուր ահա այս բան Թէ ախորժէք որոշեալ է փակագծիւ. առանց որոյ կարէ իմացուած միւսոյ բանին մնալ ամբողջ. որգոն, առցուք նախ զօրէնս Աստուծոյ 'ի ձեռս մեր և ընթերցցուք:

Ենթամնայն է այս (-) և սա զերկուս տարակաց վանկս միոյ բառի յարէ 'ի մի: Եւ այս յայնժամ լինի, յորժամ մի վանկ բառին է 'ի վերջն նախընթաց տողին, և միւսն 'ի սկիզբն յաջորդ տողին. որպէս է տեսանել յայս բան. "Որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի". Սարգ:

Այլ նկատել պարտ է, զի մի՛ վանկքն թիւր անջատեսցին 'ի վերջս տողից, այլ ըստ պահանջման փաղառութեան. ուստի և այնպիսի վանկք որք բաղաձայնիւ սկսանին, յանջատելն՝ բաղաձայննոցա ոչ է դնել 'ի վերջն տողից, այլ 'ի սկիզբն յաջորդ տողին: Վասն որոյ թիւր է այս անջատումն՝ բարեկ-ենդան, տես-ի, գնաց-աք, ևն: Այլ պարտ է դնել այսպէս, բարե-կենդան, տե-սի, գնա-ցաք, ևն: Բայց յերկբարբառ վանկս կարէ դնիլ ըստ երկուց ևս. որպէս եր-կեաւ կամ երկ-եաւ, ան-կիւն կամ անկ-իւն. լա-ւութիւն կամ լաւ-ութիւն ևն: Այսպէս ևս յայնպիսի բառս՝ յորս ու տառն իբրև վեւ հնչէ, մարթ է անջատել այսպէս՝ ստեղծ֊ուած, պատ֊ուել, 'ի նախանձ֊ուէ, ևն. այլ լաւ ևս, ստեղ֊ծուած, պա֊տուել, 'ի նախան֊ձուէ, ևն.

Նաև եթէ երկու ձայնաւորք մի զկնի միոյ դիպեսցին, պարտ է զմին 'ի վերջ նախընթաց տողին դնել, և զմիւսն 'ի սկիզբն յաջորդ տողին, պր, բաղա֊ամ, մարի֊ամ, մի֊այն, գաբրի֊էլ, էմմանու֊էլ, առնէ֊ին, լնու֊ին, սիմէ֊ովն, է֊ակ, կայ֊աք, հնայ֊աք, բայ֊ից, քոյ֊ին, գոյ֊իւք, ևն.

Սոքա եթէ զկնի ունիցին զայլ վանկ, այլազգ ևս բաժանին. որգոն բաղաա֊մայ, մարիա֊մու, գաբրիէ֊լին, էա֊կան, միայ֊նակ, ևն.

Նոյն ևս յայնպիսի բառս՝ յորս ըթ տառն զօրութ̃ն է եդեալ, յանջատելն զայնս՝ ըթն իբր 'ի բաղումն դնի ներգործութ̃ն. պր, փը֊տութ̃ի, դը֊նել, զըն֊նել, ըս֊կանիլ, ըղ֊նա, ևն.

Նաև գիտելի է, զի բառք բարդեալք կամ բաղադրեալք առանց միջանկեալ տառի՝ այլազգ անջատին. զի սկզբնաւորութ̃ն պարզիցն՝ յորոց զօդին, թէ և ձայնաւոր տառիւ սկսցին. պր, ուրախ֊արար, դժուար֊իմաց, պար֊առութ̃ի, բաց֊որոշել, դեր֊անուն, ապ֊երախտ, ևն.

Իսկ որք միջանկեալ տառիւ բարդին, սկզբնաւորութ̃ն բաղաձայնից անջատին. պր, Հառա֊բանել, կենա֊գործել, ևն.)

Մասն Նշանագրութեան.

Ի բարբառս մեր կան նշանք ինչ, որովք յատկութիւք հնչմանց տառիցն որոշին 'ի ձեռն արուեստի առոգանութեան ըստ ոլորակին, ըստ հագագին՝ և ըստ ժամանակին. և են եօթն. սուր՝ որ է այս ՛, սուղ որ է այս ◦, Թաւ որ է այս ῾, Բութ որ է այս՝, շեշտ՝ որ է այս ՛, երկար՝ որ է այս ՛, պարոյկ՝ որ է այս ⌒. Ընդ որս դասի և ոլորակն, որ նման է պարուկի, և կոչի ևս եր֊

բեմն պարոյկ, որ և է այս ՞. զորոց խօսեսցուք յառաջիկայդ ։

Սոսկն 'ի հնումն վարեր 'ի վ՟ր այնց տառից, զորս առաւել նուրբ պարտ էր հնչել, քան զլծորդատառս նմանաձայնս նոցա ։

Սուղն գլխաւորաբար վարի յերաժշտութե՟. թէպէտ և հին գրիչք ոմանք դնէին և 'ի վ՟ր երկբարբառիս ու ։

Թաւն նշանակէր առ հինսն զխոշորաձայն հնչումն այնց տառից, որոց կան լծորդատառք նմանաձայնք, այլ նուրբ հնչմամբ ։ Սովորութիւն խափան եարկ այսոցիկ ։

Բութն՝ դնի նախ 'ի վերայ թուական անուանց դասականաց, յորժամ վարին իբր մակբայ. և կամ յորժամ ունիցին զյօդ առանց լինելոյ խնդիր բայի, և կամ ածական. ո՟ր, “ Խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութ՟բ, եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիս զայսոսիկ. առաջին՝ չյիշել զյանցանս . . . երկրորդ՝ զի դարձուսցես մեզ զա՟մ ժառանգութի՟ մեր . . . երրորդ՝ հնարել թափել զմեզ 'ի կայսերէ „. Խոր ։

Երկրորդ դնի բութ 'ի վերայ շաղկապիցս՝ այլ, են. դարձեալ, արդ, և արդ, իսկ արդ, այլ արդ, ո՟ր, “ Ոչ եթէ զա՟մ ինչ՝ զոր խորհեսցի մարդ՝ առնել կարող է, այլ զորս թողացուցանէ ա՟ծ „. Սարգ. հայր ։ “ Դարձեալ՝ եթէ 'ի նաւ ելեալ ոք ը՟ ամեհի ալիս կամիցի ճանապարհորդել „. Իմաստ ։ “ Եւ արդ՝ հայեաց յերկինս 'ի վեր, ո՛վ մարդ, և յերկիր 'ի խոնարհ „. Սարգ ։

Երրորդ՝ դնի բութ 'ի վերայ դրադէմ բանից՝ 'ի լինելն հեռի դիմաւոր բային. մերթ և 'ի մօտ լինելն. ո՟ր, “ Արդ էր կ՟ն զկերպարանս ծառայութե՟ն թողեալ՝ դատաւոր և քննիչ նստիս օրէնսդրին „. Սարգ ։ “ Զուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջմատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին „. Եղիշէ ։

Սոյնպէս և եթէ դրադէմն յետադասեալ իցէ,

պարտ է դնել զբութ 'ի վերջ նախընթաց բանին. Թէպէտ յայսպիսիս երբեմն ստորակէտ եւս դնի. զ՟ր, “Արդեօք մոլից 'ի խրախճանութե՟ն խորանին լուսոյ՝ քեւ առաջնորդեալ„. Նարեկ:

“Օնոյնս և ես հանդերձ հառաչմամբ բարբառիմ՝ 'ի դիպուածոց աստի վտանգեալ„. Յովհան. Իմաստ.:

Չորրորդ՝ բութն դնի երբեմն 'ի վերայ այնպիսի բառից եւս, յորս կարէր դնիլ ստորակէտ. զ՟ր, “Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զդեւս. և որ ոչ խոնարհի՝ խոնարհի 'ի դիւաց„. Լամբր:

“Մի՛ ոք՝ որ չար իցէ՝ յուսասցի անպարտ լինել„. Յոբ:

Շեշտն 'ի գործ ածի 'ի նշան սուր հնչելոյ զձայնաւորսն: Եւ ըստ այսմ դնի նախ՝ 'ի վերջ հրամայական բայից. զ՟ր, “Արձանացի՛ր 'ի յոյսն, մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է. մատի՛ր առ արքայն ահաւոր, մինչդեռ 'ի շնորհացն յաթոռ է. հաւատա՛ գտանել շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութե՟ն„. Լամբր:

Այլ եթէ հրամայական բայն ունիցի յառաջ քան զինքն զայնպիսի բառ, ընդ որում 'ի միասին վարի, յայնժամ դնելի է շեշտն 'ի վ՟ր նախընթաց բառին. զ՟ր, “Յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք„. Ա. Թես.:

“Բա՛ջ իմա զբանն, եթէ չգոյ այլ չար քան զայն„. Խոսրով:

“Դուք բո՛ւռն հարէք, և ա՟ծ լիցի գործակից„. Լամբ:

Եւ եւս՝ եթէ հրամայականն ունիցի նախ քան զինքըն զարգելական մասնիկս մի՛, թէ առընթեր և թէ հեռի, յայնժամ զշեշտն պարտ է դնել միայն 'ի վերայ արգելական մասնկան մի՛. զ՟ր, “Յիմաստութե՟ն քո մի՛ հպարտանար . . . մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո„. Առակ:

Երբեմն եւս վ՟ն զգուշութե՟ն՝ դնի շեշտ 'ի վերջ անուանց ինչ, որք էական բայիւ վարին, կամ որք էական բայի ուղղական կամ սեռական խնդիր լինին: զ՟ր, “Ստա՛հ եմ 'ի ձեզ տ՟րամբ„. Բ. Թեսաղ:

“Լա՛ւ է անզաւակութե՟ն հանդերձ քաջութե՟ն„. Իմաստ:

“Իմաստնո՛ց է վերակացու լինելն„. Իգնատ:

Երկրորդ 'ի յատուկ անուանս այլոց ազգաց՝ սավորութ՟ի եղև ոմանց դնել զշեշտն 'ի վերայ առաջնոյ վանկի 'ի կոչականսն , յորժամ առանձինն վարին ․ ո՟պ, “ Յո՛ւդա, համբուրելով մատնես զորդի մարդոյ ”․ Ղուկ ։

Ասացի՝ յորժամ առանձինն վարին ․ զի եթէ կրկնեսցին , շեշտն սովորաբար դնի 'ի վերջին վանկն ․ ո՟պ, “ Սողո՛ն սողո՛ն գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութ՟ի մարդոյ մինչև ցվախճան ”․ Սիր ։

Նւ ևս եթէ կոչական անուանք վարեսցին մանրկամբքս ո՛ և ո՛վ, ըստ որում են կոչականակերտք, սովորութ՟ի եղև զշեշտն դնել 'ի վերայ այնց մասնկանց ․ ո՟պ, “ Նմանող եղերուք ո՛ հովիւք առաջին հովուացն արդարոց ”․ Մծբ ։

Իսկ եթէ կոչական անուանն զկնի կամ առաջի իւր ունիցի զայլ անուն , կ՟մ զդերանուն , և՟ն ․ շեշտն դնի 'ի վերջին վանկն նախընթացին ․ ո՟պ, “ Սիմո՛ն Յովհանու՝ սիրես զիս առաւել քան զդոսա ”․ Յովհ ։ “ Ծագեա՛ 'ի յիս զլոյս քաւու՟ե արքայ երկնաւոր ”․ Նարեկ ։

Իսկ յայլ անուանս որ կոչականսն շեշտն դնի 'ի վերջին վանկս ․ ո՟պ, “ Տուի՛չ պարգևաց , ինքնաբո՛ւն բարի ․․․ փառաւորեա՛լ, անքննի՛ն , անե՛ղ , ահարկո՛ւ , սոսկալի՛ , հզօ՛ր , սաստի՛կ , անտանելի՛ , անմերձենալի՛ , անըմբռնելի՛ , և՟ն ”․ Նար ․ Գ ։

Երրորդ՝ դնի շեշտ երբեմն 'ի վերայ ոմանց բացասական և ստորասական մակբայից ․ և 'ի վերայ բառիս՝ չէ՛ ․ մերթ ևս 'ի վերայ բառիցս սա , դա , նա , յորժամ վարին էական բայիւ ․ ո՟պ, “ Ո՛չ նախանձի խաւար է աղջամուղջ ”․ Մծբ ․ Ի ։ “ Ամէն ասեմ ձեզ , թէ ո՛չ գիտեմ զձեզ ”․ Մատ ։ “ Չի՛ք ակնառութ՟ի առաջի Ա՟յ ”․ Հռոմ ։

Երբեմն ևս մա՛րթ է դնել շեշտ փոխանակ որոշակի 'ի վերայ հարցական բառից՝ ը՟ պահանջման տեղւոյն ․ ո՟պ, “ Փութացաւ ուսանել՝ թէ քանի՛ իցեն պարագլուխք քաջ նահատակացն ․ ․ ․ զի՛նչ անուանք իւրաքանչիւր համհարզացն իցեն ․ ․ ․ ո՛ ոք 'ի նոցանէ յերկբայս կայցէ , և կամ ո՛ ոք զանձն 'ի մահ դնելով զուն գործիցէ ”․ Նշնչ ։

Երկարն 'ի գործ ածի 'ի բանս հեգնականս, ողբականս, ցաւակցականս, զարմացականս. եւն. զոր օրինակ, " Վա՛հ՝ որ քակեիր զտաճարն, եւ զերիս աւուրս շինեիր զնա, ապրեցո՛ զքեզ ". Մատ.

" Մեղա՛յ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ ". Նար. ՀԷ.

" Ողորմի՛մ ողորմիմ սիրելեաց ձերոց, եւ բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց ". Եղիշէ.

Նաեւ յայսպիսիս հնար է եւ փոխանակ երկարի դնել շեշտ, մերթ եւ պարոյկ, եւ կամ ոչինչ, ըստ առոգանելոյ բանին.

Պարոյկն եւ դնի յայնպիսի բանս՝ որք յայտնեն զկիրս հոգւոյն. որպիսի են այն բանք՝ որք հասարակօրէն 'ի ձեռն միջարկութեանց առաջի դնին. զորոց զօրինակսն կարես տեսանել յառաջին մասին. Գլ. ԻԱ.

Ոլորակն՝ որ նմանութիւն ինչ ունի ընդ պարուկին, մանաւանդ թէ՝ երբեմն պարոյկ եւ կոչի, առաւել քան զպարոյկն տայ ոլորել զձայնն. եւ սա դնի Նախ՝ 'ի վերայ հարցական մակբայից. զոր օրինակ, " Ո՞ւր ընաւ պիտոյ են մեզ անցաւոր կեանքս ". Եղիշէ.

Երկրորդ՝ դնի 'ի վերայ հարցական անուանց. զորոց զօրինակսն տե՛ս 'ի Գլ. ԼԱ.

Երրորդ՝ դնի 'ի հարցական բանս՝ 'ի վերայ այնր բառի, որով հարցումն յայտնի. զոր օրինակ, " Երկայնամի՞տ միայն լինիցի առ նոսա ". Պօղ.

" Տեսանէ՞ք, զի 'ի գործոց արդարանայ մարդ, եւ ո՛չ 'ի հաւատոց ". Յակ.

Այնպէս եւ եթէ 'ի հարցական բանս դիցի մակբայ երկբայական, ոլորակն դնի 'ի վերայ այնր բառի, որով 'ի մէջ բերի հարցումն. եւ ո՛չ 'ի վերայ մակբային. զոր օրինակ, " Միթէ տկարանայցէ՞ առ 'ի յաստուծոյ բան ". Ղուկ.

" Արդեօք տեսանի՞ց զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան ". Նարեկ.

Նաեւ գիտելի է, զի բազում անգամ 'ի տեղի ոլորակին դնի պարոյկ. եւ 'ի տեղի պարուկին ոլորակ.

և երբեմն ևս 'ի տեղի երկարին ոլորակն կամ պարոյկ, ևս և շեշտ. և 'ի տեղի ոլորակին կամ պարուկին երկար, ըստ առոգանելոյ զբանսն, որպէս և յիշեցաք 'ի վերոյ ։

Վասն պատուագրութեան ։

Գտանին և այլ չորս գիծք, որք կոչին տեսակք պատուագրութեան. որոց առաջինն ասի սուն, և է այս '. և սա միայն փոխան այբի դնի 'ի մէջ միոյ բառի. ոչ 'ի սկզբան և ոչ 'ի վերջոյ, այլ 'ի միջի. զր, ք'ղ'ք, ամ'չեմ, ճ'շակեմ, բովանդակեմ, ևն ։ Այլ զայս չէ պարտ յաճախել, բայց եթէ հարկն ստիպեսցէ 'ի կարգել զտողս բանից ։

Երկրորդն ասի երկուրեակ, և է այս ″. և սա դնի նախ՝ 'ի վերայ բառի փոխան ձայնաւոր տառի եղելոյ 'ի մէջ բառին. զր, խ″ն″րհութի. ս″վ″րեալ. ևն ։ Այլ բարւոք ևս է յայսպիսի տեղիս ընաւ ոչ առնուլ 'ի կիր զայս նշան ։ Դնի երկրորդ՝ 'ի վերջ կիսատ բառից ինչ, զորս հնար իցէ ընթերցողին իմանալ. զոր օրինակ, Ղուկ″. Յովհ″. Լամբ″. ևն. ըստ Ղուկաս, Յովհաննէս, Լամբրոնացի, ևն ։

Երրորդն ասի տուր, որ և պատիւ կոչի, երբեմն ևս քաշ, և է այս ՟. և սա դնի 'ի վերայ բառի՝ երբեմն փոխան ձայնաւոր և բաղաձայն տառից ինչ այնր բառի. զոր օրինակ ած, ամ, եկմ, իշլ, երդ, չրդ, իդ, խնդ, ժմկ, փնկ, ևն ։ Իսկ երբեմն փոխան ձայնաւոր տառից միայն, մանաւանդ փոխանակ այբի. զր քհնյ, պտճռ, սղմս, սկս, բզմ, պրտւր, խնրհութի, ժղվրդ, ևն ։

Սա պատիւ կոչի, զի սկզբան յորժամ հնարեցաւ դնիւր 'ի պատիւ գրեցելոյն. զր, ած, թգր, տր, ևն. և յետոյ հնրկ եղև ։

Չորրորդն ասի նշանագիր. որ դնի փոխանակ միոյ ամբողջ բառի. և սոքա են կրկին տեսակք ։ Ոմանք կազմին 'ի բաղադրութենէ գրոց. որպիսի են սոքին.

յ̃ն, այսինքն.	ը̃ս, ըստ.	կ̃, կամ.
զ̃ր, զոր օրինակ.	և̃ն, և այլն.	ք̃, քան.
ը̃ն, ընդ.		ա̃ս, այսպէս. ևն:

Իսկ ոմանք կազմին յայնպիսի գծից, որք ոչ դասին ը̃ գիրս լեզուի մերոյ. որպիսի են սոքին՝ ☉ աշխարհ, ☾ լուսին, * աստղ, ևն:

Այսչափ ինչ շատ լիցի առ 'ի յուսումն ուղիղ խօսելոյ ը̃ մարդիկ և անսխալ շարադրելոյ: Այլ եթէ կամիս յառաւելն բերել՝ տես յընդարձակն:

Ս. ՓՐԿՉԻ [illegible]
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Յորում առաջի դնին սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի, և կանոնք համաձայնութեան նոցա ընդ միմեանս։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ զինչ իցէ քերականութիւն, և որք իցեն գլխաւոր ուսանելիք 'ի նմա։

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ։

Գլխաւոր ուսանելիք 'ի քերականութեան են չորք. գիր, վանկ, բառ և բան։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի։ Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի ընդ այլում հնչման, և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զբաղադրեալ ձայն։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բերան մարդոյ՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. որգոն մա, զէն, եւն։

Բառն է ձայն նշանական. այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է 'ի նշանակել ինչ։ Եւ բաժանի յութ ազգս. որք են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ և միջարկութիւն։

Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնօղ տրամախոհութեան մտաց։ Եւ է կրկին. կատարեալ, և անկատար։

Կատարեալն է, որ անթերի յայտնէ զդատմունս մտաց . զ̄բ, “Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ”:

Իսկ անկատարն է, որ տայ զսկզբնաւորութ̄ի իմանալոյ զդատմունս մտաց, բայց ոչ աւարտէ . զ̄բ, “Եթէ անսայցես”. յոր թէ յարեսցի բայ ինչ, կատարի . զ̄բ, “Եթէ անսայցես, աղերսեմ”:

Մասունք բանի են ութ ազգ բառից զորս յիշեցաք . անուն, դերանուն, բայ, ընդունելութ̄ի, նախադրութ̄ի, մակբայ, շաղկապ և միջարկութ̄ի:

Յաղագս անուան:

Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի . այ̄ է այնպիսի բառ, որով իրն ասի այս ինչ: Կամ որ զէութ̄ի իրին նշանակէ . զ̄բ, Ծառ, լոյս, երկիւղ, չար, ևն:

Անունն բաժանի յերկուս, 'ի գոյական և յածական: Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս . զ̄բ, Մարդ, հաց, սէր, օրհնութ̄ի, ևն: Եւ բաժանի, 'ի յատուկ, 'ի հաւաքական և 'ի յընդհանուր:

Յատուկն է, որ կարգեալ է՝ զմիոջէ միայն ասիլ . զ̄բ, Մովսէս, սիոն, Նեղոս, ևն:

Հաւաքականն է, որ զհաւաքեալ իրս իբրև զմի նշանակէ . զ̄բ, Գունդ, ժողով, շեղջ, ևն:

Ընդհանուրն, որ զհասարակ ինչ բազմաց՝ նշանակէ . զ̄բ, ծաղիկ, գլուխ, բարութ̄ի, ևն:

Ածական անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս, այլ՝ պահանջէ յարիլ 'ի գոյականն՝ իբր յայտնիչ որպիսութ̄ե նոցա . զ̄բ, Քաղցր, դառն, բազում, սակաւ, մեծ, փոքր, անզգամ, արդար, ևն . որք յարելով 'ի գոյականս վարին . որգոն, “Քաղցր ջուր, դառն պտուղ, բազում աշխատանք, սակաւ ժամանակ”, ևն:

Այլ սոքա բազում անգամ զօրութ̄ ունին զգոյականին . զ̄բ, “Մեծն 'ի փոքուն ճանաչի”. այ̄ մեծ իրն 'ի փոքու իրի: “Անզգամն անգոսնէ զխրատ հօր”. այ̄ այր անզգամ․ «Աղբիւր կենաց յոյ՝ բերան արդարոյ»․ այ բերան առն արդարոյ ։

Ածական անունն բաժանի յերիս, ՚ի դրական, ՚ի բաղդատական և ՚ի գերադրական ։

Դրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ կամ նուազեցուցանելոյ․ ոպ, Բարձր, խոնարհ, աղտեղի, պայծառ, սուրբ, մաքուր, վեհ, զօրաւոր, ևն ։

Բաղդատականն է, որ բաղդատելով զմի իր ընդ այլում իրի՝ ցուցանէ զորպիսութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն․ ոպ, «Բարձրագոյն, խոնարհագոյն, ևն ։

Գերադրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն իրին յոյժ առաւելեալ՝ կամ յոյժ նուազեալ քան զայլոցն․ ոպ, «Ամենասուրբ, ամենամաքուր, ևն․ կամ, «Եւս վեհագոյն, ևս զօրաւորագոյն, ևն ։

Յաղագս պարագայից անուան ։

Պարագայք անուանց են այնք, որք յանուանս մըտածին՝ իբր հետևումն որպիսութեան նոցա․ և են վեց, սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով և հոլովումն ։

Սեռք անուանց են որոշմունք գոյական անուանց ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց ։ Եւ են չորք․ արական, իգական, հասարակ և չէզոքական ։

Արականն է, որ նշանակէ զարու․ ոպ․ Գրիգոր, Աբգար, հայր, քեռի, ցուլ, քաղ, ևն ։

Իգականն է, որ նշանակէ զէգ․ ոպ, Եսթեր, Հեղինէ, մայր, հանի, կով, մաքի, ևն ։

Հասարակն է, որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ․ ոպ, Օւակ, կորիւն, ձի, արջ, ևն ։

Չէզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է և ոչ էգ․ ոպ, Հուր, այգի, մատն, մեծութիւն, ևն ։

Ձևք անուանց են որպիսութիւնք նոցա՝ ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան ։ Սետի և անուանք ըստ ձևոյն երեք են. պարզ, բարդ և բաղադրեալ.

Պարզ անունն է, որ ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի, այլ կայ յինքեան միայնակ. զ՟ր, Լոյս, բարի, գօտի, բան, լի, ձեռն, աղօթք, արիւն, ևն։

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է 'ի մի անուն. զ՟ր, Լուսատու, բարեկրօն, գօտեմարտ, բանիբուն, լիալի, ևն։

Ընդ բարդս դասին և քանի մի անուանք, որք յերեց բառից զօդին 'ի մի անուն, և կոչին յարաբարդք. զ՟ր, Երեքտասանամեայ, Հրազինապետ, ևն։

Բաղադրեալն է, որ յառաջոյ զօդեալ ունի զաննշան մասնիկ ինչ. զ՟ր, անճառ, ապերախտ, տգեղ, համաձայն, տարադէպ, ևն։

Տեսակք անուանց են որպիսութիւնք նոցա ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան։ Ուստի և անուանք երկու են ըստ տեսակին, նախագաղափար և ածանցական։

Նախագաղափար կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութեան իւրում, կամ յայնմ որպիսութեան, զոր ինքնին նշանակէ, զ՟ր, Աւանդ, բան, հուր, հող, կոյս, միապետ, ևն։

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն 'ի ձեռն ածանցակերտ աննշան մասնկանց 'ի վերջոյ յաւելոց կերպաւորեալ, և ածեալ յայլ իմն եղանակ նշանակութեան. զ՟ր, Աւանդութիւն, բանաւոր, հրայէն, հողեղէն, կուսանոց, միապետական, ևն։

Ոմանք յայսպիսի անուանց երբեմն 'ի կրկին մասնըկանց ածանցին, և կոչին կրկնածանցական. զ՟ր, “Թագաւորական, ազգականութիւն, ևն։

Թիւք անուանց են միութիւն և բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին։ Եւ են երկու. եզական և յոգնական. կամ միաւորական և բազմաւորական։ Եզականն է որ ըստ ձայնին զմի իր նշանակէ. զ՟ր, Սեղան, բեռն, ատամն, ևն։ Իսկ յոգնականն է որ ըստ ձայնին զբազումս նշանակէ. զ՟ր, Սեղանք, բեռինք, ատամունք, ևն։

Հոլով անուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն և կամ յերկոսին միանգամայն. և է տասն. ուղղական գործ, սեռական գործոյ, ևն ։

Հոլովմունք անուանց են պէսպիսութ՟իք վերջաւորու՟եց սեռական և գործիական հոլովից, և են քսան. չորեքտասանք հասարակ, իսկ վեցքն յատուկ ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ վեց պարագայից՝ բառս հողով է անուն գոյական, ըստ սեռին չեզոքական, ըստ ձևոյն պարզ, ը՟ տեսակին նախատիպ, ը՟ Թուոյն եզական, ըստ հոլովին գործիական, և ըստ հոլովմանն հոլովի որպէս գետ, գետոյ, գետով ։

Դարձեալ՝ բառս զլուսաւորս է ածական անուն դրական, ըստ սեռին հասարակ կամ անսեռ, ըստ ձևոյն բարդ, ըստ տեսակին նախատիպ, ը՟ Թուոյն յոգնական, ըստ հոլովին հայցական, և ըստ հոլովմանն նախդրիւ ևեթ հոլովի ։

Յաղագս դերանուան ։

Դերանունն է մասն բանի, որ փոխանակ անուան դնի և առ որոշեալ դէմս վերաբերի ։ Եւ բաժանի 'ի հինգ տեսակս, որք են էական, ստացական, ցուցական, յարաբերական և դիմորոշական ։

Էականն է, որ գոյականապէս նշանակէ զդէմս իւրին. ոպ՟ի են սոքա. Ես, դու, ինքն, իւր, իւրեան.

Ստացականն է, որ ածականապէս նշանակէ զիմն որոշեալ դիմաց. որպիսի են սոքա. Իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրոյ ։

Ցուցականն է, որ յանդիման ցուցանէ զիրն յերրորդ դէմս ըստ կարգի. որպիսի են սոքա, Սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ։

Յարաբերականն է, որ զօրութ՟բ յառաջ բերեալ 'ի բանի զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նորա, յոր հոլով և պահանջեսցէ բանն. և է բառս որ ։

Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ ս, դ, ն, ուք իբր յօդք ինչ յարելով՚ի մասունս բանի՝ որոշեն զդէմս նոցա ։

Յաղագս պարագայից դերանուան ։

Պարագայք դերանուանց են հինգ. տեսակ, դէմք, թիւ, հոլով և հոլովումն ։

Տեսակք դերանուանց են երկու, ոպ՟ և անուանցն, նախատիպ և ածանցական ։

Նախատիպք են սոքին, Իմ, քոյ, մեր, ձեր, իւր, ինքն, և այլն ։

Իսկ ածանցականք են սոքին, Մերային, քոյին, ձերային, իւրային, ինքնութիւն, ևն ։

Դէմք դերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց. և են երեք. առաջին, երկրորդ և երրորդ ։

Առաջին դէմքն է այն, յորմէ է բանն. զորօրինակ, ես ։

Երկրորդ դէմքն է այն, առ որ է բանն. զորօրինակ, դու ։

Երրորդ դէմքն է այն, զորմէ է բանն. զորօրինակ, նա. ինքն ։

Առ երրորդ դէմս վերաբերին և դէմք այլոց դերանուանց, թէ ստացականաց և թէ ցուցականաց ։

Թիւք դերանուանց են երկու, եզական և յոգնական ։

Եզականն է որ իբրև զմի իր դիմաւոր նշանակէ. զ՟ր, Ես, դու, մեր, ձեր, և այլն ։

Յոգնականն է որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ. զ՟ր, Մեք, դուք, մերք, ձերք, և այլն ։

Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն դերանուան յինքեան. զ՟ր, Դու, քո, քեզ, ըզքեզ, ՚ի քէն, զքէն, քև, զքև, ՚ի քեզ, ո՜վ դու ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա. զ՟ր, Ես, իմ, դու, քո, նա, նորա, և այլն ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ հինգ պարագայից բառս ԵՍ է դերանուն էական, ըստ տեսակին նախատիպ, ըստ դիմին վերաբերի առ առաջին կարգն, ըստ թուոյն եզական, ըստ հոլովին գործիական, և ըստ հոլովմանն հոլովի, ես, իմ, յինէն, ինև, ևն ։

Դարձեալ՝ բառս ՚ի ձերոյ է դերանուն ստացական. ըստ տեսակին նախատիպ, ըստ դիմին վերաբերի առ երկրորդ կարգն, ըստ թուոյն յոգնական, ըստ հոլովին բացառական, և ըստ հոլովմանն հոլովի որպէս իմ, իմոյ, յիմոց, և այլն։

Յաղագս Բայի։

Բայն է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, և կամ զլինելութ̃իս իրաց ը̅ ժամանակաւ նշանակէ ը̅ որոշեալ դիմաց. զ̅ր, Հեղում, վանիմ, գնամ, լինիմ, ե̃ն։

Բայք բաժանին յերկուս, յէական և յառաքական։

Էական են, որք նշանակեն զլինելութ̃ի իրին ընդ ժամանակաւ. և են չորեքին սոքա, Կոչանիմ, լինիմ, եմ, և գոլ,

Իսկ առաքականք են, որք նշանակեն զառնել ինչ կամ զկրել. որպիսի են այլ ամ̃ բայք. զոր օրինակ, Գրեմ, ջեռնում, ձգիմ, ե̃ն.

Առաքական բայք բաժանին ՚ի կանոնաւորս և յանկանոնս. կանոնաւորք անխոտոր խոնարհին. որգոն, գործեմ, աղամ. անկանոնք խոտորին ՚ի ժամանակս ինչ կամ պակասին. որգոն, լսեմ, լուայ. ճանաչեմ, ծանեայ, և այլն։

Յաղագս պարագայից Բայի։

Պարագայք բայից են այնք, որք մտածին ՚ի վերայ բայից՝ իբր հետևմունք որպիսուե̃ նոցա. և են ինն. սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք և լծորդութ̃ի։

Սեռք բայից են որոշմունք նոցա ըստ առից և ըստ կրից. և են չորք. ներգործական, կրաւորական, հասարակ և չէզոքական։

Ներգործականք են, որք նշանակեն զներգործել իրին առ կրօղն. զոր օրինակ, Սիրեմ, վատնեմ, ե̃ն։

Կրաւորականք են, որք նշանակեն զկրել իրին ՚ի ներգործողէ. զ̅ր, Սիրիմ, վատնիմ, ե̃ն։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ նշանակեն զներգործել իրին առ այլ, և մերթ զկրել իրին յայլմէ . որպ, Տանիմ, ծնանիմ, ևն։

Չէզոքականք են, որք զգործողու՟ն գործողին յինքեան 'ի գործողն նշանակեն, և ոչ 'ի ներգործողէ առ կրողն։ Նոյն են կրկին. ներգործակերպ, և կրաւորակերպ կամ ձայնակրական։

Ներգործակերպ չէզոքականք են, որք ըստ ներգործական բայից խոնարհին. որպ, Դիմեմ, գնամ, զբօսնում, և այլն։

Ձայնակրականք են, որք ըստ կրաւորական բայից խոնարհին. զոր օրինակ, Աշխատիմ, մնանիմ, փախչիմ, և այլն։

Ձևք բայից են որոշմունք նոցա ըստ պարզութե՟, ըստ բարդութե՟ և ըստ բաղադրութե՟. և են երեք. պարզ, բարդ և բաղադրեալ։

Պարզն է, որ առանց բաղկացութե՟ ընդ այլում բառի զնշանակու՟ն առից և կրից պարզապէս յայտ առնէ. զոր օրինակ, Բերեմ, կիզեմ, և այլն։

Բարդն է, որ զօդեալ ընդ այլում նշանական բառի՝ զկրկին իմացուածս առից կմ կրից 'ի մէջ բերէ. որպ, Ընծայաբերեմ, բոցակիզեմ, և այլն։

Բաղադրեալն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք. որպ, Խոցոտեմ, անպատուեմ, տարամերժեմ, տգիտանամ, և այլն։

Տեսակք բայից են որպիսութիւնք նոցա՝ նկատեալք ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութե՟ իւրեանց. և են երկու. նախագաղափար և անցողական։

Նախագաղափարք կամ նախատիպք են, որք նշանակեն միայն զառս գործողին. որպ, Յառնեմ, լամ, յենում, պատկառիմ, և այլն։

Անցողականք են, որք ոչ միայն զներգործու՟ն առնողին, այլ և զգործել կրողին նշանակեն. զոր օրինակ, Յարուցանեմ, լացուցանեմ, յեցուցանեմ, պատկառեցուցանեմ, և այլն։

Թիւք բայից մտածին ըստ եզականութե՟ և ըստ յոգնականութե՟ նց. և են երկու, եզական և յոգնական։

Եզականն է, որ նշանակէ զմիակի գործողու՟ն, կամ կրելու՟ն միոյ. որպ, Վառեմ, վառիմ, և այլն։

Յոգնականն է, որ նշանակէ զբազում գործողութ՟իս, կամ կրելութ՟իս բազմաց․ զ՟ր, Վառեմք, վառիմք, ե՟ն։

Դէմք բայից են, որք ցուցանեն զգործողութիւն լինել որոշեալ անձին․ և են երեք․ առաջին, երկրորդ և երրորդ

Առաջին դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութ՟ի այնր, յորմէ է բանն․ զ՟ր, Տամ, ետու, և այլ՟ն։

Երկրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութ՟ի այնր, առ որ է բանն․ զ՟ր, Տաս, ետուր, և այլ՟ն։

Երրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութ՟ի այնր, զորմէ է բանն․ զ՟ր, Տայ, ետ, և այլ՟ն։

Ժամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ ժամանակի․ և են երեք․ ներկայ, անցեալ և ապառնի։

Անցեալն քառակի որոշի․ այսինքն իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար և իբր գերակատար։ Եւ ըստ այսմ ժամանակք բայից առին լինել վեց․ ներկայ, անկատար, կատարեալ, յարակատար գերակատար և ապառնի։

Եղանակք բայից են պէսպէս աստիճանք կ՟մ կերպք նշանակելոյ ն՟ց զառս և զկիրս․ և են չորք․ սահմանական․ հրամայական, ստորադասական և աներևոյթ կամ անորոշ։

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութ՟իք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութ՟իս, և 'ի դէմս, և 'ի ժամանակս, թէ ըստ եզականին և թէ ը՟ յոգնականին․ զ՟ր, Պահեմ, պահես, պահէ․ պահեմք, պահէք, պահեն․ պահէի, պահէիր, ե՟ն։ Եւ ո՟ք այնչափ են, որչափ են փոփոխութ՟իք մի և նոյն բայի։

Լծորդութ՟իք բայից են պէսպիսութ՟իք վերջաւորութ՟եց սահմանականի ներկային․ և են չորք․ առաջինն յանգեալ 'ի եմ, զոր օրինակ գործեմ․ երկրորդն 'ի ամ, զ՟ր աղամ․ երրորդն 'ի ում, զոր օրինակ թողում․ չորրորդն 'ի իմ, զոր օրինակ հաշտիմ։

Ըստ վերոյգրեալ ինն պարագայիցդ բառս այս ոռոյր՟ է բայ կանոնաւոր, ըստ սեռին ներգործակերպ չէզոքական, ըստ ձևոյն պարզ, ըստ տեսակին նախատիպ, ըստ թուոյն եզական, ըստ դիմին երրորդ, ըս̅ ժամանակին անկատար, ըստ եղանակին սահմանական, ըստ խոնարհմանն՝ խոնարհի ը̅ երկրորդ լծորդութե̃ ո̅պ ընթանամ, ընթացայ, ընթանայր :

Կարծեալ՝ բառս շարադրութեան է բայ կանոնաւոր, ըս̅ սեռին ներգործական, ըս̅ ձեւոյն պարզ, ըս̅ տեսակին անցողական, ըստ թուոյն յոգնական, ըս̅ դիմին երրորդ, ըս̅ ժամանակին կատարեալ, ըս̅ եղանակին սահմանական, ըս̅ խոնարհմանն խոնարհի ըստ առաջին լծորդութ̃ ո̅պ մատուցանեմ, մատուցի, մատուցին :

Յաղագս ընդունելութե̃ :

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրս յա̃նելութե̃, կամ 'ի կրելութե̃. և մերթ զառս կամ զկիրս ընդ ժամանակաւ : Այս է չորս՝ ըստ չորից վերջաւորութեանցս ող, եալ, լոց, լի. զոր օրինակ, Գնող, գնեալ, գնելոց, գնելի :

Պարագայք ընդունելութե̃ց են վեց. սեռ, ձեւ, տեսակ և ժամանակ՝ ըստ բայից. թիւ և հոլով՝ ըստ անուանց : Այս ըստ այսոցիկ պարագայից բառս 'ի շարադրութեան է ընդունելութի̃ յանգեալ 'ի եալ. ըստ սեռին կրաւորական, ըստ ձեւոյն բարդ, ըստ տեսակին նախատիպ, ըս̅ ժամանակին անցեալ, ըս̅ թուոյն յոգնական, ըստ հոլովին բացառական, և հոլովի որպէս գետ, գետոյ, 'ի գետոց :

Յաղագս նախադրութե̃, մակբայի, շաղկապի և միջարկութե̃ :

Նախադրութի̃ է մասն բանի, որ 'ի յարի̃ յանուանս ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ : Ոմանք 'ի նախադրութե̃ց են հոլովակերտք. որգոն 'ի, յ, առ, առ 'ի, ց, ընդ, զ. և ոմանք հոլովառուք. որգոն, ըստ, քան, վասն, 'ի վերայ, 'ի ներքոյ, և այլն :

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեց նշանակէ․ որգոն՝ ուր, երբ, զիարդ, մինչ, ահա, և այլն․ և ունի երեսնևերեք տեսակս ։

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ընդ միմեանս զմասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս․ որգոն՝ և, իսկ, թէ, զի, ևն․ և ունի վեշտասան տեսակս ։

Միջարկութիւն է մասն բանի, որ զբնական կիրս հոգւոյն յայտ առնէ․ որգոն՝ ո՛վ, աւա՜ղ, վա՛հ, և այլն․ և ունի վեշտասան տեսակս ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս համաձայնութեան մասանց բանի ։

Համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբանս ։

Այս կապակցութիւնք լինին ութ եղանակաւ․ Նախ անուան ընդ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ը̄ դերանուան և ընդ անուան ։ Երրորդ՝ բայի ը̄ անուան, ընդ դերանուան և ը̄ ընդունելութեան ։ Չորրորդ՝ ընդունելութեան ը̄ ընդունելութեան, ը̄ անուան և ը̄ դերանուան ։ Հինգերորդ՝ նախադրութեան ը̄ անուան, և ը̄ այնս՝ որք իբր անուն հոլովին ։ Վեցերորդ՝ մակբայի ը̄ բայի․ և ը̄ այնս՝ որք ունին զզօրութիւն բայի ։ Եօթներորդ՝ միջարկութեան ը̄ բանի ։ Ութերորդ՝ շաղկապի ը̄ բանի և ընդ մասունս նորա ։

Յաղագս համաձայնութեան անուան ընդ անուան ։

Անուանք որովհետև կէս գոյական են, և կէս ածական, 'ի գալն առ միմեանս հարկ է զի կամ գոյականք ը̄ գոյականաց համաձայնեսցին, կամ ածականք ը̄ ածականաց, կամ գոյականք ը̄ ածականաց, և կամ ածականք ը̄ գոյականաց ։

Արդ գոյական անուանք երրակի կարեն համաձայնիլ ը̄ գոյականաց ։ Նախ՝ իբր բացայայտիչ ։ Երկ՝ իբր յատկացուցիչ ։ Երրորդ՝ իբր խնդիր․ քանզի

Նախ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել զնշանակութիւն անուան իրիք, թէ յի՞նչ միտս դնի, կամ փոխանակ որո՞յ նշանակէ, յարեմք 'ի նոյն զայլ անուն առանց շաղկապի՝ թուով և հոլովիւ համաձայն նմին. և այն լինի նմա բացայայտիչ. որ, "Եւ առեալ հրեշտակին զԱմբակում տարաւ զնա 'ի քաղաքն Բաբելոն" : Ուր գոյական անունդ Բաբելոն է բացայայտիչ անուանս 'ի քաղաք. զի յայտ առնէ՝ թէ անուամբս քաղաք իմացեալ լինի աստ Բաբելոն, և ոչ Նինուէ կամ Գազա :

Սոյնպէս և յայս բան, "Որ շինեցեր զտունն քո զեկեղեցի իմաստութեան հօր Յս՟". անունս եկեղեցի է բացայայտիչ անուանս տուն քո. զի յայտ առնէ, թէ բառիւս տուն՝ իմացեալ լինի աստ եկեղեցին. և ոչ թէ ապարանք կամ այլ ինչ շինուած : Ըստ այսմ և անունդ Յս՟ է բացայայտիչ անուանս իմաստութեան հօր :

Երկրորդ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել, թէ արդեօք նշանակեալն անուան իրիք որո՞յ է, կամ որում յատկանայ, յարեմք 'ի նոյն զայլ անուն՝ (և մերթ 'ի տեղի անուան զդերանուն, կամ նաև զընդունելութիւն և զդերբայ,) 'ի սեռական հոլովս. և այն լինի նմա յատկացուցիչ. որ, "Լուարո՛ւք մանկունք զխրատ հօր" : Ուր անունս հօր է յատկացուցիչ անուանս խրատ. զի ցուցանէ, թէ խրատն այն հօր է և ոչ օտարի կամ թշնամւոյ :

Սոյնպէս և յայս բան, "Արեգական լոյս խաւարեցաւ". անունս արեգական է յատկացուցիչ անուանդ լոյս. զի ցուցանէ, թէ այն լոյս արեգական է, և ոչ ճրագի կամ հրոյ և կամ այլոյ իրիք աստեղ :

Եւ եթէ պիտոյ լիցի յայսպիսիս նախդիր դնել, պարտ է յարել զայն 'ի նախընթացն, թէ յատկացուցիչ իցէ այն, և թէ յատկացուցեալ. զոր օրինակ, "Զիա՞րդ պատմեցից զթիւ մեղաց իմոց". "Կալցուք յանձինս զհրեշտակացն սրբութիւն" : Այս նախդիր երբեմն կրկնի 'ի վերայ երկուցն ևս. մանաւանդ եթէ անկցի 'ի միջի բայ. զոր օրինակ, "Զկենացն ետուր զհաց" :

Չորրորդ՝ յորժամ հարկ լինի գոյական անուանց առնուլ զխնդիր յարեմբ 'ի նոսա զայլ անուն , (կամ 'ի տեղի անուան զդերանուն կամ զընդունելութի՟ ,) իբր խնդիր նոցա՝ ըստ պահանջելոյ նշանակութե՟ նոցին : Այսն զի ոմանք 'ի գոյական անուանց ունելով զհաղորդութի՟ ը՟ բայից , ուրեք ուրեք պահանջեն խնդիր առնուլ ըստ որպիսութե՟ բայիցն . որպիսի են բայանուանք . իսկ թէ զիարդ , դիցուք զերիս կանոնս :

Կանոն . ա . Անուանք ներգործականահաղորդք , ա՟ որք ունին զհաղորդութի՟ ընդ ներգործական բայից , առնուն զխնդիր սեռի 'ի սեռական հոլովս , և մերթ 'ի հայցականն . զոր օրինակ , " Ձգմամբ ձեռին , փըչմամբ զհոգին :

Այլ երբեմն և ս հանդերձ խնդրով սեռի առնուն նաև զխնդիր բնութե՟ յայնպիսի հոլովս զորպիսի պահանջեն բայքն , ընդ որոց ունին զհաղորդութի՟ . զր՟ , " ձգմամբ ձեռին 'ի ծառն . փչմամբ 'ի նոսա զհոգին :

Կանոն . բ . Անուանք կրաւորականահաղորդք , այսինքն որք ունին զհաղորդութի՟ ը՟ կրաւորական բայից , առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովս . զր՟ , " Առաքմամբ 'ի հօրէ : Այլ երբեմն նաև զխնդիր բնութեան . զր՟ " Առաքմամբ 'ի հօրէ յաշխարհ :

Կանոն . գ . Անուանք չեզոքականահաղորդք , այսինքն որք ունին զհաղորդութի՟ ը՟ չեզոքական բայից , զայնպիսի խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն՝ որոց հաղորդին . զր՟ , " Գալստեամբ 'ի տաճարն . հրաժարումն յաշխարհէ :

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց :

Համաձայնութի՟ գոյական անուանց ը՟ ածականաց՝ է լինելն նց՟ խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութե՟ նոցին ը՟ երից կանոնաց՝ զորս եդաք վ՟ գոյական անուանց . զր՟ , Ժառանգորդ արքայութե՟ , կործանիչ մեհենաց . դիւրաշարժ 'ի հողմոյ, անտես 'ի մարդկանէ . հաւասար հրեշտակաց , զօրաւոր բանիւք :

Իսկ անուանք բաղդատականք այլազգ առնուն ըզխնդիր . ո՟պ, Գերագոյն քերովբէից . վսեմագոյն յիշխանաց . տկարագոյն յանասունս . բարձրագոյն քան զերկինս :

Այլ անուանք թուականք և մասնականք և հարցականք՝ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի բացառական հոլովս . ո՟պ, Երկու 'ի նոցանէ . ոմն 'ի հարց . ով 'ի մարդկանէ :

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց :

Ածական անուանք յարեալ 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութ՟ի իրացն՝ զոր գոյականքն նշանակեն . և քանզի պէսպէս եղանակաւ յարին սոքա 'ի գոյականս՝ պէսպէս համաձայնին ը՟ նս՟ ը՟ վեց կանոնաց :

Կանոն . ա՟ . Ածական անուանք՝ յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ը՟ նս՟ թուով և հոլովիւ . ո՟պ, " Ծառայք իմաստունք տիրեսցեն տերանց անմտաց ,, :

Կանոն . բ՟ . Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց, ոչ համաձայնին ընդ նոսա՝ ո՛չ թուով և ոչ հոլովիւ, թէ մի իցեն և թէ բազում . զոր օրինակ, " Ամենայն բանիւք ընդդէմ զինին ճշմարիտ և ուղղամիտ վարդապետութեան ,, : Իսկ միավանկ ածականք՝ երբեմն համաձայն դնին . ո՟պ, Մեծ պատարագին . Նորոյ կտակարանաց :

Կանոն . գ՟ . Յորժամ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկանի բայ, կամ ընդունելու՟ի, ածականն հասարակօրէն համաձայնի ընդ գոյականին՝ թուով և հոլովիւ . զոր օրինակ, " Երկայնագունից կարօտիմք բանից ,, . " Ածայնով զինեալ զօրութ՟բ ,, : Այլ երբեմն անհամաձայն ևս դնի . ո՟պ, " Գերապանծ եհաս իշխանութեան ,, . " Ի զգայական ծածկեալ լուսոյ ,, :

Կանոն . դ՟ . Եթէ նախադաս ածականն ունիցի զխնդրական տառ, երբեմն համաձայնի ընդ յետադաս գոյականին և երբեմն ոչ . ո՟պ, " Գոհացարո՛ւք զմարդասիրէն ա՟յ ,, : " Որ տիրականդ իշխանութե՟ հաղորդս արարեր զմ՟ք զաւաքեալսն ,, :

Կանոն Է․ Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում, յետադաս ածականն դնի ըստ թուոյն յոգնական, և ըստ հոլովին համաձայն․ զ̄ր, “Ողջոյն տաջիք Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց”։

Կանոն Ը․ Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին, կամ գոյականն ածականին, նախդիրն դնի 'ի վերայ նախադասին․ զ̄ր, “Դարձո զիս 'ի չար սովորութենէց իմոց 'ի բարի սովորութիւն”։ “Ապականեն զբարս քաղցունս բանք չարք”։

Իսկ ևս եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, նախդիրն դնի 'ի վերայ ա̄մի․ զ̄ր, “Որ զհակառակասէր և ըզդժնդակ վարս ուղղեսցէ … զորովլեկիցն կարգ ունի”։ “Ի յայրս և 'ի փապարս խաւարայինս բնակէր”։

Իսկ եթէ նախադաս ածականն կամ գոյականն իցէ մի, իսկ յետադասքն իցեն բազում, նախդիրն ոչ միայն դնի 'ի վերայ նախընթացին, այլ և 'ի վերայ երկրորդ և երրորդ յետադասին․ զ̄ր, “Ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս”։ “Օ այր արիանահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր”։

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց․

Ածական անուանք չորեքկին համաձայնին ընդ միմեանս․ Նախ՝ երբ ածական․ զ̄ր, “Անհամեմատ խորհրդատու”։

Երկրորդ՝ երբ խնդիր․ զոր օրինակ, “Հրաւիրատուք արքայականաց”։

Երրորդ՝ երբ բացայայտիչ․ զ̄ր, “Աստուածանէ զմեզ այնպիսի լինել, (այսինքն) հեզ և խոնարհ”։

Չորրորդ՝ երբ յատկացուցիչ․ զ̄ր, “Դժուարինք կենցաղականաց դիւրինք նմա երևին”։

Յաղագս համաձայնութեան դերանուանց։

Դերանուանք հնգապատիկ են․ էական, ցուցական, ստացական, յարաբերական և դիմորոշական․

Ի մէջ սոցա էական դերանունս ինքն բազում անգամ յարի յայլ դերանունսն՝ համաձայն թուով և հոլովով. և իբր մի վարի ընդ նոսա. որպէս, Ես ինքն, դու ինքն, նա ինքն, սոյն ինքն, որ և ինքն, և այլն :

Նոյնպէս յարին ընդ միմեանս և ցուցական դերանունք. որպէս, Սոյն սա, դոյն այդ, նոյն այն, և այլն :

Էական դերանունքս ես, դու, ինքն, իւր, (ևս և ցուցական դերանունքս սա, դա, նա, էականապէս վարեալք), ՚ի գործ ածին իբր գոյական. և ընդ գոյական անուանց նախ՝ լինին յստակացուցիչ. զոր օրինակ, Զկեանս իմ, զտուն քո, ընդ իւր կամաց, բանք սորա, գիրք դորա, վարք նորա :

Երկրորդ՝ լինին խնդիր անուանց, ևս և ընդունելութեանց և նախադրութեանց. որպէս, Անմոռաց յիւրմէ, խնամօք ինքեան, վասն նորա :

Երրորդ՝ լինին բացայայտելի ՚ի ձեռն գոյական անուանց, համաձայն թուով և հոլովով. որպէս, "Ես տէր խօսեցայ": "Ի մէնջ յաշակերտացս Քրիստոսի փառաւորի պաշտօնն այս":

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածականաց և ընդունելութեանց. որպէս, "Աստուած քաւեա զիս զմեղաւորս": "Ձեզ նեղելոցդ հանգիստ":

Ցուցական դերանունքս սա, դա, նա, յորժամ հոլովին՝ սա, սորին, սմին. դա, դորին, դմին, և այլն, հասարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ընդ գոյականաց՝ ՚ի հինգ հոլովս միայն. ՚ի սեռականն՝ դորին կանոնի. ՚ի գործիականն՝ նովին բանիւ, ՚ի պարառականն՝ զսովին տեղեաւ. ՚ի ներգոյականն՝ ՚ի դմին տան :

Ցուցական դերանունքս այս, այդ, այն, իբր ածական վարին. և ՚ի յարիլն յանուանս՝ հասարակօրէն համաձայնին ընդ նոսա թուով և հոլովով. որպէս, Այսր տեսութեան, այդմ պաշտաման, յաշխարհին յայնմիկ, ևն :

Այլ սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. զոր օրինակ, Այս պատկերաւս, յայդ նեղութեանդ, խորհրդոյն այն, և այլն :

Իսկ եթէ նախադաս անունն նախդիր ունիցի, նախդիրն միշտ և յա՟մի կրկնի նաև 'ի վերայ այսոցիկ դերանուանց. զ՟բ, "Դու ես ապաւէն իմ 'ի նեղութ՟է յայսմանէ"։ "Փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ"։ "Եւ եղև ը՟ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ"։

Ցուցական դերանունքս սոյն, դոյն, նոյն հասարակօրէն նախադաս լինելով անուանց վարին 'ի նախդրիւ հոլովս. Ի սոյն դատաստան, 'ի դոյն ատեան, զնոյն չարչարանս, և այլն։

Ստացական դերանունքս իմ, քոյ, մեր, ձեր, իւր, իւրոյ միշտ իբր ածական վարին. և 'ի յարիլն յանուանս միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասին և թէ 'ի յետադասին. (բաց 'ի չորից յոգնական հոլովից, որք են ուղղական, հայցական, նախդիւ տրական և ներգոյական). զոր օրինակ, "Ի տուն հօր իմոյ օթևանք բազում են"։ "Տան քում վայելէ սրբութ՟ի"։ "Մի գայթակղեսցին բազումք մերով գայթակղութ՟բս"։ "Տեսանեն զքաջութ՟ի ձերոյ նահատակութ՟եդ"։ "Ներհակ իւրոյն վարդապետէ օրինաց"։

Ասացի՝ բաց 'ի չորից յոգնական հոլովից. զի 'ի նոսին միշտ՝ անհամաձայն դնին. զ՟բ, Ծառայք իմ, և ոչ իմք. զվաստակս քո, և ոչ քոյս. ընդ դրունս ձեր, և ոչ ձերս. 'ի տունս մեր, և ոչ մերս։

Յարաբերական դերանունս որ յարաբերելն զանուն, կամ զդերանուն՝ համաձայնի ընդ նմա ը՟ թուոյն. զ՟բ, "Լուր որդեակ հօր քո, որ ծնաւ զքեզ"։

Իսկ ը՟ հոլովին՝ դնի յայն հոլով յոր դնելի էր յարաբերելին. և այս կամ իբր անուն բայի, կամ իբր խնդիր, կամ իբր յատկացուցիչ, և այլն. զոր օրինակ, "Ա՟յ օթևան է անձն որ յապաշխարութ՟ե իցէ"։ "Սակաւ ողորմութ՟բ զոր արարեր, զբազմապատիկ պարտսն թողցէ քեզ ա՟ծ"։ "Ոչ կարէ կրել նա յոգի իւր զբանս աննիւթս, որոյ միտք ծանրացեալ իցէ 'ի նիւթոյ երկրի"։

Այլ կիտելի է, զի սա երբեմն յարաբերէ զնախընթացն. զոր օրինակ, "Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց”: Երբեմն զհետեւեալն. զոր օրինակ, “Որ ստեղծ զշունչս ամենեցուն, նա գիտէ զամենայն”: Եւ երբեմն զօրութ̄ի ունի զյարաբերելին. զոր օրինակ, “Որ սիրէ զկեանս խնայէ 'ի բերան իւր”. այսինքն նա որ սիրէ:

Դիմորոշական յօդքս ս, դ, ն յարին յանուանս, 'ի դերանուանս, 'ի բայս և յընդունելութիւս, և երբեմն նաև յայլ մասունս բանի՝ առ որոշումն դիմաց. զ̄ր, Տանս, քոյդ, ասէն, 'ի տառապելոցս, և այլն:

Իսկ երբեմն դնին սոքա փոխանակ միմեանց. զ̄ր, “Եւ զոր ասէս այս է”. “Ոչ յիշես զոր ասացիդ քեզ”. “Որ առնեմն և արարից”. “Ի միտ առ զոր խօսիմն”:

Յաղագս համաձայնութ̄ե բայի:

Բայք կրկնակի համաձայնին ը̄ անուանս, և ընդ այլ մասունս բանի. նախ իբր ընդ այնս որք ասին անուն բայի. երկրորդ՝ իբր ը̄ այնս, որք ասին խնդիր բայի. որպէս յայս բան, “Կայէն սպան զԱբէլ”. բայս սպան համաձայնի ը̄ երկուց անուանցս Կայէն և զԱբէլ: Որոց առաջինն կոչի անուն բայի, և ցուցանէ զն̄ր գործողութ̄ե սպանելոյն՝ այսինքն զսպանօղն: և այն է անունս Կայէն: Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի. և ցուցանէ զէնթակայն գործողութ̄ե սպանանելոյն. զ̄ի զսպանեալն. և այն է հայցական հոլովս զԱբէլ:

Այսպէս և յայս բան. “Տրտնջօղն թերահաւատ է”. բառս տրտնջօղն է անուն բայի, էն է բայ, թերահաւատն է խնդիր: Իսկ թէ սոքա զիարդ պարտին համաձայնիլ, դիցուք զպէսպէս կանոնս:

Կանոնք վասն անուան բայի:

Կանոն. ա. Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային դնի յուղղական հոլովս. զոր օրինակ, “Տրդատ յաղթեաց Հռչէի”. Ուր վասն դիմաւոր գոլոյ բայիս յաղթեաց, անուն բային որ է բառս Տրդատ՝ եդեալ է յուղղական հոլովն։ Իսկ եթէ բայն իցէ անդէմ, անուն բային իբր 'ի բազումս դնի 'ի սեռական հոլովն. գր, «Յաղթահարեալ Տրդատայ զ[illegible] սպանեցաւ 'ի Դիոկղետիանոսէ»։ Իւր սեռական հոլովս Տրդատայ է անուն բայիս յաղթահարեալ։ Բայց երբեմն յուղղական հոլովն ևս դնի. զոր օրինակ, «Նա Մուշեղ առեալ զզօրս իւր խաղայ յարևելս».

Կանոն. ժ. Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային համաձայնի ընդ նմա թուով և դիմաւ. գր, «Ձօնս աղքատացս»։ Իւր որպէս դիմաւոր բայս աղքատացս ըստ թուոյն է եզական, և ըստ դիմին՝ յառաջին դէմն, նոյնպէս և անուն բային, որ է Ձօնս ըստ թուոյն է եզական, և յառաջին դէմն 'ի ձեռն յօդին ս. որպէս թէ ասէր, ես Ձօնս աղքատացս։

Բայց այսպիսի յօդ երբեմն զօրութեամբ դնի յերրորդ դէմն. գր, «Դայթակղեցին չարք առաջի բարեաց. և ամպարիշտք կողկողեցին առ դրունս արդարոց»։

Կանոն. ժա. Եթէ անուն բային իցէ բազում ըստ նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի. գր, «Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅս»։ Բայց երբեմն 'ի հասարակ անուանս դնի և եզակի. գր, «Նախանձ և հակառակութիւն խռովեցոյց զթագաւորութիւնս»։

Կանոն. ժբ. Եթէ անուն բային իցէ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուականագոյն դէմն, և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն, յայսպիսիս՝ բայն դնի յայն դէմս, որ պատուականագոյն է. գր, «Ես և դու գնայաք 'ի միասին». «Ժողովեսջիք անդր դու և զօրք քո»։

Կանոն. ժգ. Եթէ անուն բային ըստ ձայնին իցէ եզական, իսկ ըստ նշանակութեան բազմաւորական. (որպիսի են անուանք թուականք,) բայն դնի յոգնակի. գր, «Լաւ են երկու քան զմի». «Անկան 'ի նոցանէ քսան հազար այր»։

Իսկ եթէ անուն բային իցէ հաւաքական, բայն երբեմն դնի յոգնակի. գր, «Գունդ զօրացն դարձան»։ «Ազգ եկին 'ի հիւսիսոյ»։ Նա երբեմն եզակի. զոր օրինակ, “ Յրուեցաւ գունդն ”. Ուարուեաց ժողովուրդն “.

Նաև ասա պարտ է գիտել, զի երբեմն անուն բային զօրութ̃ ունի. օ̃ր, “ Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս ”. Ուր զօրութ̃ իմանի անուն բային, ո̃ր նորա: Նաև ներհակ այսմ՝ երբեմն բայն ունի զօրութ̃ օ̃ր, “ Դէպ ժամանակ այժմու կեանքս ”: Ուր զօրութ̃ դոյ բայս է:

Կանոնք վասն խնդրոյ բայից:

Բայք ներգործականք և կրաւորականք առնուն զկրկին խնդիր. ո̃ր զխնդիր սեռի, և զխնդիր բնութ̃: Իսկ չէզոքականք ը̃ որս և էականք միայն զխնդիր բնութ̃. որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ:

Կանոն. Ա. Ներգործական բայք առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի. օ̃ր, “ Մէգ ծածկէ զճառագայթս արեգական. և զմիտս խաւարէ յոլով կերակուր ”: Ուր հայցական հոլովս զճառագայթս է խընդիր սեռի բայիս ծածկէ. և հայցական հոլովս զմիտս է խնդիր սեռի բայիս խաւարէ, ո̃ր խաւարեցուցանէ:

Կանոն. Բ. Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի ՚ի բացառական հոլովի. օ̃ր, “ Ի տնէ ուղղին գընացք առն ”: Ուր բացառական հոլովս ՚ի տնէ է խընդիր սեռի կրաւորական բայիս ուղղին.

Կանոն. Գ. Բայք ներգործականք և կրաւորականք բաց ՚ի խնդրոյ սեռի՝ առնուն երբեմն զխնդիր բնութ̃ ըստ պահանջելոյ նշանակութե̃ իւրեանց՝ ՚ի պէսպէս հոլովս. ոմանք ՚ի տրականն, ոմանք ՚ի բացառականն, և ոմանք յայլս. օ̃ր, “ Կոչեաց անօրէն իշխանն զՎասակ առ ինքն, և խոստացաւ նմա մեծութ̃ բազում, զի քակտեսցէ զուխտն Հայոց ՚ի միաբանութ̃է, և հաստատեսցէ յաշխարհին զհրաման Թագաւորին ”:

Կանոն. Դ. Չէզոքական բայք առնուն զխնդիր բընութ̃ ըստ պահանջելոյ նշանակութ̃ իւրեանց՝ ՚ի պէսպէս հոլովս. որպէս ասացաք զներգործականաց. օ̃ր. “ Վասակ՝ որ օտարացեալն էր ՚ի սիրոյն ք̃ի, հնազանդեցաւ ողջանաց անօրէն իշխանին, և մարտեաւ հնարիւք ընդ բազումս. և որք հաւանեցան նմա, իջին ը̅ նմա 'ի դժոխս ”։

Յաղագս աներևոյթ բայի ։

Աներևոյթ բայք որովհետև իբր անուն հոլովին, 'ի գործ ածին երբեմն իբրև անուն գոյական. և լինին անուն բայի, խնդիր բայի, խնդիր անուան, խնդիր ընդունելութե̅. և այլն ։

Իսկ յորժամ իբր բայ վարին, լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բայից. որպ̅, “Որ կամիցի զանձն իւր կեցուցանել կորուսցէ զնա ”։ Ուր աներևոյթ բայս կեցուցանել ինքնին խնդիր լեալ կամելոյն արգելեալ է զխնդիր նորա. և ինքն է առեալ զխնդիրն. որ է բառդ զանձն իւր. որպէս թէ ասէր, որ կամիցի զկեցուցումն անձին իւրոյ կորուսցէ զնա ։

Երբեմն ևս լինին սոքա տրական խնդիր բայի՝ իբր դերբայ՝ զօրութ̅բ ունելով զնախդիրդ 'ի կամ առ 'ի. որպ̅, “Ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկել 'ի հիւանդութ̅ց իւրեանց ”. այսինքն առ 'ի լսել, և 'ի բժշկել ։

Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց ։

Ընդունելութի̅ք կրկնակի համաձայնին ը̅ միմեանս. նախ՝ իբր խնդիր. զոր օրինակ, “Յաղթող հակառակողաց “։ Երկրորդ՝ իբր ածական. որպ̅, “Մերժելի մշակող ”։ Այլ սոքա 'ի սակաւս 'ի գործ ածին ։

Ընդունելութիւք յանգեալք 'ի ող միշտ իբր ածական անուն վարին. և ըստ կանոնի համաձայնութե̅ ածականաց յարին 'ի գոյականս. որպ̅, “Ի բաց կաց 'ի դժրող բերանոյ ”. “Սակաւ օգտեն խրատք առ բարկացողն ”։

Սոքա 'ի վարիլն ներգործականապէս՝ առնուն ըզխնդիր սեռի 'ի հոլովս սեռական կամ հայցական. որպ̅, “Խնամող արարածոց ”. Ընդունողք զբանն կենաց “։

Երբեմն առնուն նաև զխնդիր բնութ՟ե ըստ պահանջելոյ բայիցն՝ յորոց բղխեն. զ՟ր, “Քեզ որդւոյ շնորհողիդ մեզ զկեանս՝ փառք”. “Նորոգողք տիեզերաց 'ի նախահօրն յանցանաց”։

Իսկ որք վարին չէզոքականապէս, ը՟ բայիցն յորոց ելանեն, առնուն զխնդիր. զոր օրինակ, “Համբերող վշտաց”. “Հայեցող յօձն պղնձի”. “Ի մեղաց զգուշացող”։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի եալ եթէ ներգործականապէս առցին, իբր դրադէմ բայ վարին. զ՟ր, “Մանեալ զթշնամին՝ խորտակեցին”։

Իսկ եթէ կրաւորաբար՝ կ՟մ չէզոքականապէս առցին, երբեմն վարին իբր զդրադէմ բայ. զ՟ր, “Քաջալերեալ 'ի բանից նորա յաղթեցին թշնամեաց”. “Իջեալ մարմնով 'ի գերեզման զկապեալ հոգիսն վերածեաց”։ Եւ երբեմն վարին իբր ածական անուն՝ ըստ կանոնի համաձայնութ՟ե ածականաց. զ՟ր, “Որ փակեալ դրամբք երեկոյին՝ երևեցար մետասանին”. “Մի բարկանար եղբօր մեղուցելոյ”։

Նոյնպէս ընդունելութիւնք զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. զ՟ր, “Հաստատեալ զանձն յաննախանձ կեանս՝ առաքինանայր 'ի ճգնութ՟իս”. “Նահատակք սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն”. “Օգնական է դարձելոց առ նա”։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի ող իբր բայ վարին՝ յարելով յէական բայս. և առնուն զայնպիսի խնդիր, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. զ՟ր, “Տալոց է ամենեցուն զահագին իւր վճիռ”. “Արդարք յափշտակելոց են 'ի հրեշտակաց ամպովք յերկինս”. “Տեսանեմ միշտ զօրն զայն՝ յորում 'ի դատաստան գնալոց եմ”։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի լի վարին իբր ածական. և ըստ համաձայնութ՟ե ածականաց յարին 'ի գոյականս. զ՟ր, “Խոնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութ՟ե մարդկան”. “Պատմող լինել պետրոսի և յովհաննու սիրելոյ”։

Եւ սոքա հասարակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հոլովս․ զոր օրինակ, " Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցն պետութե՟ց "։

Յաղագս լուծմութեան բանի ։

Ի համաձայնութե՟ մասանց բանի կազմի բան․ երբեմն ՚ի բազում բառից, և երբեմն ՚ի սակաւուց գոնէ յերից․ այսինքն ՚ի բայէ, յանուանէ բային, և ՚ի խնդրոյ նորին․ օ՟ր, " Հայկ ծնանի զԱրմենակ "․ Ուր Հայկն է անուն բայի, ծնանին բայ, զԱրմենակն խնդիր ։

Այլ երբեմն մի ՚ի սոցունց զօրութե՟ դնի․ օ՟ր, " Ես վրիպեցայ "․ " Յուսամ առ ա՟ծ "․ " Ինքն անհամբեր "․ այսինքն ես վրիպեցայ ՚ի բարւոյն․ դու յուսամ առ ա՟ծ․ ինքն գտաւ անհամբեր ։

Իսկ երբեմն այլ մասունք բանի ևս յարին ՚ի սոսա, ևս և բազում անուանք՝ ըստ զանազան պաշտաման․ այսինքն իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլն․ որոց վասն եղեալ աստ զերիս համառօտ օրինակս՝ լուծցուք զնոսին կարգաւ՝ ՚ի դիւրութի՟ և ՚ի յուսումն համբակաց ։

Օրինակ ա՟․ " Գանձ ցանկալի հանգիցէ ՚ի բերան իմաստնոյ․ արք տգէտք կլցեն զնա "․ Լուծ ։ Ի սմա Գանձն է անուն բայի ։ Ցանկալի է ածական ն՟ր ։ Հանգիցէ է բայ ։ Ի բերան է ներգոյական խնդիր բային ։ Իմաստնոյ է յատկացուցիչ բերանոյն ։ Արք է անուն բայի ։ Տգէտք է ածական նորա ։ Կլցեն է բայ ։ Զնա է խնդիր սեռի նորա ։

Օրինակ բ՟․ " Որդեակ իմ, մի նախանձիր ընդ չարս, և մի ցանկանայցես կալ ընդ նոսա "․ Լուծ ։ Ի սմա որդեակն է կոչական անուն ։ Իմ է ստացական դերանուն, և է լեալ ածական որդեկին ։ Մի նախանձեր է բայ, որոյ անունն զօրութե՟ դնի․ ա՟յ դու ։ Ընդ չարս է խնդիր նորա ։ Եւն է շաղկապ ։ Մի է մակբայ ։ Ցանկանայցես է բայ․ որոյ անունն է նոյն զօրութե՟ իմացեալ դերանունն․ այս է դու ։ Կալ է արգելիչ խնդրոյ նորա, այսինքն ցանկանալոյն ։ Ընդ նոսա է խնդիր կալոյն ։

Օրինակ Գ. “Հրեշտակք երկնից փափաքին հանդիսի կատարման սոցա. որք 'ի մահուն իւրեանց կենդանացան, ելին 'ի կամարն երկնից, խառնեցան 'ի գունդ զուարթնոցն”. Շարակ: Ի սմա հրեշտակք է անուն բայի: Երկնից է յատկացուցիչ հրեշտակաց: Փափաքին է բայ չեզոքական: Հանդիսի է նր̄ խնդիր բնուէ 'ի տրական հոլովի: Կատարման է յատկացուցիչ հանդիսին: Սոցա է յատկացուցիչ կատարմանին: Որք յարաբերէ զդերանունս սոցա. և է անուն բայից կենդանացան, ելին և խառնեցան: Ի մահուան իւրեանց է երկրորդական խնդիր բայի կենդանացան. որոյ բուն խնդիրն զօրութ̃ դնի 'ի գործիական հոլովի. որ̃ է հոգւով: Իւրեանց է յատկացուցիչ մահուանին: Ելին է չեզոքական բայ: Ի կամարն է խնդիր նորա: Երկնից է յատկացուցիչ կամարին: Խառնեցան է իբր չեզոքական բայ: Ի գունդ է խնդիր նորա: Զուարթնոցն է յատկացուցիչ գնդին:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յետ 'ի միտ առնլոյ ուսանողաց զհանգամանս մասանց բանի, և զքերականական կանոնս, ևս և յետ սակաւուք վարժելոյ 'ի լուծումն շարադրութեանց, եթէ ցանկան բարւոք ևս տեղեկանալ ուղղութ̃ե հայկազեան լեզուի, և ճաշակել զքաղցրութ̃ի քերթողական արուեստի, պիտոյ է նոցա ինքնին ևս կազմել զշարադրութ̃ի բանից: Իսկ առ սկիզբն առնել այսմ՝ հարկ է նոցա զառաջինն համառօտ ինչ աշխարհաբառ բանս դարձուցանել 'ի գրաբառն, և ապա նովին առ սակաւ սակաւ զարգանալ: Այլ որպէս զի զարթիցէ 'ի սիրտ նոցա փոյթ 'ի սոյն յօժարելոյ՝ պատշաճ համարիմ դնել աստանօր առաջի նոցա քանի մի աշխարհաբառ խօսս՝ (ըստ ոճոյ աշխարհաբառ բառարանին), և դնել ընդ նոսին զգրաբառ նոցին:

Հատընտիր համառօտ բանք յաշխարհաբառէ 'ի գրաբառն։

ա. Իշտէ ձեր առջևը կդընեմ իմ սրտիս լաւ բաները. սորվեցընեմ ձեզի իմ խօսքերս.

“Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ ըղձապատգամս. ուսուցից ձեզ զբանս իմ”։

բ. Աղաչեմ ձեզի եղբարք, որ մտիկ ընէք իմ մխիթարական բանիս.

“Աղաչեմ զձեզ եղբարք անսալ բանիս մխիթարութե՟”։

գ. Իմաստութիւն մտիկ ըրէք, ու իմաստուն եղէք.

“Լուարուք զիմաստութի՟, և իմաստուն լերուք”։

դ. Դուք մտիկ ընելու տեղը կուզէք հրամայո՞ղ ըլլալ.

“Դուք փոխանակ լսելոյ՝ հրամանատո՞ւ կամիք լինել”։

ե. Պէտք է ձեզի որ քիչ խօսիք ու շատ իմանաք.

“Պարտ է ձեզ սակաւ բարբառել և շատ իմանալ”։

զ. Մ՝ենք ինչ որ մեզի հրամայած է ընենք. կէօշքին պէս բարձր տեղայ ձեր ականջը կանչենք. արթըգ ընելն ու չընելը՝ ամէն մարդու ձեռքն է.

“Մեք՝ զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք, աղաղակելով՝ որպէս դէտ 'ի բարձր դիտանոցէ 'ի լսելիս ձեր. այսուհետև առնելն և ոչ առնելն 'ի կամս ազատութե՟ իւրաքանչիւր անձին է”։

է. Չըլլայ որ ձեր մէջէն մէկը թէմպէլութեան սէպէպով՝ տգիտութեան կուրութիւնը սիրէ։

“Մի ոք 'ի ձէնջ սիրեսցէ զկուրութի՟ տգիտութե՟ յաղագս ծուլութե՟”։

ը. Որոնք որ պօշ բաներու ետևէ կ'ընկնին, խելուընին պակաս է.

“Որք զհետ երթան զնանրութե՟ պակասամիտք են”։

թ. Ան որ իմաստնոց հետ խօնուշմիշ կըլլայ, իմաստուն կըլլայ.

“Որ գնայ ընդ իմաստունս, իմաստուն եղիցի”։

ժ. Մ՝ուխայէթսիզ մարդը կարօտութեան մէջ կըլլայ.

“Անհոգն 'ի կարօտութե՟ եղիցի”։

ժա. Մ՝իամիթ մարդը ամէն բանի կըհաւատայ.

“Անմեղն հաւատայ ա՟մ բանի”։

ե։ Թէմպէլ մարդը նախատուի պիլէ՛ նէ չամըչնար․
“ Թէպէտ և նախատի վատ, ոչ ամաչէ ”։

զ․ Խորագէտ մարդը՝ իր խայտառակութիւնը ծածուկ կը պահէ․
“ Թաքուցանէ զանարգանս իւր այր խորագէտ ”։

ա․ Բարկացող մարդը առանց մտածելու կը գործէ․
“ Բարկասիրտն գործէ առանց խորհրդոյ ”։

բ․ Սէրթ խօսքը բարկութիւն փէյտահ կընէ․
“ Բան խիստ յարուցանէ զբարկութ̄ի ։

գ․ Լաւ է սապըրլը մարդը՝ քան թէ քուվվէթլին․ Վէ ով որ բարկութ̄է կը յաղթէ՝ լաւ է քան ան, որ ամուր քաղաք կառնէ։
“ Լաւ է այր երկայնամիտ քան զհզօր … և որ յաղթէ բարկութեան՝ քան որ առնուցու զքաղաք հզօր ”։

գ․ Ան որ կուզէ իր բարեկամներէն քակուիլ, մահանա կը փընտռէ․
“ Պատճառս խնդրէ այր, որ կամիցի քակել՛ի բարեկամաց իւրոց ”։

ե․ Ովոր ընկերին հետ բարկութ̄է կը վարուի, դեւայ հետ պարըշըք ունի․
“ Այր ոք որ առ ընկերն բարկութ̄ վարի, առ դևսն խաղաղութ̄ի ունի ”։

զ․ Ովոր ընկերին խարէզ ունի, սատանային հետ խաւլ ունի․
“ Որ ոխս ունի ը̄ ընկերի, դաշնաւոր է սատ̄նյի ”։

է․ Ինչպէս աստուծոյ հետ սիրով միաբանութիւն ունենայ ան մարդն որ դիւերուն հետ շարք է ըրեր․
“ Զիա՛րդ առ Ա̄ծ սիրով միաբանութ̄ի ունիցի, որ դիւաց դաշնակիցն է ”։

ա․ Մէկ բան մը չկայ՝ որ անանկ աղէկ ցուցընէ Քրիստոսի աշկերտութիւնը, ինչպէս որ սէրը․
“ Ոչ ինչ՝ որ այնպէս նկարագրէ զաշակերտութին Ք̄ի, որպէս սէրն ”։

բ․ Սէրը սինոր ու չափ չունի․
“ Սիրոյ սահման և չափ ո՛չ է ”։

գ․ Ընկերին սիրովը կատարուի աստուծոյ սէրը․
“ Սիրով ընկերին սէրն Ա̄յ կատարի ”։

զ․ Որ եղբօրը սիրուն համար իրեն չխըղճար, իր մալին ինչպէս խըղճայ․
“ Որ յանձն չխնայիցէ սակս սիրոյ եղբօրն, յինչսն զիա՛րդ խնայեսցէ ”։

ե. Ան որ իրեն կորսուելուն վրայ [illegible] է, ինչպէս պիտի ուրիշի փրկութեանը համար մտահոգ ըլլայ.

“Որ զանձին կորուստ անփոյթ առնիցէ, վասն այլոց զիա՞րդ հոգ փրկութե̃ վարիցէ”։

զ. Ինչպէս որ կարելի չէ որ մարդ մէկ աչքով երկինքը նայի՝ ու միւսովը գետինը, նոյնպէս ալ միտքը չկրնար մտահոգ ըլլալ Աստուծոյ ու աշխարհքի բաներուն.

“Որպէս ոչ կարելի է միով ականբ նայել յերկինս և միւսովն յերկիր, այսպէս միտք ոչ կարեն հոգալ զա̃յն և զաշխարհիս”։

է. Ողորմած է ա̃ծ, ան ամենուն առջին դրեր է իրեն բարիքը. ու կուզէ որ ամէնքն ալ խլեն զան. ան կըբարկանայ անոնց՝ որ յօժարութեամբ չեն ուզեր առնուլ։

“Առատ է ա̃ծ, և ամենեցուն առաջի եդ զպարգևս իւր. և կամի զի ամենեքեան յափշտակեսցեն զայն. և բարկանայ այնոցիկ՝ որ ոչ մեծաւ յօժարութե̃ փափաքին առնուլ”.

ը. Ան որ լաւութեան դէմ գէշ կընէ նէ, անոր տունէն չարը չպակսի.

“Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի պակասեսցէ”։

թ. Մեր օրէնքին դէմ է՝ տէրանցը դէմ նենգութիւն ընել.

“Ատելի է օրինաց մերոց նենգութի̃ տ̃րանց”.

ժ. Տկարները ուժովներէն զգուշ կըլլան.

“Տկարքն զգուշանան 'ի հզօրագունից”։

ժա. Զինչու որ թակարդներու մէջ կըշրջինք, անոր համար պէտք է որ աչուընիս շատ բաց ըլլայ.

“Վ̃ զի 'ի մէջ որոգայթից շրջիմք, նմին իրի բազում արթնութե̃ մեզ պէտք են”։

ժբ. Խորունկ քնացեր ենք ամէնքս ալ. ու մեզի երազ կերևնայ ճշմարտութիւնը.

“Խոր 'ի քուն ննջեմք ամենեքեան. և երազ թուի մեզ ճշմարտութի̃ն”։

ժգ. Փողուն ասկերը ձէնք կշարժէ. նոյնպէս ալ խելացի վարդապետը իր աշկերտները՝ որ առաքինութեան գործեն.

“Փող յորդորէ զզօրս 'ի պատերազմ. և իմաստուն վարդապետ՝ զաշակերտս իւր 'ի գործ առաքինութեան”։

Բ. Ինչպէս զրահ հագնողը օխով չզարնուիր, անանկ ալ անխռովողը տրտմութենով չի խոցուիր․

“ Որպէս զրահաւորն նետս ոչ ընդունի․ սոյնպէս անախտն ոչ խոցի 'ի տրտմութենէ ”։

Գ. Փէհլիվանի պէս հանուէ, ու մարմինդ իւղով օծուէ, որ քու խասմիդ ձեռքը քեզ բռնել չկրնայ․

“ Մերկեա՛ց իբր զըմբշամարտիկ, և օծ իւղովն քո՛վ․ զի մի՛ կռուեսցիս 'ի քեզ ձեռք ախոյեանին ”։

Դ. Ան հրճուանքը՝ որ հետեւանք մը չունի, նման է մերկ փէհլիվանի՝ որ մէջքէն չբռնուիր․

“ Միայնակեաց անխինջ՝ ըմբիշ է մերկ, որ ոչ զմիջոյ ըմբռնի ”։

Ե. Շատ մարդիկ թամահքեարութեան ետեւէ ինկնելով ճշմարտութենէն մոլորեցան։

“ Ագահութեան ախտի ծառայելով մոլորեցան 'ի ճշմարտութենէն բազումք ”։

Զ. Տահա աղէկ է լաւ անունը՝ քան թէ շատ հարստութիւնը․

“ Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում ”․

Է. Իր անձը ճանչնալէն մեծ գիտնութիւն մը չկայ․

“ Ոչ գոյ այլ ինչ մեծութիւն քան զծանօթութիւն անձին ”։

Ը. Ծառին պտուղը շատ ըլլայ նէ՝ ճիւղերը վար կիջեցնէ․ անոր կէօրէ ալ շատ առաքինութիւնը մարդուն միտքը խոնարհեցնէ․

“ Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց․ այսպէս և առաքինութեան բազմութիւն զմիտս առն (խոնարհեցուցանէ) ”։

Թ. Տայակը վեր կբռնէ պտղալից ճիւղերը․ անանկ ալ Ա̃յ վախը առաքինի մարդը․

“ Ցից բառնայ զոստս պտղալիցս, և երկիւղն ա̃յ զառաքինի անձն ”։

Ժ. Առաքինութիւնը խիստ եարար ու ույղուն է տղայոց բնութեանը․

“ Կարի իմն յանկաւոր և պատշաճագոյն է առաքինութիւն բնութեան մանկանց ”։

Ի. Մեղուներու սիւրիւն մեղր կշինէ, անոր կէօրէ ալ եղբայրներուն բիրլիկ միաբանութիւնը առաքինութիւն․

“ Պարք մեղուաց գործեն զմեղր․ և հաւասար միաբանութիւն եղբարց զառաքինութիւն ”․

Լ. Խոնարհ միտքը խաչով պատած թագաւոր մը նէ․

«Քաղաք պարսպեալ են միտք անհպարտք»:

բ̄. Ուրիշներուն առաքինութեամբ պարծենալը՝ հիչ փայտա մը չըներ.

«Զի՞նչ օգուտ յայլոց առաքինութիւն պանծալ»:

գ̄. Անոնք որ զիրենք կգովեն, քամահրանքով լցուած են.

«Որ զանձինս գովեն, լի են պարսաւանօք».

դ̄. Ի՞նչ շահ ունի խօսքը, երբոր գործքը խօսքին չվկայեր.

«Որ օգուտ 'ի բանիցն լիցի, յորժամ գործքն բանիցն չվկայեն»:

ե̄. Ինատ խըզմէթքեարը խօսքով չէ՛ խրատուիր. զիրէ հասկընայ ալ նէ՝ չմաներ.

«Բանիւք ոչ խրատի ծառայ խիստ. զի թէպէտ և իմանայցէ՝ ոչ հնազանդի»:

զ̄. Անոնց համար ջահդ ընելը՝ պօշ է. զիրէ փայտան քիչէ, ու զարարը շատ.

«Անօգուտ է ջան՝ որ վասն նոցին. զի շահն սակաւ է, և վնասն յոլով»:

ա̄. Խօլայ է աստուծոյ՝ քիչ մարդով շատ մարդու գործք ընել.

«Դիւրին է ա̄յ սակաւուք զբաղմանց գործ գործել»:

բ̄. Հիչ տեղ մը չիկայ որ զմեզ աստուծմէ զատէ, միայն մեղքը.

«Չիք տեղի որ որոշէ զմեզ յա̄յ, բայց միայն մեղքն»:

գ̄. Եթէ որ մենք յիշենք մեր մեղքերը նէ, ա̄ծ կըմոռնայ.

«Եթէ մեք յիշեմք զմեղս մեր, ա̄ծ մոռանայ»:

դ̄. Ամէն մարդ ինչ բանէ որ կըկրէ նէ, կարծէ որ ուրիշն ալ այնպէս է.

«Ամենայն ոք՝ յորոց կրէ՝ 'ի նոյն և զայլս կարծէ»:

ե̄. Ան քաղաքն որ իշխան չունի, չը կրնար խաղաղութէ մէջ կալ.

«Առանց իշխանի ոչ կարէ կալ քաղաքն 'ի խաղաղութեան»:

զ̄. Ինչպէս որ պաղ ջուրը խօշ է ծարաւ մարդու, անոր պէս ալ հեռու տեղէ եկած բարի խապարը.

«Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է, նոյնպէս աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ»:

է̄. Աչօք տեսնելը տահա իրաւ է՝ քան թէ անգաճով լսելը:

«Տեսութի աչաց հաւատարմագոյն է քան զլուր ականջաց»:

բ̄. Ան որ գետնի վրայ կըսուրկրտէ, կինէ շուտով կըկանգնի. ամա ան որ բարձր տեղէն կընկնի, շատ անգամ կըմեռնի պէլքի.

“ Որ գլորի յերկրի, արագ անդրէն յառնէ. իսկ որ անկանի 'ի բարձրունց՝ բազում անգամ և մեռանի ”։

ա. Աւելի [illegible]՝ տահա պէթէր սխալեցայ.

“ Ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վրիպեցայ ”։

բ. Ե՞րբ կըլլայ՝ որ մահէն վախէն [illegible].

“ Ե՞րբ լիցի՝ զի աներկիւղ եղէց 'ի մահուանէ ”։

գ. Ես որ արդարութիւն չցանեցի՝ Յովսէ մարգարէին բանին կէօրէ, հապա ինչպէս պիտի հնձեմ ու ժողվեմ կենաց պտուղը.

“ Ոչ սերմանեցի արդարութիւն ըստ բանին Յովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն ”։

դ. Չափէ դուրս բաներու ետեւէ ընկնելով՝ իմ բանիս հասայ ։

“ Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի ”։

ե. Կը խօսիմ՝ ու չեմ հասկընար, կը կանչեմ՝ ու հիչ չեմ լսեր. ձայն կուտամ ու չեմ արթննար, եարալանմիշ կըլլամ. ու չեմ իմանար.

“ Խօսիմ և ոչ իմանամ. գոչեմ և ոչինչ լսեմ. բարբառիմ և ոչ զարթնանամ. . . վիրաւորիմ և ոչ ևս զգամ ”։

զ. Կը ծաղկիմ ու պտուղ չեմ տար.

“ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ ”։

է. Թէպէտ կըսկըսեմ, ու չեմ լըմնցըներ. քիչ կըշահիմ, ու շատ թէլէֆ կընեմ. քիչ մը կըդիզեմ, ու անհամար շատ կըծախեմ.

“ Հիմն արկանեմ և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ ”։

ը. Հեռուանց մեծ մեծ կը խօսիմ. ամա ջուղապ տալու ատենը [illegible] կըլլամ ու կըպապանձիմ.

“ Ի բացուստ ձոռումն խօսիմ. և 'ի պատասխանատուութեան պահու պապանձեալ կարկիմ ”։

ա. Հիմայ, ալ մեր բանին կարգը փոխենք, ու խօսինք քիչ մըն ալ երկրի արարածներուն վրայ.

“ Այլ արդ այսուհետև փոխեսցուք զկարգ բանիս 'ի ճառս պատմութեան արարածոց երկրի ”։

բ. Լէյլէկ թռչունները երբոր կտեսնեն որ իրենց հօրը [illegible]ները ծերութէ թուլցեր են, երկու դիէն խոլթուխը կմտնեն, ու իրենց կանատներուն վրայ կըբռնեն. ու ինչ կերակուր որ գտնեն նէ՝ կուտան անոր. ու ինչպէս որ անիկայ կուզէ երթալ՝ իրենք ալ անոր հետ կամացուկ կամացուկ կերթան.

“*Յորժամ տեսանեն ձագք թուլացեալ զթեւս հօրն իւրեանց 'ի ծերութեն, աստի և անտի մտանեն, և բառնան զնա 'ի վերայ թեւոց իւրեանց. և ջամբեն նմա կերակուր՝ զոր և գտանեն. և որպէս ախորժէ երթալն նա՝ այսպէս ը̄ նմին երթան հանդարտիկ* „։

գ. Ախտապօտը (ձուկը) ինչ քարի քով հասնի ու քսուի նէ, անոր ռէնկը կառնէ. ու ձկներն ալ հաճաթըղ կերթան անոր քովը, զէրէ կըկարծեն թէ քար է. Վէ երբոր կուզեն՝ որ անոր տակը մտնեն, ան ալ հազըրճա շիքեար խափաթըշ ընելով անոնք կուտէ.

“*Պողիպոդ զի̄մ քարի յոր հասանէ և հալի 'ի ծովուն՝ զնորուն առնու զգոյն, և ձկունք յանհոգս երթան լուղին զնովաւ. զի համարին թէ քար իցէ. և իբրև կամին մտանել ը̄ նովաւ, ըմբռնէ զորս պատրաստական և ուտէ* „։

դ. Ջրի թօսպաղային էյէր էնկէրէկի մսէն ուտէ, ու անկէ իրեն պէկ զարար մը ըլլայ նէ, կերթայ կուտէ եապանի նանէ, ու անով կանցընէ իր ցաւը.

“*Ջրային կրիայ եթէ ուտիցէ 'ի մսոյ իժի, և տագնապ ինչ հասանիցէ նմա անտի, երթայ ուտէ զաղձն, և այնու անցուցանէ զտագնապ նեղութեն* „։

ե. Ային երբոր եարալանմըշ կըլլայ, ինքը զինքը կրնայ բժըշկել. կերթայ կըհանէ քէօք մը՝ որ կըսուի սըղըր գույրուղու. կըդնէ անիկայ եարային վրայ, ու կըբժշկուի.

“*Արջ յորժամ վէրս առնու յանձին, ինքնին զանձն բժշկել գիտէ. երթայ խլէ զարմատ մի, որ կոչի փղոմոս, դնէ 'ի վէ̄ վիրացն և առնու զբժշկութի̄* „։

զ. Էյէր կուզես, մտիկ ըրէ ուրիշ զարմանալի պատմութեան մ'ալ.

“*Թէ կամիս, լո՛ւր միւս ևս սքանչելի պատմութի̄* „։

է. Մէկ ճգնաւոր մը կըկենար յորդանան գետին քենարը. անկայ օր մը խէտա տաքուն համար մտաւ մաղարա մը, ու տեսաւ որ ան տեղը մէկ մեծ ասլան մը պառկեր էր. Աս ասլանը երբոր տեսաւ ճգնաւորը նէ, պաշլայեց մռմռալ՝ ու [illegible] կըմռնէր. Ճգնաւորն ալ ըսաւ անոր, ինչ [illegible] էս, քեզի ալ տեղ կայ հոս ընծի ալ. հապա թէ դուն չես ուզեր նէ, է՛լ ու գնա: Ասլանն ալ ան ատենը հէմէն էլաւ ու գնաց.

“Ծեր ոմն բնակէր յեզր Յորդանանու. և 'ի խստուէ̃ տօթոյն եմուտ (յաւուր միում) 'ի յայր ինչ, և եգիտ անդ ննջեալ առիւծ մի մեծ յոյժ. որ իբրև ետես զծերն, սկսաւ գոչել և կրճտել զատամունս իւր: Ասէ ցնա ծերն, ընդէ՞ր տրտմեալ ես. զի կայ աստ տեղի ինձ և քեզ. իսկ եթէ դու ոչ կամիս, արի և գնա: Նա առժամայն յարեաւ առիւծն, և գնաց անտի„:

Գ. Սէն Սրապիոն ճգնաւորը գէմին մտաւ՝ որ երթայ Հռոմ. ամա իր հետը ուտելու բան մը չունէր: Կէմիճիները երբոր տեսան՝ որ անիկայ հինգ օրէն վերի բան մը չէր ուտեր, հարցուցին անոր, ինչու չես ուտեր պապալըխ. ան ալ ըսաւ անոնց, զէրէ բան մը չունիմ. ասոնք ալ ըսին, հապա ինչու մտար հոս. ան ալ ըսաւ, էյէր ձեր գէմիին մէկ զարար մը տուի նէ, դարձուցէք զիս ուր որ գտաք: Ասոնք ալ թէֆթիշ ըրին, ու չգտան թէ ո՛վ է դրեր անիկայ գէմին. ետքը իրենք կերակուր տուին անոր, ու տարին Հռոմ.

“Սէն Սրապիոն եմուտ 'ի նաւ՝ գնալ 'ի Հռոմ, ոչ ինչ ունելով առ 'ի պէտս իւր: Իսկ նաւորդքն իբրև տեսին՝ զի յա՟ռաջնմէ օրէ անտի մինչև ցհինգե՟րդ օրն ոչինչ ուտէր ծերն, ասեն ցնա, ընդէ՞ր ոչ ուտես հայրիկ. ասէ ցնոսա, զի ոչ ունիմ ինչ. ասեն ցնա, և ը՟դէ՞ր մտեր այսր. և ասէ ծերն, թէ վնաս ինչ արարի նաւիդ, դարձուցէք զիս 'ի տեղին՝ ուր գտիք: Իսկ նք̃ քննեալ՝ ոչ գտին թէ ո՛վ եդ զնա 'ի նաւն: ապա առեալ կերակրեցին զնա, և տարան 'ի Հռոմ„:

Գ. Իշխան մը կրօնաւոր եղաւ, ու իր բոլոր մալը աղքատներուն բաժնեց, ամա քիչ մըն ալ իրեն համար պահեց. Վէ չուզեց՝ որ վրան առնու կատարեալ հնազանդութիւն ու խոնարհութիւն ու աղքատութիւն: Ըսեց ասոր ս̄բ Բարսեղը ասանկ բան մը. քու իշխանութիւնդ կորսնցուցեր ու կրօնաւորութիւնը չգտար.

“Իշխան ոմն եղև կրօնաւոր, և զոմն ինչ իւր բաժանեաց աղքատաց, և կալաւ սակաւ ինչ 'ի պէտս իւր . և ոչ կամեցաւ առնուլ յանձն զկատարեալ հնազանդութ̃ի և զխոնարհութ̃ի և զանընչութ̃ի : Ո՛ր սա գրեաց մեծն Բասիլիոս այսպէս, զիշխանութ̃ի քո կորուսեր և զմիանձնութ̃ի ոչ գտեր ,, :

Տէ՛ աղէկ է մեզի որ մեր խօսքը դադրեցընենք . չէ որ ինչ որ մինչև հոս ըսեցինք նէ՝ ձեր սիրոյ նախանձը արթնցընելու համար հերիք է . Գիտնալով ան բանն որ կըսուի, թէ շատ խօսքը ականջ կըցաւցընէ .

“ Այլ արդ պատշաճ է մեզ տալ հանգիստ բանիս, զի բաւական են՝ որք ճառեցանն մինչև ցայսվայր՝ առ 'ի զարթուցանել զնախանձ սիրոյ ձերոյ . գիտելով զասացեալն՝ թէ առաւելութիւն բանի պատերազմօղ է լսելեաց ,, :

Յայսմ վայրի և ես տաց աւարտ գործոյս 'ի փառս Ք̃ի ա̃յ և 'ի պատիւ ամենօրհնեալ մօր նորա ս̃բ ա̃ծածնին :

ՎԱԽՃԱՆ

ՑԱՆԿ

Հարկաւոր գիտելեաց պարունակելոց՝ յերկրորդ և յերրորդ մասին այսր քերականութեան՝ ըստ կարգի այբուբենից։

Ածական անուն. 90 164. 170
Ածականք առանց գոյականի. 91. 170
Ածանցական անուն. 98
Ածանցական դերանուն″. 108
Ածանցականակերպ մասնիկք բազումք. 99
Աներևոյթ բայ. 124. 226
Անկանոն բայ. 112
Անկատար ժամանակ. 119
Անուանական հոլով. 101
Անուն. 89. 145
Անուն բայի. 192
Անցեալ ժամանակ. 119
Անցողական բայ. 117. 208
Ապառնի ժամանակ. 119
Առքական բայ. 112
ԱՐԳԵԼԻՉ խնդրոյ. 226

Բաղադրեալ անուն. 98
Բաղադրեալ բայ. 116
Բաղդատական ածականք. 92
Բայ. 111. 192
Բան. 87. 239
Բանք յաշխարհաբառէ 'ի գրաբառն. 285
Բառ. 85
Բարդ անուն. 96
Բարդ բայ. 115
Բացայայտիչ. 148
Բացառական հոլով. 102
Բղխմունք բայից. 126
Բութ. 253

Գերադրական ածականք. 92
Գերակատար ժամանակ. 119
Գիր. 82
Գլխաւոր մասունք քերականութե. 81
Գոյական անուն. 89. 148
Գոյականք 'ի տեղի ածականաց. 169
Գործիական հոլով. 103

Դերանուն. 106. 178
Դերբայք. 124. 228
Դէմք բայից. 118
Դէմք դերանուանց. 108
Դիմորոշականք. 107. 189
Դրադէմ բայք. 231
Դրական ածականք. 91

Եղանակ բայից. 121
Ենթամնայ. 251
Երկար. 256

Էական բայ· 112 · 222
Էական դերան''· 106 · 179

Ընդհանուր կամ հասարակ անուն· 90
Ընդունելութիւն· 129 · 229
Ընդունել''· եալ· 132 · 233
Ընդունել''· լի· 133 · 235
Ընդունել''· լոց· 132
Ընդունել''· ող· 133 · 231

Թաւ· 253
Թիւք անուանց· 99
Թիւք բայից· 118
Թիւք դերանուանց· 109
Թիւք ընդունելութեան· 130
Թուական անուանք· 93 · 172

Ժամանակ բայից· 118
Ժամանակ ընդունելութեանց· 130

Լծորդութիւնք բայից· 126
Լուծմունք շարադրութեանց· 237

Խնդիր ածական անուանց· 158
Խնդիր ածականաց յանգելոց 'ի իլ· 162
Խնդիր բաղդատական անուանց· 163
Խնդիր բայի· 198 · 224
Խնդիր բնութեան կրաւորական բայից· 211
Խնդիր բնութեան ներգործական բայից· 201
Խնդիր գոյական անուանց· 154
Խնդիր դիմազուրկ բայից· 221
Խնդիր էական բայից· 222
Խնդիր թուական անուանց 171
Խնդիր հարցական անուանց· 171
Խնդիր մասնական անուանց· 167
Խնդիր չէզոքական բայից· 212
Խնդիր սեռի կրաւորական բայից· 211
Խնդիր սեռի ներգործական և հասարակ բայից· 201
Խոնարհմունք բայից· 126
Խրթինշարադրութիւն· 242

Կազմութիւն բանի· 239
Կանոնաւոր բայ· 112
Կատարեալ ժամանակ· 119
Կետադրութիւն· 249
Կոչական հոլով· 103
Կրաւորական բայ· 113

Համաձայնութիւն ածական անուանց ընդ ածականաց· 175
Համաձայնութիւն ածական անուանց ընդ գոյականաց· 164
Համաձայնութիւն անուանց ընդ միմեանս· 151
Համաձայնութիւն բայից· 192
Համաձայնութիւն դերանուանց ընդ անուանս· 179
Համաձայնութիւն դերանուանց ընդ միմեանս· 178
Համաձայնութիւն ընդունելութեանց· 228
Համաձայնութիւն միջական անուանց· 171

Համաձայնութիւնք մասանց բանի . 147
Համառօտութիւն քերականութեան . 261
Հայցական հոլով . 102
Հանրական անուանք . 173
Հասարակ բայ . 114
Հարցական անուանք . 92 . 175 172
Հարցումն և պատասխանի . 271
Հաւաքական անուն . 90
Հոլովմունք անուանց . 103
Հոլովք անուանց . 100
Հոլովք և հոլովմունք դերանուանց . 109
Հոլովք ընդունելութեանց . 130
Հրամայական եղանակ . 122

Ձեւք անուանց . 96
Ձեւք բայից . 115
Ձեւք ընդունելութեանց . 130

Մակբայ . 139
Մասնական անուանք . 92 171 . 176
Մասունք բանի . 262
Միջակ շարադրութիւն . 240
Միջական անուանք . 92 . 171
Միջակէտ . 249
Միջարկութիւն . 145

Յաճախութիւն բայից . 115
Յատկացուցիչ . 151
Յատուկ անուն . 90 . 150
Յարաբարդ անուն . 98
Յարաբերական դերանուն 107 111 . 184
Յարակատար ժամանակ . 119
Յարմարագրութիւն . 248

Նախագաղափար կամ նախատիպ անուն . 98
Նախագաղափար բայ . 117
Նախագաղափար դերան՛՛ . 107
Նախադրութիւն . 134
Նախդիր ածականաց . 167
Նախդիր դերանուանցս այս , այդ , այն . 181
Նախդիր 'ի բացայայտիչս . 150
Նախդիր 'ի յատկացուցիչս . 153
Նախդիր խնդրոյ բայից . 224

Ներգոյական հոլով . 103
Ներգործական բայ . 113
Ներկայ ժամանակ . 119
Նշանագիր . 251
Նշանադրութիւն . 252

Շաղկապ . 144
Շեշտ . 254

Ոլորակ . 256
Ուղղական հոլով . 101

Չեզոքական բայ . 114

Պատմական հոլով . 102
Պատուադրութիւն . 259
Պարագայք անուանց . 94
Պարագայք բայից . 113
Պարագայք դերանուանց . 108
Պարագայք ընդունել՛՛ . 129
Պարառական հոլով . 103

Պարզ անուն. 96
Պարզ բայ. 115
Պարզ շարադրուե̄. 240
Պարոյկ. 249
Պէսպէսութե̄ շարադրութեանց. 239

Սահմանական եղանակ. 121
Սեռական հոլով. 101
Սեռք անուանց. 94
Սեռք բայից. 113
Սեռք ընդունելութե̄ց. 129
Սոսկ. 253
Սուղ. 253
Ստացական դերանուն. 107
110. 183
Ստորադասական եղանակ. 123
Ստորակէտ. 249

Վանկ. 84
Վերացեալ անուանք փոխանակ ածականի. 169
Վերբերական անուանք. 92
174. 175
Վերջակէտ. 249

Տառ. 84
Տեսակք անուանց. 98
Տեսակք բայից. 116
Տեսակք դերանուանց. 106
Տեսակք ընդունելութե̄ց. 130
Տրական հոլով. 101

Ցուցական դերանուն. 106
110. 180. 181. 182

Փարենթազի կամ փակագիծ. 251

Քերականութե̄. 81

Օրինակ պէսպէս շարադրութե̄ց. 240

ՎՐԻՊԱԿՔ	ՈՒՂՂԵԱԼՔ	ԷՋ
Միճլիս	*Մէճլիս*	8
Նորայն	*Նորային*	33
խտանեմ	*գտանեմ*	42
որով	*որո՞վ*	79
հոտ	*հօտ*	90
զներս	*զնեռս*	95
յատուք	*յատուկք*	104
յաւլեմամբ	*յաւելմամբ*	107
զարհաւատչեայ	*զառհաւատչեայ*	166
զնտանի	*զընտանի*	169
քօյ	*քոյ*	183
խնամով։ Թագուցաէ	*խնամով Թագուցանէ*	208
ունլեացն	*ունելեացն*	237
որ	*ոչ*	253
գոլ	*գոմ*	267